

Լիահորձա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Նախագահ Նելսոնը խրախուսում է
Սրբերին լսել Տիրոջ ձայնը

Նախագահ Նելսոնը
ներկայացնում է
Վերականգնման
Երկուհարյուրամյակի
հռչակագիրը

Եկեղեցին ընդունում է
խորհրդանիշ, որը շեշտում
է Փրկիչի կենտրոնական
դերը Իր եկեղեցում

Հաստատվել են նոր
Յոթանասունականներ և
Երիտասարդ Տղամարդկանց
նոր նախագահություն

Հայտարարվել են 8 նոր
տաճարներ





Այս նպատակի համար,
Յոնգսունգ Քիմ

«Մենք հիշում ենք, մենք միշտ հիշում ենք մեր մեղքերը քափելու հասար Քրիստոսի չարչարանքներն ու մահը և մենք տոնում ենք կիրակիներից այդ ամենահրաշալիս՝ Տիրոջ օրը, երբ Նա հարություն առավ մեռելներից: Հիսուս Քրիստոսի Հարության շնորհիվ Վերականգնումը խնաստ ունի, մեր մահկանացու կյանքը խնաստ ունի և, ի վերջո, մեր խի գոյությունը խնաստ ունի»:

Երեց Դ. Թող Քրիստոֆերսոն, Տասներկու Առաքյալների Քվորում, «Կիսվել Վերականգնման և Հարության ուղերձով», 113:

Բովանդակություն, մայիս 2020 թ.

Հատոր 21 • Համար 2

Շաբաթ առավոտյան կիստ

- 6 Բացման ուղերձ
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
- 8 Արդյոք չպե՞տք է մենք
շարունակենք այս մեծ գործը:
Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ
- 12 Երաշխավորել արդար
դատաստան
Երեց Ջեմս Ռ. Ռասբենդ
- 15 Մի հատուկ վե՞հ կոչում
Ջոյ Դ. Ջոնս
- 18 Կարևոր հոգևոր հիշողություններ
Երեց Նիլ Լ. Անդերսեն
- 23 Խորապես հաստատենք մեր
սրտերում
Դուգլաս Դ. Հոլմս
- 27 Հավատքով աղոթքները
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

Շաբաթ ցերեկային կիստ

- 30 Բարձրագույն
իշխանությունների,
տարածքային
յութանասունականների և
բարձրագույն պաշտոնյաների
հաստատումը
Նախագահ Դալլին Հ. Օուքս
- 31 Եկեղեցու աուդիտի բաժնի
հաշվետվություն, 2019 թ.
Քեվին Ռ. Յերգենսեն
- 32 Մորմնի Գրքի ի հայտ գալը
Երեց Ուլիսես Ստարես
- 36 Եկեք դեպի Քրիստոս՝ ապրելով
որպես վերջին օրերի սրբեր
Երեց Ջոն Ա. Մակքոյուն

- 38 Կենդանի վկայություն կենդանի
Քրիստոսի մասին
Եպիսկոպոս Ջերալդ Կոսե
- 41 Մտածեք Աստծո բարության և
մեծության մասին
Երեց Դեյվ Գ. Ռեյլանդ
- 45 Մորմնի Գրքի գորությունը
դարձի գալու ընթացքում
Երեց Բենիամին Մ. Ջ. Թայ
- 48 Լավ հիմք ընդդեմ գալիք
ժամանակների
Երեց Գարի Ե. Սթիվենսոն

Շաբաթ երեկոյան կիստ

- 52 Ովսա՛նևա և Ալեթ՛ւիա
– Կենդանի Քրիստոսը.
Վերականգնման և Զատկի
առանցքը
Երեց Ջերիթ Վ. Գոնզ
- 56 Ինչպե՞ս է քահանայությունն
օրհնում երիտասարդներին
Լորդի Ռուբ Թաուք
- 58 Ինչպե՞ս է քահանայությունն
օրհնում երիտասարդներին
Էնզո Սերժ Պետելո
- 60 Միավորվել՝ Աստծո
աշխատանքը կատարելիս
Ջին Բ. Բինգհեմ
- 66 Նա գնում է մեր առջևից
Նախագահ Հենրի Բ. Այրինգ
- 69 Մեքսիկացի քահանայությունը և
բանալիները
Նախագահ Դալլին Հ. Օուքս
- 72 Բացել երկինքներն օգնության
համար
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի առավոտյան կիստ

- 75 Մարգարեության իրականացում
Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ
- 78 Որ նրանք կարողանան տեսնել
Բոննի Հ. Քորդոն
- 81 Հույսի կատարյալ
պայծառություն
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
- 84 «Թող այդ տունը կառուցվի իմ
անվան համար»
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
- 88 Լսի՛ր Նրան
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
- 92 Օվսանևա բացականչություն
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակեօրյա ցերեկային կիստ

- 93 Մեծ ծրագիրը
Նախագահ Դալլին Հ. Օուքս
- 96 Մարգարեներին տրված
շարունակական հայտնության
օրհնությունը և անձնական
հայտնությունն առաջնորդում
են մեր կյանքը
Երեց Քվենթին Լ. Քուք
- 101 Ապաստան գտնել կյանքի
փոթորիկներից
Երեց Ռիկարդո Պ. Խիմենես
- 104 Եկեք և միացեք մեզ
Երեց Դիտեր Ֆ. Ուլտորթ
- 107 Լավագույն տները
Երեց Լ. Ուիթնի Զլեյթս
- 110 Կիսվել Վերականգնման
և Հարության ուղերձով
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
- 114 Առաջ գնացեք հավատքով
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

- 64 Հիսուս Քրիստոսի Վերջին
Օրերի Սրբերի Եկեղեցու
Բարձրագույն Իշխանությունները
և Բարձրագույն Պաշտոնյաները
- 116 Վիճակագրական
հաշվետվություն, 2019 թ.
- 117 Եկեղեցու նորությունները
- 127 Եկ, հետևիր ինձ. սովորել
գերագույն համաժողովի
ելույթներից



Սան Պաուլո, Բրազիլիա

190-րդ ամենամյա գերագույն համաժողով

Շաբաթ առավոտյան նիստ,

4 ապրիլի 2020 թ.

Վարող՝ Նախագահ Դավիթ Լ. Օուրս
Բացիչ աղոթք՝ Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզ
Փակման աղոթք՝ Միշել Քրեյգ
Երաժշտությունը՝ Տանարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբ*
Awake and Arise (Չարթներ և վեր կացեք), *Hymns*, no. 8, The Morning Breaks (Առավոտն է բացվում), *Hymns*, no. 1, կատ. Վիլբերգ, It Is Well with My Soul (Ամեն ինչ լավ է իմ հոգում), Սպաֆորդ և Բլիս, կատ. Վիլբերգ, Ye Children of the Lord (Եկեք, Տիրոջ գավակներ), *Hymns*, no. 58, «Չոզեֆ Սմիթի առաջին աղոթքը» *իվններ*, h. 14, Come, Thou Fount of Every Blessing (Եկ, ողջ օրհնության աղբյուր), Ռոբինսոն/ամերիկյան ժողովրդական մեղեդի, կատ. Վիլբերգ:

Շաբաթ ցերեկային նիստ,

4 ապրիլի 2020 թ.

Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացիչ աղոթք՝ Միլթոն Կամարգո
Փակման աղոթք՝ Երեց Ռուբեն Վ. Ալիո
Երաժշտությունը՝ Տանարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբ. «Բարձր լեռան վրա», *իվններ*, h. 30, կատ. Վիլբերգ, As I Search the Holy Scriptures (Երբ կարդում եմ սուրբ գրքերը), *Hymns*, no. 277, կատ. Մյորֆի, Rejoice, the Lord Is King! (Ցնծա, Տերն Արքայ է), *Hymns*, no. 66, «Փրկիչն Իսրայելի» *Հիվններ*, h. 5, կատ. Վիլբերգ:

Շաբաթ երեկոյան նիստ,

4 ապրիլի 2020 թ.

Վարող՝ Նախագահ Դավիթ Լ. Օուրս
Բացիչ աղոթք՝ Երեց Քայլ Ս. Մակելյ
Փակման աղոթք՝ Քրիստինա Բ. Ֆրանկո
Երաժշտությունը՝ Տանարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբ. Let Zion in Her Beauty Rise (Թող Սիոնը Իր գեղեցկությամբ բարձրանա), *Hymns*, no. 41, կատ. Կասեն, Lead, Kindly Light (Տար բարության, Լույս) *Hymns*, no. 97, կատ. Վիլբերգ, «Աստծո Չավակն եմ», *Հիվններ*, h. 58, Hark, All Ye Nations! (Լսեք, ազգեր բոլոր), *Hymns*, no. 264, կատ. Մյորֆի:

Կիրակի առավոտյան նիստ,

5 ապրիլի 2020 թ.

Վարող՝ Նախագահ Դավիթ Լ. Օուրս
Բացիչ աղոթք՝ Երեց Բորյ Գ. Հելյս
Փակման աղոթք՝ Երեց Պիտեր Մ. Ջոնսոն
Երաժշտությունը՝ Տանարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբ. Truth Eternal (Հավերժական ճշմարտությունը), *Hymns*, no. 4, «Աստծո Սրբեր», *Հիվններ*, h. 2, կատ.

Վիլբերգ, This Is My Beloved Son (Սա է իմ սիրելի Որդին), *Children's Songbook*, 76, կատ. Կարոն, «Եկեք Ուրախանանք», *Հիվններ*, h. 32, Israel, Israel, God Is Calling (Իսրայել, Իսրայել, Աստված կանչում է), *Hymns*, no. 7, կատ. Վիլբերգ, Hosanna Anthem/Աստծո Հոգին, Ստեֆենս և *Հիվններ*, h. 28, կատ. Ստեֆենս:

Կիրակի ցերեկային նիստ,

5 ապրիլի 2020 թ.

Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացիչ աղոթք՝ Երեց Քեվին Ռ. Դանքլեն
Փակման աղոթք՝ Երեց Լին Գ. Ռոբինսոն
Երաժշտությունը՝ Տանարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբ. «Փառք տանք մարդուն», *Հիվններ*, h. 50, կատ. Վիլբերգ, The Day Dawn Is Breaking (Լուսաբացը), *Hymns*, no. 52, կատ. Մյորֆի, «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ», *Հիվններ*, h. 38, «Փառք քեզ Տեր, Մարգարեի համար», *Հիվններ*, h. 36, կատ. Վիլբերգ:

*Յուրաքանչյուր նիստի երաժշտությունը, տարբեր խմբավարների ղեկավարությամբ և տարբեր երգեհոնահարների մասնակցությամբ, ձայնագրվել էր նախապես. եզրափակիչ օրհներգը ձայնագրվել է Թաբերնակի երգչախմբի և վեց այլ երգչախմբերի կողմից՝ Ակրա (Գանա), Մեխիկո Սիթի (Մեքսիկա), Սեուլ (Հարավային Կորեա), Սան Պաուլո (Բրազիլիա), Ֆրանկֆուրտ (Գերմանիա) և Օբլանդ (Նոր Զելանդիա):

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝

conference.ChurchofJesusChrist.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածում: Մովորաբար համաժողովից հետո վեց շաբաթվա ընթացքում անգլերեն լեզվով տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Գերագույն համաժողովի մասին նյութերը սահմանափակ կարողություններ ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են disability.ChurchofJesusChrist.org կայքում:

Կազմի վրա

Առջևի կազմ. Առաջին Տեսիլքի նկարն ըստ Դան Բրլի
Դարձերեսի կազմ. Լուսանկարը՝ Մեյսոն Կորբրիլ

Համաժողովի լուսանկարները

Մոլթ Լեյք Սիթիում լուսանկարել են. Քոդի Բեյ, Ջանե Բինգհեմ, Մեյսոն Քոբբրիլ, Վեսթոն Քոլթոն, Բրայան Նիքքլսոն, Լեսլի Նիլսոն: Լրացուցիչ լուսանկարներ ըստ Ալեքսանդր Բորգեսի, Մարկ Բրունսոնի, Նիկոլաս Մերի Բուստամանթեի, Աննեթ Քեմփբելի, Կարիսա Կրեյի, Քեթի Ֆրոստի, Ալեյսանդրո Գուտիերբեզի, Նատալյա Հեպկոթի, Կորն Նայթի, Էլլի Լարսենի, Բրունո Լիմայի, Էլլի Մալիլի, Մելանի Միզայի, Քենդրիկ Լավարոյի, Արթեհ Օջիջայի, Վերոնիկա Օլսոնի, Ալեյն Փավերի, Մելանի Փորթերի, Ջոնաս Ռեբիցկի, Մարկ Ռոմեսերի, Էլիզաբեթ Թոմպսոնի, Չունգ Հո Ցայի, Էմիլի Ութիլսանսկինի, Մարկո Վարզասի, Քրիստոֆեր Վոբերի, Դեյվ Վորդի, Ջոնաթան Վինգի, Ջասթին Ուայթի:



Վեստ Ջորդան, Յուտա, ԱՄՆ

190-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում



Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հստակ ուղերձ հղեց գերագույն համաժողովի ժամանակ. «Լսի՛ր Նրան»:

«Մենք պետք է ձգտենք հնարավոր բոլոր եղանակներով լսել Հիսուս Քրիստոսին, ով մեզ հետ խոսում է Սուրբ Հոգու զորության և սպասավորության միջոցով», - ուսուցանել է նախագահ Նելսոնը:

«Այս և մյուս գերագույն համաժողովների նպատակն է՝ օգնել մեզ լսել Նրան» (էջ 7):

Առաջին Տեսիլքին և Վերականգնմանը նվիրված համաժողովում մեզ ուսուցանվեց, որ կարող ենք լսել Նրան այնպես, ինչպես Ջոզեֆ Սմիթը լսեց Սրբազան պուրակում: Շրջապատված լինելով միլիոնավոր մարդկանց վրա ազդող համաշխարհային համավարակի հետևանքներով, մեզ ուսուցանվեց լսել Նրան՝ մեր խնդիրների մեջ առաջնորդություն ստանալու համար: Նայելով թե՛ Եկեղեցու և թե՛ յուրաքանչյուրիս

պայծառ ապագային, մեզ ուսուցանվեց նորոգել Նրան լսելու և Նրան հետևելու ջանքերը:

«2020 թվականի ապրիլյան այս գերագույն համաժողովի բազմաթիվ ոգեշնչող ուղերձները, - ասել է նախագահ Նելսոնը, - կարելի է ամփոփել երկու աստվածային պատգամների բառերով՝ «Լսիր Նրան»: Մենք աղոթում ենք, որ կենտրոնանալով Երկնային Հոր, ով ասել է այդ խոսքերը, և Նրա

Միբեյի Որդի՝ Հիսուս Քրիստոսի վրա, դուք կկարողանաք ձեր հիշողության մեջ պահել և արտաբերել այն ամենը, ինչ ասվեց»:

Երբ ուսումնասիրեք համաժողովի ուղերձները և ձգտեք «լսել, ականջ դնել և ուշք դարձնել Փրկիչի խոսքերին», ձեր կյանքում կիրականանա մարգարեի խոսքերը, որ «վախը կպակասի, իսկ հավատը կաճի» (էջ 114):

- Նախագահ Նելսոնը ներկայացնում է Եկեղեցու նոր խորհրդանիշը 73-րդ էջում:
- Նախագահ Նելսոնը ներկայացնում է Վերականգնման հռչակագիրը 91-րդ էջում:
- Նախագահ Նելսոնը ղեկավարում է համաշխարհային հանդիսավոր ժողովը 92-րդ էջում:
- Նախագահ Նելսոնը հայտարարում է ութ նոր տաճարների մասին 115-րդ էջում:
- Իմացեք ավելին այն մասին, թե մենք ինչպես կարող ենք օգնել ուրիշներին #HearHim HearHim. ChurchofJesusChrist.org-ում: ■

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ

Մենք փորձում ենք յուրաքանչյուր գերագույն համաժողով վավերագրել մեր հրապարակած նկարների միջոցով: Թեև յուրաքանչյուր համաժողով յուրահատուկ է, այս համարի նկարներն արտացոլում են այս համաժողովի որոշ անսովոր հանգամանքները:

Հեռարձակման նկարներից բացի, դուք կգտնեք լուսանկարներ գեղեցիկ Տաճարային հրապարակից (չնայած COVID-19-ի և շինարարության պատճառով անսովոր դատարկ), ինչպես նաև կտավներ, որոնք վերաբերում են ավետարանի Վերականգնմանը և աշխարհասփյուռ անդամների կողմից ուղարկված լուսանկարներ, որտեղ նրանք մասնակցում են համաժողովին:



ԿԱՆՉԵՏԻՆՆԱԿԱՆ ԳԻՐԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցու Նախագահ

Բացման ուղերձ

*Մենք պետք է ձգտենք հնարավոր բոլոր
եղանակներով լսել Հիսուս Քրիստոսին, ով
մեզ հետ խոսում է Սուրբ Հոգու զորության և
սպասավորության միջոցով:*

Ի՛մ սիրելի եղբայրներ ու քույրեր, ողջունելով ձեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս պատմական ապրիլյան գերագույն համաժողովում, ձեզ համար հայտնի պատճառներով, ես կանգնած եմ ձեր առջև դատարկ լսարանում:

Ես քիչ բան գիտեի, երբ 2019 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած գերագույն

համաժողովում ձեզ խոստացա, որ ապրիլյան այս համաժողովը կլինի «հիշարժան» և «անմոռանալի», որ 10-ից պակաս ֆիզիկապես ներկա մարդկանց խմբի առջև խոսելն այս համաժողովը կդարձնի այդքան հիշարժան և անմոռանալի *ինձ համար*: Այնուամենայնիվ, իմանալով, որ դուք մասնակցում եք էլեկտրոնային հեռարձակման միջոցով և լսելով «It Is Well with My

Soul (Մտնն ինչ լավ է իմ հոգում)» երգչախմբի գեղեցիկ կատարումը, *իմ* հոգին մեծապես սփոփվում է:

Ինչպես գիտեք, այս գերագույն համաժողովին մասնակցությունը խստորեն սահմանափակվել է, քանի որ ձգտում ենք լինել լավ քաղաքացիներ ամբողջ աշխարհում և անենք հնարավորը, որպեսզի սահմանափակենք COVID-19 տարածումը: Այս վիրուսը մեծ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհում: Այն նաև որոշ ժամանակով փոխել է մեր Եկեղեցու ժողովների, միսիոներական ծառայության և տաճարային աշխատանքի կարգը:

Թեև այսօրվա սահմանափակումները վերաբերում են վարակիչ վիրուսին, կյանքի անձնական փորձությունները տարածվում են այս համաճարակի սահմաններից դուրս: Հետագա փորձությունները կարող են առաջ գալ դժբախտ պատահարի, բնական աղետի կամ անսպասելի անձնական վշտի արդյունքում:

Ինչպե՞ս կարող ենք դիմանալ նման փորձություններին: Տերն ասել է մեզ, որ. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա»: ¹ Իհարկե, մենք կարող ենք պահել սննդի, ջրի և խնայողությունների մեր անձնական պաշարները: Բայց հավասարապես կարևոր նշանակություն ունի մեր անձնական *հոգևոր* պահեստները՝ հավատով, ճշմարտությամբ և վկայություններով լցնելու անհրաժեշտությունը:

Կյանքում մեր գերագույն ձգտումն այն է, որ պատրաստվենք հանդիպելու մեր Ստեղծողին: Մենք դա անում ենք, երբ ձգտում ենք ամեն օր ավելի շատ նմանվել մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին: ² Եվ մենք *դա* անում ենք, երբ ամեն օր ապաշխարում ենք և ստանում Նրա մաքրագործող, բժշկող և զորացնող զորությունը: Այդ դեպքում մենք կարող ենք զգալ հարատև խաղաղություն և ուրախություն, նույնիսկ, տաճնապալի ժամանակներում: Հենց դա է պատճառը, որ Տերը մեզ խնդրել է կանգնել սուրբ վայրերում և «շարժվել»: ³



Այս տարի մենք նշում ենք աշխարհի պատմության ամենանշանակալի իրադարձություններից մեկի 200-ամյակը, մասնավորապես՝ Հայր Աստծո և Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի հայտնվելը Ջոզեֆ Սմիթին: Այդ եզակի տեսիլքի ժամանակ Հայր Աստված մատնացույց արեց Հիսուս Քրիստոսին և ասաց. «Մա է Բմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»:⁴

Ջոզեֆին տված այդ հորդորը վերաբերում է բոլորիս: Մենք պետք է ձգտենք հնարավոր բոլոր եղանակներով լսել Հիսուս Քրիստոսին, ով մեզ հետ խոսում է Սուրբ Հոգու գործության և սպասավորության միջոցով:

Այս և մյուս գերագույն համաժողովների նպատակն է օգնել, որ մենք լսենք Նրան: Մենք աղոթել ենք և հրավիրում ենք ձեզ աղոթել, որ Տիրոջ Հոգին այնպես առատորեն զգանք, որ կարողանանք լսել այն ուղերձները, որոնք Փրկիչը պատրաստել է հատկապես ձեզ համար, ուղերձներ, որոնք խաղաղություն կբերեն ձեր հոգուն: Ուղերձներ, որոնք կբուժեն ձեր կոտորված սիրտը: Ուղերձներ, որոնք կլուսավորեն ձեր միտքը: Ուղերձներ, որոնք կօգնեն ձեզ իմանալ անհրաժեշտ քայլերը, երբ առաջ եք շարժվում իրարանցումների և փորձությունների ժամանակ:

Մենք աղոթում ենք, որ այս համաժողովը հիշարժան և անմոռանալի լինի ձեր լսած ուղերձների, եզակի հայտարարությունների, որոնք կարվեն, և այն փորձառությունների շնորհիվ, որոնցում դուք կհրավիրվեք մասնակցել:

Օրինակ, կիրակի առավոտյան նիստի ավարտին մենք հավաքելու ենք համաշխարհային հանդիսավոր ժողով, երբ ես կլսմբավարեմ ձեզ սուրբ Ովսաննա Բացականչության ժամանակ: Մենք աղոթում ենք, որ այն ձեզ համար հոգևոր նշանակություն ունենա, երբ մենք համալսմբվենք աշխարհով մեկ և հայտնենք մեր խորին երախտագիտությունը Հայր Աստծուն և Նրա սիրելի Որդուն՝



ՓՐԿՈՒՄԻՆԻՍՏԻՆԻ ԳԼԽԱՎՈՐՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԿՈՄԻՏԵ

գովերգելով նրանց այս եզակի ձևով:

Այս սրբազան փորձառության համար մենք կօգտագործենք մաքուր սպիտակ թաշկինակներ: Բայց եթե չունեք այն, կարող եք պարզապես ձեռքը շարժել: Ովսաննա բացականչությունից հետո հավաքվածները կմիանան երգչախմբին և կերգեն «Աստծո Հոգին» օրհներգը:⁵

Ի՛մ սիրելի եղբայրներ և քույրեր, այս համաժողովը կլինի հոյակապ: Այս տարին արտառոց է լինելու, երբ մենք կենտրոնանանք Փրկիչի և Նրա վերականգնված ավետարանի վրա: Այս պատմական համաժողովի ամենակարևոր տևական արդյունքը կլինի այն, որ մեր սրտերը կփոխվեն, և մենք կսկենք մեր կյանքում անընդհատ լսել Նրան:

Բարի գալուստ 2020 թ. ապրիլի գերագույն համաժողով: Ես գիտեմ,

որ Աստված՝ Մեր Երկնային Հայրն ու Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը մտածում են մեր մասին: Նրանք մեզ հետ կլինեն այս երկու փառավոր օրերի ընթացքում, երբ մենք ձգտենք ավելի մոտենալ նրանց և պատվել նրանց: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ովստեր 38.30:
2. Տես 3 Նեկի 27.27:
3. Վարդապետություն և Ովստեր 87.8:
4. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17:
5. *Հիմներ*, հր. 28:



Կուրսիբա, Պարանա, Բրազիլիա



Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Արդյոք չպե՞տք է մենք շարունակենք այս մեծ գործը

Մենք միշտ պետք է հիշենք այն գինը, որը վճարեցին Ջոզեֆ և Հայրում Սմիթները և մի շարք հավատարիմ այլ տղամարդիկ, կանայք և երեխաներ՝ Եկեղեցին հիմնելու համար:

Շատ շնորհակալություն, Նախագահ, այս հրաշալի բացման ելույթի համար: Եղբայրներ՝ և քույրեր՝, 215 տարի առաջ, Ջոզեֆ և Լյուսի Մակ Սմիթները որդի ունեցան: Նա ծնվեց Վերմոնտում. Միացյալ Նահանգների հյուսիս-արևելքում գտնվող այդ տարածաշրջանը հայտնի էր որպես Նոր Անգլիա: Ջոզեֆը և Լյուսի Մակերը հավատում էին Հիսուս Քրիստոսին,

ուսումնասիրում էին սուրբ գրությունները, անկեղծորեն աղոթում էին և ապրում հավատքով առ Աստված: Նրանք իրենց նորածնին անվանեցին Ջոզեֆ Սմիթ Կրտսեր: Սմիթների ընտանիքի մասին Բրիգամ Յանգն ասել է. «Տերը պահում էր իր աչքը [Ջոզեֆ Սմիթի] վրա, նրա հոր վրա և նրա հոր հոր վրա և նրանց նախնիների վրա՝ նույնիսկ մինչև Աբրահամը, Աբրահամից մինչև ջրհեղեղը, ջրհեղեղից մինչև Ենովքը և Ենովքից մինչև Ադամը: Նա հսկել է այդ ընտանիքին և այդ արյունը, մինչ այն շրջապատույտ է գործել իր սկզբնաղբյուրից մինչև այդ մարդու ծնունդը: [Ջոզեֆ

Սմիթը] նախակարգվել էր ավետարանը վերականգնելու համար»:¹ Ջոզեֆ Կրտսերը սիրված էր իր ընտանիքում, նա հատկապես մտերիմ էր իր ավագ եղբոր՝ Հայրումի հետ, ով գրեթե վեց տարեկան էր, երբ Ջոզեֆը ծնվեց: Մնցյալ տարվա հոկտեմբերին, մի օր ես նստել էի այն օջախի մոտ, որը գտնվում էր Սմիթների փոքրիկ տանը՝ Շերոնում (Վերմոնտ), որտեղ ծնվել էր Ջոզեֆը: Ես պատկերացրի, թե ինչպես էր Հայրումը սիրում Ջոզեֆին և մտածում էի այն մասին, թե ինչպես էր նա գրկում փոքրիկ եղբորը և սովորեցնում նրան քայլել: Հայր և մայր Սմիթները անձնական անհաջողությունների պատճառով ստիպված էին ընտանիքով բազմիցս տեղափոխվել բնակության մի վայրից մյուսը, մինչև վերջնականապես հրաժարվեցին Նոր Անգլիայից, համարձակ որոշում կայացնելով հաստատվել Նյու Յորք նահանգի արևմտյան մասում: Ընտանեկան համախմբվածության շնորհիվ նրանք դիմացան այդ դժվարություններին և միասին դիմագրավեցին այդ սարսափելի խնդրին՝ գրոյից սկսելու հարյուրակը (0.4 կմ²) անտառածածկ հողի մշակումը Մանչեստրում՝ Պալմիրայի մոտակայքում (Նյու Յորք): Վաստահ չեմ, որ շատերը հասկանում են, թե ինչ ֆիզիկական և հուզական մարտահրավերներ էր ունենում Սմիթների ընտանիքը, որոնք տեղափոխման հետ նորից սկսվեցին՝ հողի մաքրման աշխատանքներ, այգիների և դաշտերի տնկում, փոքր գերանակապ տան կառուցում և գյուղատնտեսական այլ կառուցապատումներ, ցերեկային ժամերին վարձու աշխատանքի կատարում և տնային պարագաների պատրաստում՝ քաղաքում վաճառելու նպատակով: Երբ ընտանիքը ժամանեց արևմտյան Նյու Յորք, տարածաշրջանը տարված էր կրոնական եռուզեռով, հայտնի որպես Երկրորդ Մեծ զարթոնք: Կրոնական խմբերի միջև այդ բանավեճերի և կռիվների



Բուենոս Այրես, Արգենտինա

ժամանակաընթացքում Ջոզեֆը զարմանալի տեսիլք ունեցավ, որն այսօր հայտնի է որպես Առաջին Տեսիլք: Մենք օրինված ենք՝ այդ մասին ունենալով չորս բնօրինակ աղբյուրներ, որոնցից ես մեջբերումներ կկատարեմ:²

Ջոզեֆը գրել է. «Այս մեծ հուզումների ժամանակ, միտքս համակված էր լուրջ մտախոհությամբ ու մեծ անհանգստությամբ. բայց չնայած իմ զգացումները խորն էին ու հաճախ շատ սուր, ես շարունակում էի ինձ հեռու պահել բոլոր այդ խմբակցություններից, չնայած հնարավորություն ունենալու դեպքում հաճախում էի նրանց առանձին ժողովներին: . . . Մակայն այնքան մեծ էին տարբեր դավանանքների միջև եղած տարածայնություններն ու վիճաբանությունները, որ մարդկանց ու իրերին անծանոթ այնպիսի մի երիտասարդի համար, ինչպիսին ես էի, անհնար էր որոշակի եզրակացության գալ, թե ով է ճիշտ, և ով է սխալ»:³

Ջոզեֆ Մմիթը դիմեց Աստվածաշնչին, որպեսզի գտներ իր հարցերի պատասխանները և կարդաց Հակոբոս 1.5-ում. «Բայց եթե մեկը ձեզանից իմաստութեան պակասությամբ ունի թող խնդրե՛ք Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կտրուի նորան»:⁴

Նա նշել է. «Մուրք գրքի ոչ մի հատված երբևէ այդպիսի ուժով չի ազդել մարդու սրտի վրա, ինչպես այդ ժամանակ եղավ ինձ հետ: Այն ասես մեծ ուժով ներթափանցեց սրտիս զգացմունքների խորքերը: Ես նորից ու նորից նթերցեցի այն»:⁵

Ջոզեֆը հասկացավ, որ Աստվածաշունչը չի պարունակում կյանքի բոլոր հարցերի պատասխանները. ավելի շուտ, այն կանանց և տղամարդկանց սովորեցնում է, թե ինչպես գտնել իրենց հուզող հարցերի պատասխանները՝ աղոթքի միջոցով ուղղակիորեն շփվելով Աստծո հետ:

Նա հավելել է. «Այդպես, Աստծուն խնդրելու իմ այդ որոշման համաձայն, ես առանձնացա անտառում, որ փորձեմ: Հազար



ութ հարյուր և քսան թվականի վաղ զարնան մի գեղեցիկ ու պարզ օրվա առավոտ էր»:⁶

Այդ իրադարձությունից կարճ ժամանակ անց, Ջոզեֆն ասել է. «Լույսը հանգչեց ինձ վրա, ես տեսա երկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. [Ջոզեֆ,] *Սա է Իմ Միջնի Որդին: Լսի՛ր Նրան*»:⁷

Ապա, Փրկիչն ասել է. «Ջոզեֆ, որդի՛ս, քո մեղքերը ներված են քեզ: Գնա՛ քո ճանապարհով, քայլի իմ կանոններով և պահիր իմ պատվիրանները: Ահա, ես եմ փառավոր Աստվածը: Ես խաչվեցի աշխարհի համար, որ նրանք, ովքեր հավատում են իմ անվանը, կարողանան հավերժական կյանք ունենալ»:⁸

Ջոզեֆը հավելել է. «Ուստի, ինքնատիրապետումս վերականգնվելուն պես, այնպես որ կարող էի խոսել, ես հարցրեցի Անձնավորություններին, որոնք կանգնած էին ինձանից վեր՝ լույսի մեջ, թե եղած աղանդներից որն էր ճշմարիտ»:⁹

Նա պատմել է. «Նրանք ինձ ասացին, որ բոլոր կրոնական դավանանքները հարում էին սխալ վարդապետությունների, և որ դրանցից ոչ մեկն Աստծո կողմից չի ճանաչվում որպես Նրա եկեղեցին և թագավորությունը: Եվ . . . միևնույն ժամանակ ես ստացա մի

խոստում, որ ավետարանի լրիվությունն ինձ հայտնի կդարձվի մոտակա ժամանակներում»:¹⁰

Ջոզեֆը նաև այս գրառումն էր կատարել. «Ես տեսա շատ հրեշտակներ այս տեսիլքում»:¹¹

Այս փառաշեղ տեսիլքից հետո Ջոզեֆը գրել է. «Իմ հոգին լցվեց սիրով և երկար ժամանակ ես շատ ուրախ էի: . . . Տերը ինձ հետ էր»:¹²

Նա դուրս եկավ սրբազան պուրակից, որ պատրաստվի դառնալ Աստծո մարգարեն:

Ջոզեֆը նաև սկսեց հասկանալ հին մարգարեների ունեցած փորձառությունները՝ մերժում, ընդդիմություն և հալածանք: Ջոզեֆը մտաբերել է, թե ինչպես է իր տեսածով ու լսածով կիսվել այդ ժամանակի կրոնական վերածննդի մի շատ ակտիվ սպասավորի հետ.

«Նրա վարքն ինձ շատ զարմացրեց. նա ոչ միայն անլուրջ վերաբերվեց իմ ունեցած հաղորդակցությանը, այլև մեծ արհամարհանքով, ասելով, որ այդ բոլորը դևից է, որ մեր օրերում չկան այնպիսի բաներ, ինչպիսիք են տեսիլքներն ու հայտնությունները. որ բոլոր նման բաները դադարել են առաքյալների հետ, և որ երբեք այլևս չեն կրկնվելու:

Ինչևէ, շուտով ես հայտնաբերեցի, որ պատմությունս իմ հանդեպ մեծ նախապաշարմունք էր առաջացրել կրոնի դավանողների մեջ, և ծանր հետապնդումների պատճառ էր դարձել, որը շարունակ աճում էր. . . և դա բնորոշ էր բոլոր աղանդներին. բոլորը միավորվել էին՝ ինձ հետապնդելու»:¹³

Երեք տարի անց՝ 1823 թվականին, երկինքները նորից բացվեցին վերջին օրերում Հիսուս Քրիստոսի ավետարանի շարունակական Վերականգնման համար: Ջոզեֆը գրում է, որ Մորոնի անունով հրեշտակը հայտնվեց նրան և ասաց, «որ Աստված աշխատանք ունի ինձ համար» . . . [և] որ ոսկե թիթեղների վրա գրված մի գիրք կա պահված», որը պարունակում է «հավիտենական Ավետարանի լրիվությունը, ինչպես որ այն Փրկիչի կողմից հանձնվել է

[Ամերիկյան մայրցամաքների] հնագույն բնակիչներին»:¹⁴

Ի վերջո, Ջոզեֆը ստացավ, թարգմանեց և հրատարակեց հնագույն գրությունը, որն այսօր հայտնի է որպես Մորմոնի Գիրք:

Ոսկե թիթեղների վկաներից մեկն էր նրա եղբայրը՝ Հայրումը, ով եղել է նրա մշտական աջակիցը, հատկապես 1813 թվականին տեղի ունեցած ցավոտ, կյանքին սպառնացող նրա ոտքի վիրահատությունից հետո: 1830 թվականին, երբ կազմավորվեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, Հայրումը Եկեղեցու առաջին վեց անդամներից մեկն էր:

Կյանքի ընթացքում Ջոզեֆն ու Հայրումը միասին էին դիմակայում ամբոխներին և հետապնդումներին: Օրինակ, Միսսուրիում գտնվող Լիբերթիի բանտում, շատ անմարդկային պայմաններում նրանք միասին էին տառապում 1838–1839 թվականների ձմեռային ցուրտ ամիսներին:

1839 թվականի ապրիլին Ջոզեֆը նամակ է գրել կնոջը՝ Էմմային, նկարագրելով իրենց դրությունը Լիբերթիի բանտում. «Կարծում եմ, արդեն հինգ ամիս և վեց օր է, ինչ գիշեր-ցերեկ այս պահակախմբի այլանդակ ու գարշելի խոսքերն են հնչում, մութ ու կեղտոտ, լքված բանտախցի պատերի, վանդակաճաղերի և երկաթյա դռների շխկոցի ներքո:

... Ամեն դեպքում, մեզ կտեղափոխեն այստեղից, և մենք ուրախ ենք դրա համար: Ինչ լինում է, թող լինի, ավելի վատ փոս, քան այս մեկն է, դժվար է պատկերացնել:

... Երբեք չէինք ցանկանա նորից հայտնվել Միսսուրիի Քլեյ գավառի այս Լիբերթիում: Այս պարոմները հավերժ մեզ հետ կմնան»:¹⁵

Հալածանքների ներքո Հայրումը Տիրոջ խոստումների հանդեպ հավատք դրսևորեց, այդ թվում՝ թշնամիներից ազատվելու երաշխիք ստացավ, եթե նա այդպես ընտրեր: 1835 թվականին Ջոզեֆ Մմիթի ձեռքից Հայրումը օրհնություն ստացավ և օրհնությամբ Տերը խոստացավ նրան. «Դու գորություն կունենաս փախչելու



քո թշնամիների ձեռքից: Կյանքից զրկելու համար քեզ կփնտրեն անդադար եռանդով, բայց դու կփախչես: *Եթե քեզ հաճելի է, և դու ցանկանաս՝ գորություն կունենաս կյանքդ հոժադասկալ տալու՝* Աստծուն փառավորելու համար»:¹⁶

1844 թվականի հունիսին Հայրումն ընտրության առաջ կանգնեց՝ ապրել, թե կյանքը տալ՝ Աստծուն փառավորելու համար և «կնքել[ի] իր վկայությունն իր արյամբ», կողք կողքի իր սիրելի եղբոր՝ Ջոզեֆի հետ:¹⁷

Մեկ շաբաթ առաջ, մինչ ճակատագրական ճամփորդությունը դեպի Քարթեջի բանտ, որտեղ նրանք սառնասարտորեն սպանվեցին զինված վախկոտ ամբոխի կողմից, որոնք ներկել էին իրենց դեմքերը՝ հայտնաբերումից խուսափելու համար, Ջոզեֆը գրել էր՝ «ես խորհուրդ տվեցի եղբորս՝ Հայրումին, որ իր ընտանիքին վերցնի և հաջորդ իսկ շոգենավով մեկնի Ցինցինատի»:

Ես դեռ խորապես հուզվում եմ, հիշելով Հայրումի պատասխանը. «Ջոզեֆ, *ես չեմ կարող քեզ թողնել*»:¹⁸

Այդպիսով, Ջոզեֆն ու Հայրումը գնացին Քարթեջ, որտեղ նրանք նահատակվեցին Քրիստոսի գործի և անվան համար:

Նահատակության մասին պաշտոնական հայտարարության մեջ ասված է հետևյալը. «Ջոզեֆ Մմիթը՝ Տիրոջ Մարգարեն և Տեսանողը, . . . առաջ բերեց Մորմոնի Գիրքը, որը նա թարգմանեց Աստծո պարզևոյ ու գորությամբ, և որը նրա միջոցով հրատարակվեց երկու աշխարհամասերում. հավիտենական

ավետարանի լրիվությունը պարունակող այդ գիրքը նա ուղարկեց դեպի աշխարհի չորս կողմերը. նա առաջ բերեց այն հայտնություններն ու պատվիրանները, որոնք կազմում են այս Վարդապետություն և Ուխտեր գիրքը և շատ այլ իմաստուն փաստաթղթեր ու հրահանգներ՝ մարդկանց զավակների օգտի համար. նա հավաքեց բազմահազար Վերջին Օրերի Մրբերի, հիմնադրեց մի մեծ քաղաք և համբավ ու անուն թողեց, որը չի կարող կորչել: . . . Եվ ինչպես հին ժամանակների Տիրոջ օձյալներից շատերը, [Ջոզեֆը] կնքեց իր առաքելությունը և իր գործերը սեփական արյամբ. և այդպես արեց նաև նրա եղբայրը՝ Հայրումը: *Կյանքում նրանք անբաժան էին, մահվան մեջ էլ նրանք չառանձնացան*»:¹⁹

Նահատակությունից հետո Ջոզեֆի և Հայրումի մարմինները տարան Նավու, լվացին և հագցրեցին, այնպես որ Մմիթների ընտանիքի անդամները տեսնեին իրենց սիրելիներին: Նրանց թանկագին մայրը հիշում էր. «Երկար ժամանակ ես լարում էի բոլոր նյարդերս, հոգուս ամեն մի եռանդն արթնացնում և կանչում էի առ Աստված, որ գորացնի ինձ: Բայց երբ մտա սենյակ և աչքիս առաջ հայտնվեցին սպանված որդիներս, երկուսը միասին, և լսեցի ընտանիքիս հեկեկոցներն ու հառաչանքները, նրանց կանանց, երեխաների, եղբայրների ու քույրերի շրթունքներից արձակվող ճիչերը, դիմանալն անհնար էր: Ես հետ կանգնեցի, հոգևարքի մեջ աղաղակելով առ Տերը. «Իմ Աստված՝ Իմ Աստված: Ինչո՞ւ ես լքել այս ընտանիքին»:²⁰

Վշտի և տառապանքի այդ պահին նա հիշում է, որ լսել է որդիների ձայները. «Մայրի՛կ, լաց մի եղիր մեզ համար, մենք հաղթեցինք աշխարհին սիրով»:²¹

Նրանք իսկապես հաղթել էին աշխարհին: Ջոզեֆ և Հայրում Մմիթները, Հայտնության գրքում նկարագրված հավատարիմ Մրբերի նման, «գալիս են այն մեծ նեղությունից, եւ իրանց հանդերձները լուացին եւ սպիտակացրին Գառի

արիւնովը . . . Աստուծոյ աթոռի առաջին են, եւ պաշտում են նորան ցերեկ եւ գիշեր նորա տաճարի մէջ. եւ աթոռի վերայ նստողը իր վրանը կ'տարածէ նորանց վերայ:

Այլ եւս ոչ կ'սովեն եւ ոչ կ'ծարաւին, եւ չի ընկնիլ նորանց վերայ ոչ արեւը եւ ոչ մի տաքութիւն:

Որովհետեւ Գառը՝ որ աթոռի մէջ է, կ'հովուէ նորանց եւ կ'առաջնորդէ նորանց դէպի կենդանի ջրերի աղբիւրները. եւ Աստուած կ'սրբէ ամեն արտասուքը նորանց աչքերիցը»:²²

Նշելով այս ուրախ իրադարձությունը՝ Առաջին Տեսիլքի 200-ամյակը, մենք միշտ պետք է հիշենք այն գինը, որը վճարեցին Ջոզեֆ և Հայրում Սմիթները, և մի շարք հավատարիմ այլ տղամարդիկ, կանայք և երեխաներ՝ Եկեղեցին հիմնելու համար, որպէսզի ես և դուք կարողանանք վայելել բազմաթիվ օրհնություններ և բացահայտված այս բոլոր ճշմարտությունները, որոնք այսօր ունենք: Նրանց հավատարմությունը երբեք չպետք է մոռացվի:

Ես շատ եմ մտածել, թե ինչու են այդքան տառապել Ջոզեֆը, Հայրումը և նրանց ընտանիքները: Հնարավոր է, որ նրանք այդ տառապանքի միջոցով ճանաչեցին Աստծուն, և այլ կերպ դա տեղի չէր ունենա: Տառապանքի միջոցով նրանք կ'խորհէին Գեթսեմանիի և խաչված Փրկիչի մասին: Ինչպես ասել է Պողոսը. «Եւ ձեզ Աստուածանից այդ շնորհք եղաւ Քրիստոսի համար, ոչ միայն հաւատալ նորան, այլ նորա համար չարչարուիլ էլ»:²³

Մահից առաջ, 1844 թվականին, Ջոզեֆը ոգեշունչ նամակ գրեց սրբերին: Դա գործելու կոչ էր, որն այսօր շարունակվում է Եկեղեցում.

«Եղբայրներ՝ [և քույրեր], *սպողով մենք չսխալուի՞ շարունակենք այս մեծ գործը*: Գնացե՛ք առաջ, և ոչ թե հետ: Քաջութիւն, եղբայրներ՝. և առաջ, առաջ դէպի հաղթանակ: . . .

. . . Եկեք, ուրեմն, որպէս եկեղեցի և ժողովուրդ, և որպէս Վերջին Օրերի Սրբեր, արդարությամբ ընծա մատուցենք Տիրոջը»:²⁴

Այս հանգստյան օրերին, 200-ամյակի տոնակատարության ժամանակ, լսելով Հոգու ձայնը, խորհեք, թե առաջիկա օրերին ինչ կարող եք մատուցել Տիրոջը արդարությամբ: Եղեք համարձակ, կիսվեք դրանով վստահելի մեկի հետ, և որ ամենակարևորն է՝ խնդրում եմ, ժամանակ գտեք դրա համար:

Ես գիտեմ, որ Փրկիչը գոհ է, երբ մենք արդարությամբ սրտաբոլս ընծա ենք մատուցում Նրան, այնպես, ինչպես Նա գոհ էր հրաշալի եղբայրների՝ Ջոզեֆ և Հայրում Սմիթների և մյուս բոլոր հավատարիմ սրբերի ընծայից: Այս մասին ես հանդիսավոր վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Brigham Young, in *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 544; see also Brigham Young, “Remarks,” *Deseret News*, Oct. 26, 1859, 266.
2. There are four primary accounts of the First Vision from which I quote; see “Joseph Smith’s Accounts of the First Vision,” josephsmithpapers.org.
3. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.8:
4. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.11:
5. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.12:

6. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.14:
7. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17:
8. In Joseph Smith, “History, circa Summer 1832,” 3, josephsmithpapers.org; spelling, punctuation, and capitalization standardized.
9. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.18:
10. Joseph Smith, “Church History,” *Times and Seasons*, Mar. 1, 1842, 707; see also josephsmithpapers.org.
11. Joseph Smith, “Journal, 1835–1836,” 24, josephsmithpapers.org.
12. Joseph Smith, “History, circa Summer 1832,” 3, josephsmithpapers.org; punctuation and capitalization standardized.
13. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.21–22:
14. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.33–34:
15. Joseph Smith, “Letter to Emma Smith, 4 April 1839,” 1–2, josephsmithpapers.org; spelling, punctuation, and capitalization standardized.
16. Joseph Smith, in “Minute Book 1,” 186, josephsmithpapers.org; emphasis added; punctuation standardized.
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 136.39:
18. Joseph Smith, “History of Joseph Smith,” *The Latter-day Saints’ Millennial Star*, Apr. 19, 1862, 248; emphasis added.
19. Վարդապետություն և Ուխտեր 135.3, շեշտադրումն ավելացված է:
20. “Lucy Mack Smith, History, 1845,” 312–13, josephsmithpapers.org; spelling and punctuation standardized.
21. “Lucy Mack Smith, History, 1845,” 313, josephsmithpapers.org.
22. Հայտնություն 7.14–17:
23. Փիլիպպեցիս 1.29:
24. Վարդապետություն և Ուխտեր 128.22, 24, շեշտադրումն ավելացված է:



Պատկերը Ն. Ս. Սմիթի կողմից 1844 թվականին Ջոզեֆ Սմիթի և Վալդեմար Բոնիֆայթի համար նկարված է:



Երեց Ջեմս Ռ. Ռասբեկո
Յոթանասունից

Երաշխավորել արդար դատաստան

*Որպեսզի երաշխավորենք արդար դատաստան,
Փրկիչի քավիչ զոհաբերությունը կհեռացնի
անգիտության ծիլերը և ուրիշների պատճառած
վիրավորանքի հոգևոր ցավերը:*

Մորմնի Գիրքը ուսուցանում է Քրիստոսի վարդապետությունը

Անցյալ հոկտեմբերին նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մեզ կոչ արեց մտածել, թե ինչպե՞ս կփոխվեր մեր կյանքը, եթե «Մորմնի Գրքից սովորած գիտելիքները հանկարծակի վերցվեին [մեզանից]»: ¹ Ես խորհել եմ նրա հարցի շուրջ և համոզված եմ, շատերդ եք նույն կերպ վարվել: Մի միտք կրկին ու կրկին այցելում էր ինձ, թե առանց Մորմնի Գրքի և Քրիստոսի վարդապետության ու Նրա քավիչ զոհաբերության մասին նրա տված հստակության, ես որտե՞ղ խաղաղություն կգտնեի:

Քրիստոսի վարդապետությունը, որն ընդգրկում է Քրիստոսի հանդեպ հավատքի փրկարար սկզբունքներն ու արարողությունները, ապաշխարությունը, մկրտությունը, Մուրբ Հոգու պարգևը և մինչև վերջ տոկալը, բազմաթիվ անգամներ ուսուցանվում է Վերականգնման բոլոր սուրբ գրություններում, բայց առանձնահատուկ գործողությամբ այն ուսուցանվում է Մորմնի Գրքում: ² Վարդապետությունը

սկսվում է Քրիստոսի հանդեպ հավատքով, և դրա տարրերից յուրաքանչյուրը կախված է Նրա քավիչ զոհաբերության հանդեպ վստահությունից:

Ինչպես նախագահ Նելսոնն է ուսուցանել. «Հիսուս Քրիստոսի Քավության մասին Մորմնի Գիրքը տրամադրում է ամենից ամբողջական և հեղինակավոր հասկացողությունը, որը երբևէ եղել է մինչ այդ»: ³ Որքան շատ է մեծանում մեր հասկացողությունը Փրկիչի երկնային պարգևի մասին, մեր մտքում ու սրտում այնքան լավ ենք սկսում հասկանալ ⁴ նախագահ Նելսոնի հավաստիացման իսկությունը, որ «Մորմնի Գրքի ճշմարտությունները *զրդություն* ունեն բժշկելու, սփոփելու, վերականգնելու, սատարելու, զորացնելու, մխիթարելու և քաջալերելու մեր հոգիները»: ⁵

Փրկիչի Քավությունը բավարարում է արդարադատության բոլոր պահանջները

Փրկիչի Քավության մասին մեր հասկացողության մեջ Մորմնի Գրքի կարևոր և խաղաղությունը

պարզևս ներդրումը նրա ուսմունքն է առ այն, որ Քրիստոսի գթասիրտ զոհաբերությունը կատարում է արդարադատության բոլոր պահանջները: Ինչպես Ալման է բացատրել. «Հետևաբար, Աստված ինքն է քավում աշխարհի մեղքերը՝ իրականացնելով ողորմության ծրագիրը, բավարարելով արդարադատության պահանջները, որպեսզի Աստված լինի կատարյալ, արդար Աստված և նաև ողորմած Աստված»: ⁶ Հոր ողորմության ծրագիրը ⁷, որը սուրբ գրություններում նաև կոչվում է երջանկության ծրագիր ⁸ կամ փրկության ծրագիր ⁹, չի կարող իրականացվել, եթե արդարադատության բոլոր պահանջները չբավարարվեն:

Բայց իրականում որո՞նք են «արդարադատության պահանջները»: Դիտարկեք Ալմայի փորձառությունը: Հիշեք, որ երիտասարդ Ալման շրջում էր ամենուր, «որպեսզի կործանի եկեղեցին»: ¹⁰ Փաստորեն, Ալման ասաց իր որդի Հելամանին, որ ինքը «տանջվում էր դժոխքի ցավերով», քանի որ հաջողությամբ «սպանել էր [Աստծո] գավալներից շատերին»՝ տանելով նրանց «դեպի կործանում»: ¹¹

Ալման բացատրեց Հելամանին, որ ինքը վերջապես խաղաղություն ձեռք բերեց, երբ իր «դատողությունը որսաց այս միտքը» իր հոր ուսմունքներում «Հիսուս Քրիստոսի . . . գալուստի վերաբերյալ . . . քավելու համար աշխարհի մեղքերը»: ¹² Չղջացող Ալման աղերսում էր Քրիստոսի ողորմությունը, ¹³ իսկ հետո զգաց ուրախություն և սփոփանք, երբ հասկացավ, որ Քրիստոսը քավել էր իր մեղքերը և վճարել այն ամենը, ինչ արդարադատությունը պահանջում էր: Կրկին, ի՞նչ կպահանջեր արդարադատությունը Ալմայից: Ինչպես Ալման ինքը ավելի ուշ ուսուցանեց, «ոչ մի անմաքուր բան չի կարող ժառանգել Աստծո արքայությունը»: ¹⁴: Ուստի, Ալմայի սփոփանքի մի մասը, հնարավոր է այն էր, որ եթե ողորմությունը չմիջամտեր, արդարադատությունը

կլանագարեր նրան վերադառնալ ու ապրել Երկնային Հոր հետ:»¹⁵

Փրկիչը բժշկում է այն վերքերը, որոնք մենք չենք կարող բժշկել

Բայց արդյո՞ք Ալմայի ուրախությունը կենտրոնացած էր լոկ իր վրա, որ *ինքը* խուսափեր պատժից և *ինքնուրույն* կարողանար վերադառնալ Հոր մոտ: Մենք գիտենք, որ Ալման տառապում էր նաև նրանց համար, ում ինքը հեռացրել էր ճշմարտությունից:¹⁶ Բայց Ալման չէր կարող բժշկել ու վերականգնել այն բոլոր մարդկանց, ում ինքը մոլորեցրել էր: Նա ինքնուրույն չէր կարող երաշխավորել, որ նրանց արդար հնարավորություն կտրվեր սովորելու Քրիստոսի վարդապետությունը և օրհնվել՝ ապրելով դրա ուրախ սկզբունքներով: Նա չէր կարող վերադարձնել նրանց, ովքեր մահացել էին իր կեղծ ուսմունքով խաբված:

Ինչպես նախագահ Բոյդ Ք. Փաքերն է ուսուցանել. «Միտքը, որը փրկեց Ալմային . . . հետևյալն է՝ վերականգնել այն, ինչը չես կարող վերականգնել, բժշկել վերքը, որը չես կարող բժշկել, նորոգել այն, ինչը կտրել էս և չես կարող նորոգել. ահա սա է Քրիստոսի քավության նպատակը»:¹⁷ Բերկրալի ճշմարտությունը, որը «որսաց Ալմայի միտքը», միայն այն չէր, որ ինքը կարող է մաքրվել, այլև այն, որ կարող էին բժշկվել և առողջանալ նաև այն մարդիկ, ում ինքը վնասել էր:

Փրկիչի զոհաբերությունը երաշխավորում է արդար դատաստան

Այս քաջալերող վարդապետության մասին Ալմայի փրկվելուց տարիներ առաջ Բենիամին թագավորն ուսուցանել էր Փրկիչի քավիչ զոհաբերության բժշկող գործության մասին: Բենիամին թագավորը հայտարարեց, որ «մեծ ուրախության ավետիքը» հայտնի դարձվեց իրեն «Տիրոջ հրեշտակի կողմից»:¹⁸ Այդ ուրախ ավետիքը ներառում էր այն ճշմարտությունը, որ Քրիստոսը կտառապի ու կմեռնի մեր մեղքերի


ու սխալների համար, երաշխավորելով, որ «մի *արդար դատաստան* գա մարդկանց զավակների վրա»:¹⁹

Հատկապես ի՞նչ է պահանջում «արդար դատաստանը»: Հաջորդ հատվածում Բենիամին թագավորը բացատրեց, որ որպեսզի երաշխավորի արդար դատաստան, Փրկիչի արյունը քավեց «նրանց մեղքերը, որոնք ընկել են Ադամի օրինազանցության պատճառով», և նրանց համար, «որոնք մահացել են՝ չիմանալով Աստծո կամքն իրենց վերաբերյալ, կամ ովքեր անգիտակցորեն են մեղք գործել»:²⁰ Նա ուսուցանեց, որ արդար դատաստանը նաև պահանջում էր, որ «Քրիստոսի արյունը քավի» փոքր երեխաների մեղքերը:²¹

Այս սուրբ գրությունները ուսուցանում են մի փառահեղ վարդապետություն. Փրկիչի քավիչ զոհաբերությունը, որպես անվճար պարգև, բժշկում է նրանց, ովքեր անգիտակցորեն են մեղք գործել, նրանց, ում համար, ինչպես Հակոբն է ասել, «չկա տրված օրենք»:²² Պատասխանատվությունը մեղքի համար կախված է մեզ տրված հասկացողությունից, ինչպես նաև կախված է մեր կամքը գործադրելու կարողությունից:²³ Այս բժշկող և սփոփող ճշմարտությունը մենք գիտենք միայն Մորմոնի Գրքի և Վերականգնման այլ սուրբ գրությունների շնորհիվ:²⁴

Անշուշտ, որտեղ կա տրված օրենք, որտեղ մենք անտեղյակ չենք Աստծո կամքին, մենք պատասխանատու ենք: Ինչպես Բենիամին թագավորն է շեշտել. «Բայց, վա՛յ, վա՛յ նրան, ով գիտի, որ ապստամբում է Աստծո դեմ: Քանզի փրկությունն այդպիսիներից ոչ մեկին չի գա, բացի դա լինի ապաշխարության և առ Տեր Հիսուս Քրիստոսը հավատքի միջոցով»:²⁵

Սա ևս Քրիստոսի վարդապետության մեծ ավետիքն է: Փրկիչը ոչ միայն բժշկում և վերականգնում է նրանց, ովքեր անգիտակցորեն մեղք են գործում, այլև նրանց, ովքեր մեղք են գործում լույսի դեմ, Փրկիչն առաջարկում է բժշկում՝



Պատկերը ցուցաբերում է Քրիստոսի մահացմանը հարապահման ժամանակը:

ապաշխարության և Իր հանդեպ հավատքի պայմանով:²⁶

Ալման, հնարավոր է, «որսացել է» այս երկու ճշմարտությունները: Արդյո՞ք Ալման իրոք զգացել էր այն, ինչ ինքը կոչել էր «ուժգին . . . ուրախություն»,²⁷ եթե նա կարծում էր, որ Քրիստոսը փրկեց իրեն, բայց ընդմիջտ վնասված թողեց նրանց, ում ինքը հեռացրել էր ճշմարտությունից: Անշուշտ, չէր զգացել: Որպեսզի Ալման ամբողջական խաղաղություն զգար, պետք է բժշկման հնարավորություն ստանային նաև նրանք, ում ինքը վնասել էր:

Բայց հատկապես ինչպե՞ս կբժշկվեն նա կամ նրանք, ում մենք կարող ենք վնասել: Չնայած մենք լիովին չենք հասկանում սրբազան գործընթացները, որոնցով Փրկիչի քավիչ զոհաբերությունը բժշկում և վերականգնում է, մենք իրոք գիտենք, որ որպեսզի երաշխավորենք արդար դատաստան, Փրկիչը կհեռացնի անգիտության ծիլերը և ուրիշների պատճառած վիրավորանքի հոգևոր ցավերը:²⁸ Մրանով Նա հավաստիացնում է, որ Աստծո բոլոր զավակներին հնարավորություն կտրվի պարզ տեսլականով ընտրել հետևել Իրեն և ընդունել երջանկության մեծ ծրագիրը:²⁹

Փրկիչը կտրոզի այն, ինչ մենք կտրել ենք

Ահա այս ճշմարտությունները խաղաղություն կբերեն Ալմային: Եվ այս ճշմարտություններն են, որոնք մեզ նույնպես պետք է

մեծ ուրախություն բերեն: Քանի որ մենք բնական տղամարդիկ և կանայք ենք, մենք բոլորս երբեմն հարվածում ենք կամ բախվում ենք միմյանց՝ պատճառելով վնասներ: Ինչպես յուրաքանչյուր ծնող կարող է վկայել, մեր սխալներին ուղեկցող ցավը մեր սեփական պատժի վախը չէ միայն, այլև վախը, որ մենք, գուցե, սահմանափակել ենք մեր զավակների ուրախությունը կամ ինչ-որ կերպ խանգարել ենք նրանց տեսնել ու հասկանալ ճշմարտությունը: Փրկիչի քավիչ զոհաբերության փառավոր խոստումն այն է, որ ինչ վերաբերում է մեր սխալներին, որպես ծնողներ, Նա մեր զավակներին անմեղ է համարում և հոգևոր բժշկում է խոստանում նրանց:³⁰ Եվ նույնիսկ, եթե նրանք մեղանչել են՝ ունենալով ճշմարտության մասին գիտելիքը, ինչպես մենք բոլորս ենք անում, Նա կմեկնի Իր ողորմության բազուկը³¹ և կփրկագնի նրանց, եթե նրանք նայեն Իրեն ու ապրեն:³²

Չնայած Փրկիչը զորություն ունի ուղղելու այն, ինչ մենք չենք կարող շտկել, Նա պատվիրում է մեզ անել այն ամենը, ինչ կարող ենք հատուցման համար՝ որպես մեր ապաշխարության մաս:³³ Մեր մեղքերն ու սխալները խանգարում են ոչ միայն Աստծո հետ մեր հարաբերություններին, այլև ուրիշների հետ փոխհարաբերություններին: Երբեմն բժշկելու և վերականգնելու մեր ջանքերը կարող են պարզ լինել, ինչպես օրինակ ներողությունը, բայց այլ դեպքերում հատուցումը կարող է պահանջել տարիների խոնարհ ջանքեր:³⁴ Սակայն մեր շատ մեղքերի ու սխալների դեպքում մենք պարզապես չենք կարող լիովին բժշկել նրանց, ում վնասել ենք: Մորմոնի Գրքի և վերականգնված ավետարանի հրաշալի և խաղաղություն պարզևոր խոստումն այն է, որ Փրկիչը կնորոգի այն ամենը, ինչ մենք կտորել ենք:³⁵ Եվ Նա կնորոգի նաև մեզ, եթե հավատքով դառնանք դեպի Իրեն և ապաշխարենք այն վնասի համար, որը մենք ենք պատճառել:³⁶ Նա առաջարկում է այս երկու պարզևները, քանի որ

Նա կատարյալ սիրով սիրում է մեզ բոլորիս,³⁷ և քանի որ Նա հանձնառու է ապահովել արդար դատաստան, որը պատվում է ինչպես արդարադատությունը, այնպես էլ ողորմածությունը: Ես վկայում եմ, որ սա ճշմարիտ է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Ամփոփիչ ելույթ», *Լիսինուս*, նոյեմբեր 2019, 122:
2. Տես 2 Նեփի 31, 3 Նեփի 11.28, 32, 35, 39-40, Վարդապետություն և Ուխտեր 10.62-63, 67-70, 68.25, Մովսես 6.52-54, 8.24, Հավատո Հանգանակ 1.4:
3. Ռասսել Մ. Նելսոն. «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա»: *Լիսինուս*, նոյեմբեր 2017, 62:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 8.2-3:
5. Ռասսել Մ. Նելսոն. «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա», 62:
6. Ալմա 42.15:
7. Տես Ալմա 42.15:
8. Տես Ալմա 42.8:
9. Տես Ալմա 24.14, Մովսես 6.62:
10. Տես Մոսիա 27.8-10:
11. Ալմա 36.13, 14:
12. Ալմա 36.17, 18:
13. Տես Ալմա 36.18:
14. Ալմա 40.26, տես նաև 1 Նեփի 15.34, Ալմա 7.21, 11.37, Հելաման 8.25:
15. Տես 3 Նեփի 27.19, տես նաև Մովսես 6.57:
16. Տես Ալմա 36.14-17:
17. Տես Boyd K. Packer, «The Brilliant Morning of Forgiveness», *Ensign*, Nov. 1995, 19-20:
18. Մոսիա 3.2, 3:
19. Մոսիա 3.10, շեշտադրումն ավելացված է:
20. Մոսիա 3.11, տես նաև 2 Նեփի 9.26:
21. Մոսիա 3.16, տես նաև Մոսիա 15.25, Մորմոնի 8.11-12, 22:
22. 2 Նեփի 9.25:
23. Տես 2 Նեփի 2.26-27, Հելաման 14.29-30:
24. Տես Հավատո Հանգանակ 1.2, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.54: Զարգացնելով մահացածների համար մկրտության վարդապետությունը՝ մարգարե Ջոզեֆը մի անգամ ասել է. «Մինչ մարդկային ցեղի մի մասը դատում է և դատապարտում մյուսին առանց ողորմածության, տիեզերքի Մեծ Ծնողը նայում է ողջ մարդկային ընտանիքին հայրական հոգատարությամբ և ծնողական ուշադրությամբ, Նա տեսնում է նրանց որպես իր սերունդ: . . . Նա իմաստուն օրենսդիր է, և կղատի բոլոր մարդկանց ոչ թե համաձայն նեղ հակառակակողմ մարդկային հասկացողությունների: . . . Նա կղատի նրանց «ոչ թե համաձայն նրա, ինչ նրանք չունեն, այլ համաձայն նրա, ինչ նրանք ունեն», նրանք, ովքեր ապրել են առանց օրենքի, կդատվեն առանց օրենքի, իսկ նրանք, ովքեր ունեն օրենք, կդատվեն այդ օրենքով: Մենք չպետք է կասկածենք Մեծ Եհովայի իմաստության և խելամտության վրա, Նա դատաստան ու ողորմություն կպարզվի բոլոր

ազգերին՝ համաձայն նրանց տարբեր արժանիքների, գիտելիք ձեռք բերելու նրանց միջոցների, այն օրենքների, որոնցով նրանք կառավարվել են, ճիշտ տեղեկություն ձեռք բերելու նրանց հնարավորությունների, և . . . մենք բոլորս, ի վերջո, պիտի ստիպված լինենք խոստովանել, որ ողջ երկրի Դատավորը ճիշտ է վարվել» (*Եկեղեցու Նախագահների ռասմոնքները: Ջոզեֆ Մոսիա* [2007], 431):

25. Մոսիա 3.12, տես նաև 2 Նեփի 9.27:
26. Տես Մոսիա 3.12, Հելաման 14.30, Մորմոնի 8.10, Վարդապետություն և Ուխտեր 101.78: Մարդիկ կարող են անտեղյակ լինել որոշակի պատվիրաններից և ուխտերից կամ չկարողանան գործադրել իրենց կամքը որոշ հանգամանքներում, բայց դեռևս պատասխանատու լինեն այլ հանգամանքներում՝ Քրիստոսի Լուսի շնորհիվ, որը նրանք ունեն (տես 2 Նեփի 9.25, Մորմոնի 7.16-19): Փրկիչը, ով մեր դատավորն է և երաշխավորում է արդար դատաստան, կտարբերի այս հանգամանքները (տես Մորմոն 3.20, Մովսես 6.53-57): Եվ Նա վճարել է գինը թե՛ նախկինի համար անվերապահորեն և թե՛ վերջինիս համար՝ ապաշխարության պայմանով:
27. Ալմա 36.21:
28. Տես Մոսիա 3.11, տես նաև երեք Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Փրկագնում», *Լիսինուս*, մայիս 2013, 110, Ալմա 7.11-12 («Նա վեր կանի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները: . . . Նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները»), Եսայիա 53.3-5 («Հիրավի՜, նա մեր ցատեր վեր առաւ, եւ մեր վիշտերը բեռնեց իր վերայ»), 61.1-3 (Տերը օժել է ինձ . . . կտորված սիրտ ունեցողներին բժշկելու, . . . Միօսի սգաւորների համար որոշելու, որ նորանց փառք տրուի մոխրի տեղ, ուրախութեան իտ՛ սուզի տեղ): Ռասսելի է, որ Փրկիչը մեղքեր է Եսայիայի այս հատվածներից, երբ Նա հայտարարել է Իր Մեծի լինելու փաստը. «Այսօր այս գիրքը կատարուցաւ ձեր ականջներում» (տես Դուկաս 4.16-21):
29. Հոգևոր աշխարհում «ավետարանը քարոզվում է անտեղյակներին, չապաշխարածներին և ըմբոստներին, որպեսզի նրանք կարողանան ազատվել իրենց կապանքներից և առաջ ընթանան դեպի այն օրհնությունները, որոնք Երկնային Հայրը պահել է իրենց համար» (Դավիթն 2.



Պրոֆ. Յուսա, ՍՄՆ

Օուքս, «Կատակիր Տիրոջը», *Հիստորիա*, նոյեմբեր 2019, 27): Տես Ա Պետրոս 4.6, 2 Նեփի 2.11-16, Վարդապետություն և Ուխտեր 128.19, 137.7-9, 138.31-35:

30. Տես Մովսես 6.54: Նախագահ Ռասսել Ա. Բալլարդը ուսուցանել է այս վարդապետությունը. «Միայն Տերը գիտի բոլոր մանրամասները, և Նա է, որ կդատի մեր գործողություններն այստեղ՝ երկրի վրա: Երբ Նա իրոք դատի մեզ, ես կարծում եմ, որ նա ամեն բան հաշվի կառնի. մեր ծագումնաբանությունը և քիմիական կառուցվածքը, մեր հոգեվիճակը, մեր մտավոր կարողությունները, մեր ստացած կրթությունը, մեր հայրերի ավանդույթները և այլն: Մուրֆ գրություններում մենք . . . կարդում ենք, որ Քրիստոսի արյունը քավում է նրանց մեղքերը, «ովքեր մահացել են՝ չիմանալով Աստծո կամքն իրենց վերաբերյալ, կամ ովքեր անգիտակցորեն են մեղք գործել» (Մոսիա 3.11) (“Suicide: Some Things We Know, and Some We Do Not,” *Ensign*, Oct. 1987, 8; *Tambuli*, Mar. 1988, 18):

- 31. Տես Հակոբ 6.5, Մոսիա 29.20, 3 Նեփի 9.14, Վարդապետություն և Ուխտեր 29.1:
- 32. Տես Հելաման 8.15:
- 33. Տես Ղևտազոց 6.4-5, Եզեկիել 33.15-16, Հելաման 5.17, Վարդապետություն և Ուխտեր 58.42-43:
- 34. Հենց այսպիսի նախաձեռնության մեջ էր Ալման ներգրավված (տես Ալմա 36.24):
- 35. Նախագահ Բոյդ Ք. Փաքերը հրաշալի է ուսուցանել այս սկզբունքը:

«Լինում են ժամանակներ, երբ դուք չեք կարող նորոգել այն, ինչը կոտրել էք: Գուցե հանցանքը տեղի է ունեցել վաղուց կամ վիրավորվածը մերժել է ընդունել ձեր ներողությունը: Անշուշտ, հասցված վնասն այնքան մեծ է, որ դուք չեք կարող շտկել այն՝ անկախ ձեր մեծ ցանկությունից:

«Ձեր ապաշխարությունը չի ընդունվի, եթե չլինի հատուցում: Եթե դուք չեք կարող շտկել այն, ինչ արել եք, կհայտնվեք թակարդում: Հեշտ է հասկանալ, թե որքան անօգնական և անհույս էիք դուք զգում այն ժամանակ, և ինչու էիք ցանկանում հրաժարվել, ինչպես Ալման: . . .

Մենք չգիտենք, թե այդ ամենն ինչպես կարելի է նորոգել: Գուցե այդ ամենը չիրականանա այս կյանքում: Տեսիլքներից և այցելություններից մենք գիտենք, որ Տիրոջ ծառաները շարունակում են քավության աշխատանքը վարագույրից այն կողմ:

Այս գիտելիքը պետք է սփռվի չլինի թե՛ անմեղների և թե՛ մեղավորների համար: Ես մտածում եմ այն ծնողների մասին, ովքեր խորապես տառապում են ուղուց շեղված իրենց զավակների սխալների համար և կորցնում են հույսը» (*The Brilliant Morning of Forgiveness*», 19-20):

- 36. Տես 3 Նեփի 12.19, տես նաև Մատթեոս 6.12, 3 Նեփի 13.11:
- 37. Տես Հովհաննես 15.12-13, Ա Հովհաննես 4.18, Դիտեր Ֆ. Ուլսդորֆ, «Կատարյալ սերը դուրս է մղում վախը», *Հիստորիա*, մայիս 2017:



Ջոյ Դ. Ջոնս
Երեխաների միության գերագույն նախագահ

Մի հատուկ վեհ կոչում

Որպես հավատացյալ կանայք, մենք կարող ենք ճշմարտության սկզբունքներ վերցնել մարգարե Ջոզեֆ Սմիթի փորձառություններից, որոնք գաղափարներ են տալիս մեր անձնական հայտնությունը ստանալու վերաբերյալ:

Ես երախտապարտ եմ, որ իմ դիտարկումներն այսօր կենտրոնացնելու եմ վերականգնման ընթացքում կանանց շարունակվող դերերի վրա: Պարզ է, որ ողջ պատմության ընթացքում կանայք հատուկ տեղ են զբաղեցրել մեր Երկնային Հոր ծրագրում: Նախագահ Ռասսել Ա. Նելսոնն ուսուցանել է. «Անհնարին կլինեք չափել ազդեցությունը, որ . . . կանայք ունեն ոչ միայն իրենց ընտանիքներում, այլև Տիրոջ Եկեղեցում, որպես կանայք, մայրեր և տատիկներ, որպես քույրեր և մորաքույրներ, որպես ուսուցիչներ և ղեկավարներ, և հատկապես՝ որպես հավատքի օրինակներ և նվիրյալ պաշտպաններ»:¹

Մարգարե Ջոզեֆ Սմիթը 178 տարի առաջ Նավուի Սփոփող միության առաջին քույրերին խորհուրդ տվեց «ապրել [իրենց] արտոնության համաձայն»:² Նրանց օրինակն ուսուցանում է մեզ այսօր: Նրանք միասնաբար հետևեցին մարգարեի ձայնին և ապրեցին Հիսուս Քրիստոսի հանդեպ անսասան հավատքով, երբ օգնեցին դնել այն հիմքը, որի վրա մենք այժմ

կանգնած ենք: Քույրե՛ր, մեր հերթն է: Մենք աստվածային հանձնարարություն ունենք Տիրոջից, և մեր հավատարիմ, առանձնահատուկ ներդրումները էական են:

Նախագահ Մպենսեր Վ. Քիմբալը բացատրել է. «Մեր Փրկիչի երկրորդ գալուստից առաջ այս երկրագնդի պտուտակած և տեսարանների ընթացքում արդարակյաց կին լինելը մի հատուկ վեհ կոչում է: Այսօր արդարակյաց կնոջ ուժն ու ազդեցությունը կարող է տասնապատիկ լինել՝ ավելի հանգիստ ժամանակների համեմատ»:³

Նախագահ Ռասսել Ա. Նելսոնը նույնպես աղերսել է. «Ես աղերսում եմ ձեզ՝ Եկեղեցու քույրե՛ր, . . . քայլ արեք դեպի առաջ: Ավելի քան երբևէ, ձեր իրավացի և անհրաժեշտ տեղը զբաղեցրեք ձեր տանը, ձեր համայնքում և Աստծո արքայությունում»:⁴

Վերջերս ես արտոնություն ունեցա Երեխաների միության մի խումբ երեխաների հետ միասին հանդիպել Նախագահ Ռասսել Ա. Նելսոնի հետ Նյու Յորք նահանգի Պալմիրայի շրջանի մի տանը, որը Սմիթների ընտանիքի տան

կրկնօրինակն էր: Լսեք, թե ինչպես է սիրելի մարգարեն ուսուցանում երեխաներին, թե *կրկնօրինակ* ինչ կարող են անել՝ դեպի առաջ քայլ կատարելու համար:

Քույր Ջոնս. «Հետաքրքիր է՝ արդյոք հարց ունեք, որը կկամենայիք տալ նախագահ Նելսոնին: Դուք նստած եք այստեղ մարգարեի հետ: Կա՞ մի բան, որը դուք միշտ ցանկացել եք հարցնել մարգարեին: Այո, Փերլ:»

Փերլ. «Դժվա՞ր է լինել մարգարե: Դուք իսկապես շատ ե՞ք զբաղված»:

Նախագահ Նելսոն. «Իհարկե դժվար է: Անել ամեն բան՝ Փրկիչին ավելի նմանվելու համար, դժվար է: Օրինակ, երբ Աստված կամեցավ տասը պատվիրանները տալ Մովսեսին, ըստ Նրա, ուր պիտի Մովսեսը գնար: Դեպի սարի գագաթը՝ Սինայ սարի գագաթը: Այնպես որ, Մովսեսը ստիպված էր քայլել ամբողջ ճանապարհը, մինչև հասնել այդ սարի գագաթը, որպեսզի ստանար տասը պատվիրանները: Այսպիսով, Երկնային Հայրը կարող էր ասել, «Մովսես՛ս, դու սկսիր այնտեղից, իսկ ես կսկսեմ այստեղից, և ես կհանդիպեմ քեզ կես ճանապարհին»: Ոչ, Տերը սիրում է ջանքը, որովհետև ջանքը բերում է պարգևներ, որը չի կարող գալ առանց դրա: Օրինակ, դուք երբևէ դաշնամուրի դասեր վերցրել եք»:

Երեխաներ. «Այո»:

Փերլ. «Ես ջութակի դասեր եմ վերցնում»:

Նախագահ Նելսոն. «Իսկ դուք պարապո՞ւմ եք»:

Երեխաներ. «Այո»:

Նախագահ Նելսոն. «Ի՞նչ է տեղի ունենում, եթե չեք պարապում»:

Փերլ. «Մոռանում ենք»:

Նախագահ Նելսոն. «Այո, դուք առաջընթաց չեք ունենում, այդպես չէ՞»: Այսպիսով պատասխանն է՝ այո, Փերլ: Դա պահանջում է ջանք, շատ տքնաջան աշխատանք, շատ պարապմունքներ, և երբեք վերջ չկա: Դա լավ է: Դա լավ է, որովհետև մենք միշտ առաջադիմում ենք: Նույնիսկ հաջորդ կյանքում մենք առաջընթաց ենք ունենում:

Նախագահ Նելսոնի պատասխանը այդ թանկագին երեխաներին վերաբերում է մեզանից յուրաքանչյուրին: Տերը սիրում է ջանքը, իսկ ջանքերը բերում են պարգևներ: Մենք շարունակում ենք պարապել: Մենք միշտ առաջադիմում ենք, քանի դեռ ձգտում ենք հետևել Տիրոջը:⁵ Նա չի ակնկալում կատարելություն այսօր: Մենք շարունակում ենք մազցել մեր անձնական Սինայ սարը: Ինչպես անցյալ ժամանակներում, մեր ճամփորդությունը իսկապես ջանք է պահանջում, տքնաջան աշխատանք և պարապմունք, բայց առաջադիմելու մեր պարտավորությունը բերում է հավերժական պարգևներ:⁶

Էլ ի՞նչ ենք սովորում մարգարե Ջոզեֆ Սմիթից և առաջին տեսիլքից ջանքի, տքնաջան աշխատանքի և պարապելու մասին: Առաջին տեսիլքը մեզ ուղղություն է տալիս *մեր* եզակի, շարունակվող դերերի վերաբերյալ: Որպես հավատացյալ կանայք, մենք կարող ենք ճշմարտության սկզբունքներ վերցնել մարգարե Ջոզեֆ Սմիթի փորձառություններից, որոնք գաղափարներ են տալիս մեր անձնական հայտնությունը ստանալու վերաբերյալ: Օրինակ.

- Մեր աշխատանքում կան դժվարություններ:
- Մենք դիմում ենք սուրբ գրություններին, որպեսզի իմաստություն ստանանք գործելու համար:
- Մենք ցույց ենք տալիս մեր հավատքը և վստահությունը Աստծո հանդեպ:
- Մենք գործադրում ենք մեր ուժը՝ Աստծուն աղերսելու համար, որ օգնի մեզ խափանել հակառակորդի ազդեցությունը:
- Մենք առաջարկում ենք մեր սրտի ցանկություններն Աստծուն:
- Մենք կենտրոնանում ենք Նրա լույսի վրա, որն առաջնորդում է մեր կյանքի ընտրությունները և հանգչում է մեզ վրա, երբ մենք դիմում ենք Նրան:

• Մենք գիտակցում ենք, որ Նա գիտի մեզանից յուրաքանչյուրին անունով և մեզ համար անհատական դերեր ունի, որ կատարենք:⁷

Բացի այդ, Ջոզեֆ Սմիթը վերականգնեց այն գիտելիքը, որ մենք ունենք աստվածային ներուժ և հավերժական արժեք: Մեր Երկնային Հոր հետ այդ կապի շնորհիվ ես հավատում եմ՝ Նա *սպասում է* մեզ, որ հայտնություն ստանանք Իրենից:

Տերը Էմմա Սմիթին նաև խորհուրդ տվեց «ընդունել Սուրբ Հոգին», շատ սովորել, «մի կողմ դնել այս աշխարհի բաները, . . . ավելի լավ բաների ձգտել» և «կառչել Աստծո հետ կապած [իր] ուխտերից»:⁸ Սովորելն առաջընթացի անբաժանելի է մասն է, մանավանդ որ Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը սովորեցնում է մեզ մի կողմ դնել այն, ինչը մեզանից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է, այսինքն՝ այն, ինչ կարող է *շեղել* մեզ կամ *հետսաձգել* մեր առաջընթացը:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, աղերսում եմ ձեզ մեծացնել հայտնություն ստանալու ձեր հոգևոր կարողությունը»:⁹ Մեր մարգարեի խոսքերը մշտապես ինձ հետ են, երբ մտածում եմ կանանց՝ առաջ քայլ անելու ունակության մասին: Նա աղերսում է մեզ, որը նշանակում է առաջնահերթություն: Նա մեզ սովորեցնում է, թե ինչպես կարելի է հոգեպես գոյատևել մեղքերով հիվանդ աշխարհում՝ հայտնություն ստանալու և ըստ դրա գործելու միջոցով:¹⁰ Երբ մենք դա անում ենք, հարգելով և ապրելով ըստ Տիրոջ պատվիրանների, մեզ, ինչպես Էմմա Սմիթին խոստացված է «արդարության պսակ»:¹¹ Մարգարե Ջոզեֆն ուսուցանել է *գիտենալու* կարևորության մասին, որ այն ուղին, որին հետևում ենք մենք այս կյանքի ընթացքում, հաստատված է Աստծո կողմից: Առանց այդ գիտելիքի, մենք «գնալով կհոգնենք [մեր] մտքերում և կթուլանանք»:¹²

Այս համաժողովում մենք կլսենք ճշմարտություններ, որոնք կոզեզնչեն մեզ փոխվել, բարելավվել և մաքրագործել մեր կյանքը: Անձնական հայտնության միջոցով կարող ենք կանխել այն, ինչ ումանք անվանում են «գերագույն համաժողովով համակված», երբ մենք հեռանում ենք՝ վճռականորեն տրամադրված, որ կանենք այդ *սախնակ* այժմ: Կանայք կրում են բազմաթիվ գլխարկներ, բայց անհնարին է և անհարկի դրանք բոլորը միանգամից կրել: Հոգին օգնում է մեզ որոշել, թե ինչ աշխատանքի վրա կենտրոնանալ այսօր:¹³

Սուրբ Հոգու միջոցով Տիրոջ սիրառատ ազդեցությունն օգնում է մեզ հասկանալ մեր առաջընթացի համար *Նրա* առաջնահերթությունը: Անձնական հայտնությանն ուշադրություն դարձնելը տանում է դեպի *անձնակալ* առաջընթաց:¹⁴ Մենք լսում ենք և գործում:¹⁵ Տերն ասել է. «Խնդրեք Հորը՝ իմ անունով, հավատքով հավատալով, որ պիտի ստանաք, և դուք կունենաք Սուրբ Հոգին, որը ցույց է տալիս բոլոր բաները, որոնք նպատակահարմար են»:¹⁶ Մեր շարունակական դերը շարունակական հայտնություն ստանալն է:

Այդ անելիս երբ մենք հասնում ենք հմտության ավելի բարձր աստիճանի, մենք կարող ենք ստանալ ավելի շատ գործություն մեր անհատական դերերում՝ ծառայելու և կատարելու փրկության ու վեհացման գործը, որպեսզի իսկապես «մի կողմ դնենք այս աշխարհի բաները

և ձգտենք ավելի լավ բաների»:¹⁷ Այդ ժամանակ մենք կարող ենք ավելի արդյունավետ ոգեշնչել մեր աճող սերնդին անել նույնը:

Եղբայրներ՝ և քույրեր, մենք բոլորս ձգտում ենք Աստծո գործությանը մեր կյանքում:¹⁸ Այսօր կանանց և տղամարդկանց միջև կա գեղեցիկ միասնություն՝ Աստծո աշխատանքը իրականացնելիս: Մեզ մատչելի է քահանայության գործությունը ուխտերի միջոցով, որը կատարում ենք առաջինը՝ մկրտության ջրերում, իսկ հետո՝ սուրբ տաճարի պատերի ներսում:¹⁹ Նախագահ Նելսոնն ուսուցանել է մեզ. «Յուրաքանչյուր կին և յուրաքանչյուր տղամարդ, ով Աստծո հետ ուխտ է կապում և պահում այդ ուխտերը, և ով արժանիորեն մասնակցում է քահանայության արարողություններին, նրանց ուղղակիորեն մատչելի է Աստծո գործությունը»:²⁰

Այսօր իմ անձնական խոստովանությունն այն է, որ ես, որպես կին, իմ կյանքի ավելի վաղ շրջանում չեի գիտակցում, որ *ինձ* իմ ուխտերի միջոցով մատչելի էր քահանայության գործությունը:²¹ Քույրեր, ես աղոթում եմ, որ մենք ճանաչենք և փայլալայենք քահանայության գործությունը, երբ «կառչում ենք [մեր] ուխտերից»,²² ընդունում սուրբ գործությունների ճշմարտությունները և ուշադրություն դարձնում մեր ապրող մարզարենների խոսքերին:

Եկեք համարձակ հայտարարենք մեր նվիրվածությունը մեր

հոգևոր ներուժը և օգնենք նրանց, ովքեր մեր շրջապատում են, անել նույնը՝ սիրով, ծառայությամբ, ղեկավարելով և զթոթայմբ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեյմս Ի. Թալմիջը նրբանկատորեն հիշեցրել է մեզ. «Կանանց և կանացիության ամենամեծ պաշտպանն աշխարհում Հիսուս Քրիստոսն է»:²⁴ Վերականգնման գործում կանանց շարունակական դերերի և մեզ բոլորիս համար վերջնական վերլուծության արդյունքում ո՞ր դերն է առաջնային: Ես վկայում եմ՝ դա Նրան *լսելն* է,²⁵ Նրան հետևելը,²⁶ Նրան վստահելը,²⁷ և Նրա սիրո տարածողը դառնալը:²⁸ Ես գիտեմ՝ Նա ապրում է:²⁹ Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրանք իմ քույրերին», *Լիսնակ*, նոյեմբեր 2015, 95-96:
2. Joseph Smith, in "Nauvoo Relief Society Minute Book," 38, josephsmithpapers.org.
3. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 217.
4. Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրանք իմ քույրերին», 97:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 58.26-28:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.33:
7. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.11-17:
8. Վարդապետություն և Ուխտեր 25.8, 10, 13:
9. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիսնակ*, մայիս 2018, 96:
10. Տես 2 Նեփի 9.39:
11. Վարդապետություն և Ուխտեր 25.15:
12. *Lectures on Faith* (1985), 68.
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.61:
14. Նախագահ Հենրի Բ. Այրինգն ասել է.

Այժմ, եթե ես և դուք մենակ լինեինք (ես կցանկանայի, որ մենք կարողանայինք լինել), որտեղ դուք ազատ կզգայիք հարցնելու այն, ինչ ուզում եք հարցնել, ես պատկերացնում եմ, որ ձեր ասածը սրա նման մի բան կլիներ. «Օ, եղբայր Այրինգ, ես զգացել եմ ձեր նկարագրած այդ բաներից մի քանիսը»: Սուրբ Հոգին ժամանակ առ ժամանակ դիպչել է իմ սրտին և մտքին: Բայց դա ինձ համար անընդհատ անհրաժեշտ կլինի, որպեսզի ես չպարտվեմ կամ լսաբլամ: Միթե՞ դա հնարավոր է: Միթե՞ դա հնարավոր է, և եթե դա հնարավոր է, ինչ է հարկավոր այդ օրհնությունը ստանալու համար:

«Լավ, եկեք սկսենք ձեր հարցի առաջին մասից: Այո, դա հնարավոր է: Երբ ես այդ հավաստիացման կարիքն ունենում եմ, իսկ ես կարիք եմ ունենում



Սան Բերնարդո, Սանտյագո, Չիլի

Երկնային Հորը և մեր Փրկիչին «անխախտ հավատքով նրա հանդեպ, ապավինելով նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս»:²³ Եկեք ուրախությամբ շարունակենք այս ճամփորդությունը դեպի մեր բարձրագույն

նաև ժամանակ առ ժամանակ, ես հիշում եմ երկու եղբայրներին: Նեփին, Լեքին և Տիրոջ մյուս ծառաները, ովքեր աշխատում էին նրանց հետ, բախվեցին կատաղի դիմադրության: Նրանք ծառայում էին՝ հետզհետե ավելի ամբարիշտ դարձող մի աշխարհում: Նրանք ստիպված էին գործ ունենալ սոսկալի խաբեությունների հետ: Այսպիսով ես քաջություն եմ ստանում, և դուք նույնպես կարող եք, Հելամանի այդ մեկ հատվածի խոսքերից: Այդ վերահավաստիացումը ընդգրկված է այն բոլոր բաներին վերաբերող պատմության մեջ, ինչը պատահել էր ողջ տարվա ընթացքում, և կարծես, գրողի համար գրեթե զարմանալի չէր: Լսեք.

«Եվ յոթանասունևիններորդ տարում, մեծ վեճ սկսվեց: Բայց եղավ այնպես, որ Նեփին ու Լեքին, և նրանց եղբայրներից շատերը, ովքեր գիտեին վարդապետության ճշմարիտ կետերի վերաբերյալ՝ ամեն օր բազմաթիվ հայտնություններ ունենալով, հետևաբար, նրանք քարոզում էին ժողովրդին, այնպես որ նրանք վերջ դրեցին նրանց վեճին այդ նույն տարում: [Հելաման 11.23]

«Նրանք «ամեն օր բազմաթիվ հայտնություններ էին ունենում»: Այսպիսով, ձեզ և ինձ համար դա պատասխանում է ձեր առաջին հարցին: Այո, հնարավոր է ունենալ Սուրբ Հոգու բավականաչափ ընկերակցությունը՝ ամեն օր բազմաթիվ հայտնություններ ունենալու համար: Դա հեշտ չի լինի: Բայց դա հնարավոր է: Ինչ կպահանջի դա, տարբեր կլինի յուրաքանչյուր անձնավորության համար, որովհետև մենք սկսում ենք այնտեղից, որտեղ որ մենք ենք՝ կյանքի մեր առանձնահատուկ փորձառությունների շարքում» («Gifts of the Spirit for Hard Times» [Brigham Young University fireside, Sept. 10, 2006], 3–4, speeches.byu.edu):

15. Տես 2 Նեփի 2.16:
16. Վարդապետություն և Ուխտեր 18.18:
17. Վարդապետություն և Ուխտեր 25.10:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.26, 33.41, 45.–46:
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.19–21:
20. Ռասսել Մ. Նելսոն, «Հոգևոր գանձեր», *Հիստորիա*, նոյեմբեր 2019, 77:
21. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Հոգևոր գանձեր», 76–79, Դավիթ Լ. Օուրս, «Քահանայության բանալիներն ու իշխանությունը», *Հիստորիա*, մայիս 2014, 49–52, Հենրի Բ. Այրինգ, «Կանաչը և ավետարանի ուսուցումը տանը», *Հիստորիա*, նոյեմբեր 2018, 58–60:
22. Վարդապետություն և Ուխտեր 25.13:
23. 2 Նեփի 31.19:
24. James E. Talmage, *Jesus the Christ*, 3rd ed. (1916), 475.
25. Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17:
26. Տես Մատթեոս 4.19–20:
27. Տես Առակաց 3.5–6, Վարդապետություն և Ուխտեր 11.12:
28. Տես Հովհաննես 13.34, Մովսես 7.47:
29. Տես 2 Նեփի 33.6, Վարդապետություն և Ուխտեր 76.22:



Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Կարևոր հոգևոր հիշողություններ

Երբ անձնական դժվարությունները կամ մեր վերահսկողությունից դուրս գտնվող աշխարհի պայմանները խավարեցնում են մեր ճանապարհը, մեր կյանքի գրքի կարևոր հոգևոր հիշողությունները նսնսկում են լուսավոր քարերի, որոնք օգնում են լուսավորել մեր առջև գտնվող ճանապարհը:

Առաջին Տեսիլքից տասնութ տարի անց մարգարե Ջոզեֆ Սմիթը գրեց իր փորձառության մանրամասն պատմությունը: Նա բախվել էր ընդդիմության, հալածանքի, ոտնձգության, սպառնալիքների և դաժան հարձակումների:¹ Սակայն նա համարձակ շարունակում էր վկայել իր Առաջին Տեսիլքի մասին. «Ես իսկապես տեսել էի լույսը և այդ լույսի մեջ ես տեսել էի երկու Անձնավորության, և նրանք իրականում խոսել էին ինձ հետ. և չնայած ինձ ատում և հալածում էին այն բանի համար, որ ասում էի, թե տեսիլք եմ տեսել, այնուամենայնիվ, դա ճշմարիտ էր: . . . Ես գիտեի դա և գիտեի, որ Աստված գիտի դա, և չէի կարող ուրանալ»:²

Իր կյանքի դժվարին ժամերին Ջոզեֆի հիշողությունը մոտ երկու տասնամյակ հետ էր գնում՝ դեպի այն անտարակուսելի սերը, որն Աստված տաժում էր իր հանդեպ, և դեպի այն իրադարձությունները, որոնք նախապատրաստեցին



Սուլթ Լեյք Սիթի, Յուտա, ԱՄՆ

աշխարհը վաղուց կանխատեսված Վերականգնմանը: Մնդրադառնալով իր հոգևոր ճամփորդությանը, Ջոզեֆն ասել է. «Ես չեմ մեղադրում որևէ մեկին իմ պատմությանը չհավատալու համար: Եթե ես չզգայի այն ամենը, ինչ ես զգացել եմ, ես ինքս չէի հավատա դրան»:³

Բայց փորձառություններն իրական էին, և նա երբեք չնոռացավ կամ հերքեց դրանք՝ հանգիստ հաստատելով իր վկայությունը, երբ տեղափոխվեց Քարթեջ: «Ես գնում եմ ինչպես գառը՝ մորթվելու», - ասել է նա, - «սակայն ես հանգիստ եմ, ինչպես ամառային առավոտը. իմ խիղճը մաքուր է Աստծո առաջ և բոլոր մարդկանց առաջ»:⁴

2եր կարևոր հոգևոր հիշողությունները

Մարգարե Ջոզեֆի օրինակում մի դաս կա մեզ համար: Մուրթ Հոգու կողմից տրված խաղաղ հրահանգի հետ միասին, ժամանակ առ ժամանակ Աստված հզոր կերպով և խիստ անհատապես հավաստիացնում է մեզանից յուրաքանչյուրին, որ Ինքը ճանաչում է մեզ, սիրում և օրհնում է մեզ՝ մասնավորապես և անկեղծորեն: Ապա՝ դժվարության պահերին Փրկիչը այս զգացողությունները մեր միտքն է բերում:

Մտածեք ձեր սեփական կյանքի մասին: Տարիների ընթացքում ամբողջ աշխարհի Վերջին Օրերի Սրբերից ես լսել եմ հազարավոր հոգևոր փորձառությունների մասին, որոնք ինձ համար հաստատում են, որ, անկասկած, Աստված գիտի և սիրում է մեզանից յուրաքանչյուրին, և Նա պատրաստ է բացահայտել Ինքն Իրեն մեզ համար: Այս փորձառությունները կարող են տեղի ունենալ մեր կյանքի կարևոր պահերին կամ նախապես աննշան թվացող դեպքերի ժամանակ, բայց դրանք միշտ ուղեկցվում են Աստծո սիրո բացառապես ուժեղ հոգևոր հաստատումով:

Հիշելով այս հոգևորապես կարևոր փորձառությունները, մենք ծնկի ենք իջնում և հայտարարում, ինչպես մարգարե Ջոզեֆ Մմիթը

հայտարարեց. «Ես իսկապես տեսիլք եմ տեսել: Ես գիտեի դա և գիտեի, որ Աստված գիտի դա»:⁵

Չորս օրինակներ

Հիշեք ձեր հոգևորապես կարևոր հիշողությունները, երբ ես կիսվեմ ուրիշների մի քանի օրինակներով:

Տարիներ առաջ մի ցգի տարեց հայրապետը, ում սրտի երկու փականները լավ չէին աշխատում, խնդրել էր դոկտոր Ռասսել Մ. Նելսոնին վիրահատել իրեն, չնայած այդ ժամանակ երկրորդ վնասված փականի համար վիրահատական լուծում չկար: Դոկտոր Նելսոնը, ի վերջո, որոշեց վիրահատել նրան: Ահա նախագահ Նելսոնի խոսքերը.

«Առաջին փականի խցանումը մաքրեցինք և սկսեցինք զբաղվել երկրորդ փականով: Մենք պարզեցինք, որ այն անվնաս էր, բայց այնքան լայնացած էր, որ այլև չէր կարող գործել ինչպես հարկն է: Այս փականը զննելիս մի հուշում հստակ տպավորվեց իմ մտքում.

Նեղացրո՛ւ օղակի շրջագիծը:

Ես ասացի դա իմ օգնականին. «Փականի հյուսվածքը բավարար կլինի, եթե մենք կարողանանք արդյունավետորեն նեղացնել օղակը՝ հասցնելով այն իր իրական չափսին»:

«Բայց ինչպե՞ս: . . . Մի վառ պատկեր հայտնվեց իմ մտքում, ցույց տալով, թե ինչպես կարելի է տեղադրել կարերը՝ ծալել այստեղ և կարճացնել այնտեղ: . . . Ես

դեռևս հիշում եմ այդ մտապատկերը, որում կետագծերով նշված էր, թե որտեղ պետք է դրվեն կարերը: Նորոգումն ավարտվեց՝ ինչպես գծագրված էր իմ մտքում: Մենք փորձեցինք փականը և պարզեցինք, որ արտահոսքը զգալիորեն նվազել էր: Իմ օգնականն ասաց. «Մա հրա՛շք է»:⁶ Հայրապետը ապրեց երկար տարիներ:

Դոկտոր Նելսոնը ուղղորդում էր ստացել: Եվ նա գիտեր, որ Աստված գիտեր, որ ինքը գիտեր, որ ուղղորդվել էր:

Ես և Քեյթին առաջին անգամ հանդիպեցինք Բեատրիչ Մագրեին 30 տարի առաջ Ֆրանսիայում: Բեատրիչը վերջերս պատմեց ինձ մի փորձառության մասին, որը խորը ազդեցություն էր թողել նրա հոգևոր կյանքի վրա իր մկրտությունից կարճ ժամանակ անց, երբ նա դեռ անչափահաս էր: Ահա նրա պատմությունը.

«Մեր ճյուղի երիտասարդները իրենց ղեկավարների հետ ճամփորդել էին դեպի Լականաուի լողափ, որը մեկ ու կես ժամվա ավտոմեքենայի ճանապարհ էր Բորդոյից:

Նախքան տուն վերադառնալը, ղեկավարներից մեկը որոշեց վերջին անգամ լողանալ և ակնոցով սուզվեց ալիքների մեջ: Երբ նա դուրս եկավ ջրից, ակնոցն անհետացել էր: . . . Այն կորել էր օվկիանոսում:

Առանց ակնոցի նա չէր կարող վարել իր ավտոմեքենան: Մենք կմնայինք տնից հեռու:



Բժիշկ Ռասսել Մ. Նելսոն



Բեատրիս Մագրե

Մի հավատավոր քույր առաջարկեց, որ մենք աղոթենք:

Ես շշուկով ասացի, որ աղոթքը մեզ ոչ մի օգուտ չի տա, և դժկամությամբ միացա խմբին հրապարակավ աղոթելու համար, երբ մենք կանգնած էինք մինչև գոտկատեղը հասնող պղտոր ջրի մեջ:

Երբ աղոթքն ավարտվեց, ես տարածեցի ձեռքերս՝ ջուր ցանելով բոլորի վրա: Երբ ձեռքերս տարածում էի ջրի մակերեսին նրա ակնոցը հայտնվեց իմ ձեռքում: Մի հզոր զգացում թափանցեց մինչև իմ հոգու խորքը, որ Աստված իրոք լսում է մեր աղոթքները:⁷

Քառասունհինգ տարի անց նա հիշեց դա, կարծես երեկ էր պատահել: Բեատրիչը օրհնվել էր, և նա գիտեր, որ Աստված գիտի, որ ինքը գիտեր, որ ինքն օրհնված էր եղել:

Նախագահ Նելսոնի և քույր Մագրեի փորձառությունները շատ տարբեր էին, սակայն երկու դեպքերի համար էլ Աստծո սիրտ անմոռանալի կարևոր հոգևոր հիշողությունը ամրացել էր նրանց սրտերում:

Այս կարևոր իրադարձությունները հաճախ տեղի են ունենում, երբ մենք սովորում ենք վերականգնված ավետարանի մասին կամ, երբ ավետարանով կիսվում ենք ուրիշների հետ:

Այս նկարը արված է Ման Պաուլոյում (Բրազիլիա) 2004 թվականին: Ֆլորիպես Լուիզա Դամասիոն Իփաթինգա Բրազիլիա ցցից, 114 տարեկան էր: Խոսելով իր դարձի մասին, քույր Դամասիոն պատմեց

ինձ, որ միսիոներները իրենց գյուղում քահանայության օրհնություն էին տվել մի շատ վտանգավոր հիվանդ երեխայի, որը հրաշքով առողջացել էր: Նա ցանկանում էր ավելին իմանալ: Երբ նա աղոթեց նրանց ուղերձի մասին, Հոգու անձխտելի վկայությունը հաստատեց նրան, որ Ջոզեֆ Մմիթը Աստծո մարգարեն է: 103 տարեկանում նա մկրտվեց, իսկ 104-ում ստացավ իր օծումը: Դրանից հետո ամեն տարի նա 14 ժամ ավտոբուսով ճամփորդում էր՝ մեկ շաբաթ տաճարում անցկացնելու համար: Քույր Դամասիոն ստացել էր երկնային հաստատում և գիտեր, որ Աստված գիտի, որ ինքը գիտի, որ իր վկայությունը ճիշտ է:

Միս իմ հոգևոր վկայությունը Ֆրանսիայում իմ առաջին միսիայից՝ 48 տարի առաջ:

Մինչ մենք թակում էինք դռները, ես և իմ զուգրնկերը Մորմոնի Գիրքը տվեցինք մի տարեց կնոջ: Մոտ մի շաբաթ անց վերադարձանք կնոջ տուն, և նա բացեց դուռը: Նախքան որևէ բան կխոսեինք, ես զգացի մի իրական հոգևոր զորություն: Ուժգին զգացումները շարունակվում էին, երբ քույր Ալիս Օդուբերտը հրավիրեց մեզ ներս և ասաց, որ ինքը կարդացել էր Մորմոնի Գիրքը և գիտեր, որ այն ճշմարիտ է: Երբ այդ օրը մենք հեռանում էինք նրա տնից, ես աղոթեցի. «Երկնային Հայր, խնդրում եմ օգնիր ինձ երբեք չմոռանալ այն, ինչ ես զգացի»: Եվ ես երբեք չմոռացա:

Այդ սովորական թվացող պահին, մի դռան մոտ, որը շատ նման էր հարյուրավոր այլ դռների, ես զգացի երկնքի զորությունը: Եվ ես գիտեի, որ Աստված գիտի, որ ես գիտեմ, որ երկնքի պատուհանը բաց էր:

Անհատականացված և անհերքելի

Այս կարևոր հոգևոր պահերը գալիս են տարբեր ժամանակներում և տարբեր եղանակներով՝ մեզանից յուրաքանչյուրի համար անհատականացված:

Հիշեք ձեր սիրելի օրինակները սուրբ գրություններից: Նրանք, ովքեր լսում էին Առաքյալ Պետրոսին «իրանց սրտերումը զղջացին»:⁸ Աբիս անունով Լամանացի կինը հավատում էր «իր հոր մի նշանավոր տեսիլքին»:⁹ Եվ մի ձայն եկավ Ենովսի մտքին:¹⁰

Իմ ընկեր Քլեյտոն Քրիսչենսենը այս կերպ է նկարագրել փորձառությունը, երբ աղոթքով կարդում էր Մորմոնի Գիրքը. «Մի գեղեցիկ, ջերմ, սիրառատ հոգի . . . շրջապատեց ինձ և ներթափանցեց իմ հոգին, պարուրելով ինձ սիրո մի զգացումով, որը ես չէի կարող պատկերացնել, որ կզգայի [և այս զգացումները շարունակվեցին ամեն գիշեր]»:¹¹

Կան ժամանակներ, երբ հոգևոր զգացմունքները կրակի նման թափանցում են մեր սիրտը՝ լուսավորելով մեր հոգին: Ջոզեֆ Մմիթը բացատրել է, որ մենք երբեմն ստանում ենք «մտքերի հանկարծակի բռնկում», իսկ երբեմն՝ մաքուր բանականություն:¹²

Նախագահ Դալլին Հ. Օուքսը այսպիսի խորհուրդ է տվել մի մարդու, ով անկեղծորեն պնդում էր, որ երբեք չի ունեցել նմանատիպ փորձառություն. «Գուցե դուք կրկին ու կրկին ստացել եք ձեր աղոթքների պատասխանները, բայց ակնկալել եք, որ կստանաք որևէ մեծ նշան կամ կլսեք մի բարձր ձայն, որի պատճառով էլ կարծում եք, թե պատասխան չեք ստացել»:¹³ Փրկիչը Ինքը խոսել է այն մարդկանց մեծ հավաստի մասին, ովքեր «[օրհնվեցին] կրակով և Սուրբ Հոգով, [բայց ովքեր] չիմացան այդ»:¹⁴



Քույր Ֆլորիպես Լուիզա Դամասիոն երեք Անդերսենի հետ:



Երեք Անդերսենը մկրտում է Ալիս Օդուբերտին:

Ինչպե՞ս եք դուք լսում Նրան:

Մենք վերջերս լսեցինք նախագահ Ռասսել Մ. Նելսոնի խոսքերը. «Ես հրավիրում եմ ձեզ խորապես ու հաճախ մտածել այս կարևոր հարցի շուրջ. Ինչպե՞ս եք դուք լսում Նրան: Ես նաև հրավիրում եմ ձեզ քայլեր ձեռնարկել, որպեսզի ավելի լավ ու ավելի հաճախ լսեք Նրան»:¹⁵ Նա կրկնեց այդ հրավերը այսօր առավոտյան:

Մենք լսում ենք Նրան մեր աղոթքներում, մեր տներում, սուրբ գրություններում, մեր հիմներում, երբ արժանավորությամբ ընդունում ենք հաղորդությունը, երբ հռչակում ենք մեր հավատքը, երբ ծառայում ենք ուրիշներին, երբ տաճար ենք հաճախում մեր հավատակիցների հետ: Հոգևորապես կարևոր պահերը գալիս են, երբ աղոթքով լսում ենք գերագույն համաժողովը և ավելի լավ ենք պահում պատվիրանները: Երեխանե՛ր, այս փորձառությունները նաև ձեզ համար են: Հիշե՛ք, Հիսուսը «սովորեցրեց ու ծառայեց երեխաներին . . . և [երեխաները] ասացին . . . մեծ ու զարմանալի բաներ»:¹⁶ Տերն ասել է.

«[Այս գիտելիքները] Հոգով են տրված ձեզ, . . . եթե չլինեք իմ զորությամբ, դուք չէիք ունենա դրանք.

Ուստի, դուք կարող եք վկայել, որ լսել եք իմ ձայնը և գիտեք իմ խոսքերը»:¹⁷

Մենք կարող ենք «լսել Նրան» Փրկիչի անզուգական Քավության օրհնության շնորհիվ:

Քանի որ մենք չենք կարող ընտրել այս կարևոր պահերը ստանալու ժամանակացույցը, նախագահ Հենրի Բ. Մյրինգը տվել է այս խորհուրդը մեր նախապատրաստման համար. «Այսօր և վաղը երեկոյան, դուք կարող եք աղոթել և խորհել՝ հարցնելով. «Արդյո՞ք Աստված այս ուղերձն ուղարկեց ինձ համար: Արդյո՞ք ես տեսել եմ Նրա ձեռքը իմ կամ իմ [ընտանիքի] անդամների կյանքում»:¹⁸ Հավատքը, հնազանդությունը, խոնարհությունը և անկեղծ միտումը բացում են երկնքի պատուհանները:¹⁹

Պատկեր

Ձեր հոգևոր հիշողությունների մասին կարող եք այս կերպ մտածել: Մշտական աղոթքով, պատվիրանները պահելու վճռականությամբ և Սուրբ Հոգու պարգևով մենք առաջ ենք շարժվում մեր կյանքի ճանապարհով: Երբ անձնական դժվարությունները կամ հիասթափությունները խավարեցնում են մեր ճանապարհը, կամ մեր վերահսկողությունից դուրս գտնվող աշխարհի պայմանները ստիպում են մեզ հետաքրքրվել ապագայով, մեր կյանքի գրքի կարևոր հոգևոր հիշողությունները նմանվում են լուսավոր քարերի, որոնք օգնում են լուսավորել մեր առջև գտնվող ճանապարհը, հավաստիացնելով մեզ, որ Աստված գիտի մեզ, սիրում է մեզ և ուղարկել է Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որպեսզի օգնի մեզ տուն վերադառնալ: Եվ երբ ինչ-որ

մեկը մի կողմ է դնում իր կարևոր հիշողությունները և մոլորված է կամ շփոթված, մենք շրջում ենք նրանց դեպի Փրկիչը և նրանց հետ կիսվում ենք մեր հավատքով ու հիշողություններով՝ օգնելով նրանց կրկին բացահայտել այդ թանկագին հոգևոր պահերը, որոնք նրանց համար մի ժամանակ անգին են եղել:

Որոշ փորձառություններ այնքան սուրբ են, որ մենք պահպանում ենք դրանք մեր հոգևոր հիշողության մեջ և չենք կիսվում դրանցով:²⁰

«Հրեշտակները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ. ուստի, նրանք խոսում են Քրիստոսի խոսքերը»:²¹

«Հրեշտակները [չեն] դադարել հայտնվել մարդկանց զավակներին:


Քանզի ահա, նրանք ենթարկվում են [Քրիստոսին]՝ սպասավորելու համաձայն նրա հրամանի խոսքի, իրենց ցույց տալով նրանց, ովքեր ուժեղ են հավատքով և կայուն՝ մտքով, ամեն ձևի աստվածապաշտությամբ»:²²

Եվ «Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, . . . ամեն բան կ'սովորեցնե՛ ձեզ, եւ կ'իշխեցնե՛ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի»:²³

Միրով և հաճախ անդրադարձեք ձեր սրբազան հիշողություններին: Հավատացեք դրանց: Գրի առ դրանք: Կիսվեք դրանցով ձեր ընտանիքի հետ: Վստահ եղեք, որ դրանք վերադառնում են ձեզ ձեր սիրելի Երկնային Հոր և Նրա սիրելի Որդու միջոցով:²⁴ Թող դրանք համբերություն բերեն ձեր



Աղոթքը, ուխտեր պահելը և Սուրբ Հոգին օգնում են մեզ առաջ շարժվել կյանքում:



Հոգևոր հիշողությունները նման են լուսավոր քարերի, որոնք լուսավորում են ճանապարհը:



Մենք կիսվում ենք մեր հավատքով ու հիշողություններով, որպեսզի մոլորվածներին դարձի բերենք դեպի Տերը:



կասկածներին, և դուք հասկանաք ձեր դժվարությունները:²⁵ Ես խոստանում եմ, որ երբ դուք պատրաստակամ ընդունեք և զգուշորեն, զանձի պես պահպանեք ձեր կյանքի կարևոր հոգևոր իրադարձությունները, ավելի շատ կունենաք ձեր կյանքում: Երկնային Հայրը գիտի ձեզ և սիրում է ձեզ:

Հիսուսը Քրիստոսն է, Նրա ավետարանը վերականգնվել է, և եթե մենք մնանք հավատարիմ, ես վկայում եմ, որ մենք ընդմիջտ Նրանը կլինենք, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆԵՐ

1. *Stu Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 1, *The Standard of Truth, 1815–1846* (2018), 150–53; see also Joseph Smith, “History, 1838–1856, volume A-1 [23 December 1805–30 August 1834],” 205–9, josephsmithpapers.org; *Saints*, 1:365–66.
2. Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.25:
3. *Եկեղեցու Նախասահմանի Ուսումնասիրող. Ջոզեֆ Սմիթ* (2007), 525:
4. Վարդապետություն և Ուխտեր 135.4.
5. Ես միշտ տպավորված եմ եղել հետևյալ խոսքերով Ջոզեֆ Սմիթ - Պատմությունում. «Ես գիտեի դա և գիտեի, որ Աստված գիտի դա» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.25): Նա պետք է կանգներ Աստծո առաջ և ընդուներ, որ այս իրադարձությունները Սրբազան Պուրակում փաստորեն տեղի ունեցան իր կյանքում, և դրա շնորհիվ իր կյանքը այլևս առաջվանը չէր լինի: Մոտ 20 տարի առաջ ես առաջին անգամ լսեցի այս արտահայտության փոփոխված տարբերակը Երեց Նիլ Մ. Մաքսվելի կողմից: Նա բերել է հետևյալ օրինակը. «Տարիներ առաջ 1945թ. մայիսին, երբ ես տասնութ տարեկան էի, այդպիսի պահ էր ինձ համար Օլիմպիա կղզում: Իմ կողմից, անշուշտ, հերոսություն չէր, այլ իմ և մյուսների համար ավելի շուտ օրհնություն էր, քանի որ մեր դիրքերը հաճախ նմանակամ էին ճապոնական հրետանու կողմից: Հաճախակի կրկնվող նմանակամությունից հետո, որի պատճառով մենք փոխեցինք մեր տեղակայումը,

հակառակորդի հրետանին վերջապես սկսեց հրետակոծել ճիշտ դիրքերը: Նրանք հավանաբար գնդակոծում էին տպավորություն գործելու համար, բայց աստվածային պատասխան կար առնվազն մեկ վայրեցած ու եսասիրական աղոթքին: Ուրբանությունը դադարեց: . . . Ես օրհնված էի, և գիտեի, որ Աստված գիտեր, որ ես գիտեի» (“Becoming a Disciple,” *Ensign*, June 1996, 19):

Երեց Մաքսվելը ավելացրեց, որ ոչ միայն ինքը գիտեր, և որ ոչ միայն Աստված գիտեր, այլ որ Աստված գիտեր, որ ինքը գիտի, որ ինքն օրհնվել էր: Խորհրդանշականորեն, ինձ համար սա ավելի է բարձրացնում պատասխանատվությունը: Երբեմն մեր Երկնային Հայրը մեզ տրված օրհնությունը զուգակցում է ուժեղ հոգևոր հաստատումով, որ Երկինքները միջամտել էին մեր անունից: Չկա որևէ ժխտում: Այն մնում է մեզ հետ, և եթե մենք ազնիվ ենք ու հավատարիմ, այն կփոխի մեր կյանքը զայիք տարիներին: «Ես օրհնվել էի և գիտեի, որ Աստված գիտեր, որ ես գիտեի, որ ես օրհնվել էի»:

6. Ռասսել Մ. Նելսոն, «Աղոթքի քաղցր ուժը», *Կառնուս*, մայիս 2003, 7–8:
7. Բեստրիչ Մագրեն իր անձնական պատմությունով կիսվել է Երեց Անդերսենի հետ 2019թ. հոկտեմբերի 29-ին, լրացուցիչ էլ-նամակով՝ 2020 թ. հունվարի 24-ին:
8. Գործք Առաքելոց 2.37:
9. Ամա 19.16:
10. Տես Ենով 1.5:
11. Clayton M. Christensen, “The Most Useful Piece of Knowledge,” *Liahona*, Jan. 2009, 23:
12. Տես *Ուսումնասիրող. Ջոզեֆ Սմիթ*, 132:
13. Dallin H. Oaks, *Life’s Lessons Learned: Personal Reflections* (2011), 116:
14. 3 Նեփի 9.20:
15. Russell M. Nelson, “How Do You #HearHim? A Special Invitation,” Feb. 26, 2020, blog.ChurchofJesusChrist.org.
16. 3 Նեփի 26.14:
17. Վարդապետություն և Ուխտեր 18.35–36 Չզացմունքները միշտ ուղեկցում են հոգևոր գիտելիքներին: «Դուք սրընթաց եք անօրինություն գործելիս, բայց դանդաղ եք Տիրոջը՝ ձեր Աստծուն հիշելիս: Դուք տեսաք հրեշտակի, և նա խոսեց ձեզ հետ. այդ, դուք լսել եք նրա ձայնը, ժամանակ առ ժամանակ. և նա խոսել է ձեզ հետ՝ մեղմ, հանդարտ ձայնով, բայց դուք անզգայացած էիք, որպեսզի

կարողանայիք զգալ նրա խոսքերը» (1 Նեփի 17.45):

18. Տես Հենրի Բ. Այրինգ, «Օ՛, հիշիր, հիշիր», *Կառնուս*, նոյեմբեր 2007, 69:
19. Տես 2 Նեփի 31.13, Մորոնի 10.4: 1991թ. նախագահ Դալլին Հ. Օուքսը այցելեց մեր միսիան Բորդոնում (Ֆրանսիա): Նա բացատրեց մեր միսիոներներին, որ անկեղծ միտումը նշանակում է, որ աղոթող մարդը Տիրոջը ասում է նման մի բան. «Ես հետաքրքրասիրությունից չեմ հարցնում, այլ լիակատար անկեղծությամբ՝ գործելու ըստ իմ աղոթքի պատասխանի: Եթե Դու ինձ տաս այս պատասխանը, ես կգործեմ, որպեսզի փոխեմ իմ կյանքը: Ես կարճագանգեմ»:
20. «Շատերին է տրված իմանալ Աստծո խորհուրդները. սակայն դրանք դրված են խիստ հրամանի ներքո, որ նրանք չպետք է հաղորդեն, բացառությամբ իր խոսքի այն բաժնի, որը նա շնորհում է մարդկանց զավակներին, այն ուշադրության ու ջանասիրության համաձայն, որը նրանք ցուցաբերում են նրա հանդեպ» (Ամա 12:9):
Երեց Նիլ Մ. Մաքսվելը ասել է. «Ոգեշնչում է պահանջվում, որպեսզի իմանանք, թե երբ կիսվենք [հոգևոր փորձառություններով]: Ես հիշում եմ նախագահ Մարիոն Գ. Ռոմնիի խոսքերը, ով համակցելով խելքն ու իմաստությունը, ասել է. «Մենք կունենանք ավելի շատ հոգևոր փորձառություններ, եթե այդքան շատ չխոսենք դրանց մասին» (“Called to Serve” [Brigham Young University devotional, Mar. 27, 1994], 9, speeches.byu.edu):
21. 2 Նեփի 32.3:
22. Մորոնի 7.29–30:
23. Հովհաննես 14.26:
24. Մեքսիկոյի Քահանայության օրհնությունները մատչելի են բոլորին: Համաժողովին նախորդող շաբաթվա ընթացքում, երբ իմ ելույթն ավարտված էր, ես հոգևորապես անդրադարձա *Divine Signatures: The Confirming Hand of God* (2010) գրքին, որի հեղինակն է Ջերալդ Ն. Լանդը, ով ծառայել է որպես Գերագույն Իշխանավոր Յոթանասունական 2002–2008 թթ.: Ի ուրախություն ինձ, Եղբայր Լուսնդի խոսքերը մի գեղեցիկ երկրորդ վկայություն էին համաժողովի այս ելույթում կիսված սկզբունքների համար և բավականություն կպատճառեին բոլորին, ովքեր ցանկանում են ավելի ուսումնասիրել կարևոր հոգևոր հիշողությունների մասին:
25. Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնի սիրելի մեջբերումներից մեկը շուտանդական պոետ Ջեյմս Մ. Բարրիի հետևյալ խոսքերն են. «Աստված մեզ հիշողություններ տվեց, որպեսզի մենք կարողանանք մեր կյանքի դեկտեմբերին ունենալ հունիսի վարդերը» (in Thomas S. Monson, “Think to Thank,” *Liahona*, Jan. 1999, 22): Ես նրան ճշմարիտ է հոգևոր հիշողությունների համար: Դրանք գուցե չտան օգտակար լինեն մեր կյանքի ցուրտ ու դժվարին ժամանակներում, երբ մենք ունենք այդ «հունիսյան» հոգևոր հիշողությունների կարիքը:



Դուգլաս Դ. Շիգալով
Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահության
նոր ազատված առաջին խորհրդակալ

Խորապես հաստատենք մեր սրտերում

*Տերը փորձում է օգնել բոլորիս՝ խորապես
ընդունելու Իր ավետարանը մեր սրտերում:*

Քույրե՛ր և եղբայրնե՛ր, ինչ փառա-
հեղ ժամանակներում ենք մենք
ապրում: Երբ մենք տոնում ենք
Վերականգնման սկիզբը, տեղին
է տոնել նաև շարունակվող Վերա-
կանգնումը, որի վկան ենք մենք:
Ես ուրախանում եմ, որ ձեզ հետ
ապրում եմ այս օրերում:¹ Տերը
շարունակում է Իր մարգարեների
միջոցով հայտնել ամեն անհրա-
ժեշտ բան, որ օգնի մեզ պատ-
րաստվել ընդունելու Նրան:²

Այդ անհրաժեշտ բաներից մեկը
Երեխաների և երիտասարդների
նոր նախաձեռնությունն է: Ձեզանից
շատերը ծանոթ են այս ծրագրի
շեշտադրման հետ, որը ներառում
է՝ նպատակներ դնելը, պատկա-
նելության նոր խորհրդանիշները
և Երիտասարդներին գորացնելու
համար համաժողովները: Բայց
մենք չպիտի թույլ տանք, որ
դրանք խանգարեն մեզ տեսնել
այն սկզբունքները, որոնց վրա
կառուցված է ծրագիրը, և դրանց
նպատակը. օգնել, որ Հիսուս Քրիս-
տոսի ավետարանը խորապես
հաստատվի մեր երեխաների և
երիտասարդների սրտերում:³

Ես հավատում եմ, որ երբ
սկսենք ավելի հստակ հասկանալ
այս սկզբունքները, մենք կդիտար-
կենք այն որպես ավելին, քան
ծրագիր 8–18 տարեկան անդամ-
ների համար: Մենք կտեսնենք, թե
Տերն ինչպես է փորձում օգնել մեզ
բոլորիս՝ խորապես ընդունելու Իր
ավետարանը մեր սրտերում: Ես
աղոթում եմ, որ Սուրբ Հոգին օգնի
մեզ սովորել միասին:

Հարաբերություններ. «Եղեք կրակից հետ»:⁴

Առաջին սկզբունքը հարաբե-
րություններն են: Քանի որ դրանք
Հիսուս Քրիստոսի Եկեղեցու բնա-
կան մասն են, մենք երբեմն մոռա-
նում ենք հարաբերությունների
կարևորությունը դեպի Քրիստոսը
մեր շարունակվող դարձի մեջ: Չի
ակնկալվում, որ մենք պետք է միա-
նակ գտնենք ուխտի ճանապարհը
կամ քայլերը այդ ճանապարհով:
Մենք սիրո և աջակցության կարիք
ունենք ծնողների, ընտանիքի մյուս
անդամների, ընկերների և ղեկա-
վարների կողմից, ովքեր նույնպես
քայլում են այդ ճանապարհով:

Այդպիսի հարաբերությունները
ժամանակ են պահանջում: Ժամա-
նակ՝ միասին լինելու համար:
Ժամանակ՝ միասին ծիծաղելու,
խաղալու, սովորելու և ծառայելու
համար: Ժամանակ, որպեսզի գնա-
հատենք միմյանց հետաքրքրու-
թյուններն ու դժվարությունները:
Ժամանակ՝ միմյանց հետ անկեղծ
ու ազնիվ լինելու համար, երբ
ձգտում ենք միասին լինել ավելի
լավը: Այս հարաբերությունները
հավաքման հիմնական նպատակ-
ներից մեկն է՝ որպես ընտանիք-
ներ, քվորումներ, դասարաններ և
համայնքներ: Դրանք արդյունա-
վետ սպասավորության հիմքն են:⁵

Երեց Դեյլ Գ. Ռենլանդը մեզ
տվել է այս հարաբերությունների
գարգացման բանալին, երբ ասել
է. «Եկեղեցում ուրիշներին արդյու-
նավետ ծառայելու համար մենք
պետք է տեսնենք նրանց . . . Երկ-
նային Հոր աչքերով: Միայն այդ
ժամանակ մենք կսկսենք ըմբռնել
հոգու իրական արժեքը: Միայն
այդ ժամանակ մենք կարող ենք
հասկանալ այն սերը, որ Երկնային
Հայրն ունի Իր բոլոր զավակների
հանդեպ»:⁶

Տեսնել ուրիշներին այնպես,
ինչպես Աստված է տեսնում՝
պարզ է: Ես հրավիրում եմ մեզ
բոլորիս փնտրել այդ պարզը:
Երբ մեր աչքերը բացվեն տես-
նելու համար,⁷ մենք կկարողա-
նանք օգնել ուրիշներին տեսնել
իրենց այնպես, ինչպես Աստված
է տեսնում:⁸ Նախագահ Հենրի Բ.
Այրինգը ասել է. «Մեծ նշանակու-
թյուն ունի այն, թե [ուրիշներն] ինչ
կսովորեն [ձեզանից] այն մասին,
թե ով եք դուք, թե ըստ ձեզ, ովքեր
են իրենք, և ձեր կարծիքով, ինչ
կարող են դառնալ: Կարծում
եմ, որ նրանք շատ բան չեն սովո-
րի դասախոսություններից: Նրանք
կսովորեն դա այն *զգացումներից*,
թե ով եք դուք, թե ըստ ձեզ, ովքեր
են իրենք, և ձեր կարծիքով, ինչ
կարող են դառնալ իրենք»:⁹ Օգնել
ուրիշներին հասկանալ իրենց
իրական ինքնությունն ու նպատա-
կը. սա ամենամեծ պարզներից
մեկն է, որ մենք կարող ենք տալ:¹⁰
Տեսնել ուրիշներին և ինքներս մեզ,

ինչպես Աստված է միավորում մեր սրտերը «միությանմբ ու սիրով մեկը մյուսի հանդեպ»:¹¹

Մշտապես աճող աշխարհիկ ուժերը ներգործում են մեզ վրա, ուստի մենք ուժի կարիք ունենք, որը գալիս է սիրալիկ հարաբերություններից: Ուստի, երբ մենք ծրագրում ենք միջոցառումներ, ժողովներ և այլ հավաքույթներ, եկեք հիշենք, որ այս հավաքույթների ընդհանուր նպատակը այնպիսի սիրալիկ հարաբերությունների ստեղծումն է, որոնք միավորում են և օգնում են, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը խորապես հաստատվի մեր սրտերում:¹²

Հայտնություն, ազատ կամք և ապաշխարություն. «Կապեք նրանց երկնքի հետ»¹³

Անշուշտ, միմյանց հետ կապված լինելը բավարար չէ: Կան շատ խմբեր և կազմակերպություններ, որոնք միաբանության են հասնում տարբեր նպատակների շուրջ: Մակայն մեր փնտրած միասնությունը Քրիստոսում մեկ լինելն է, ինքներս մեզ Նրա հետ կապելն է:¹⁴ Որպեսզի մեր սրտերը կապենք երկնքի հետ, մենք պետք է ունենանք անհատական հոգևոր փորձառություններ, որոնց մասին Երեց Անդերսենը հենց նոր պերճախոս կերպով խոսեց մեզ հետ:¹⁵ Մենք ձեռք ենք բերում այդ փորձառությունները, երբ Սուրբ Հոգին Աստծո խոսքն ու սերը հասցնում է մինչև մեր միտքն ու սիրտը:¹⁶

Այս հայտնությունը մենք ստանում ենք՝ սուրբ գրությունների, հատկապես Մորմոնի Գրքի, ապրող մարգարեների և այլ հավատարիմ աշակերտների ոգեշնչված խոսքերի միջոցով, ինչպես նաև մեղմ հանդարտ ձայնի միջոցով:¹⁷ Այս բառերն ավելին են, քան թանաքը էջի վրա, շառաչող ալիքները՝ մեր ականջներում և խոհերը՝ մեր մտքերում ու սրտերում: Աստծո խոսքը հոգևոր գործություն է:¹⁸ Այն ճշմարտություն է և լույս:¹⁹ Այն այնպիսին է, ինչպիսին մենք ենք լսում Նրան: Այն նախաձեռնում և ավելացնում է մեր

հավատքը Քրիստոսի հանդեպ և մեր մեջ ցանկություն է առաջացնում ավելի նմանվել Փրկիչին, այսինքն՝ ապաշխարել ու քայլել ուխտի արահետով:²⁰

Անցյալ ապրիլին նախագահ Ռասսել Մ. Նելսոնը օգնեց մեզ հասկանալ ապաշխարության կենտրոնական դերը հայտնության այս ճանաչողության մեջ:²¹ Նա ասաց. «Երբ ընտրում ենք ապաշխարությունը, մենք փոխվելու որոշում ենք կայացնում: Մենք թույլ ենք տալիս Փրկիչին վերափոխել ու դարձնել մեզ այն անձնավորությունը, որը մեր ներուժի լավագույն տարբերակն է: . . . Մենք որոշում ենք ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին»:²² Փոփոխության այս գործընթացը, որն աջակցվում է Աստծո խոսքով, այն է, թե մենք ինչպես ենք կապվում երկնքի հետ:

Նախագահ Նելսոնի ապաշխարության հրավերի հիմքում ազատ կամքի սկզբունքն է: Մենք ինքներս պետք է *ընտրենք* ապաշխարությունը: Ավետարանը ուժով չի հաստատվի մեր սրտերում: Երեց Ռենլանդն ասել է. «Դաստիարակելիս մեր Երկնային Հոր նպատակն այն չէ, որ Իր գավակներն *սևեն* այն, ինչը ճիշտ է, այլ որ Իր գավակներն *ընտրեն* անել այն, ինչը ճիշտ է»:²³

Օրագրերում, որոնք փոխարինվեցին Երեյսաների և երիտասարդների ծրագրով, կային ավելի քան 500 տարբեր պահանջներ, տարբեր ճանաչումներ ստանալու համար:²⁴ Այսօր, ըստ էության, կա մեկ պահանջ: Դա հրավեր է՝ *ընտրել* ավելի նմանվել Փրկիչին: Մենք անում ենք սա՝ ստանալով Աստծո խոսքը Սուրբ Հոգու միջոցով և թույլ տալով, որ Քրիստոսը դարձնի մեզ մեր ներուժի լավագույն տարբերակը:

Սա ավելին է, քան նպատակ դնելու կամ ինքնակատարելագործման փորձը: Նպատակները պարզապես գործիք են, որոնք օգնում են մեզ կապվել երկնքի հետ հայտնության, ազատ կամքի և ապաշխարության միջոցով, որպեսզի զանք Քրիստոսի մոտ, ստանանք

Նրա ավետարանը և խորապես հաստատենք մեր սրտերում:

Ներգրավվածություն և զոհաբերություն. «Թող նրանց ղեկավարեն»²⁵

Ի վերջո, որպեսզի Հիսուս Քրիստոսի ավետարանը խորապես հաստատվի մեր սրտերում, մենք պետք է ներգրավվենք դրանում՝ տալով մեր ժամանակն ու տաղանդները, զոհաբերելով դրա համար:²⁶ Մենք բոլորս ցանկանում ենք ապրել իմաստալի կյանքով և դա հատկապես ճշմարիտ է աճող սերնդի համար: Նրանց ցանկանում են այդ գործի մասը կազմել:

Հիսուս Քրիստոսի ավետարանը ամենամեծ գործն է աշխարհում: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը ասել է. «Աստված պատվիրել է մեզ քարոզել ավետարանը ողջ աշխարհին: Դա այն գործն է, որը պետք է միավորի մեզ այսօր: Միայն ավետարանը կփրկի աշխարհը ինքնառնչյալցման արհավիրքից: Միայն ավետարանը խաղաղության մեջ կմիավորի բոլոր ռասաների և ազգությունների տղամարդկանց [և կանանց]: Միայն ավետարանը ուրախություն, երջանկություն և փրկություն կբերի մարդկության ընտանիքին»:²⁷

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է. «Երբ մենք լիազորենք երիտասարդներին՝ հրավիրելով և թույլ տալով նրանց գործել, Եկեղեցին հրաշալի ուղիներով առաջ կընթանա»:²⁸ Շատ հաճախ մենք չենք հրավիրել և թույլ չենք տվել երիտասարդներին զոհաբերել Քրիստոսի այս մեծ գործի համար: Երեց Նիլ Ա. Մաքսվելը նշել է. «Եթե [մեր] երիտասարդները շատ ոգևորված չլինեն [Աստծո գործով], առավել հավանական է, որ նրանք կոզկորվեն աշխարհի գործերով»:²⁹

Երեյսաների և երիտասարդների ծրագիրը կենտրոնանում է երիտասարդներին հնարավորություններ տալու վրա: Նրանք են ընտրում իրենց նպատակները: Քվորումի և դասարանի նախագահությունները իրենց պատշաճ դերի մեջ են: Օլիի երիտասարդների խորհուրդը

ծխի խորհրդի նման կենտրոնանում է փրկության աշխատանքի և վեհացման վրա:³⁰ Բսկ քվորումները և դասարանները սկսում են իրենց ժողովները՝ խորհրդակցելով այն մասին, թե ինչպես կատարել այն գործը, որն Աստված է տվել իրենց:³¹

Նախագահ Նելսոնը դիմել է Եկեղեցու երիտասարդներին. «Եթե դուք ընտրեք, եթե ցանկանաք, . . . դուք կհանդիսանաք մի մեծ, հրաշալի և փառահեղ գործի մասը: Դուք այն լավագույնների շարքում եք, որոնց Տերը *երբևէ* ուղարկել է այս աշխարհ: Դուք ընդունակ եք լինել ավելի խելացի, իմաստուն, և դուք ավելի մեծ ազդեցություն ունեք աշխարհի վրա, քան որևէ նախորդ սերունդ»:³² Մեկ այլ առիթով նախագահ Նելսոնը ասել է երիտասարդներին. «Ես լիովին վստահում եմ ձեզ: Ես սիրում եմ ձեզ, և Տերը՝ նույնպես: Մենք Նրա ժողովուրդն ենք՝ միասին ներգրավված Նրա սուրբ գործին»:³³ Երիտասարդներ՝ ը, զգու՞մ եք, թե նախագահ Նելսոնը որքան է վստահում ձեզ և որքան կարևոր եք դուք այս աշխատանքի համար:

Ծնողներ՝ ը, ես հրավիրում եմ ձեզ տեսնել երիտասարդներին այնպես, ինչպես նախագահ Նելսոնն է տեսնում: Երբ երիտասարդները զգան ձեր սերն ու վստահությունը, և երբ դուք ուսուցանեք նրանց ինչպես դեկավարել, իսկ հետո չխանգարեք, նրանք կգարմացնեն ձեզ իրենց գաղափարներով, կարողություններով և ավետարանի հանդեպ

պարտավորությունով:³⁴ Նրանք կզգան այն ուրախությունը, որով կընտրեն ներգրավվել և զոհաբերել Քրիստոսի գործին: Նրա ավետարանը խորապես կհաստատվի նրանց սրտերում, և գործը առաջ կշարժվի զարմանալի ուղիներով:

Խոստում և վկայություն

Ես խոստանում եմ, որ երբ մենք կենտրոնանանք այս սկզբունքների վրա՝ հարաբերություններ, հայտնություն, ազատ կամք, ապաշխարություն և զոհաբերություն այս մեծ գործի համար, Հիսուս Քրիստոսի ավետարանը խորապես կհաստատվի մեր բոլորի սրտերում: Մենք կտեսնենք, թե ինչպես է Վերականգնումն առաջ շարժվում դեպի իր վերջնական նպատակը՝ Իսրայելի փրկագնումը և Սիոնի հաստատումը,³⁵ որտեղ Քրիստոսը կթագավորի որպես թագավորների Թագավոր:

Ես վկայում եմ, որ Աստված անում է ամեն անհրաժեշտ բան, որպեսզի պատրաստի Իր ժողովրդին այդ օրվան: Թող մենք տեսնենք Նրա ձեռքը այս փառահեղ աշխատանքում, երբ բոլորս ձգտենք «գալ դեպի Քրիստոսը և կատարելագործվել Նրանում»:³⁶ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ովստեր 45.12: Նախագահ Նելսոնն ասել է. «Պարզապես մտածեք թե որքան ոգևորիչ ու հրատապ է այդ ամենը, յուրաքանչյուր մարգարե, ով սկսել է Ադամի հետ, կանխատեսել է մեր օրերը: Եվ յուրաքանչյուր մարգարե խոսել է *մեր* օրերի մասին, երբ Իսրայելը կհավաքվի և աշխարհը կպատրաստվի Փրկիչի Երկրորդ Գալուստին: Մտածե՛ք այդ մասին: Բոլոր մարդկանցից, ովքեր երբևէ ապրել են Երկիր մոլորակի վրա, *մենք* ենք այն մարդիկ, ովքեր մասնակցում են այս վերջին, մեծ հավաքման իրադարձությանը: Որքա՞ն ոգևորիչ է սա»: («Իսրայելի հույսը» [համաշխարհային հոգևոր հավաք երիտասարդների համար, 3 հունիս 2018 թ.], HopeofIsrael. ChurchofJesusChrist.org):
- Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է. «Քնչպիսի՞ հրաշալի ժամանակ է ապրելու համար: Հիսուս Քրիստոսի ավետարանը ամենավստահելի, ամենաապահով, ամենահուսալի և ամենահատուցվող ճշմարտությունն է երկրի վրա և երկնքում՝ ժամանակի ու հավերժության

մեջ: Ոչ մի բան, ոչ մեկը, ոչ մի ազդեցություն չի կարող խոչընդոտել, որ Եկեղեցին կատարի իր առաքելությունը և իրականացնի իր ճակատագիրը, որը հռչակվել էր աշխարհի հիմնադրումից առաջ: . . . Կարիք չկա վախենալ կամ երկնելն ապագայի համար:

Ի տարբերություն նախորդ դարաշրջանների, այս տնտեսությունը չի ենթարկվի հիմնարար ուրացության, այն չի տեսնի քահանայության բանալիների կորուստ, այն չի տառապի Ամենագոր Աստծո կողմից հայտնությունների դադարեցումից: . . . Ի՞նչ հրաշալի ժամանակ է ապրելու համար: . . . Եթե դուք չեք նկատել, ես լավատես եմ վերջին օրերի վերաբերյալ: . . . Հավատացեք: Վեր կացեք: Եղեք հավատարիմ: Եվ առավելագույն օգտագործեք այն հրաշալի օրը, որում դուք ապրում եք»: (Facebook post, May 27, 2015; see also “Be Not Afraid, Only Believe” [address to Church Educational System religious educators, Feb. 6, 2015], broadcasts.ChurchofJesusChrist.org):

2. Տես Հովհաննես 1.12:
3. Երբ մենք կանչվեցինք որպես Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահություն, նախագահ Հենրի Բ. Այրինգը մեզ հետ քննարկեց այն յուրահատուկ դժվարություններն ու հնարավորությունները, որոնց ներկայումս դիմակայում են Եկեղեցու երիտասարդները: Նա մեզ խորհուրդ տվեց կենտրոնանալ այն ամենի վրա, ինչը կօգնի, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը խորապես հաստատվի նրանց սրտերում: Որպես Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահություն, այդ խորհուրդը մեզ համար ծառայել է որպես փարոս:
4. Տես “Be with Them,” ChurchofJesusChrist.org/callings/aaronic-priesthood-quorums/my-calling/leader-instruction/be-with-them:
5. Տես Մոսիա 18.25 և Մորոնի 6.5:
6. Դեյլ Գ. Ռենլանդ, «Աստծո աչքերով», *Liahona*, նոյեմբեր 2015, 94, տես նաև Մովսես 1.4–6:

Նախագահ Թոմաս Մ. Մոնտոնն ուսուցանել է. «Մենք պատասխանատվություն ունենք տեսնելու մարդկանց ոչ թե ինչպես նրանք կան, այլ ավելի շուտ, թե նրանք ինչպիսին կարող են դառնալ: Ես խնդրում եմ ձեզ նրանց մասին մտածել այս ձևով» (“See Others as They May Become,” *Liahona*, Nov. 2012, 70):

Երեց Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է. «Շատ հաճախ, երբ երիտասարդ մարդն առերևույթ չի *հասնապատասխանում* Եկեղեցու չափանիշներին, տալիս է թվացյալ հակասական հարցեր ու արտահայտում կասկածներ, շատ արագ բացասական պիտակ է ձեռք բերում: Հետևանքը շատ հեռուն կարող է գնալ, նույնիսկ՝ հասցնել հիասթափության: Ճշմարիտ սերը պիտակներ չի սիրում» (“Unto the Rising Generation,” *Ensign*, Apr. 1985, 9):

7. Տես Դ Թագավորաց 6.17:
8. Ստեֆեն Լ. Ռիչարդսը, որպես առաջին Նախագահության անդամ, ասել է.



Բլաֆորդ, Յուտա, ՄՄՆ



«Տարբերելու բարձրագույն տեսակը ուրիշների մեջ նկատում և նրանց համար բացահայտում է բնածին լավ հատկանիշներն իրենց մեջ» (in Conference Report, Apr. 1950, 162; in David A. Bednar, “Quick to Observe,” *Ensign*, Dec. 2006, 35; *Liahona*, Dec. 2006, 19): Տես նաև Դ Թագավորաց 6.17: 9. Henry B. Eyring, “Teaching Is a Moral Act” (address at Brigham Young University, Aug. 27, 1991), 3, speeches.byu.edu; emphasis added; see also Henry B. Eyring, “Help Them Aim High,” *Liahona*, Nov. 2012, 60–67.

10. Տես Մովսես 1.3-6:
11. Մոսիա 18.21, տես նաև Մովսես 7.18:
12. «Երիտասարդ տղամարդիկ, ովքեր ամուր, դրական հարաբերությունների մեջ են ակտիվ [Վերջին Օրերի Մուրբ] ընտանիքի, հասակակիցների և ղեկավարների հետ, ովքեր օգնում են նրանց հարաբերություններ զարգացնել իրենց երկնային Հոր հետ, ամենայն հավանականությամբ ակտիվ կմնան: Հատուկ ծրագրի տարրերը, ինչպես օրինակ՝ Կիրակնօրյա ուսումնական ծրագիրը, ԵՏ-ի միջոցառումների ծրագիրը, անհատական ձեռքբերումների ակնկալիքները . . . կարող են աննշան ազդեցություն ունենալ՝ անկախ այդ հարաբերություններից: Կարևոր հարցն այն չէ, թե որքանով են իրականանում այդ հատուկ ծրագրի տարրերը, այլ թե որքանով են դրանք լավացնում դրական հարաբերությունները, որոնք ամրապնդում են [Վերջին Օրերի Մուրբ] երիտասարդ տղամարդկանց կրոնական գիտակցությունը» (in “Be with Them,” ChurchofJesusChrist.org/callings/aaronic-priesthood-quorums/my-calling/leader-instruction/be-with-them):
13. Տես “Connect Them with Heaven,” ChurchofJesusChrist.org/callings/aaronic-priesthood-quorums/my-calling/leader-instruction/connect-them-with-heaven:
14. Տես Հովհաննես 15.1-5, Հովհաննես 17.11, Փիլիպպեցիս 4.13, 1 Հովհաննես 2.6, Հակոբ 1.7, Օմնի 1.26, Մորոնի 10.32:
15. Մուրբ գորությունները լի են այս օրինակներով, ահա միայն երկուսը. 1 Նեփի 2.16, Ենոկյա 1.1-4:

16. Տես Դուկաս 24.32, 2 Նեփի 33.1-2, Հակոբ 3.2, Մորոնի 8.26, Վարդապետություն և Ուխտեր 8.2-3:
17. Տես Բ Տիմոթեոս 3.15-16, Վարդապետություն և Ուխտեր 68.3-4, 88.66, 113.10:
18. Տես Ս Թեսաղոնիկեցիս 1.5, Ավմա 26.13, 31.5, Հելաման 3.29, 5.17, Վարդապետություն և Ուխտեր 21.4-6, 42.61, 43.8-10, 50.17-22, 68.4:
19. Տես Հովհաննես 6.63, 17.17, Ավմա 5.7, Վարդապետություն և Ուխտեր 84.43-45, 88.66, 93.36:
20. Տես Հովհաննես 15.3, 1 Պետրոս 1.23, Մոսիա 1.5, Ավմա 5.7, 11-13, 32.28, 41-42, 36.26, 62.45, Հելաման 14.13:
21. Տես 2 Նեփի 31.19-21, Եթեր 32.3, 5:
22. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել», *Լիստոնա*, մայիս, 2019թ., 67:
23. Դեյլ Գ. Ռենլանդ, «Ընտրեք այս օրը», *Լիստոնա*, նոյեմբեր 2018, 104:
24. Այս թիվը ներառում է պահանջները սկստատական ծրագրերի համար, որոնք Միացյալ Նահանգներում և Կանադայում մինչև վերջերս հանդիսանում էին տղաների և երիտասարդ տղամարդկանց համար եկեղեցու միջոցառումների ծրագրի մասը: Սկստատական ծրագրերին չմասնակցող տարածքներում պահանջների թիվը ավելի քան 200 էր: Բացի այդ, տղաների, երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց համար նախատեսված տարբեր միջոցառումների ծրագրերը և ծրագրերի ղեկավարները, որն ավելի էր բարդացնում ամբողջ փորձառությունը ընտանիքների համար:
25. Տես “Let Them Lead,” ChurchofJesusChrist.org/callings/aaronic-priesthood-quorums/my-calling/leader-instruction/let-them-lead:
26. Տես Օմնի 1.26; 3 Նեփի 9.20; 12.19, Վարդապետություն և Ուխտեր 64.34: «Կրոնը, որը չի պահանջում բոլոր բաների գոհաբերությունը, երբեք չի ունենա բավականաչափ ուժ՝ առաջացնելու անհրաժեշտ հավատքն ի կյանք և ի փրկություն» (*Lectures on Faith* [1985], 69):
27. Ezra Taft Benson, *The Teachings of Ezra Taft Benson* (1988), 167; in *Preach My Gospel: A Guide to Missionary Service* (2019), 13; see also Russell M. Nelson, “Hope of Israel,” HopeofIsrael.ChurchofJesusChrist.org.
28. Meeting with Elder David A. Bednar; see also “2020 Temple and Family History Leadership Instruction,” Feb. 27, 2020, ChurchofJesusChrist.org/family-history:
29. Neal A. Maxwell, “Unto the Rising Generation,” 11. Երեց Մաքսվելը շարունակել է. «Մարկավագների և ուսուցիչների քվորումների քանի՞ նախազգեստություններ են գործնականում պարզապես ինչ-որ մեկին խնդրում աղոթել կամ հաղորդություն բաժանել: Եղբայրներ, նրանք իրոք հատուկ հոգիներ են, և նրանք կարող են կարևոր գործեր կատարել, եթե հնարավորություն տրվի»:
30. Տես *General Handbook: Serving in The*

- Church of Jesus Christ of Latter-day Saints*, 2.2, ChurchofJesusChrist.org:
31. Մի քանի նյութեր են առկա Gospel Library-ում, որոնք օգնում են երիտասարդներին ղեկավարել, ներառյալ «Քվորումի և դասարանի նախազգեստության նյութերը», «Օգտագործել *Եկ, հետևիր ինձ*. Միասնական Քահանայություն քվորումների և Երիտասարդ Կանանց դասարանների համար», ձեռնարկը և երիտասարդ կանանց դասարանների և Միասնական Քահանայության քվորումների նյութերում «Օյսի կամ ճյուղի կոչումներ»-ը:
32. Ռասսել Մ. Նելսոն, «Բարայելի հույսը», HopeofIsrael.ChurchofJesusChrist.org: Այս նույն հոգևոր երեկոյի ժամանակ նախազգեստ Նելսոնն ասել է. «Մեր երկնային Հայրը պահել է Իր ազնվագույն հոգիներին, հավանաբար, ես կասեի, Իր լավագույն թիմին, այս վերջին փուլի համար: Այդ ազնիվ հոգիները, այդ հերոսները դուք եք»:
33. Russell M. Nelson, opening remarks in “Children and Youth: A Face to Face Event with Elder Gerrit W. Gong,” Nov. 17, 2019, broadcasts.ChurchofJesusChrist.org.
34. Նախազգեստ Նելսոնն ասել է. «Մենք պետք է թույլ տանք երիտասարդներին ղեկավարել, հատկապես նրանց, ովքեր կանչվել և ձեռնադրվել են՝ ծառայելու դասարանների և քվորումների նախազգեստություններում: Երանց կատարելիքի քահանայության իշխանությունը: Նրանք կսովորեն՝ ինչպես ստանալ ոգեշնչում իրենց դասարանում կամ քվորումում» (in “Children and Youth Introductory Video Presentation,” Sept. 29, 2019, ChurchofJesusChrist.org):
- Երեց Քվինտին Լ. Քուրն ասել է. «Մեր երիտասարդներին խնդրում ենք ավելի շատ անհատական պարտականություններ ստանձնել վաղ տարիքից՝ առանց ծնողների ու ղեկավարների ստանձնել այն, ինչ երիտասարդները կարող են անել իրենց համար» («Փոփոխություններ երիտասարդներին գործադրելու համար», *Լիստոնա*, նոյեմբեր 2019, 40):
35. Ինձ դուր են գալիս Նախազգեստ Զորք Զ. Քենոնի խոսքերը. «Աստված հոգիներ է պահպանել արդի տնտեսության համար, ովքեր քաջություն և վճռակամություն ունեն դիմակայելու աշխարհին և շարի բոլոր գործություններին՝ տեսանելի և անտեսանելի, ավետարանը հոչակելու, ճշմարտությունը պաշտպանելու և հաստատելու ու կառուցելու մեր Աստծո Միտնը՝ չվախենալով հետևանքներից: Նա ուղարկել է այս սերնդի այդ հոգիներին, որպեսզի դին Միտնի հիմքը, որը երբեք չի կործանվի, և մի սերունդ կբարձրացնի, որը արդար կլինի, և որը կպատվի Աստծուն, և անչափ կպատվի Նրան, և հնազանդ կլինի Նրան բոլոր հանգամանքներում» (“Remarks,” *Deseret News*, May 31, 1866, 203); see also *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 186:
36. Մորոնի 10.32:



Նախագահ Հենրի Բ. Այրիկզ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդակալ

Հավատքով աղոթքները

Հավատքով աղոթելով՝ մենք դառնում ենք Տիրոջ աշխատանքի կենսական մասը, մինչ Նա աշխարհը նախապատրաստում է Իր երկրորդ Գալստին:

Մենք ականատես ենք լինում երեց Մեյնզի համաժողովի առաջին նիստի աղոթքի պատասխանին: Հրաշալի ուղերձները և զեղեցիկ երաժշտությունը ոգեշնչեցին մեզ: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի խոստումը, որ այս համաժողովը հիշարժան կլինի, արդեն սկսվում է իրականանալ:

Նախագահ Նելսոնը այս տարին հայտարարել էր որպես «երկուհարյուրամյա ժամանակաշրջան, երբ նշում ենք այն իրադարձության 200 տարին, երբ Հայր Աստված և Նրա սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը, տեսիլքում հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին»: Նախագահ Նելսոնը մեզ հրավիրել էր այս համաժողովին նախապատրաստվելու անձնական ծրագիր կազմել, քանի որ այս տոնակատարությունը, «շրջադարձային է եկեղեցու պատմության մեջ, և մենք կենսական դեր ունենք»:¹

Ինչպես ես, լսելով այդ ուղերձը, գուցե դուք էլ ձեզ հարց եք տվել. «Ո՞րն է իմ կենսական դերը»: Գուցե, դուք կարդացել ու աղոթել եք Վերականգնման իրադարձությունների մասին: Գուցե, ավելի շատ, քան նախկինում, դուք կարդացել եք այն մի քանի դեպքերի մասին, երբ Հայր Աստված ներկայացրել

է Իր Սիրելի Որդուն: Գուցե, դուք կարդացել եք այն դեպքերի մասին, երբ Փրկիչը խոսել է մեր Երկնային Հոր զավակների հետ: Ես ինքս արել եմ այդ բոլորը և ավելին:

Կարդալիս ես գտա Աստծո քահանայությանը և տնտեսությունների բացմանը վերաբերող վկայակոչումներ: Ես խոնարհություն զգացի, երբ գիտակցեցի, որ այս համաժողովի նախապատրաստությունը շրջադարձային էջ է իմ անձնական պատմության մեջ: Ես փոփոխություններ զգացի իմ սրտում: Ես նորովի երախտագիտություն զգացի: Ես լցվեցի այն հեռանկարի ուրախությամբ, որ ինձ հրավիրել են մասնակցելու շարունակվող վերականգնման այս տոնին:

Կարծում եմ, որ մանրակրկիտ նախապատրաստության շնորհիվ, կան նաև այլ մարդիկ, ովքեր ավելի ուրախ, ավելի լավատեսական և ավելի վճռական են զգում ծառայելու Տիրոջը ցանկացած կոչման մեջ:

Գերբնական այդ իրադարձությունները, որոնք մենք պատվում ենք, սկիզբն էին մարգարեացած վերջին տնտեսության, որի ժամանակ Տերը Իր եկեղեցին և Իր անունը կրող ժողովրդին պատրաստում է ընդունելու Իրեն: Որպես Իր

Գալուստին նախապատրաստվելու մաս՝ Նա կբարձրացնի յուրաքանչյուրիս, որպեսզի մենք համարժեք լինենք այն հոգևոր մարտահրավերներին ու հնարավորություններին, որոնք նոր են ի հայտ գալիս աշխարհի պատմության մեջ:

1840 թվականի սեպտեմբերին Մարգարե Ջոզեֆ Սմիթը և Առաջին Նախագահության նրա խորհրդականները արեցին հետևյալ հայտարարությունը. «Տիրոջ այս վերջին օրերի աշխատանքը մահկանացու մարդկանց մտածողությունից վեր՝ վիթխարի մեծություն ունեցող մի գործ է: Նրա փառքն աննկարագրելի է, իսկ վեհությունն՝ անզերագանցելի: Դա այն թեման է, որը հուզել է մարգարեների և արդար մարդկանց սիրտն աշխարհի հիմնադրումից ի վեր, մինչև յուրաքանչյուր հաջորդող սերունդը, մինչև ներկայիս ժամանակը. և սա իրապես ժամանակների լրության տնտեսությունն է, երբ բոլոր բաները, որոնք Քրիստոս Հիսուսում են՝ թե՛ երկնքում, թե՛ երկրի վրա, կբովանդակվեն մեկտեղ Նրանում,



Միքսոն, Գվատեմալա

և երբ բոլոր բաները կվերականգնվեն, ինչպես խոսվել է բոլոր սուրբ մարգարեների կողմից՝ աշխարհի սկզբից ի վեր, քանզի այդ ժամանակ տեղի կունենա հայրերին տրված խոստումների փառահեղ իրականացումը, երբ Ամենաբարձրյալի գործության դրսևորումները կլինեն մեծ, փառահեղ և վսեմ:

Այա շարունակել էն. «Մենք տրամադրված ենք առաջ գնալու և միավորելու բոլորիս եռանդը՝ Արքայությունը կառուցելու և Քահանայությունն իր լրիվությամբ ու փառքով հաստատելու նպատակով: Աշխատանքը, որը պետք է կատարվի վերջին օրերին, վիթխարի կարևորություն ունի և սրբերից կպահանջի եռանդ, հմտություն, տաղանդ և ունակություն գործադրել, որպեսզի այն առաջ գլորվի այն փառքով և վեհափառությամբ, որը նկարագրել է [Դանիել] մարգարեն [տես Դանիել 2.34–35, 44–45]. և, հետևաբար, կպահանջի Սրբերի համակենտրոնացումը՝ նման մեծության և կարևորության գործեր իրականացնելու համար»:²

Շատ մանրամասնություններ, թե ինչ ենք անելու, և երբ ենք անելու Վերականգնման բացման ընթացքում, դեռ չի բացահայտվել: Սակայն, Առաջին Նախագահությունը, նույնիսկ այդ վաղ օրերին, գիտեր աշխատանքի լայնությունն ու խորությունը, որը Տերը դրել էր մեր առջև: Միս մի քանի օրինակներ, որոնք գիտենք, որ կատարվելու են.

Իր Սրբերի միջոցով Տերը ավետարանի պարզև կառաջարկի «յուրաքանչյուր ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի»:³ Այդ հարցում կշարունակեն դեր կատարել թե տեխնոլոգիական հրաշքները, թե՛ անհատական «մարդկանց ձկնորսները»:⁴ ովքեր ծառայում են գործությամբ և աճող հավատքով:

Աճող հակամարտությունների պայմաններում, մենք՝ որպես ժողովուրդ, ավելի ու ավելի միասնական կդառնանք: Մենք կհավաքվենք ավետարանի լույսով լցված խմբերի ու ընտանիքների հոգևոր գործությամբ:



Անհավատ աշխարհն անգամ կընդունի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին և կնկատի Աստծո գործությունը նրա վրա: Հավատարիմ ու քաջ աշակերտները, չվախենալով, խոնարհությամբ և անկաշկանդ իրենց վրա կվերցնեն Քրիստոսի անունը ամենօրյա կյանքում:

Այսպիսով, ինչպես կարող ենք յուրաքանչյուրս մասնակցել այս մեծ և փառահեղ աշխատանքին: Նախագահ Նելսոնը մեզ ուսուցանել է՝ ինչպես աճել հոգևոր գործությամբ: Երբ ապաշխարությունը որպես ուրախալի առիթ ենք դիտում, մեր աճող հավատքով, որ Հիսուսը Քրիստոսն է, երբ հասկանում և հավատում ենք, որ Երկնային Հայրը լսում է մեր յուրաքանչյուր աղոթքը, երբ ձգտում ենք հնազանդվել և ապրել պատվիրաններով, շարունակ հայտնություն ստանալու մեր գործությունը աճում է: Սուրբ Հոգին շարունակ ընկերակցում է մեզ: Լույսի զգացումը մնում է մեզ հետ, անգամ, երբ շրջապատը ավելի է մթազանում:

Ջոզեֆ Մմիթը հոգևոր ուժը մեծացնելու լավ օրինակ է: Նա

մեզ ցույց տվեց, որ հավատքի աղոթքը առանցքային դեր ունի Աստծո կողմից հայտնություն ստանալու համար: Նա հավատքով աղոթեց, համոզված լինելով, որ Հայր Աստված կպատասխանի իր աղոթքին: Նա հավատքով աղոթեց, համոզված լինելով, որ միայն Հիսուս Քրիստոսի շնորհիվ կարող է ազատվել մեղքերից եկող մեղավորության զգացումից: Եվ նա հավատքով աղոթեց, համոզված լինելով, որ այդ ներման համար պետք է գտնի Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին:

Իր մարգարեական ծառայության ընթացքում Ջոզեֆը օգտագործեց հավատքի աղոթքները՝ շարունակական հայտնություններ ստանալու համար: Դիմակայելով ներկայիս և ապագայում սպասվող մարտահրավերներին՝ մենք նույնպես պետք է օգտագործենք միևնույն օրինակը: Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Ես այլ ուղի չեմ տեսնում վերջին օրերի սրբերի համար, քան յուրաքանչյուր շունչը Աստծուն ուղղված աղոթք դարձնելը, որ Նա առաջնորդի և ուղղություն տա իր ժողովրդին»:⁵

Հաղորդության աղոթքի «միշտ հիշեն Նրան» արտահայտությունը կնկարագրի մեր ամենօրյա կյանքը: «Նրան» դերանունը, նկատի ունի Հիսուս Քրիստոսին: Հաջորդող բառերը՝ «և պահեն նրա պատվիրանները», ակնարկում է, թե մեզ համար ինչ է նշանակում հիշել Նրան:⁶ Միշտ հիշելով Հիսուս Քրիստոսին՝ գուցե մենք լուր աղոթքով հարցնենք. «Ի՞նչ է կամենում Նա, որ ես անեմ»:

Այդպիսի մի աղոթք, որը ասվեց հավատքով առ Հիսուս Քրիստոս, սկիզբ դրեց վերջին այս տնտեսությանը: Եվ դա կլինի շարունակ բացահայտվող այն բաժնի հիմքում, որ յուրաքանչյուրս կկատարի: Ինչպես դուք, ես ևս ականատես եմ եղել աղոթքի նման օրինակների:

Առաջինը Ջոզեֆ Մմիթն է: Մանկական հավատքով նա հարցրեց Տիրոջ կամքը իր անելիքի մասին: Նրան տված պատասխանը փոխեց աշխարհի պատմությունը:

Ինձ համար կարևոր դասը Ջոզեֆի պատասխանն է սատանայի հարձակմանը, երբ Ջոզեֆը ծնկի իջավ աղոթելու:

Իմ փորձից գիտեմ, որ սատանան ու նրա ծառաները փորձում են համոզել, որ մենք չպետք է աղոթենք: Երբ Ջոզեֆ Սմիթը լարեց ողջ ուժերը՝ կանչելու առ Աստված, որ ազատի իրեն հափշտակած ուժից, նա պատասխան ստացավ իր սիրտին աղոթքին և Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը հայտնվեցին նրան:

Վերականգնման սկիզբը խաթարելու սատանայի փորձը շատ լուրջ էր, քանի որ Ջոզեֆի աղոթքը շատ կարևոր էր: Իմ և ձեր մասը գուցե մեծ չլինի շարունակվող Վերականգնման գործում: Սակայն, Վերականգնման թշնամին մեզ փորձելու է կանգնեցնել աղոթել: Հավատքի ու հաստատակամության Ջոզեֆի օրինակը կարող է ամրապնդել մեր վճռակալությունը: Մա այն բազում պատճառներից մեկն է, թե Երկնային Հորը ուղղված իմ աղոթքներում ինչու եմ շնորհակալություն հայտնում Ջոզեֆ Սմիթի համար:

Շարունակվող Վերականգնման գործում իմ դերը կատարելիս հավատքով աղոթելու մեկ այլ օրինակ է Ենովյը՝ Մորմոնի գրքից: Ինչպիսին էլ լինի ձեր բաժինը, դուք կարող եք նրանից օրինակ վերցնել:

Ջոզեֆի նման՝ Ենովյը հավատքով աղոթեց: Նա իր փորձառությունը բացատրել է հետևյալ խոսքերով.

«Եվ իմ հոգին քաղցում էր. և ես ծնկի իջա իմ Արարչի առջև, և ես աղաղակեցի առ նա գորեղ աղոթքով և աղաչանքով իմ սեփական հոգու համար. և ողջ օրվա ընթացքում ես աղաղակեցի առ նա այդ, և երբ եկավ գիշերը, ես դեռ բարձրացնում էի իմ ձայնը վեր, այնպես որ այն հասավ երկինքներին:

Եվ մի ձայն եկավ ինձ ասելով. Ենովյա քո մեղքերը ներված են քեզ, և դու պիտի օրհնվես:

Եվ ես՝ Ենովյա, գիտեի, որ Աստված չէր կարող ստել. ուստի, իմ հանցանքը սրբվեց:

Եվ ես ասացի. Տեր, ի՞նչպես եղավ դա:

Եվ նա ասաց ինձ. Քրիստոսի հանդեպ քո հավատքի շնորհիվ, որին դու երբեք նախկինում ոչ լսել ես, ոչ տեսել: Եվ շատ տարիներ կանցնեն նախքան նա իրեն հայտնի կդարձնի մարմնում. ուստի, գնա՛, քո հավատքը քեզ ողջ դարձրեց:»⁷

Դասը, որով օրհնվել եմ, այս խոսքերում է. «Եվ նա ասաց ինձ. Քրիստոսի հանդեպ քո հավատքի շնորհիվ, որին դու երբեք նախկինում ո՛չ լսել ես, ո՛չ տեսել»:

Ջոզեֆը հավատք ուներ գնալու պուրակ և նաև աղոթելու, որ ազատվի սատանայի գորությունից: Նա դեռ չէր տեսել Հորը և Ռոդուն, սակայն աղոթում էր հավատքով՝ իր սրտի ողջ կորովով:

Ենովյի փորձառությունը ինձ ուսուցանել է նույն արժեքավոր դասը: Երբ աղոթում եմ հավատքով, ես տեսնում եմ Փրկչին որպես իմ բարեխոսը Հոր մոտ և զգում եմ, որ իմ աղոթքը հասնում է երկինք: Պատասխանները գալիս են: Օրհնությունները գալիս են: Խաղաղություն և ուրախություն է գալիս՝ անգամ դժվարին ժամանակներում:

Հիշում եմ, երբ Տասներկու Առաքյալների Քվորումի նոր անդամ էի կանչվել, ես երեց Դեյվիդ Բ. Հեյթի հետ ծնկի իջա աղոթելու: Նա իմ ներկայիս տարիքին էր և անցնում էր ներկայումս ունեցած իմ մարտահրավերներով: Ես հիշում եմ նրա ձայնը, երբ նա աղոթեց: Ես չբացեցի աչքերս, սակայն այնպիսի զգացում ունեի, որ նա ժպտում էր: Նա խոսում էր Երկնային Հոր հետ ուրախության ձայնով:

Իմ ականջներում դեռ հնչում է, թե ինչ երջանկությամբ նա ասաց՝ «Հիսուս Քրիստոսի անունով»: Ես տպավորություն ունեի, որ երեց Հեյթը զգում էր, որ այդ պահին Փրկիչը հաստատում է Հորն ուղղված իր աղոթքի ուղերձը: Եվ համոզվածության

զգացում եկավ, որ այն ընդունվում է ժպիտով:

Շարունակվող Վերականգնման հիանալի գործում մեր կենսական ներդրումն ունենալու մեր ունակությունը կավելանա, երբ մենք աճենք մեր հավատքով Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ որպես մեր Փրկիչի, և մեր Երկնային Հոր հանդեպ՝ որպես մեր սիրող Հոր: Հավատքով աղոթելով՝ մենք դառնում ենք Տիրոջ աշխատանքի կենսական մասը, մինչև Նա աշխարհը նախապատրաստում է Իր Երկրորդ Գալստին: Ես աղոթում եմ, որ բոլորս ուրախություն գտնենք այն աշխատանքը կատարելիս, որը Նա հրավիրում է մեզ անել:


Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն ապրում է: Մա Նրա Եկեղեցին և արքայությունն է երկրի վրա: Ջոզեֆ Սմիթը Վերականգնման մարզարեն է: Ես վկայում եմ, Ռասսել Մ. Նելսոնը Տիրոջ մարզարեն է երկրի վրա այսօր: Նա քահանայության բոլոր բանալիների կրողն է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, “My 2020 Invitation to You: Share the Message of the Restoration of the Savior’s Gospel,” Jan. 1, 2020, blog.ChurchofJesusChrist.org:
2. *Եկեղեցու Նախագահների Ուսումնքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 512–13:
3. Մոսիա 15:28:
4. Մատթեոս 4:19:
5. *Discourses of Brigham Young*, sel. John A. Widtsoe (1954), 43–44.
6. Վարդապետություն և Ուխտեր 20:77:
7. Ենովյա 1.4–8:



Սենդի, Յուտա, ՄՄՆ



Նախագահ Դավիթ Ն. Օուբու
Առաջին Նախագահության առաջին խորհրդակալ

Բարձրագույն իշխանությունների, տարածքային յոթանասունականների և բարձրագույն պաշտոնյաների հաստատումը

Եղբայրներ՝ և քույրեր՝, այժմ ես ձեր հաստատմանը կներկայացնեմ Եկեղեցու բարձրագույն իշխանություններին, տարածքային յոթանասունականներին և բարձրագույն պաշտոնյաներին:

Խնդրում ենք ձեր աջակցության քվեն արտահայտել սովորական ձևով, որտեղ էլ որ լինեք: Եթե դեմ քվեակողներ կան առաջարկությանը, խնդրում ենք կապվել ձեր ցցերի նախագահների հետ:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Ռասսել Մ. Նելսոնին՝ որպես մարզարե, տեսանող և հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Դավիթ Հարիս Օուբսին՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդակալ, և Հենրի Բենիոն Սյրինգին՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդակալ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Դավիթ Ն. Օուբսին որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և Մ. Ռասսել Բալլարդին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի գործող Նախագահ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին՝ Մ. Ռասսել Բալլարդին, Ջեֆրի Ռ. Հոլլանդին, Դիտեր Ֆ. Ուլտորֆին, Դեյվիդ Ա. Բեդնարին, Քվենթին Լ. Քուքին, Դ. Թոդ Քրիստոֆերսոնին, Նիլ Լ. Անդերսենին, Ռոնալդ Ա. Ռասբանդին, Գարի Բ. Մթիվենսոնին, Դեյվ Գ. Ռենլանդին, Ջերիթ Վ. Գոնգին և Ուիլսոն Սոարեսին:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդակալները և Տասներկու

Առաքյալները՝ որպես մարզարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ:

Առաջարկվում է, որ մենք ազատենք հետևյալ տարածքային յոթանասունականներին. Երեցներ Խորխե Թ. Բեսերա, Մարկ Մ. Բրայս, Ջերեմի Ռ. Յագի, Քելլի Ռ. Ջոնսոն, Ադելինկա Ա. Օչեդիրան և Մոխես Վիլանուեվա:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել նրանց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է, որ անկեղծ երախտագիտությամբ ազատենք Եղբայր Սթեֆան Վ. Օուենին որպես Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահ, Դուգլաս Դ. Հոլմսին որպես առաջին խորհրդակալ և Մ. Ջոզեֆ Բրոուին որպես երկրորդ խորհրդակալ:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրներին իրենց գերագույն ծառայության համար, խնդրում ենք արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք հետևյալ անձանց, որպես Բարձրագույն իշխանություն յոթանասունականներ.

Խորխե Թ. Բեսերա, Մեթյու Մ. Հոլլանդ, Վիլիամ Կ. Ջեքսոն, Ջերեմի Ռ. Յագի, Քելլի Ռ. Ջոնսոն, Թիերի Կ. Մատոմբո, Ադելինկա Ա. Օչեդիրան, Սիրո Շմայլ և Մոխես Վիլանուեվա:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույն ձևով:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք հետևյալ տարածքային յոթանասունականներին՝ Ջեյ Դ. Անդերսեն, Ֆաապիտո Օուապաո, Ֆրեդերիկ Կ. Բալլի կրտ., Քեվին Վ. Բրոք, Ջոն Վ. Բոսվել III, Ջ. Ֆրանսիսկո Բյոր, Մուչատ Չայքանա, Մեթյու Ռ. Քլարկ, Լ. Գիդո Կրիստոբալ, Էդմարկ Ռ. Դյումա, Կառլոս Ա.

Գաբալուն, Մ. Էնդրյու Գալտ IV,
Քլարկ Ջ. Գիլբերտ, Լեոնարդ Դ.
Գրիր, Վլադիսլավ Յու. Գորնոստանեյ,
Դ. Մարտին Գուրի, Ռիչարդ Ի.
Հիտոն, Բրոկ Ս. Հայաթ, Դեյվիդ
Հ. Հանցման, Լորման Ս. Ինսոն,
Դենիել Կաբասոն, Ֆեդերիկո Մ.
Կայնլայն, Ջեֆրի Ջ. Կյոբ, Յանգզուն
Կվոն, Դեյվիդ Ջ. Լաֆրանս,
Ռիկարդո Ս. Լեիչ, Մարսելո Լոզա,
Խոսե Ջ. Մանարին, Ջերեմիա Ջ.
Մորգան, Մարկ Ա. Մորթենսեն,
Էդուարդո Ֆ. Օրտեգա, Նեյթն Դ.
Փեյս, Մայքլ Մ. Փաքեր, Օմառ Ի.
Պալասիոս, Խորխե Վ. Պերեզ,
Կիրիլ Պոլսիկո, Մերսիո Ա. Պոնսիո,
Սրտուր Ռասկոն, Միգել Ա. Ռեյնոսո,
Գոստավո Ջ. Հեզենց, Ռոբերտ Ջ.
Ռիվարոյա, Տոնգա Ջ. Մայ, Լուսիանո
Մանկարի, Ռոսենդո Մանտոս,
Հենրի Մավստրոմ, Ջ. Մեթյու
Մքոտ, Ջեյմս Ի. Սյոթեր, Ռոբերտ Թ.
Սմիթ, Ռիկարդո Ա. Սփենսեր,
Քոլին Ս. Ստաուֆեր, Դեյվիդ Ս.
Ստյուարտ, Ջարեդ Վ. Սթոուն,
Ադեն Մ. Թումալիուան, Մարտին Ջ.
Թուրվի, Յան Ա. Վեգա, Փոլ Բ. Վիպի,
Չադ Ռ. Վիլկինսոն և Դաու Ռ.
Վիլսոն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք
քվերակել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Առաջարկվում է, որ հաս-
տատենք երիտասարդ տղա-
մարդկանց նոր գերագույն
նախագահությանը՝ Ստիվեն Ջ.
Լանդը՝ որպես նախագահ, Միմադ
Մալիմ Քորբիտ՝ որպես առա-
ջին խորհրդական և Բրեդլի
Ռեյ Վիլկոքս՝ որպես երկրորդ
խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք
քվերակել:

Ովքեր դեմ են, կարող են ևս
քվերակել:

Առաջարկվում են հաստատման
մյուս Բարձրագույն իշխանություն-
ներին, տարածքային յոթանա-
սունականներին և բարձրագույն
պաշտոնյաներին ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք
քվերակել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Կրկին, մենք հրավիրում
ենք բոլոր նրանց, ովքեր դեմ

են քվերակել այդ առաջարկնե-
րից որևէ մեկին, կապ հաստատել
իրենց ցցերի նախագահների
հետ:

Ընդհանրապես ենք հայտնում
Եկեղեցու ղեկավարների համար
ձեր շարունակական հավատքի և
աղոթքների համար: ■

Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2019 թ.

Ներկայացրեց Քեվին Ռ. Յերգենսենը

Եկեղեցու աուդիտի բաժնի գլխավոր տնօրեն

Ուղղված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Հարգելի՛ Եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը հաստատում է Տասանորդների տնօրինման խորհուրդը, որը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից: Եկեղեցու միավորները ծախսում են ֆոնդերն ըստ հաստատված բյուջեների, քաղաքականության և ընթացակարգերի:

Եկեղեցու աուդիտի բաժինը, որը բաղկացած է հավաստագրված մասնագետներից և գործում է Եկեղեցու մյուս բաժիններից և մարմիններից անկախ, պատասխանատու է աուդիտների անցկացման համար, որպեսզի խելամիտ վերահսկողություն հաստատվի ստացվող նվիրատվությունների, կատարվող ծախսերի և Եկեղեցու ակտիվները պահպանելու ուղղությամբ:

Հիմնվելով կատարված աուդիտի արդյունքների վրա, Եկեղեցու աուդիտի բաժինն այն կարծիքին է, որ 2019 թվականին բոլոր նյութական հարցերին առնչվող ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու ակտիվները հաշվառվել և տնօրինվել են համապատասխան Եկեղեցու հաստատված բյուջեների, քաղաքականությունների և հաշվապահական ընթացակարգերի: Եկեղեցին հետևում է այն գործելաոճին, որն ուսուցանում է իր անդամներին և խորհուրդ է տալիս ապրել բյուջեի սահմաններում, խուսափել պարտքերից և խնայել կարիքի ժամանակների համար:

Հարգանքով ներկայացրեց՝

Եկեղեցու աուդիտի բաժին

Քեվին Ռ. Յերգենսեն

Գլխավոր տնօրեն ■



Երեց Ուլիսես Ստարես
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մորմոնների Գրքի ի հայտ գալը

Պատմական փաստերը և Մորմոնների Գրքի հատուկ վկաները վկայում են, որ Մորմոնների Գրքի ի հայտ գալն իսկապես հրաշք էր:

Մի առիթով Եկեղեցու երեցների հետ հանդիպման ժամանակ մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարեց. «Վերցրեք մեզանից Մորմոնների Գիրքը և հայտնությունները, և որտե՞ղ կլինի մեր կրոնը: Այն գոյություն չի ունենա»: ¹ Ի՛նչ սիրելի եղբայրներ և քույրեր, Առաջին տեսիլքից հետո Մորմոնների Գրքի հրաշքով ի հայտ գալը հանդիսանում է Հիսուս Քրիստոսի շարունակական վերականգնման երկրորդ հիմնական հենակետն այս տնտեսության

ժամանակ: Մորմոնների Գիրքը վկայում է Իր զավակների հանդեպ Աստծո սիրո և Տեր Հիսուս Քրիստոսի անձնագրի և աստվածային քավիչ գոհաբերության մասին, ինչպես նաև Իր Հարությունից հետո նեփիազիների մեջ Հիսուս Քրիստոսի գերագույն սպասավորության մասին: ² Այն նաև վկայում է, որ Իսրայելի տան մնացորդն Իր վերջին օրվա աշխատանքի միջոցով պետք է դառնա մեկ, և որ նրանք հավիտյան դուրս չեն գցվել: ³

Երբ ուսումնասիրում ենք այս վերջին օրերում այս սուրբ գրքի ի հայտ գալու պատմությունը, մենք հասկանում ենք, որ այդ ամբողջ աշխատանքը հրաշքով է ուղղորդվել՝ սուրբ հրեշտակի կողմից մարգարե Ջոզեֆ Սմիթի թիթեղները ստանալուց սկսած մինչև «Աստծո պարգևով և գորությամբ» ⁴ նրա թարգմանությունը և Տիրոջ ձեռքով նրա հրատարակումը:

Մորմոնների Գրքի ի հայտ գալը սկսվեց ավելի վաղ, քան Ջոզեֆ Սմիթը ոսկե թիթեղները ստացավ Մորմոնների հրեշտակի ձեռքից: Մարգարեները հնում մարգարեացել են մեր օրերում այս սուրբ գրքի ի հայտ գալու մասին: ⁵ Եսայիան խոսել է կնքված գրքի մասին, որ երբ այն ի հայտ գա, մարդիկ կվիճարկեն Աստծո խոսքը: Այդ հանգամանքի շնորհիվ ստեղծվեց այն բարենպաստ միջավայրը, որտեղ Աստված կարող էր կատարել Իր «զարմանալիք և զարմանքը», որը կստիպեր «փչանայ նորանց իմաստունների իմաստությունը, եւ հանճարեղների հանճարը խափանուի», իսկ «խեղճերը ուրախություն պիտի աւելացնեն Տէրով, եւ չքաւոր մարդիկը պիտի զուարճանան Իսրայելի Մուրբովը»: ⁶ Եզեկիելը խոսել է, որ Հուդայի փայտը (Աստվածաշունչը) և Հովսեփի փայտը (Մորմոնների Գիրքը) պետք է միավորվեն և դառնան մեկ: Թե՛ Եզեկիելը (Հին Կտակարանում) և թե՛ Լեքին (Մորմոնների Գրքում) նշում են, որ նրանք պիտի «սերտաճեն», որ հերքեն կեղծ վարդապետությունները, հաստատեն խաղաղություն և բերեն մեզ մեր ուխտերի իմացությանը: ⁷

1823 թվականի սեպտեմբերի 21-ի երեկոյան, Առաջին Տեսիլքից երեքուկես տարի անց, Ջոզեֆի անկեղծ աղոթքներին ի պատասխան, Մորմոնների հրեշտակը երեք անգամ այցելեց նրան. Մորմոնին հնագույն Ամերիկյան մայրցամաքի վերջին մարգարեն էր: Այդ այցելության ընթացքում, որը տևեց ամբողջ գիշեր, Մորմոնին ասաց Ջոզեֆին, որ Աստված հրաշալի աշխատանք ուներ պատրաստած նրա համար՝ Ամերիկյան մայրցամաքի հնագույն



Բաունթիֆուլ, Յուտա, ԱՄՆ

մարգարեների ոգեշնչված խոսքերի թարգմանությունը և հրատարակությունը:⁸ Հաջորդ օրը Ջոզեֆը գնաց իր տնից ոչ հեռու գտնվող մի վայր, որտեղ Մորոնիս դարեր առաջ թիթեղները թաղել էր իր մահից առաջ: Այնտեղ Ջոզեֆը կրկին տեսավ Մորոնիսին, ով նրան հրահանգեց նախապատրաստվել թիթեղներն ավելի ուշ ստանալու համար:

Հաջորդ չորս տարիների ընթացքում, յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 22-ին, Ջոզեֆը լրացուցիչ հրահանգներ ստացավ Մորոնիսից այն մասին, թե ինչպես պետք է Տիրոջ արքայությունը ղեկավարվի վերջին օրերին: Ջոզեֆի պատրաստությունը ներառում էր նաև այցելություններ Աստծո հրեշտակների կողմից՝ դրանով բացահայտելով այն իրադարձությունների վեհությունն ու փառքը, որոնք տեղի էին ունենալու այս տնտեսությունում:⁹

1827 թվականին Էմմա Հեյլի հետ նրա ամուսնությունն այդ նախապատրաստության մի մասն էր: Նա կարևոր դեր ունեցավ՝ օգնելով Մարգարեին իր ողջ կյանքի և ծառայության ընթացքում: Իրականում, 1827 թվականի սեպտեմբերին Էմման ուղեկցեց Ջոզեֆին դեպի բլուրը, որտեղ պահված էին թիթեղները և սպասեց նրան, երբ Մորոնիս հրեշտակը հիշատակարանը հանձնեց Ջոզեֆին: Ջոզեֆը ստացավ այն խոստումը, որ թիթեղները կպահպանվեն, եթե նա իր ողջ ջանքերը ներդնի դրանք պահպանելու համար, մինչև դրանք վերադարձվեն Մորոնիսին:¹⁰

Ավետարանի ի՛մ սիրելի ընկերակից գուգրնկերներ, հնագույն ժամանակների այսօրվա հայտնագործություններից շատերը տեղի են ունենում հնագիտական պեղումների ընթացքում կամ նույնիսկ պատահական՝ շինարարական աշխատանքների ընթացքում: Սակայն, Ջոզեֆ Մմիթին թիթեղների տեղը ցույց տվեց հրեշտակը: Դրա հետևանքն ինքնին հրաշք էր:

Մորոնիսի Գրքի թարգմանության գործընթացը նույնպես հրաշք էր: Այս սուրբ հնագույն



ՆԱՐԸ ԳՈՒՄՈՒ ՂԵՆՈՒ

հիշատակարանը «չի թարգմանվել» այն ավանդական եղանակով, որով գիտնականները թարգմանում են հին տեքստերը՝ սովորելով հին լեզու: Մենք պետք է գործընթացին ավելի շուտ նայենք «հայտնության» նման, որի ժամանակ Տիրոջ կողմից տրամադրվել են ֆիզիկական գործիքներ, և չդիտարկենք լեզուների իմացություն ունեցող մարդու «թարգմանության» նման: Ջոզեֆ Մմիթը հայտարարել է, որ Աստծո գործությամբ «ես թարգմանեցի Մորոնիսի Գիրքը [հիերոգլիֆներից], որոնց մասին գիտելիքը կորսված էր աշխարհում, և այդ հրաշալի գործում ես՝ չկրթված մի պատանի, նոր հայտնությամբ միայնակ դեմ առ դեմ կանգնեցի աշխարհի իմաստությանը և տասնութ դարերի բազմապատիկ արհամարհանքին»:¹¹ Թիթեղների թարգմանության կամ այսպես ասած հայտնության ժամանակ Տիրոջ օգնությունն ակնհայտ է նաև այն դեպքում, երբ հաշվի առնենք այն կարճ զարմանալի ժամանակահատվածը, որի ընթացքում Ջոզեֆ Մմիթը թարգմանեց այն:¹²

Ջոզեֆի դպիրները վկայել են Աստծո գործության մասին, որը դրսևորվել է Մորոնիսի Գրքի թարգմանության վրա աշխատելիս: Օլիվեր Քատլերին մի անգամ ասել է. «Դրանք անմոռանալի՝ օրեր էին. նստել երկնքից ոգեշնչված ձայնի թելադրման ներքո, որը կրծքումդ խորը երայխագիտություն է արթնացնում: Օր օրի ես շարունակում էի անդադար գրել նրա խոսքերը, երբ նա թարգմանում էր . . . Մորոնիսի Գիրքը»:¹³

Պատմական աղբյուրները հայտնում են, որ երբ 1827 թվականին Ջոզեֆ Մմիթը ձեռք բերեց թիթեղները, փորձեր արվեցին նրանից հավիշտակել դրանք: Նա նշել է, որ «ամենաեռանդուն ջանքերը գործադրվեցին՝ [թիթեղները նրանից] վերցնելու համար, և որ «ամեն մի հնարք, որ հնարավոր էր հորինել, օգտագործվեց այդ նպատակի համար»:¹⁴ Ջոզեֆը և Էմման, ի վերջո, ստիպված եղան Նյու Յորք նահանգի Մանչեսթեր քաղաքից տեղափոխվել Պենսիլվանիա նահանգի Հարմոնի քաղաքը և թարգմանության գործը սկսելու

համար գտնել ապահով մի վայր՝ ամբոխից և մարդկանցից հեռու, ովքեր ցանկանում էին գողանալ թիթեղները:»¹⁵ Ինչպես պատմում է պատմաբաններից մեկը. «Այսպիսով ավարտվեց թիթեղների վրա Ջոզեֆի խնամակալության առաջին դժվարին փուլը: . . . Այդուհանդերձ, այդ հիշատակարանն անվտանգ էր և դրանք պահպանելու իր ջանքերում, անկասկած, Ջոզեֆը շատ բան իմացավ Աստծո և մարդու ուղիների մասին, որոնք նրան ապագայում ծառայելու էին»:¹⁶

Մորմոնի Գիրքը թարգմանելիս Ջոզեֆն իմացավ, որ Տերը վկաներ կընտրի՝ թիթեղները տեսնելու համար:¹⁷ Մա մաս է կազմում այն բանի, ինչ Տերն ինքը հաստատեց, երբ ասաց. «Երկու կամ երեք վկաների բերանով ամեն խոսք հաստատվի»:¹⁸ Օլիվեր Քաուդերին, Դեյվիդ Ուիթմերը և Մարտին Հարրիսը Ջոզեֆի առաջին զուգընկերներն էին, ովքեր հիմնադրեցին Աստծո հրաշալի աշխատանքն այս տնտեսությունում և առաջին վկաներն էին, ովքեր կանչվեցին աշխարհին հատուկ վկայություն բերել Մորմոնի Գրքի մասին: Նրանք վկայեցին, որ Տիրոջ մի հրեշտակ նրանց ցույց տվեց հնագույն հիշատակարանը, և որ նրանք տեսան թիթեղների վրա փորագրված նիշերը: Նրանք նաև վկայեցին, որ երկնքից լսեցին Աստծո ձայնը, որը հայտարարեց, որ հնագույն հիշատակարանը թարգմանվել է Աստծո պարզևորված և զորությամբ: Այնուհետև նրանց պատվիրվեց վկայել դրա մասին ամբողջ աշխարհին:¹⁹

Տերը հրաշքով կանչեց ուրիշ ութ վկաների, որ իրենց աչքերով տեսնեն ոսկյա թիթեղները և լինեն հատուկ վկաներ՝ Մորմոնի Գրքի ճշմարտացիության ու աստվածայնության վերաբերյալ: Նրանք վկայեցին, որ տեսան և ուշադիր զննեցին թիթեղները և դրա վրա փորագրված նիշերը: Անգամ ձայնորդությունների, հալածանքների, բոլոր տեսակի դժվարությունների մեջ, և նույնիսկ նրանցից ոմանց ավելի ուշ

թուլացած հավատքի ժամանակ, Մորմոնի Գրքի այս ընտրյալ տասնմեկ վկաները երբեք չհերքեցին իրենց վկայություններն այն մասին, որ իրենք տեսել են թիթեղները: Ջոզեֆ Սմիթն այլևս միակ մարդը չէր, ով գիտեր Մորմոնի այցերի և ոսկե թիթեղների մասին:

Լյուսի Մակ Սմիթը գրել է, որ իր որդին ուրախությամբ լցված տուն եկավ, երբ թիթեղները ցույց տրվեցին այդ վկաներին: Ջոզեֆն իր ծնողներին ասել է. «Եվ ես այնպես եմ զգում, կարծես, բեռից ազատվել եմ, որը խիստ ծանր էր կրել, և սիրտս ցնծում է, որ ես այլևս բոլորովին միայնակ չեմ աշխարհում»:²⁰

Ջոզեֆ Սմիթը Մորմոնի Գիրքը տպագրելիս մեծ դիմադրության ենթարկվեց, երբ ավարտեց նրա թարգմանությունը: Նյու Յորքի Պալմիրա քաղաքում նա կարողացավ համոզել Էգբերտ Բ. Գրանդին անունով մի տպագրիչի տպել այն միայն նրանից հետո, երբ Մարտին Հարրիսը մեծ հավատք և զոհաբերություն գործադրելով, գրավադրեց իր ֆերման՝ տպագրության ծախսերի համար: Մորմոնի Գրքի հրատարակումից հետո, մասամբ շարունակվող ընդդիմության պատճառով, Մարտին Հարրիսը հավատարմորեն վաճառեց իր ֆերմայի 151 ակրը (0.6 կմ²)՝ հրատարակության ծախսերը ծածկելու համար: Ջոզեֆ Սմիթին տրված հայտնության միջոցով Տերը հրահանգեց Մարտին Հարրիսին անհագ չլինել իր ունեցվածքով և վճարել տպագրության արժեքն այն գրքի համար, որը «պարունակում է ճշմարտությունը և Աստծո խոսքը»:²¹ 1830 թվականի մարտին լույս տեսան Մորմոնի Գրքի առաջին 5000 օրինակները, իսկ այսօր ավելի քան հարյուր լեզուներով տպագրվել են ավելի քան 180 միլիոն օրինակ:

Պատմական փաստերը և Մորմոնի Գրքի հատուկ վկաները վկայում են, որ Մորմոնի Գրքի ի հայտ գալն իսկապես հրաշք էր: Այնուամենայնիվ, այս գրքի ուժը հիմնված չէ միայն նրա հրաշալի պատմության վրա, այլ՝ նրա հզոր, անզուգական ուղերձի վրա, որը

փոխել է անհամար կյանքեր, այդ թվում՝ իմը:

Ես առաջին անգամ Մորմոնի Գիրքն ամբողջությամբ կարդացի, երբ սեմինարիայի ուսանող էի: Ինչպես առաջարկել էին իմ ուսուցիչները, ես այն սկսեցի կարդալ նախաբանից: Մորմոնի Գրքի առաջին էջերում պարունակվող խոստումը դեռևս արձագանքում է իմ գլխում. «Խորհեք «ձեր» սրտում . . . ապա [հավատքով] հարցրեք Աստծուն՝ . . . Քրիստոսի անունով, թե արդյոք գիրքը ճշմարիտ է: Նրանք, ովքեր հետևում են այս գործելակերպին, . . . Սուրբ Հոգու զորությամբ վկայություն կատանան նրա ճշմարտացիության և աստվածայնության վերաբերյալ»:²²

Այդ խոստումը հիշելով, ջանասիրաբար ձգտելով ավելին իմանալ դրա ճշմարտության մասին, և աղոթքի ոգով ես քիչ-քիչ ուսումնասիրեցի Մորմոնի Գիրքը, երբ կատարում էի սեմինարիայում հանձնարարված շաբաթական դասերը: Երեկվա նման հիշում եմ, որ մի ջերմ զգացողություն սկսեց աստիճանաբար մեծանալ իմ հոգում ու սկսեց պատել սիրտս, լուսավորեց իմ հասկացողությունը և ավելի ու ավելի հրաշալի դարձավ, ինչպես նկարագրել է Ալման՝ իր ժողովրդին Աստծո խոսքը քարոզելիս:²³ Այդ զգացումը, ի վերջո, վերածվեց գիտելիքի, որն արմատավորվեց իմ սրտում և դարձավ այս սուրբ գրքում տեղ գտած նշանակալի իրադարձությունների և ուսմունքների իմ վկայության հիմքը:

Այս և մյուս անգին, անձնական փորձառությունների շնորհիվ Մորմոնի Գիրքն իսկապես դարձավ այն անկյունաքարը, որը հաստատում է Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ հավատքը և Նրա ավետարանի մասին իմ վկայությունը: Այն դարձավ այն սյուներից մեկը, որն ինձ վկայում է Փրկիչի աստվածային քավող զոհաբերության մասին: Այն իմ կյանքում դարձավ վահան ընդդեմ հակառակորդի փորձերի՝ թուլացնելու իմ հավատքը և անհավատություն սերմանելու իմ մտքում

և ինձ տվեց քաջություն, որ աշխարհին խիզախորեն հայտարարեմ Փրկիչի մասին իմ վկայությունը:

Իմ սիրելի ընկերներ, Մորմոնի Գրքի մասին իմ վկայությունը ես ստացա տող առ տող²⁴ որպես հրաշք իմ սրտում: Մինչ օրս այդ վկայությունը շարունակում է աճել, երբ անկեղծ սրտով շարունակում եմ ձգտել ավելի լիարժեք հասկանալ Աստծո խոսքը, որն առկա է սուրբ գրությունների այս արտասովոր գրքում:

Բոլոր այն մարդկանց, ովքեր այսօր լսում են իմ ձայնը, ես հրավիրում եմ Մորմոնի Գրքի հրաշքով ի հայտ գալու մասը կազմել ձեր կյանքում: Ես խոստանում եմ, որ երբ աղոթքով և հետևողականորեն ուսումնասիրեք գրքի խոսքերը, կկարողանաք ճաշակել դրա խոստումները և հարուստ օրհնությունները ձեր կյանքում: Ես կրկին անգամ վերահաստատում եմ այն խոստումը, որն արձագանքում է այս գրքի էջերում, որ եթե «դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա [ողորմածորեն] կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:²⁵ Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ Նա կպատասխանի շատ անձնական ձևով, ինչպես Նա արել է ինձ համար և աշխարհի շատ այլ մարդկանց համար: Ձեր փորձառությունը կլինի նույնքան փառահեղ և սուրբ ձեզ համար, որքան Ջոզեֆ Սմիթի փորձառությունները նրա համար, ինչպես նաև առաջին վկաների և բոլոր նրանց համար, ովքեր ձգտել են ստանալ այս սուրբ գրքի շիտակության և արժանահավատության մասին վկայություն:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Մորմոնի Գիրքն իսկապես Աստծո խոսքն է: Ես վկայում եմ, որ սրբազան հիշատակարանը «մեկնում է ավետարանի վարդապետությունները, ուրվագծում է փրկության ծրագիրը և ասում է

մարդկանց, թե ինչ պետք է անեն, որպեսզի ձեռք բերեն խաղաղություն այս կյանքում և հավերժական փրկություն՝ գալիք կյանքում»:²⁶ Ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքն Աստծո գործիքն է, որպեսզի մեր օրերում Իսրայելը հավաքի և օգնի մարդկանց ճանաչել Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Ես վկայում եմ, որ Աստված ապրում և սիրում է մեզ, ու Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, աշխարհի Փրկիչն է և մեր կրոնի գլխավոր անկյունաքարը: Ես ասում եմ այս բաները մեր Քավիչի, մեր Վարդապետի և մեր Տիրոջ, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՍՆԵՐ

1. Joseph Smith, in “Minute Book 1,” 44, josephsmithpapers.org; also at Church History Library, Salt Lake City; capitalization standardized.
2. Տես 3 Նեփի 11–26:
3. Տես Եզեկիել 37.21–28, 1 Նեփի 13.34–41, 3 Նեփի 20.46, 21.1–11, Մորմոնի Գրքի տխրոսաթերթ:
4. Մորմոնի Գրքի նախաբանը:
5. Տես Հայտնություն 14, 6–7, 1 Նեփի 19.21:
6. Եսայիա 29.14, 19, տես նաև հատվածներ 11–13:
7. Տես Եզեկիել 37.16–17, 2 Նեփի 3.12:
8. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.27–47, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 27.5, Joseph Smith, “History, 1838–1856, volume A-1 [23 December 1805–30 August 1834],” 5, josephsmithpapers.org:
9. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.54, Տես նաև Ջոզեֆ Սմիթ, «Եկեղեցու պատմություն», *Times and Seasons*,

- Mar. 1, 1842, 707, josephsmithpapers.org:
10. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.59, *Եկեղեցու նախագահների նստումները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 57–59:
11. Joseph Smith, “History, 1838–1856, volume E-1 [1 July 1843–30 April 1844],” 1775, josephsmithpapers.org; also at Church History Library, Salt Lake City; punctuation standardized. Տես նաև Joseph Smith, “Letter to James Arlington Bennet, 13 November 1843,” 1, josephsmithpapers.org; also at Church History Library, Salt Lake City:
12. Տես John W. Welch, “Timing the Translation of the Book of Mormon: ‘Days [and Hours] Never to Be Forgotten,’” *BYU Studies*, vol. 57, no. 4 (2018), 11–50:
13. Օլիվեր Քաուդերի, մեջբերված է Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.71, տողատակի ծանոթագրություն, տես նաև *Latter Day Saints’ Messenger and Advocate*, Oct. 1834, 14:
14. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.60:
15. Տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.60–62:
16. Andrew H. Hedges, “‘All My Endeavors to Preserve Them’: Protecting the Plates in Palmyra, 22 September–December 1827,” *Journal of Book of Mormon Studies*, vol. 8, no. 2 (1999), 23.
17. Տես 2 Նեփի 27.12–14, Եթեր 5.1–3:
18. Մատթեոս 18.16:
19. Տես «Երեք վկաների վկայությունը», Մորմոնի Գիրք:
20. Joseph Smith, in Lucy Smith, *Biographical Sketches of Joseph Smith, the Prophet, and His Progenitors for Many Generations* (1880); see also “Lucy Mack Smith, History, 1845,” 154, josephsmithpapers.org.
21. Վարդապետություն և Ուխտեր 19.26:
22. Մորմոնի Գրքի նախաբանը, տես նաև Մորմոնի 10.3–5:
23. Տես Ալմա 32.41–43:
24. Տես 2 Նեփի 28.30:
25. Մորմոնի 10.4:
26. Մորմոնի Գրքի նախաբանը:



Օլմոն, Մարգա Մարգա, Չիլի



Երեց Ջոն Ա. Մակքյուն
Յոթանասունից

Եկեք դեպի Քրիստոս՝ ապրելով որպես վերջին օրերի սրբեր

*Մենք կարող ենք դժվար գործեր կատարել և օգնել
մյուսներին անել նույնը, որովհետև մենք գիտենք,
թե ում կարող ենք ապավինել:*

Շնորհակալություն, Երեց Մոարես, Մորմոնի Գրքի ձեր հզոր և մարգարեական վկայության համար: Վերջերս, ես առանձնահատուկ հնարավորություն ունեցա ձեռքով բռնել Մորմոնի Գրքի բնօրինակ ձեռագրից մի էջ: Այդ բացառիկ էջի վրա առաջին անգամ այս տևտեսությունում Նեփիի հետևյալ համարձակ խոսքերն էին արձանագրված. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը պատվիրաններ չի տալիս մարդկանց զավակներին՝ առանց ուղի պարաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց»:¹

Երբ ես բռնել էի այդ էջը, խորապես գնահատեցի 23-ամյա Ջոզեֆ Միֆֆի ջանքերը, ով թարգմանեց Մորմոնի Գիրքը «Աստծո պարզևոյ և զորությամբ»:² Ես նաև երախտագիտություն զգացի երիտասարդ Նեփիի հանդեպ՝ իր խոսքերի համար, ում խնդրել էին կատարել մի շատ դժվարին

հանձնարարություն՝ ձեռք բերել արույրե թիթեղները Լաբանից:

Նեփիին գիտեր, որ եթե շարունակեր կենտրոնացած մնալ Տիրոջ վրա, հաջողություն կունենար կատարելու այն, ինչ Տերն էր պատվիրել իրեն: Նա կենտրոնացած մնաց Փրկիչի վրա իր ողջ կյանքի ընթացքում, չնայած դիմացավ զայթակղությունների, ֆիզիկական փորձությունների և



Միլլրիկ, Յուսա, ԱՄՆ

նույնիսկ դավաճանության՝ իր անմիջական ընտանիքի որոշ անդամների կողմից:

Նեփիին գիտեր, թե ում էր Նա ապավինել:³ Երբ Նեփիին բացականչեց. «Ո՛վ թշվառ մարդ, որ ես եմ: Այո, սիրտս վշտանում է՝ մարմնիս պատճառով»,⁴ անմիջապես նշեց. «Իմ Աստվածն է եղել իմ ապավենը. նա իմ չարչարանքների միջով առաջնորդել է ինձ անապատում. և նա պահպանել է ինձ մեծ անդունդի ջրերի վրա»:⁵

Որպես Քրիստոսի հետևորդներ, մեր կյանքում մենք զերծ չենք մարտահրավերներից և փորձություններից: Մեզանից հաճախ պահանջվում է դժվար գործեր կատարել, որ եթե մենակ փորձեինք, դժվար կլիներ, և գուցե՝ անհնարին: Երբ մենք ընդունենք Փրկիչի «եկ ինձ մոտ» հրավերը,⁶ Նա կապահովի աջակցություն, մխիթարություն և խաղաղություն, որոնք անհրաժեշտ են, ինչպես նա արեց Նեփիի և Հովսեփի համար: Նույնիսկ մեր ամենածանր փորձությունների մեջ մենք կարող ենք զգալ Նրա ջերմ սիրտ գրկախառնումը, երբ վստահում ենք Նրան և ընդունում Նրա կամքը: Մենք կարող ենք զգալ ուրախություն, որը պահված է Նրա հավատարիմ աշակերտների համար, «քանզի Քրիստոսն է ուրախությունը»:⁷

2014 թվականին, երբ ծառայում էի լիաժամկետ միսիա, մեր ընտանիքն անսպասելի իրադարձությունների շրջադարձ ունեցավ: Մեր կրտսեր որդին, սքեյթբորդով բլրի գառիվայրով իջնելիս ընկավ և կյանքին սպառնացող ուղեղի վնասվածք ստացավ: Քանի որ նրա վիճակը վատանում էր, բժշկական անձնակազմը անհապաղ վիրահատեց նրան:

Մեր ընտանիքը ծնկի իջավ հիվանդանոցի մեկ այլ դատարկ սենյակում, և մենք մեր սրտի խոսքն ուղղեցինք Աստծուն: Այդ խառնաշփոթ և ցավալի պահին մենք լցված էինք Երկնային Հոր սիրով և խաղաղությամբ:

Մենք չգիտեինք, թե ինչ էր սպասվում ապագայում կամ

արդյոք կրկին ողջ կտեսնեինք մեր որդուն: Մենք գիտեինք շատ հստակ, որ նրա կյանքը Աստծո ձեռքում էր, իսկ արդյունքը՝ հավերժության տեսանկյունից, կգործեր նրա և մեր բարիքի համար: Հոգու պարզևի միջոցով մենք լիովին պատրաստ էինք ընդունել ցանկացած արդյունք:

Դա հեշտ չէր: Այդ վթարը առաջացրեց երկու ամիս հիվանդանոցում մնալու անհրաժեշտություն, մինչ մենք նախագահում էինք 400 լիաժամկետ միսիոներների: Մեր որդին տարավ հիշողության նշանակալի կորուստ: Նրա ապաքինումը ներառում էր ֆիզիկական, խոսքի և մասնագիտական թերապիայի երկար և դժվարին սեանսներ: Դժվարությունները մնում են, բայց ժամանակի ընթացքում մենք ականատես եղանք հրաշքի:

Մենք հասկանում ենք, որ ոչ ամեն փորձություն, որին դիմակայում ենք, կունենա մեր ցանկացած արդյունքը: Մակայն, երբ մենք մնում ենք կենտրոնացած Քրիստոսի վրա, խաղաղություն կզգանք և կտեսնենք Աստծո հրաշքները, ինչպիսին էլ որ լինեն դրանք, Նրա ժամանակին և Նրա ձևով:

Կլինեն դեպքեր, երբ մենք չենք կարողանա տեսնել որևէ ուղի, որ ներկա իրավիճակը լավ ավարտ կունենա և գուցե նույնիսկ արտահայտվենք, ինչպես Նեփին. «Միրտս վշտանում է մարմնիս պատճառով»:⁸ Կարող են լինել դեպքեր, երբ միակ հույսը, որ ունենք, Հիսուս Քրիստոսի մեջ է: Ինչպիսի օրհնություն է ունենալ այդ հույսը և վստահությունը Նրա հանդեպ: Քրիստոսն այն մեկն է, ով միշտ կպահի Իր խոստումները: Նրա հանգիստը երաշխավորված է բոլորի համար, ովքեր գալիս են դեպի Նա:⁹

Մեր ղեկավարները խորապես ցանկանում են, որ բոլորը զգան խաղաղությունը և հանգստությունը, որը գալիս է Փրկիչ Հիսուս Քրիստոսին վստահելու և Նրա վրա կենտրոնանալու միջոցով:

Մեր ապրող մարգարեն՝ նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, հաղորդեց Տիրոջ տեսլականը

աշխարհի և Քրիստոսի Եկեղեցու անդամների համար. «Աշխարհին ուղղված մեր ուղերձը պարզ ու անկեղծ է. մենք հրավիրում ենք վարագույրի երկու կողմերում գտնվող Աստծո զավակներին *գալ դեպի իրենց Փրկիչը*, ստանալ սուրբ տաճարի օրհնությունները, ունենալ հարատև ուրախություն և արժանալի հավերժական կյանքի»:¹⁰

«Եկեք դեպի Քրիստոս» այս հրավերը *հասուն* իմաստներ ունի Վերջին Օրերի Սրբերի համար:¹¹ Որպես Փրկիչի Եկեղեցու անդամներ, մենք կապել ենք ուխտեր Նրա հետ և դարձել ենք Նրա հոգևորապես ծնված որդիներն ու դուստրերը:¹² Մեզ նաև հնարավորություն է տրվել աշխատել Տիրոջ հետ՝ հրավիրելով ուրիշներին գալ դեպի Նա:

Երբ մենք աշխատում ենք Քրիստոսի հետ, մեր խորապես կենտրոնացած ջանքերը պետք է լինեն մեր սեփական տների ներսում: Կլինեն դեպքեր, երբ ընտանիքի անդամները և մոտիկ ընկերները կբախվեն դժվարությունների: Աշխարհի ձայները և միգուցե իրենց անձնական ցանկությունները կարող է, ստիպեն նրանց կասկածել ճշմարտությանը: Մենք պետք է անենք այն ամենը, ինչ կարող ենք՝ օգնելու նրանց զգալ ինչպես Փրկիչի, այնպես էլ մեր սերը: Ես հիշում եմ «Միրեք բոլորին» հիմնը, որն ուսուցանում է մեզ. «Միրով պիտ . . . գիտնան . . . իմ հետևորդներն եք, երբ սեր ունեք դուք բոլորին»:¹³

Նրանց հանդեպ մեր սիրով հանդերձ, ովքեր կասկածում են ճշմարտությանը, ողջ ուրախության թշնամին գուցե փորձի մեզ ստիպել այնպես զգալ, կարծես մենք դավաճանում ենք նրանց, ում սիրում ենք, եթե *մենք* ինքներս շարունակում ենք ապրել ավետարանի լրիվությամբ և ուսուցանում դրա ճշմարտությունները:

Դեպի Քրիստոս գալու կամ դեպի Քրիստոս վերադառնալու գործում ուրիշներին օգնելու մեր ունակությունը մեծապես կորոշվի մեր օրինակի միջոցով՝ ուխտի արահետի վրա մնալու մեր

անձնական նվիրվածությամբ:

Եթե մեր իսկական ցանկությունն է փրկել նրանց, ում սիրում ենք, մենք պետք է ամուր մնանք Քրիստոսում՝ կառչելով Նրա Եկեղեցուց և Նրա ավետարանի լրիվությունից:

Վերադառնալով Նեփիի պատմությանը, մենք գիտենք, որ Տիրոջն ապավինելու Նեփիի հակումը ենթարկվել էր իր ծնողների՝ Տիրոջը վստահելու նախասիրության և ուխտ պահելու նրանց օրինակի ազդեցությանը: Մա հիանալի նկարագրվում է կենաց ծառի Լեքիի տեսիլքում: Ծառի քաղցր և ուրախալի պտղից ճաշակելուց հետո Լեքին «աչք ածեց [իր] շուրջբոլորը, որպեսզի կարողանար գտնել [իր] ընտանիքին»:¹⁴ Նա տեսավ Սարիային, Մամին և Նեփիին կանգնած. «կարծես թե չիմանալով, թե ուր պիտի գնան»:¹⁵ Այնուհետև Լեքին գրում է. «Ես ձեռքով նշան արեցի նրանց և նաև կանչեցի նրանց բարձր ձայնով, որ նրանք գան ինձ մոտ և ճաշակեն պտղից»:¹⁶ Խնդրում եմ ուշադրություն դարձրեք, որ Լեքին չհեռացավ կենաց ծառից: Նա հոգևորապես մնաց Տիրոջ հետ և հրավիրեց իր ընտանիքին գալ, որտեղ *ինքն* էր, որպեսզի ճաշակեին պտղից:

Հակառակորդը կգայթակղի ոմանց թողնել ավետարանի ուրախությունը՝ առանձնացնելով Քրիստոսի ուսմունքները Նրա Եկեղեցուց: Նա կկամենա ստիպել մեզ հավատալ, որ մենք ինքնուրույն կարող ենք ամուր մնալ ուխտի արահետում՝ մեր անձնական հոգևորության միջոցով, անկախ Նրա Եկեղեցուց:

Այս վերջին օրերում Քրիստոսի Եկեղեցին վերականգնվեց, որպեսզի օգնի Քրիստոսի ուխտի զավակներին մնալ Նրա ուխտի արահետում:

Վարդապետություն և Ուխտերում մենք կարող ենք. «Միա, սա իմ վարդապետությունն է,– ով ապաշխարում և *գալիս է ինձ մոտ*, նա է իմ եկեղեցին»:¹⁷

Քրիստոսի Եկեղեցու միջոցով մենք ամրապնդվում ենք որպես

Մրբերի համայնք՝ մեր փորձառությունների միջոցով: Մենք լսում ենք Նրա ձայնը Իր մարգարեների, տեսանողների ու հայտնողների միջոցով: Ամենակարևորը, Նրա Եկեղեցու միջոցով մեզ տրվում են Քրիստոսի Քավության հիմնական օրհնությունները, որոնք կարող են իրականացվել միայն սրբազան արարողություններին մասնակցելու միջոցով:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցին Քրիստոսի Եկեղեցին է Երկրի վրա, որը վերականգնվել է այս վերջին օրերում Աստծո բոլոր զավակների օգտի համար:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ երբ մենք «զալիս ենք դեպի Քրիստոս» և ապրում որպես Վերջին Օրերի Մրբեր, մենք կօրհնվենք Նրա սիրո, Նրա ուրախության և Նրա խաղաղության հավելյալ չափով: Նեփիի նման, մենք կարող ենք դժվար գործեր կատարել և օգնել մյուսներին անել նույնը, որովհետև մենք գիտենք, թե ում մենք կարող ենք ապավինել:¹⁸ Քրիստոսն է մեր լույսը, մեր կյանքը և մեր փրկությունը:¹⁹ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. 1 Նեփի 3.7:
2. Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը, տես նաև Մորմոնի Գրքի նախաբանը:
3. Տես 2 Նեփի 4.19:
4. 2 Նեփի 4.17:
5. 2 Նեփի 4.20:
6. Մատթեոս 11.28:
7. Ռասսել Մ. Նելսոն, «Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Հիսուս*, նոյեմբեր 2016, 82:
8. 2 Նեփի 4.17:
9. Տես Մատթեոս 11.28–30:
10. Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, «Եկեք առաջ շարժվենք», *Հիսուս*, մայիս 2018թ., 118–19, շեշտադրումն ավելացված է:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.59:
12. Տես Մոսիա 5.7:
13. Հովհաննես 13.35, տես նաև «Միրեք բոլորին», *Hymns*, no. 308:
14. 1 Նեփի 8.13:
15. 1 Նեփի 8.14:
16. 1 Նեփի 8.15:
17. Վարդապետություն և Ուխտեր 10.67, շեշտադրումն ավելացված է:
18. Տես 2 Նեփի 4.19:
19. Տես Մաղմուս 27.1:



Եպիսկոպոս Ջեռալդ Կոսե
Նախագահող եպիսկոպոս

Կենդանի վկայություն կենդանի Քրիստոսի մասին

*Մորմոնի Գրքի կենտրոնական ուղերձն է՝
մարդկության փրկության և վեհացման գործում
Հիսուս Քրիստոսի առանցքային դերի մասին
ճշմարիտ գիտելիքի վերականգնումը:*

2017 թվականի զարնան մի արևոտ օր, Փարիզ Ֆրանսիա տաճարի բաց դռների օրը նախատեսվածից շուտ էր սկսվել: Իրադարձության ժամանակ շրջայցերի զբոսավարներից



Սենդի, Յուսա, ՄՄ

մեկին մոտեցավ խոժոռ հայացքով մի տղամարդ: Նա ասաց, որ ապրում է տաճարի կողքին և խոստովանեց, որ ակտիվ պայքարել է տաճարի կառուցման դեմ: Տղամարդը պատմեց, որ մի օր, երբ նա դուրս էր նայում իր բնակարանի պատուհանից, տեսել է, թե ինչպես է ամբարձիչը կարծես երկնքից ցած իջեցնում Հիսուսի արձանը և խնամքով տեղադրում այն տաճարի բակում: Մարդն ասաց, որ այդ փորձառությունն ամբողջովին փոխել է իր զգացմունքները մեր Եկեղեցու հանդեպ: Հասկանալով, որ մենք Հիսուս Քրիստոսի հետևորդներն ենք, նա հայցեց մեր ներողամտությունը այն վնասի համար, որը գուցե պատճառել էր:

Christus-ի արձանը, որը զարդարում է Փարիզի տաճարը և եկեղեցու մյուս շենքերը, վկայում է Փրկիչի հանդեպ մեր սիրո մասին: Բնական մարմարից պատրաստված արձանը դանիացի քանդակագործ Բերտել Թորվալդսենի

գործն է, ով քանդակել էր այն 1820 թվականին՝ այն տարում, երբ եղել էր Առաջին Տեսիլքը: Արձանն առանձնանում է այդ ժամանակաշրջանի գեղարվեստական գործերի մեծ մասից, որոնք հիմնականում պատկերում էին խաչի վրա տառապող Քրիստոսին: Թրվալդսենի աշխատանքը ներկայացնում է կենդանի Քրիստոսին, ով հաղթանակ տարավ մահվան հանդեպ և, բոլորին գրկաբաց հրավիրում է գալ Իր մոտ: Միայն բևեռների նշանները Նրա ձեռքերի ու ոտքերի վրա, և Նրա կողի վերքը վկայում են աննկարագրելի հոգեվիճակի մասին, որը Նա տարել է՝ ողջ մարդկությունը փրկելու համար:



Պատճառներից մեկը, թերևս, որ մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու անդամներս, սիրում ենք այս արձանը, այն է, որ մեզ հիշեցնում է Մորմոնի Գրքում նկարագրված Փրկիչի այցը Ամերիկա մայրցամաք.

«Եվ ահա, նրանք տեսան մի Մարդու՝ երկնքից իջնելիս. և նրա հագին մի ճերմակ պարեգոտ կար. և նա իջավ ու կանգնեց նրանց մեջտեղում. . . .

Եվ եղավ այնպես, որ նա առաջ մեկնեց իր ձեռքը և խոսեց ժողովրդի հետ՝ ասելով.

Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը, . . .

. . . Ես խմեցի այն դառը բաժակից, որը Հայրը տվեց ինձ, և փառավորեցի Հորը՝ վերցնելով ինձ վրա աշխարհի մեղքերը:»¹

Այնուհետև Նա հրավիրեց յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի՝ առաջ գալ և իրենց ձեռքը մտցնել Իր կողը և շոշափել բևեռների նշանները Իր ձեռքերի ու ոտքերի վրա, այդպիսով անձնական վկայություն ստանալ՝ որ Ինքն իսկպպես երկար սպասված Մեսիան է:²

Այս վեհ տեսարանը Մորմոնի Գրքի գագաթնակետն է: Ավետարանի ողջ «բարի լուրը» պարփակված է Փրկիչի այս պատկերում՝ քնքշորեն մեկնված Նրա «ողորմության բազուկները»³ հրավիրում

են յուրաքանչյուրին գալ Իր մոտ և ստանալ Իր Քավության օրհնությունները:

Մորմոնի Գրքի կենտրոնական ուղերձն է՝ մարդկության փրկության և վեհացման գործում Հիսուս Քրիստոսի առանցքային դերի մասին ճշմարիտ գիտելիքի վերականգնումը: Այս թեմայի մասին խոսվում է սկսած նախաբանից, վերջացրած վերջին գլխի եզրափակիչ բառերով: Ուրացության և հոգևոր խառնաշփոթի դարերում Գեթսեմանիում և Գողգոթայում Քրիստոսի կատարածի խորը իմաստը կորավ կամ աղավաղվեց: Որքա՞ն հուզված պիտի լիներ Ջոզեֆ Միլթը, երբ 1 Նեպի գլուխը թարգմանելիս նա բացահայտեց այս հրաշալի խոստումը. «Այս վերջին հիշատակարանները [Մորմոնի Գիրքը], . . . կհաստատեն առաջինի [Աստվածաշնչի] ճշմարտացիությունը, . . . հայտնի կդարձնեն պարզ ու արժեքավոր բաներ, որոնք հանվել են դրանցից. և հայտնի կդարձնեն բոլոր ցեղերին, լեզուներին ու ժողովուրդներին, որ Աստծո Գառը՝ Հավերժական Հոր Որդին է և աշխարհի Փրկիչը. և որ բոլոր մարդիկ պետք է գան դեպի նա, այլապես նրանք չեն կարող փրկվել»:⁴

Փրկիչի Քավության մասին պարզ ու արժեքավոր ճշմարտություններն

արձագանքում են Մորմոնի Գրքի բոլոր էջերից: Թվարկելով այդ ճշմարտություններից մի քանիսը, ես հրավիրում եմ ձեզ խորհել, թե ինչպես են դրանք փոխել ձեր կյանքը կամ կարող են փոխել:

1. Հիսուս Քրիստոսի Քավությունն անվճար պարզ է, որը տրվել է *բոլորին*, ովքեր ապրել են *մինչ այժմ*, ապրում են *այժմ*, և կապրեն *սալսագայում* երկրի վրա:⁵
2. Մեր մեղքերի բեռը կրելուց բացի, Քրիստոսն Իր վրա վերցրեց մեր ցավերը, թուլությունները, տառապանքները, հիվանդությունները և մահկանացու վիճակում մարդուն բնորոշ բոլոր չարչարանքները: Չկա որևէ վիշտ, ցավ կամ տխրություն, որը Նա չի կրել մեզ համար:⁶
3. Փրկիչի քավող զոհաբերությունը մեզ թույլ է տալիս հաղթահարել Ադամի անկման բացասական հետևանքները, ներառյալ ֆիզիկական մահը: Քրիստոսի շնորհիվ, այս երկրի վրա ծնված Աստծո բոլոր զավակները, անկախ իրենց արդարությունից, կունենան հոգու և մարմնի վերամիավորում Հարության գործությամբ,⁷ և կվերադառնան Նրա մոտ՝ իրանց գործերի համեմատ դատուելով:⁸
4. Այնուամենայնիվ, Փրկիչի Քավության բոլոր օրհնությունները մենք կստանանք այն դեպքում, եթե ջանասիրաբար⁹ ապրենք «Քրիստոսի վարդապետությամբ»: ¹⁰ Լեքին երազում տեսավ «նեղ ու անձուկ մի արահետ», ¹¹ որը տանում էր դեպի կյանքի ծառը: Ծառի պտուղը, խորհրդանշելով Աստծո սերը, որն արտահայտվում է Քրիստոսի Քավության վեհ օրհնություններով, «ամենաթանկն ու ամենաբաղձալիկն է . . . և դա ամենամեծն է Աստծո բոլոր պարզներից»: ¹² Այս պտղին հասնելու համար, մենք պետք է հավատք գործադրենք Հիսուս Քրիստոսի հանդեպ, ապաշխարենք, «սկանջ դնենք [Աստծո խոսքին],» ¹³ ստանանք կարևոր արարողությունները և



մինչև մեր կյանքի վերջ պահենք սուրբ ուխտերը:¹⁴

5. Քավության միջոցով, Հիսուս Քրիստոսը ոչ միայն սրբում է մեր մեղքերը, այլ նաև տալիս է *թույլատրող* զորություն, որով Նրա աշակերտները կարող են «հան[ել] բնական մարդուն»,¹⁵ առաջադիմել «տող առ տող»,¹⁶ ավելի սուրբ դառնալ,¹⁷ որպեսզի մի օր դառնան Քրիստոսանման կատարյալ էակներ,¹⁸ արժանի՝ Սստծո հետ կրկին ապրելու,¹⁹ և ժառանգեն երկնքի արքայության բոլոր օրհնությունները:²⁰

Մորմոնի Գրքում պարունակվող մեկ այլ մխիթարող ճշմարտությունն այն է, որ Տիրոջ Քավությունն իր հասանելիությամբ անսահման և համընդհանուր լինելով հանդերձ, միևնույն ժամանակ զարմանալիորեն նեղ անձնական պարզ և, յուրաքանչյուրիս համար՝ անհատական:²¹ Այնպես, ինչպես Հիսուսը հրավիրեց նեփիացի աշակերտներից ամեն մեկին շոշափել Իր վերքերը, Նա մեռավ յուրաքանչյուրիս համար, անհատապես, կարծես թե դուք կամ ես միակ մարդը լինեինք երկրի վրա: Նա մեզ անհատական հրավեր է հղում՝ գալ Իր մոտ և ճաշակել Իր Քավության հրաշալի օրհնությունները:²²

Քրիստոսի Քավության անձնական բնույթը դառնում է ավելի իրական, երբ մենք խորհում ենք Մորմոնի Գրքի նշանավոր տղամարդկանց և կանանց օրհնակների մասին: Նրանց թվում են՝ Ենովյա,

Ալման, Զիզրոմը, Լամոնի թագավորը և նրա կինը, Բենիամին թագավորի ժողովուրդը: Նրանց դարձի պատմությունները և վառ վկայությունները կենդանի վկայություն են՝ թե ինչպես կարող է փոխվել մեր սիրտը և փոխակերպվել մեր կյանքը Տիրոջ անսահման բարության և ողորմածության միջոցով:²³

Մարգարե Ալման իր ժողովրդին հղել էր այս կենսահույզ հարցը: Նա ասել է. «Եթե դուք զգացել եք սրտի մի փոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրտ երգը, ես կկամենայի հարցնել, *այժմ* դուք ունե՞ք այդպիսի զգացում»:²⁴ Այս հարցն այսօր կարևոր է, քանի որ որպես Տիրոջ աշակերտներ, մենք Նրա փրկագնող զորության կարիքն ունենք, որ ուղեկցի մեզ, շարժառիթ հանդիսանա մեզ համար և ամեն օր փոխի մեզ:

Ալմայի հարցը կարելի էր նաև բառափոխել այս կերպ. ե՞րբ եք վերջին անգամ զգացել Փրկիչի Քավության հաճելի ազդեցությունը ձեր կյանքում: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ դուք զգում եք «ուժգին և քաղցր» ուրախություն,²⁵ որը վկայում է ձեր հոգուն, որ ձեր մեղքերը ներված են, կամ, երբ ցավալի փորձությունները հանկարծ թեթևանում են, կամ, երբ ձեր սիրտը փափկում է, և դուք ի վիճակի եք լինում ներողամիտ լինել ձեզ վիրավորած մարդու հանդեպ: Գուցե դա դրսևորվում է ամեն անգամ, երբ նկատում եք, որ ուրիշներին սիրելու և ծառայելու

ձեր կարողությունը մեծացել է, կամ, որ սրբագործման գործընթացը փոխում է ձեր անձը՝ ավելի մոտեցնելով Փրկիչի օրինակին:²⁶

Ես վկայում եմ, որ բոլոր այս դրսևորումներն իրական են և ապացույց են, որ մեր կյանքը կարող է փոխվել Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ հավատքի շնորհիվ: Մորմոնի Գիրքը պարզաբանում և ընդլայնում է մեր գիտելիքն այս աստվածային պարզի մասին: Այս գիրքն ուսումնասիրելիս, դուք կլսեք կենդանի Քրիստոսի ձայնը, որը հրավիրում է ձեզ գալ Իր մոտ: Ես խոստանում եմ, որ եթե դուք ընդունեք այս հրավերը և ձևավորեք ձեր կյանքը Նրա օրինակին հետևելով, Նրա փրկագնող ազդեցությունը կգա ձեր կյանք: Սուրբ Հոգու զորությամբ, Փրկիչն օրեցօր կվերափոխի ձեզ «մինչև կատարյալ օր»,²⁷ երբ դուք, ինչպես Նա է հայտարարել, պիտի «տեսն[եք] իմ երեսը և իմանա[ք], որ ես եմ»:²⁸ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 3 Նեփի 11.8–11:
2. Տես 3 Նեփի 11.14–15:
3. Ալմա 5.33:
4. 1 Նեփի 13.40:
5. Տես 2 Նեփի 9.21, 26.24–27, Մոսիա 3.13:
6. Տես Ալմա 7.11–12:
7. Տես 2 Նեփի 10.25:
8. Մոսիա 3.24, տես 2 Նեփի 2.4, 10, 26, 9.6–7, 12–13, 15, 22, Մոսիա 3.12, 16.7–8, Ալմա 11.41–44, 42.6–8, 23, Հելաման 14.16, Մորմոն 9.12:
9. Տես 2 Նեփի 9.21, Մոսիա 3.12, Հելաման 5.11, 14.18:
10. 2 Նեփի 31.21, տես նաև 3 Նեփի 27.20–21:
11. 1 Նեփի 8.20:
12. 1 Նեփի 15.36:
13. 1 Նեփի 15.24:
14. Տես 2 Նեփի 31:
15. Մոսիա 3.19:
16. 2 Նեփի 28.30:
17. Տես Մոսիա 3.19:
18. Տես 3 Նեփի 27.27, Մորմոնի 10.32–33:
19. Տես 2 Նեփի 2.8, Մոսիա 2.41:
20. Տես Ալմա 11.37:
21. Տես 2 Նեփի 9.21:
22. Տես Օմնի 1.26, Ալմա 5.33, Մորմոնի 10.32–33:
23. Տես Ենովյա 1, Մոսիա 5, Ալմա 12, 18–19, 36:
24. Ալմա 5.26, շեշտադրումն ավելացված է:
25. Ալմա 36.21:
26. Տես Մոսիա 3.19:
27. Վարդապետություն և Ուխտեր 50.24:
28. Վարդապետություն և Ուխտեր 93.1:



Երեց Դեյլ Գ. Ռեկլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մտածեք Աստծո բարության և մեծության մասին

*Հրավիրում եմ ձեզ ամեն օր հիշել Երկնային Հոր և
Հիսուս Քրիստոսի մեծությունը, և այն, ինչ Նրանք
արել են ձեզ համար:*

Բոլոր ժամանակներում, հատկապես դժվարին,, մարգարեները հորդորել են մեզ հիշել Աստծո մեծությունը և մտածել այն մասին, թե Նա ինչ է արել մեզ համար՝ որպես անհատներ, ընտանիքներ և որպես ժողովուրդ:¹ Այս ուղղորդումը հանդիպում է բոլոր սուրբ գրություններում, սակայն հատկապես աչքի է ընկնում Մորմոնի Գրքում: Տիտղոսաթերթում պարզաբանվում է, որ Մորմոնի Գրքի նպատակներից մեկն է՝ «ցույց տալ Իսրայելի տան մնացորդին, թե ինչպիսի մեծ բաներ է Տերն արել նրանց հայրերի համար»:² Մորմոնի Գրքի ավարտական մասն ընդգրկում է Մորմոնիի հետևյալ կոչը. «Ահա, ես կկամենայի հորդորել ձեզ, որ երբ դուք կարդաք այս բաները, . . . որ դուք հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը մարդկանց զավակների հանդեպ . . . և խորհեք այն ձեր սրտերում»:³

Աստծո բարության մասին մտածելու մարգարեների հետևողական հորդորները զարմանալի են:⁴ Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ

մենք հիշենք Նրա և Նրա սիրելի Որդու բարությունը, ոչ թե Նրանց գոհության համար, այլ այն ազդեցության համար, որ ունենում է մեզ վրա այդ հիշողությունը: Խորհելով Նրանց բարության մասին, մեր տեսլականը և հասկացողությունը ընդլայնվում են: Մտածելով նրանց կարեկցանքի մասին, մենք դառնում ենք ավելի խոնարհ, աղոթող և հաստատուն:

Հիվանդությունից տառապող մի մարդ կար, ում դառը փորձը ցույց է տալիս, թե մեծահոգության և կարեկցանքի համար երախտագիտությունն ինչպես կարող է փոխակերպել մեզ: 1987 թվականին ես ծանոթացա Թոմաս Նիլսոնի՝ մի հրաշալի անձնավորության հետ, ով սրտի փոխպատվաստման կարիք ուներ:

Նա 63 տարեկան էր և ապրում էր Լոզանոմ (Յուտա, ԱՄՆ): Երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմական ծառայության ավարտից հետո Թոմասն ամուսնացավ Դոննա Ուիլկեսի հետ Լոզան Յուտա տաճարում: Նա դարձավ եռանդուն և հաջողակ պատշար: Տարիներ անց, նա մեծ հաճույք էր ստանում աշխատանքից, երբ դպրոցական արձակուրդների ժամանակ իրեն էր միանում իր ավագ թոռնիկը՝ Ջոնաթանը: Նրանց միջև հատուկ կապ էր ստեղծվել, մասնավորապես այն բանի շնորհիվ, որ Թոմը Ջոնաթանի մեջ շատ անգամներ ինքն իրեն էր տեսնում:

Դոնորական սրտին սպասելը հուսահատեցնող էր Թոմի համար: Նա առանձնապես համբերատար մարդ չէր: Թոմասը միշտ կարողանում էր նպատակներ դնել և հասնել դրանց՝ քրտնաջան աշխատանքի և հստակ վճռականության շնորհիվ: Մաքառելով սրտի անբավարարության խնդրի հետ, կյանքի այդ սպասումային փուլում Թոմը երբեմն հարցնում էր ինձ, թե ես ի՞նչ եմ անում՝ գործընթացն արագացնելու համար: Կատակելով նա ասում էր, թե ես ինչ քայլեր կարող էի ձեռնարկել, որոնց շնորհիվ դոնորական սիրտն ավելի շուտ կհասներ իրեն:

Մի ուրախ, բայց և սարսափելի օր իդեալական դոնորական սիրտը հասանելի դարձավ Թոմի համար: Մրտի չափերը և արյան խումբը համապատասխանում



Պրովո, Յուտա, ԱՄՆ



նվիրատուների հանդեպ ակնա-
ծանք ունենալն ավելի մեծ բան է,
քան զուտ երախտագիտությունը:
Նրանց տված պարգևների մասին
մտածելը կարող է փոխակերպել
մեզ:

Փոխակերպության հրաշալի
օրինակ էր Ալմա Կրտսերը: Երբ
Ալման «շրջում [էր] ամենուր՝ ապս-
տամբելով Աստծո դեմ»,⁶ հայտնվեց
մի հրեշտակ: Խոսելով «որոտի
ձայնով»,⁷ հրեշտակը հանդիմանեց
Ալմային Եկեղեցին հալածելու
համար և «գողանալ[ու] ժողովրդի
սրտերը»:⁸ Հրեշտակը հնչեցրեց այս
հորդորը. «Գնա՛ և հիշիր քո հայրե-
րի գերությունը . . . և հիշի՛ր որքան
մեծ բաներ [Աստված] արեց նրանց
համար»:⁹ Հնարավոր բոլոր հոր-
դորներից դա հենց այն էր, ինչը
շեշտեց հրեշտակը:

Ալման ապաշխարեց և հիշեց:
Հետագայում նա պատմեց հրեշ-
տակի հորդորի մասին իր որդուն՝
Հելամանին: Ալման ասաց. «Ես
կկամենայի, որ դու անեիր, ինչպես
ես եմ արել՝ հիշելով մեր հայրե-
րի գերությունը. քանզի նրանք
ճորտության մեջ էին, և ոչ ոք չէր
կարող ազատել նրանց, բացի
դա լինելը Աբրահամի, . . . Իսա-
հակի . . . և Հակոբի Աստվածը, և
նա իսկապես ազատեց նրանց
իրենց չարչարանքներից»:¹⁰ Ալման
պարզապես ասաց. «Ես դնում եմ
իմ վստահությունը նրա վրա»:¹¹
Ալման հասկանում էր, որ հիշելով,
թե ինչպես են հայրերն ազատ-
վել գերությունից և սատարվել
«ամեն տեսակի փորձանքների
և տազնապների» ժամանակ՝
մենք սկսում ենք ճանաչել

էին, իսկ դոնորը 16-ամյա երիտա-
սարդ տղա էր: Դոնորական սիրտը
պատկանում էր Ջոնաթանին, Թոմի
սիրելի թոռանը: Ավելի վաղ, այդ
օրը, Ջոնաթանը մահացու վնաս-
վածք էր ստացել, երբ մեքենան,
որի մեջ նա գտնվում էր, բախվել
էր սլացող գնացքին:

Երբ ես այցելեցի Թոմին և
Դոննային հիվանդանոցում, նրանք
տազնապահար էին: Դժվար էր
պատկերացնել, թե նրանք ինչի
միջով էին անցնում, իմանալով, որ
Թոմի կյանքը կարող էր երկարաց-
վել իրենց թոռան սրտի շնորհիվ:
Սկզբում նրանք հրաժարվում էին
ընդունել առաջարկված սիրտը
Ջոնաթանի սգացող ծնողների՝
իրենց դստեր և փեսայի կողմից:
Թոմն ու Դոննան հասկանում էին,
որ Ջոնաթանն այլևս կենդանի չէր
և, որ Ջոնաթանի պատահարը չէր
առաջացել Թոմի համար դոնորա-
կան սիրտ գտնելու մասին իրենց
աղոթքների պատճառով: Ո՛չ, Ջոնա-
թանի սիրտը նվեր էր, որը կարող
էր օրհնել Թոմին իր կարիքի ժամա-
նակ: Նրանք հասկացել էին, որ այս
ողբերգությունից հետո մի լավ բան
կարող էր լինել, և որոշեցին գնալ
այդ քայլին:

Փոխպատվաստման ընթացքը
հաջող անցավ: Դրանից հետո,
Թոմը մի ուրիշ մարդ էր: Ավելի մեծ
փոփոխություն էր տեղի ունեցել,
քան առողջության բարելավումն
էր և երախտագիտությունը: Նա ինձ
ասաց, որ ամեն առավոտ մտածում
է Ջոնաթանի, իր դստեր և փեսայի
մասին, իր ստացած պարգևի և

այն մասին, թե ինչ է ենթադրում
այդ պարգևը: Չնայած այն բանին,
որ նրա բնածին հումորն ու ամուր
բնավորությունը դեռ ակնհայտ
էին, ես նկատեցի, որ Թոմը ավելի
խոհուն է, մտածկոտ և բարեսիրտ:

Փոխպատվաստումից հետո
Թոմը ապրեց ևս 13 տարի՝ տարի-
ներ, որոնք հակառակ դեպքում, չէր
ունենա: Նրա մահախոսականում
ասվեց, որ այս տարիները նրան
թույլ էին տվել մեծահոգությամբ և
սիրով շրջապատել իր ընտանիքի
անդամներին և մյուսներին: Նա
բարեգործությամբ էր զբաղվում և
լավատեսության ու վճռականու-
թյան օրինակ էր:

Թոմի նման, մենք բոլորս ստացել
ենք պարգևներ, որոնք չէինք կարող
ինքնուրույն ձեռք բերել, պարգևներ՝
մեր Երկնային Հորից և Նրա Միրելի
Որդուց, ներառյալ փրկագնումը՝
Հիսուս Քրիստոսի քավող զոհաբե-
րության միջոցով:⁵ Մենք ստացել
ենք կյանք այս աշխարհում, այնու-
հետև կստանանք ֆիզիկական
կյանք, հավերժական փրկություն
և վեհացում, եթե ընտրենք,
և այդ ամենը՝ Երկնային
Հոր և Հիսուս Քրիստոսի
շնորհիվ:

Ամեն անգամ, երբ
օգտվում ենք, օգուտ ենք
քաղում կամ նույնիսկ
մտածում ենք այդ պար-
գևների մասին, մենք
պետք է մտածենք այդ
նվիրատուի զոհաբերու-
թյան, մեծահոգության և
կարեկցանքի մասին: Այդ



Սան Բերնարդո, Սանտյագո, Չիլի

Աստծուն և Նրա խոստումների հավաստիությունը:¹²

Քչերս ենք Ալմայի պես ողբերգական փորձառություն ունեցել, սակայն մեր փոխակերպումը կարող է նույնքան խորքային լինել, որքան Ալմայինն էր: Փրկիչն այսպիսի խոստում էր տվել հնում.

«Եւ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, եւ նոր հոգի պիտի դնեմ ձեր միջումը, եւ վեր պիտի առնեմ ձեր մարմնիցը քարեղէն սիրտը եւ ձեզ մարմնեղէն սիրտ պիտի տամ:

Եւ իմ հոգին պիտի դնեմ ձեր միջումը, . . .

Եւ իմ ժողովուրդը լինեք, եւ ես ձեր Աստուածը լինեմ»:¹³

Հարություն առած Փրկիչը պատմել է նեփիացիներին, թե այդ փոխակերպումն ինչպես է սկսվում: Նա ներկայացրել է Երկնային Հոր ծրագրի առանցքային դրույթը, ասելով.

«Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ հետո երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց *ձգել* դեպի ինձ: . . .

Եվ այս պատճառով եմ ես բարձրացվել. հետևաբար, համաձայն Հոր զորության, ես բոլոր մարդկանց *կձգեմ* դեպի ինձ»:¹⁴

Ի՞նչ է ձեզ հարկավոր դեպի Փրկիչը «ձգվելու» համար: Խորհեք, թե ինչպես Հիսուս Քրիստոսը ենթարկվեց Իր Հոր կամքին, հաղթեց մահին, ձեր մեղքերն ու սխալներն Իր վրա վերցրեց, զորություն ստացավ Հորից՝ ձեր բարեխոսը լինելու համար, և, վերջապես, փրկագնեց ձեզ:¹⁵ Արդյո՞ք այս բաները բավարար չեն, որ դուք «ձգվեք» դեպի Նա: Ինձ համար՝ բավարար են: Հիսուս Քրիստոսը «կանգնած է գրկաբաց՝ հուսալով և ցանկանալով բժշկել, ներել, մաքրել, գորացնել, մաքրագործել և սրբացնել [ինձ և ձեզ]»:¹⁶

Այս ճշմարտությունները մեզ պետք է նոր սիրտ տան և մղեն, որ հետևենք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Այնուամենայնիվ, նույնիսկ նոր սրտերը կարող են «հակված լինել մոլորվելու, . . .



հակված՝ թողնելու Աստծուն, ում [մենք] սիրում ենք»:¹⁷ Որպեսզի պայքարենք այս հակվածության դեմ, մենք պետք է ամեն օր մտածենք մեր ստացած պարգևների և դրանց նշանակության մասին: Բենիամին թագավորն ասել է. «Ես կկամենայի, որ դուք հիշեք և միշտ պահեք ձեր հիշողության մեջ Աստծո մեծությունը . . . և նրա բարությունն ու երկայնամտությունը ձեր . . . հանդեպ»:¹⁸ Եթե այդպես վարվենք, մենք արժանի կլինենք ստանալ երկնային հրաշալի օրհնությունները:


Մտածելով Աստծո բարության և ողորմածության մասին, մենք հոգևորապես ավելի ընկալունակ կլինենք: Հոգևոր զգայունության աճը, իր հերթին, թույլ կտա մեզ Սուրբ Հոգու զորությամբ իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ:¹⁹ Մա ներառում է՝ ունենալ Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին վկայություն, իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է, մեր անձնական Փրկիչը և Քավիչը, և ընդունել, որ Նրա ավետարանը վերականգնվել է այս վերջին օրերում:²⁰

Երբ մենք հիշում ենք մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մեծությունը և այն, ինչ Նրանք արել են մեզ համար, մենք Նրանց արածը չենք ընդունում այնպես, ասես այդպես էլ պիտի լինեք, ինչպես Թոմը չընդունեց Ջոնաթանի սիրտը: Ուրախ և ակնածալից կերպով, Թոմն ամեն օր հիշում էր այն պատահարը, որ երկարացրել էր իր կյանքը: Հոգեպարար գիտելիք

ունենալով, որ մենք կարող ենք փրկվել և վեհանալ, մենք պետք է հիշենք, որ փրկության և վեհացման համար մեծ գին է վճարվել:²¹ Մենք կարող ենք ակնածալից և ուրախ լինել, հասկանալով, որ առանց Հիսուս Քրիստոսի դատապարտված ենք, բայց Նրա հետ մենք կարող ենք ստանալ մեր Երկնային Հոր մեծագույն պարգևը:²² Իրոք, այս ակնածանքը թույլ է տալիս մեզ վայելել «հավերժական կյանքի խոսքերն այս աշխարհում» և, ի վերջո, «հավերժական կյանք՝ . . . այսինքն՝ անմահության փառքը» գալիք աշխարհում:²³

Երբ մենք մտածում ենք մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի բարության մասին, նրանց հանդեպ մեր վստահությունը մեծանում է: Մեր աղոթքները փոխվում են, քանի որ մենք գիտենք, որ Աստված մեր Հայրն է, իսկ մենք՝ Նրա զավակները: Մեր նպատակը ոչ թե Աստծո կամքը փոխելն է, այլ՝ մեր կամքը համապատասխանեցնել Նրա կամքին և մեզ համար ապահովել այն օրհնությունները, որոնք Նա կամենում է շնորհել, բայց որոնք մենք պետք է խնդրենք, որ ստանանք:²⁴ Մենք ցանկանում ենք լինել ավելի հեզ, ավելի մաքուր, ավելի կայուն, ավելի Քրիստոսանման:²⁵ Այս փոփոխությունները մեզ որակավորում են ավելի շատ երկնային օրհնություններ ստանալու համար:

Հասկանալով, որ ամեն լավ բան գալիս է Հիսուս Քրիստոսից, մենք մեր հավատքն ավելի արդյունավետ կհաղորդենք ուրիշներին:²⁶ Մենք քաջություն կունենանք, անելանելի թվացող դժվարությունների և հանգամանքների հետ բախվելիս:²⁷ Մենք կամրապնդենք մեր ուխտերը պահելու վճռականությունը, որոնք կապել ենք՝ Փրկիչին հետևելու համար:²⁸ Մենք կլցվենք Աստծո սիրով, կցանկանանք օգնել կարիքավորներին՝ առանց քննադատելու, կսիրենք մեր երեխաներին և նրանց կմեծացնենք արդարության ոգով, կպահպանենք մեր մեղքերին թողություն և միշտ կիրճվենք:²⁹ Մրանք Աստծո բարությունը և ողորմությունը



հիշելու ուշագրավ պտուղներն են։
 Հակառակ դեպքում Փրկիչը զգուշացրել է. «ոչնչով մարդ չի վիրավորում Աստծուն կամ ոչ ոքի հանդեպ նրա ցասումը չի բռնկվում, բացի նրանցից, ովքեր չեն խոստովանում նրա ձեռքը բոլոր բաներում»։³⁰ Ես չեմ կարծում, որ Աստված վիրավորվում է, երբ մենք մոռանում ենք Նրան։ Ավելի շուտ, Նա խորապես հուսահատվում է։ Աստված գիտի, որ չհիշելով Իրեն և Իր բարությունը, մենք զրկում ենք մեզ Իրեն մոտենալու հնարավորությունից։ Այդպիսով, մենք զրկվում ենք Նրա՝ մեզ մոտենալու հնարավորությունից և Նրա խոստացած հատուկ օրհնություններից։³¹
 Հրավիրում եմ ձեզ ամեն օր հիշել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մեծությունը, և այն, ինչ Նրանք արել են ձեզ համար։ Թող Նրանց մեծության մասին ձեր մտքերն ավելի ամուր կապեն ձեր դեզերող սիրտը Նրանց հետ։³² Մտածեք Նրանց կարեկցանքի մասին, և դուք կօրհնվեք հոգևոր ավելի

մեծ զգայունությամբ և կղաճնաք ավելի Քրիստոսանման։ Մտածելով նրանց կարեկցանքի մասին, դուք կկարողանաք «հավատարիմ համբերել[ել] մինչև վերջ», մինչև դուք «ընդունվ[եք] երկնքում» և «բնակվ[եք] Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում»։³³
 Մեր Երկնային Հայրը, մատնանշելով Իր Միրելի Որդուն, ասել է. «Լսե՛ք նրան»։³⁴ Երբ դուք գործեք համաձայն այս խոսքերի և լսեք Նրան, ուրախությամբ և ակնածանքով հիշեք, որ Փրկիչը սիրով վերականգնում է այն, ինչը դուք չեք կարող վերականգնել, Նա սիրով բուժում է վերքերը, որոնք դուք չեք կարող բուժել, սիրով շտկում է այն, ինչն անդարձ կտրված է,³⁵ Նա փոխհատուցում է ձեր հանդեպ կատարված ցանկացած անարդարություն,³⁶ և սիրով ընդմիջում նորոգում է նույնիսկ փշրված սրտերը։³⁷
 Մտածելով մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի պարզևերի մասին, ես հասկացել եմ, թե Նրանք ինչպիսի անսահման սեր

և անժայռածիր կարեկցանք ունեն Երկնային Հոր բոլոր զավակների հանդեպ։³⁸ Այս գիտելիքը փոխել է ինձ և կփոխի նաև ձեզ։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես, օրինակ, Աբրահամ 2.16, Ելից 13.3, Հեսու 4.6-9, Ա Թագավորաց 7.11-12:
2. Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ:
3. Մորմոնի 10.3:
4. Տես, օրինակ, Երկրորդ օրինաց 6.12, 11.18, Հեսու 4.21-24, Ա Թագավորաց 7.12, Հռովմայեցիս 2.4, 11.22, 2 Նեփի 9.10, 33.14, Հակոբ 1.7, Մոսիա 5.3, 25.10, 27.22, Ալմա 34.4, Հելաման 12.2, 3 Նեփի 4.33, 18.11-12, Մորմոն 2.13, Վարդապետություն և Ուխտեր 133.52, 138.2:
5. Տես Եսայիա 53.3-12, Ղուկաս 22.44, Հովհաննես 3.16, Գաղատացիս 2.20, Մոսիա 3.5-11, Ալմա 7.10-13, Վարդապետություն և Ուխտեր 19.16-19:
6. Մոսիա 27.11:
7. Մոսիա 27.11:
8. Մոսիա 27.9, տես նաև հատված13:
9. Մոսիա 27.16:
10. Ալմա 36.2:
11. Ալմա 36.27:
12. Տես Ալմա 36.27-29:
13. Եգեկիել 36.26-28:
14. 3 Նեփի 27.14-15, շեշտադրումն ավելացված է: Տես Հովհաննես 12.32, 2 Նեփի 26.24:
15. Տես Մոսիա 15.7-9, Հայտնություն 21.4:
16. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավը լինել», *Liahoni*, մայիս, 2019թ., 67:
17. "Come, Thou Fount of Every Blessing," *Hymns* (1948), no. 70.
18. Մոսիա 4.11, տես նաև Ալմա 36.2, 28-29, Եթեր 7.27, 10.2, Մորմոնի 9.25:
19. Տես Մորմոնի 10.4-5:
20. Տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը և նախաբանը:
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.18-19:
22. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:
23. Մովսես 6.59, տես նաև Ալմա 36.28:
24. Տես Աստվածաշնչի բառարանը, «Աղոթք»:
25. See "More Holiness Give Me," *Hymns*, no. 131.
26. Տես Փլեմմոն 1.6:
27. Տես Ա Թագավորաց 17.37, 1 Նեփի 4.2:
28. Տես Ալմա 5.6, 13, 26-28:
29. Տես Մոսիա 4.11-26:
30. Վարդապետություն և Ուխտեր 59.21:
31. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.63-64:
32. See "Come, Thou Fount of Every Blessing,"
33. Մոսիա 2.41:
34. Տես Մատթեոս 17.5, Մարկոս 9.7, Ղուկաս 9.35, 3 Նեփի 11.7, Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17:
35. See Boyd K. Packer, "The Brilliant Morning of Forgiveness," *Ensign*, Nov. 1995, 19-20.
36. Տես Հայտնություն 21.4:
37. Տես Մաղմուս 147.3:
38. Տես 2 Նեփի 26.33:



Երեց Բենիամին Ս. Ջ. Թայ
Յոթանասունից

Մորմոննի Գիրքի գործությունը դարձի գալու ընթացքում

*Մորմոննի Գիրքը տալիս է հոգևոր սնուցում,
նշանակում է գործողության ծրագիր և կապում
է մեզ Սուրբ Հոգու հետ:*

Վերջերս ֆիզիկական զննման զեկույցը վերանայելուց հետո ես իմացա, որ կարիք ունեի ապրելակերպի որոշ ճշգրտումներ կատարել: Ինձ օգնելու համար բժիշկա նշանակեց սննդակարգի և վարժությունների մի ծրագիր, որը կփոխակերպեր ինձ մի ավելի առողջ մարդու, եթե ես ընտրեի հետևել դրան:

Եթե յուրաքանչյուրս հոգևոր զննության ենթարկվեինք, ի՞նչ կիմանայինք ինքներս մեր մասին: Ի՞նչ կարգավորումներ կնշանակեր մեր հոգևոր բժիշկը: Որպեսզի դառնանք նա, ով պետք է լինենք, կարևոր է, որ մենք իմանանք ինչ անել և անենք այն, ինչ մենք գիտենք:

Հիսուս Քրիստոսը Մեծ Բժշկողն է:¹ Իր Քավության միջոցով Նա կապում է մեր վերքերը, Իր վրա է վերցնում մեր սկսածությունները և բժշկում մեր կոտրված սրտերը:² Նրա շնորհի միջոցով մեր թույլ կողմերը կարող են դառնալ ուժեղ:³ Նա հրավիրում է մեզ հետևել

Իրեն⁴ սովորելով Իրենից, լսելով Իր խոսքերը և քայլելով Իր հոգու հեզությամբ:⁵ Նա խոստացել է օգնել մեզ⁶ մի կյանք տևող դարձի այս գործընթացում, որը փոխակերպում է մեզ և բերում հավիտենական ուրախություն:⁷

Փրկիչը տվել է մեզ Մորմոննի Գիրքը որպես օգնության մի հզոր միջոց դարձի գալու ընթացքում. Մորմոննի Գիրքը տալիս է հոգևոր սնուցում, նշանակում է գործողության ծրագիր և կապում է մեզ Սուրբ Հոգու հետ: Գրված լինելով մեզ համար,⁸ այն պարզությամբ շարունակում է Աստծո խոսքը⁹ և պատմում մեզ մեր ինքնության, նպատակի և ճակատագրի մասին:¹⁰ Աստվածաշնչի հետ միասին, Մորմոննի Գիրքը վկայում է Հիսուս Քրիստոսի¹¹ մասին և ուսուցանում է, թե մենք ինչպե՞ս կարող ենք իմանալ ճշմարտությունը և դառնալ Նրա նման:

Եղբայր Սո Պոլոն 58 տարեկան էր, երբ ծանոթացավ Հիսուս Քրիստոսի վերականգնված

ավետարանի հետ: Երբ ես ծանոթացա նրա հետ, նա մի քանի տարի ծառայում էր որպես ճյուղի նախագահ, բայց ես իմացա, որ նա երբեք չէր կարդացել Մորմոննի Գիրքը, որովհետև այն դեռ մատչելի չէր նրա մայրենի բիրմայերենով: Երբ ես հարցրի նրան, թե որտեղից գիտեր, որ Գիրքը ճշմարիտ էր՝ առանց այն կարդալու, նա պատասխանեց, որ ուսումնասիրել էր *Մորմոննի Գիրքի պատմությունները* նկարագարող Գիրքը ամեն օր՝ նայելով նկարագարումները, բառարանով թարգմանելով անգլերեն բառերը և ուշադիր գրի առնելով իր սովորածը: Նա բացատրեց. «Ամեն անգամ ուսումնասիրելիս ես աղոթում էի իմ կարդացածի վերաբերյալ, խաղաղություն և ուրախություն էի զգում, միտքս հստակ էր դառնում, իսկ սիրտս՝ փափուկ: Ես զգում էի, որ Սուրբ Հոգին վկայում էր ինձ, որ դա ճիշտ էր: Ես գիտեմ, որ Մորմոննի Գիրքը Աստծո խոսքն է»:

Եղբայր Սո Պոլոյի նման, մեզանից յուրաքանչյուրը կարող է ուսումնասիրել Մորմոննի Գիրքը՝ համաձայն մեր հանգամանքների: Երբ մենք ցանկանում ենք հավատալ և խորհել նրա ուսմունքների մասին մեր սրտում, մենք կարող ենք հարցնել Աստծուն հավատքով,



Բաուլթիֆուլ, Յուսու, ՍՄԸ

թե արդյոք այդ ուսմունքները ճշմարիտ են:¹² Եթե մենք անկեղծ ենք գիտենալու մեր ցանկության մեջ և գործելու իսկական միտում ունենք, Նա կպատասխանի մեզ մեր սրտում Սուրբ Հոգու միջոցով: Եվ Սուրբ Հոգու գործությամբ է, որ մենք կիմանանք ճշմարտությունը բոլոր բաների մասին:¹³ Երբ ձեռք բերենք աստվածային վկայություն Մորմոնի Գրքի մասին, մենք նաև կիմանանք նույն գործությամբ, որ Հիսուս Քրիստոսն է աշխարհի Փրկիչը, որ Ջոզեֆ Սմիթը Նրա մարգարեն է, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Նրա վերականգնված Եկեղեցին է:¹⁴

Ես, որպես երիտասարդ միսիոներ, նստեցի Ավստրալիա ուղևորվող ինքնաթիռը և մեկնեցի ծառայության: Ջգալով շատ միայնակ, անհանգիստ և ոչ համապատասխան, բայց պարտավորված լինելով ծառայել, ես խիստ կարիք ունեի հավաստիացման, որ այն ինչին հավատում էի, ճիշտ էր: Ես աղոթեցի և ջանասիրաբար կարդացի սուրբ գրությունները, բայց մինչ թռիչքը շարունակվում էր, իմ ներքին անվստահությունն ուժեղանում էր, իսկ ֆիզիկական վիճակս՝ վատթարանում: Մի քանի ժամ մաքառելուց հետո մի ուղեկցորդ անցումով քայլելով մոտեցավ և կանգնեց իմ նստատեղի կողքին: Նա վերցրեց իմ ձեռքից Մորմոնի Գիրքը, որը ես կարդում էի: Նա նայեց կազմին և ասաց. «Սա հիանալի գիրք է», ապա հետ վերադարձրեց ինձ գիրքը և շարունակեց քայլել: Ես այլևս նրան չտեսա:

Մինչ նրա խոսքերն արձագանքում էին սկանջներումս, ես հստակ լսեցի և զգացի սրտումս. «Ես այստեղ եմ, և ես գիտեմ, որտեղ ես դու: Ուղղակի արա այն ամենը, ինչ կարող ես, քանզի ես հոգ կտանեմ մնացածի մասին»: Խաղաղ օվկիանոսի վերևում՝ ինքնաթիռի մեջ, ես ստացա անձնական վկայություն Մորմոնի Գրքի ուսումնասիրության ընթացքում և Սուրբ Հոգու հուշումներով, որ իմ Փրկիչը գիտեր՝ ով էի ես, և որ ավետարանը ճշմարիտ էր:



Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Վկայության էությունն է՝ իմանալ, որ ավետարանը ճշմարիտ է: Դարձի էությունն է՝ հետևողականորեն հավատարիմ լինել ավետարանին»:¹⁵ Դարձը պահանջում է մեզանից լինել «խօսքը անողներ, և ոչ միայն լսողներ»:¹⁶ Մեզ համար Տիրոջ գործողությունների ծրագիրը՝ Քրիստոսի վարդապետությունը, ամենից հստակ ուսուցանվում է Մորմոնի Գրքում:¹⁷ Այն ներառում է.

- Առաջինը, հավատք *գործադրելով* առ Հիսուս Քրիստոս՝ *վաստահելով* Նրան, Նրա պատվիրանները *պահելով* և *խնամալով*, որ Նա կօգնի մեզ:¹⁸
- Երկրորդը, *սպաշխարելով* ամեն օր մեր թերությունների համար և ուրախություն ու խաղաղություն *զգալով*, երբ Նա ներում է մեզ:¹⁹ Ապաշխարությունը մեզանից պահանջում է *ներել* ուրիշներին²⁰ և օգնում է մեզ առաջ շարժվել: Տերը խոստացել է ներել մեզ, այնքան հաճախ, որքան կապաշխարենք:²¹
- Երրորդը, Աստծո հետ ուխտեր *կապելն ու պահելը* արարողությունների միջոցով, ինչպես օրինակ՝ մկրտությունը: Սա կպահի մեզ ուխտի արահետի վրա, որն առաջնորդում է դեպի Նա:²²
- Չորրորդը, Սուրբ Հոգու պարզևր *ստանալը*: Այս պարզևր թույլ է տալիս մեզ մեկի մշտական ընկերակցությունը, ով

սրբագործում է, մխիթարում և ուղեկցում մեզ:²³

- Հինգերորդը, *հասկերելով* մինչև վերջ՝ *ստաջ մղվելով* հաստատակամորեն, մինչ *սնուցվում ենք* ամեն օր Քրիստոսի խոսքով:²⁴ Մորմոնի Գրքից սնուցվելով և ամուր կառչելով նրա ուսմունքներից, մենք կարող ենք հաղթահարել զայթակղությունները և առաջնորդություն ու պաշտպանություն ստանալ ողջ կյանքի ընթացքում:²⁵

Հետևողականորեն կիրառելով Քրիստոսի վարդապետությունը մեր կյանքում, մենք կհաղթահարենք անգործությունը, որը խոչընդոտում է փոփոխությանը, և վախը, որը խոչընդոտում է գործելուն: Մենք կստանանք անձնական հայտնություն, քանզի Սուրբ Հոգին «*ձեզ ցույց կտա* բոլոր բաները, որ դուք պետք է անեք»,²⁶ և «Քրիստոսի խոսքերը *կստեն* ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:²⁷

20 տարի շարունակ եղբայր Հուանգ Ջունկոնգը մաքառեց ալկոհոլի, գլանակների և մոլի թղթախաղի դեմ: Երբ եղբայր Հուանգը ծանոթացավ Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի հետ, նա կամեցավ փոխվել հանուն իր երիտասարդ ընտանիքի: Նրա մեծագույն մարտահրավերը ծխելն էր: Լինելով թունդ ծխող, նա փորձել էր շատ անգամներ թողնել ծխելը, բայց ապարդյուն: Մի օր «մաքուր սրտով, անկեղծ միտումով» այս խոսքերը Մորմոնի Գրքից տպավորվեցին նրա մտքում:²⁸ Չնայած նախկին փորձերը ձախողվել էին, նա զգաց, որ երևի կկարողանար փոխվել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի օգնությամբ:

Լիաժամկետ միսիոներները միավորեցին իրենց հավատքը նրա հետ և ներկայացրին գործնական միջամտությունների մի ծրագիր՝ աղոթքի մեծ չափաբաժիններով և ուսումնասիրելով Աստծո խոսքը: Անկեղծորեն և իսկական միտումով եղբայր Հուանգը գործեց հավատարիմ

վճռականությամբ և պարզեց, որ երբ կենտրոնանում էր ավելի շատ նոր սովորությունների վրա, որոնք ցանկանում էր զարգացնել, ինչպես օրինակ Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը, նա ավելի քիչ էր կենտրոնանում այն սովորությունների վրա, որոնք նա կամենում էր վերացնել:

Վերհիշելով իր 15 տարի առաջ ունեցած փորձառությունը, նա նշեց. «Ես չեմ հիշում ճշգրիտ, թե երբ դադարեցի ծխել, բայց երբ տքնաջանորեն փորձում էի ամեն օր անել այն բաները, որոնք ես գիտեի, որ պետք է անելի Տիրոջ Հոգին իմ կյանք հրավիրելու համար և շարունակում էի անել դրանք, ինձ այլևս զլանակները չէին գրավում և այդ ժամանակից սկսած չեմ գրավել»: Մորմոնի Գրքի ուսմունքները կիրառելու միջոցով, եղբայր Հուանգի կյանքը փոխակերպվել է, և նա դարձել է ավելի լավ ամուսին ու հայր:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոստացել է. «Երբ դուք *ասեն օր*, աղոթքով ուսումնասիրեք Մորմոնի Գիրքը, դուք ավելի լավ որոշումներ կկայացնեք *ասեն օր*: Ես խոստանում եմ, որ մինչ դուք խորհում եք ձեր ուսումնասիրած նյութի շուրջ, երկնքի պատուհանները կբացվեն, և դուք կստանաք ձեր սեփական հարցերի պատասխանները և ուղղորդում՝ ձեր անձնական կյանքի համար: Ես խոստանում եմ, որ եթե դուք ամեն օր խորասուզվեք Մորմոնի Գրքի ընթերցանության մեջ, դուք կարող եք պաշտպանվել օրվա չարիքից, պոռնոգրաֆիայի անհաղթահարելի ժանտախտից և միտքն անզգայացնող կախվածություններից:²⁹

Միրելի՛ ընկերներ, Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, և մենք ավելի կմոտենանք Նրան, եթե ուսումնասիրենք այն:³⁰ Երբ մենք փորձարկենք նրա խոսքերը, ձեռք կբերենք վկայություն դրա ճշմարտացիության վերաբերյալ:³¹ Երբ մենք հետևողականորեն ապրենք համաձայն նրա ուսմունքների, այլևս ցանկություն չենք ունենա չարիք գործելի:³² Մեր սիրտը,



Նյու Յորք Սիթի, Նյու Յորք, ԱՄՆ

դեմքի արտահայտությունը և բնույթը կկերպարանափոխվի, որպեսզի ավելի նման³³ դառնանք Փրկիչին: Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է՝ մեր Փրկիչը, Քավիչը և Ընկերը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մարկոս 2.17:
2. Տես Մաղոմոս 147.3, Եսայիա 53.4, Մատթեոս 8.17:
3. Տես 2 Նեփի 25.23, Հակոբ 4.7, Եթեր 12.27:
4. Տես Մատթեոս 19.21, Մարկոս 10.21, Ղուկաս 18.22, 2 Նեփի 31.10:
5. Տես Վարդապետություն և Ուլստեր 19.23:
6. Տես Եսայիա 41.10:
7. Տես Մոսիա 2.41, 3.19, 5.2:
8. Տես 2 Նեփի 25.8, 21–22, Մորմոն 7.1, 8.35:
9. Տես 2 Նեփի 25.7, 31.2–3:
10. Տես 2 Նեփի 2.25, Ալմա 40:
11. Տես Եսայիա 29.4, 11–18, Եզեկիել 37.16–21, Բ Կորնթացիա 13.1, 1 Նեփի 13.38–42, 2 Նեփի 3.12, 25.26:
12. Տես Ալմա 32.26–43:
13. Տես Մորմոնի 10.3–5:
14. Տես Մորմոնի Գրքի նախաբանը:
15. Դեյվիդ Ա. Բեդնար, «Իարձ դեպի Տերը», *Լիստենու*, նոյեմբեր 2012, 109:

16. Հակոբոս 1.22:
17. Տես 2 Նեփի 31, 3 Նեփի 11.31–40, 27.13–22:
18. Տես 1 Նեփի 3.7, Մորմոնի 7.33:
19. Տես Մոսիա 4.3:
20. Տես Մատթեոս 18.21–35, Մարկոս 11.25–26, Ղուկաս 6.37, 3 Նեփի 13.14–15, Վարդապետություն և Ուլստեր 64.10, 82.1:
21. Տես Մոսիա 26.30, Մորմոնի 6.8:
22. Տես 2 Նեփի 31.17–18:
23. Տես 1 Նեփի 10.19, 2 Նեփի 33.1, 3 Նեփի 11.32, 28.11, Մորմոնի 6.4:
24. Տես 2 Նեփի 31.20:
25. Տես 1 Նեփի 15.24:
26. 2 Նեփի 32.5, շեշտադրումն ավելացված է:
27. 2 Նեփի 32.3, շեշտադրումն ավելացված է:
28. Մորմոնի 10.4:
29. Ռասսել Մ. Նելսոն. «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա»: *Լիստենու*, նոյեմբեր 2017, 62–63:
30. Մորմոնի Գրքի մասին Մարգարե Զոզեֆ Մմիթն ասել է. «Ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների» (Մորմոնի Գրքի նախաբանը):
31. Տես Հակոբ 6.7, Ալմա 32.26–43:
32. Ալմա 19.33:
33. Տես Բ Կորնթացիա 5.17, Մոսիա 3.19, 5.2, Ալմա 5.14, 19:



Երեց Գարի Ի. Սթիվենսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Լավ հիմք ընդդեմ գալիք ժամանակների

Գալիք տարիների ընթացքում թող որ մենք թույլ տանք, որ Սուլթ Լեյքի տաճարում կատարվող բարեփոխումները ոգեշնչեն մեզ:

Սուլթ Լեյքի Տաճարի պատմությունը

Եկեք մտովի տեղափոխվենք 1847 թվականի հուլիսի 24-ի շոգ կեսօրվա ժամը 2-ը: Եկեղեցու 148 անդամների՝ արևմուտք ուղևորված առաջին խմբի հետ 111-օրյա դժվարին ճամփորդությունից հետո, Բրիգամ Յանգը, ով այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր, լեռնային տեղի պատճառով հիվանդ ու թույլ, ոտք դրեց Սուլթ Լեյքի հովիտ:

Երկու օր անց, մինչ Բրիգամ Յանգը ապաքինվում էր իր հիվանդությունից, Տասներկու Առաքյալների Քվորումի մի քանի անդամների և ուրիշների հետ նախաձեռնեց հետախուզական արշավ: Վիլյամ Քլեյթոնը գրել է. «Քայլելով ճամբարից մոտավորապես երեք քառորդ մղոն դեպի հյուսիս մենք հասանք մի գեղեցիկ հարթավայր, որը տարածվում էր դեպի արևմուտք»:¹

Խմբի հետ տեղանքը զննելիս Բրիգամ Յանգը հանկարծ կանգ առավ և ձեռնափայտը խրելով հողում, բացականչեց. «Այստեղ վեր կլսոյանա մեր Աստծո Տաճարը»: Նրա զուգընկերներից մեկը Երեց

Վիլֆորդ Վուդրոֆն էր, ում խոսքերով հայտարարությունը «կայծակի պես անցավ [նրա] միջով», և նա մի ճյուղ տնկեց հողում՝ նշելով Նախագահ Յանգի ձեռնափայտի տեղը: Տաճարի համար ընտրվեց քառասուն ակր (16 հա) և որոշվեց, որ քաղաքը պետք է ունենար «քառակուսու տեսք, տարածվելով



հավասարապես դեպի հյուսիս & հարավ, արևելք & արևմուտք», իսկ տաճարը լինելու էր ճիշտ կենտրոնում:²

1851 թվականի ապրիլի գերագույն համաժողովին Եկեղեցու անդամները միաձայն քվեարկեցին՝ աջակցելով «Տիրոջ անունով տաճար կառուցելու» առաջարկին:³ Երկու տարի անց, 1853 թվականի փետրվարի 14-ին տարածքը նվիրագործվեց Հեբեր Չ. Քլիմբալի կողմից հրապարակային արարողության ժամանակ, որին մասնակցում էին մի քանի հազար Սրբեր, և կատարվեց Սուլթ Լեյքի Տաճարի հիմնադրման առաջին քայլը: Մի քանի ամիս անց՝ ապրիլի 6-ին, դրվեցին տաճարի վիթխարի անկյունաքարերը և նվիրագործվեցին պատշաճ արարողակարգերով, որոնք ներառում էին՝ գունավոր ժապավենները և պահակախմբերը, Եկեղեցու ղեկավարների կողմից առաջնորդվող երթ, սկսած հին խորանից մինչև տաճարի վայրը, որտեղ հնչեցին ելույթներ և աղոթքներ չորս քարերից յուրաքանչյուրի մոտ:⁴

Հիմնադրման արարողության ժամանակ Նախագահ Յանգը պատմեց, որ տեսիլք էր ունեցել, երբ առաջին անգամ ոտք էր դրել այդտեղ, մինչ նրանք զննում էին հովիտը, հայտարարելով. «Ես գիտեի [այն ժամանակ], ճիշտ ինչպես ես գիտեմ այժմ, որ սա է այն վայրը, որտեղ պետք է տաճար կանգնեցվի. այն իմ առջև էր»:⁵

Տասը տարի անց Բրիգամ Յանգն արտահայտեց հետևյալ մարգարեական միտքը 1863 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովին. «Ես ուզում եմ, որ տաճարն այնպես կառուցվի, որ կանգուն մնա հազարամյակի ընթացքում: Սա միակ տաճարը չէ, որ մենք կկառուցենք. կկառուցվեն և Տիրոջը կնվիրաբերվեն հարյուրավոր տաճարներ: Այս տաճարը հայտնի կդառնա որպես Վերջին Օրերի Սրբերի կողմից լեռներում կառուցված առաջին տաճար . . . Ես ուզում եմ, որ այդ տաճարը . . . վեր խոյանա լեռներում՝ որպես Աստծո

Մրբերի հավատքի, հաստատակամության և ջանասիրության վեհ հուշարձան»:⁶

Այս համառոտ պատմությունն ակնածանք է ներշնչում Բրիգամ Յանգի տեսլականի հանդեպ. առաջինը, նրա վստահությունը, որ հնարավորության սահմաններում, օգտագործելով տվյալ ժամանակներում և վայրում հասանելի շինարարական մեթոդները, Սուլթ Լեյքի Տաճարը կկառուցվի այնպես, որ դիմակայի Հազարամյակի ընթացքում, և երկրորդը, նրա մարգարեությունը՝ կապված ապագայում ողջ աշխարհով մեկ տաճարների աճի հետ, *հասնելով հարյուրների:*

Սուլթ Լեյքի Տաճարի վերանորոգումը

Ինչպես Բրիգամ Յանգը, այնպես էլ մեր օրերի մարգարեն մեծ հոգատարությամբ է վերաբերվում Սուլթ Լեյքի Տաճարին և մնացած բոլոր տաճարներին: Տարիների ընթացքում Առաջին Նախագահությունը ժամանակ առ ժամանակ խորհուրդ է տվել Նախագահող Եպիսկոպոսությանը համոզվել, որ Սուլթ Լեյքի Տաճարի հիմքն ամուր է: Երբ ես ծառայում էի Նախագահող Եպիսկոպոսությունում, Առաջին Նախագահության պատվերով մենք կատարեցինք Սուլթ Լեյքի Տաճարի ընդհանուր շինության ստուգում, ներառյալ սեյսմիկ նախագծի և շինարարական տեխնիկայի ամենաարդիական ձեռքբերումների գնահատումը:

Ահա այդ ժամանակ Առաջին Նախագահությանը ներկայացված



Սուլթ Լեյքի տաճարի վերակառուցումները կնպաստեն Բրիգամ Յանգի ցանկության կատարմանը, որ տաճարը կանգուն մնա հազարամյակի ընթացքում»:

արդյունքներից մի հատված. «Սուլթ Լեյքի Տաճարի նախագծման և կառուցման ժամանակ օգտագործվել են՝ լավագույն տեխնիկա, հմուտ աշխատուժ, շինանյութեր, կահավորանքներ և ժամանակաշրջանի համար մատչելի այլ ռեսուրսներ: Նվիրագործումից ի վեր, որը տեղի է ունեցել 1893 թվականին, տաճարն ամուր կանգնած է և ծառայել է որպես հավատքի [ու] հույսի փարոս և որպես լույս մարդկանց համար: Մեծ խնամք է տարվել, որպեսզի տաճարը գործի, լինի մաքուր և պահպանվի լավ պայմաններում: Ներսի և դրսի գրանիտե հատակի հեծանները և չորսուները լավ վիճակում են:

Վերջին ուսումնասիրությունները հաստատում են, որ Բրիգամ Յանգի կողմից տաճարի համար ընտրված վայրն ունի բարձրորակ և ամուր հող»:⁷

Հետազոտությունները ցույց տվեցին, որ տաճարն ունի սովորական վերանորոգման ու թարմացման կարիք, ներառելով արտաքին տախտակամածը և մակերեսային տարածքները, հնացած կոմունալ համակարգերը և մկրտությունների տարածքները: Ինչևէ, առաջարկվեց ստեղծել առանձին ավելի ընդգրկուն սեյսմիկ համակարգ, ներառելով տաճարի հիմքից մինչև գագաթը:

Տաճարի հիմքը

Ինչպես հիշում եք, Նախագահ Բրիգամ Յանգը անձամբ ակտիվ մասնակցել է տաճարի հիմքի կառուցմանը, որը շինարարության ավարտից ի վեր 127 տարի պաշտոնապես կերպով ծառայում է տաճարին: Տաճարի սեյսմիկ նոր փաթեթը կօգտագործի հիմքի մեկուսացման տեխնոլոգիան, որի վերաբերյալ կառուցման պահին գաղափար անգամ չունեին: Այն համարվում է երկրաշարժից պաշտպանվելու նորագույն, ամենաառաջադեմ տեխնոլոգիան:



«Այստեղ կկանգնի մեր Սստժո տաճարը»,- հայտարարեց Նախագահ Բրիգամ Յանգը:




Սուլթ Լեյքի տաճարի հիմքը դրվեց 1853 թվականին:



Այս տեխնոլոգիան, որը մշակվել է վերջին շրջանում, սկսվում է տաճարի հիմքից՝ ապահովելով ուժեղ պաշտպանություն երկրաշարժից բխող վնասից: Ըստ էության, այն ամրացնում է տաճարի շինությունը և ապահովում կայունությունը նույնիսկ այն ժամանակ, երբ շրջակա միջավայրը ենթարկվում է երկրաշարժի:

Տաճարի վերանորոգումը, որը կօգտագործի այս տեխնոլոգիան, Առաջին նախագահությունը հայտարարել է անցյալ տարի: Նախագահող եպիսկոպոսության առաջնորդությամբ շինարարությունը սկսվել է մի քանի ամիս առաջ՝



Մոլթ Լեյքի տաճարի սեյսմիկ նորոգման արդիականացումը համարվում է երկրաշարժից պաշտպանության գերժամանակակից ճարտարապետության ձեռքբերումը:

2020 թվականի հունվարին: Նախատեսվում է, որ աշխատանքները կավարտվեն մոտ չորս տարի անց:

Ձեր անձնական հիմքի ամրացումը

Խորհելով հետագա չորս տարիների ընթացքում այս գեղեցիկ, ազնվաշուք, վեհ և ակնածանքները շող Մոլթ Լեյքի Տաճարի մասին, ես պատկերացնում եմ դրանք ավելի շատ որպես *նորացման*, այլ ոչ թե փակ լինելու ժամանակներ: Նույն կերպ, մենք կարող ենք հարցնել ինքներս մեզ. «Ինչպե՞ս կարող է Մոլթ Լեյքի Տաճարի այս լայնածավալ վերանորոգումը ոգեշնչել մեզ վերանայել մեր անձնական հոգևոր *նորոգումը, վերակառուցումը, վերածնունդը կամ վերականգնումը*»:

Հետադարձ հայացքը կարող է ցույց տալ, որ մեր, ինչպես նաև մեր ընտանիքների համար օգտակար կարող է լինել որոշակի անհրաժեշտ խնամքն ու նորոգման աշխատանքը, մինչև անգամ՝ սեյսմիկ նորացումը: Նման գործընթացը մենք կարող ենք սկսել հետևյալ հարցերով.

- «Ինչպիսի՞ն է իմ հիմքը»:
- «Ի՞նչն է իր մեջ ներառում հաստ պատերով, կայուն, ամուր անկյունաքարերը, որոնք իմ անձնական հիմքի մասն են կազմում, որոնց վրա հենվում է իմ վկայությունը»:
- «Որո՞նք են իմ հոգևոր և հուզական բնույթի հիմնարար

տարրերը, որոնք թույլ կտան ինձ և իմ ընտանիքին մնալ կայուն և անսասան, նույնիսկ դիմակայել երկրաշարժին և սեյսմիկ ուժգին իրադարձություններին, որոնք անպայման տեղի են ունենալու մեր կյանքում»:

Այս իրադարձությունները, ինչպես երկրաշարժը, հաճախ դժվար է կանխատեսել և հանդիպում են տարբեր հաճախականությամբ. պայքարում են հարցերի կամ կասկածների միջոցով, հանդիպում են աղետների կամ նեղությունների տեսքով, անձնական խնդիրներ են առաջացնում՝ կապված էկեղեցու ղեկավարների, անդամների, վարդապետության կամ օրենքների հետ: Նման երևույթների դեմ լավագույն պաշտպանությունը մեր հոգևոր հիմքն է:

Որո՞նք կարող են լինել մեր անձնական և ընտանեկան կյանքի հոգևոր անկյունաքարերը: Դրանք կարող են լինել ավետարանով ապրելու պարզ, հասարակ և թանկարժեք սկզբունքները. ընտանեկան աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը՝ ներառելով Մորմոնի Գիրքը, տաճար այցելելը և ավետարանի ուսումնասիրումը *Եկ, հետևիր ինձ* ձեռնարկի միջոցով և ընտանեկան երեկոն: Ձեր հոգևոր հիմքն ամրացնելու այլ օգտակար նյութեր կարող են ներառել Հավատո հանգանակները, ընտանիքի հռչակագիրը և «Կենդանի Քրիստոսը»:

Տաճարային երաշխավորագրի հարցերում ներառված սկզբունքներն ինձ համար ծառայում են որպես ամուր հոգևոր հիմք, հատկապես՝ առաջին չորս հարցերը: Ես նայում եմ դրանց որպես հոգևոր անկյունաքարերի:

Մենք, իհարկե, ծանոթ ենք այդ հարցերին. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մեկ ամ մեկ ընթերցեց դրանք մեզ համար նախորդ գերագույն համաժողովի ժամանակ:

1. Դուք ունե՞ք հավատք և վկայություն առ Աստված՝ Հավերժական Հայրը, Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին:

2. Դուք ունե՞ք վկայություն Հիսուս Քրիստոսի Քավության և որպես Փրկիչ ու Քավիչ Նրա դերի մասին:
3. Դուք ունե՞ք վկայություն Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման մասին:
4. Դուք սատարո՞ւմ եք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահին որպես մարգարե, տեսանող ու հայտնող և որպես միակ անձը Երկրի վրա, ով լիազորված է կիրառելու քահանայության բոլոր բանալիները:⁸

Նկատո՞ւմ եք, թե ինչպես կարող եք այս հարցերը համարել արժեքավոր տարրեր ձեր անձնական հիմքում՝ օգնելով ձեզ կառուցել և ամրացնել այն: Պողոսն ուսուցանեց եփեսագիներին եկեղեցու մասին՝ «Առաքելների եւ մարգարեների հիմքի վերայ շինուած. որի անկիւնի գլուխը Յիսուս Քրիստոսն է. Որ նորանում բոլոր շինուածքը միասին յարմարուած աճում է, որ լինի սուրբ տաճար Տէրով»:⁹

Իմ կյանքի ամենամեծ ուրախություններից մեկը ամբողջ աշխարհով մեկ եկեղեցու անդամների հետ ծանոթանալն ու նրանցով ոգեշնչվելն է, ովքեր առ Հիսուս Քրիստոսը և Նրա ավետարանն ունեցած հավատքի կենդանի օրինակներ են: Նրանք կառուցել են ամուր անձնական հիմքեր, որոնք թույլ են տալիս նրանց կայուն հասկացողությամբ դիմակայել սեյսմիկ իրադարձություններին՝ անկախ իրենց վշտից ու ցավից:

Ահա այս ամենի մի անհատական օրինակ. ես վերջերս խոսեցի մի գեղեցիկ, պայծառ, երիտասարդ կնոջ և մոր թաղման ժամանակ (նաև մեր ընտանիքի ընկեր): Նա ֆուտբոլի թիմի անդամ էր, երբ հանդիպեց ու ամուսնացավ իր առամնաբույժ ուսանող ամուսնու հետ: Նրանք օրհնվեցին՝ ունենալով մի գեղեցիկ, թանկագին դուստր: Նա վճռակալորեն պայքարեց տարբեր քաղցկեղների դեմ վեց դժվարին տարիների ընթացքում: Չնայած իր զգացմունքային

և ֆիզիկական անընդմեջ տառապանքին, նա վստահում էր իր սիրող Երկնային Հորը և հաճախ նրա խոսքերը մեջբերում էին սոցցանցերի նրա հետևորդները. «Աստված մանրամասների մեջ է»:

Իր գրառումներից մեկում նա գրել է, որ ինչ-որ մեկը հարցրել է իրեն. «Ինչպե՞ս ես շարունակում հավատալ այդ բոլոր ցավերի մեջ»: Նա հաստատականորեն պատասխանել է հետևյալ խոսքերով. «Հավատքի շնորհիվ է, որ հաղթահարում եմ այս մռայլ ժամանակները: Հավատք ունենալը չի նշանակում, որ ոչ մի վատ բան չի պատահելու: Հավատք ունենալն ինձ թույլ է տալիս վստահել, որ կրկին լույս է բացվելու: Եվ այդ լույսը լինելու է նույնիսկ ավելի պայծառ, քանի որ ես քայլել եմ խավարի միջով: Տարիների ընթացքում որքան խավարի ականատես եղա, ավելի շատ լույս տեսա: Ես տեսա հրաշքներ: Ես զգացել եմ հրեշտակներին: Ես գիտեի, որ իմ Երկնային Հայրն ինձ տանում է ձեռքերի վրա: Ես չէի ունենա նման փորձառություններ, եթե այս կյանքը հեշտ լիներ: Այս կյանքում իմ ապագան գուցե անխիմանալի է, բայց ոչ իմ հավատքը: Եթե ես ընտրեմ հավատք չունենալ, ապա ես ընտրում եմ լոկ խավարում քայլելը: Քանի որ առանց հավատքի մնում է միայն խավարը»:¹⁰

Նրա անսասան վկայությունն առ Տեր Հիսուս Քրիստոսը հավատքի մասին, արտահայտված նրա խոսքերում և նրա զործերում, ոգեշնչում էր ուրիշների համար: Չնայած նրա մարմինը *թույլ* էր, նա բարձրացնում էր ուրիշներին՝ *սալելի ուժեղ* լինելու համար:

Ես մտածում եմ եկեղեցու անհամար այլ անդամների մասին, այս քրոջ նման մարտիկների, ովքեր քայլում են ամեն օր հավատքով, ձգտելով լինել մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի հավատարիմ և անվեհեր աշակերտներ: Նրանք սովորում են Քրիստոսի մասին: Նրանք քարոզում են Քրիստոսի մասին: Նրանք ձգտում են նմանվել Նրան: Անկախ այն բանից, թե

նրանց կյանքի օրերը հաստատուն, թե ցնցվող հողի վրա են անցնում, նրանց հիմքն ամուր և անսասան է:

Նրանք նվիրյալ հոգիներ են, ովքեր հասկանում են հետևյալ խոսքերի խորը իմաստը. «Ի՞նչ ամուր է դրված, ով Աստծո Սրբեր, ձեր հավատքի հիմքը» և «Նրա գրկում ապաստան եք գտել»:¹¹ Ես անչափ երախտապարտ եմ քայլելու նրանց մեջ, ովքեր հոգևոր հիմք են պատրաստել *Սրբերի* անունին արժանի և ովքեր ուժեղ են և բավականաչափ ապահով՝ դիմակայելու կյանքի բազմաթիվ իրարանցումների:

Չեմ կարծում, թե մենք կարող ենք գերազնահատել մեր անձնական կյանքում նման ամուր հիմքի կարևորությունը: Նույնիսկ վաղ տարիքում մեր մանուկները Երեխաների միությունում սովորում են, մինչ երգում են հետևյալ ճշմարտության մասին.

Իմաստուն մարդը կառուցեց իր տունը ժայռի վրա, Եվ անձրևները հորդեցին, . . . Անձրևները հորդեցին, և գետերը բարձրացան, Իսկ ժայռի վրա կառուցված տունը մնաց անսասան:¹²

Սուրբ գրություններում հաստատվում է այս հիմնարար վարդապետությունը: Փրկիչն ուսուցանել է Ամերիկա մայրցամաքի բնակիչներին.

«Եվ եթե դուք միշտ անեք այս բաները, օրհնվա՛՞ծ եք դուք, քանզի դուք *կառուցված եք իմ վե՛սի վրա*:

Բայց ովքեր, որ ձեր մեջ անեն ավելի կամ պակաս, քան այս, *կառուցված չեն իմ վե՛սի վրա*, այլ կառուցված են ավազե հիմքի վրա. և երբ անձրևը տեղա, և ջրհեղեղները գան, և քամիները փչեն և զարկեն նրանց, նրանք կընկնեն»:¹³

Եկեղեցու ղեկավարներն անկեղծ հույս ունեն, որ Սուրբ Լեյքի տաճարի կարևոր վերակառուցումները կնպաստեն Բրիգամ Յանգի ցանկությանը, տեսնելու «տաճարն այնպես կառուցված, որ կանգուն մնա հազարամյակի ընթացքում»: Գալիք տարիների ընթացքում թող

որ մենք թույլ տանք, որ Սուրբ Լեյքի տաճարում կատարվող բարեփոխումները ոգեշնչեն մեզ որպես անհատներ և ընտանիքներ, որ մենք նույնպես փոխաբերական իմաստով «այնպես կառուցվենք, որ կանգուն մնանք հազարամյակի ընթացքում»:

Մենք կանենք դա, եթե կատարենք Պողոս Առաքյալի հորդորը. «[Մեր] անձերի համար բարի կիս գանձենք հանդերձնալի հասկար, որ յափտենական կեանք ձեռք բերենք»:¹⁴ Ես ջերմեռանդ աղոթում եմ, որ մեր հոգևոր հիմքը լինի ամուր և անասան, որ Հիսուս Քրիստոսի Քավության և որպես մեր Փրկիչ և Քավիչ Նրա դերի վերաբերյալ մեր վկայությունը դառնա մեզ համար կարևորագույն անկյունաքարը, ում մասին ես վկայում եմ Նրա՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Ջերիթ Վ. Գոնզ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ովսա՛ննա և Ալեյո՛ւիա – Կենդանի Քրիստոսը. Վերականգնման և Զատկի առանցքը

Ովսաննայի և ալեյուիայի այս տոներին, երգե՛ք ալեյո՛ւիա, քանի որ Նա պիտի թագավորի հավիտյանս հավիտենից:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. William Clayton journal, July 26, 1847, Church History Library, Salt Lake City.
2. “At the Tabernacle, Presidents Woodruff and Smith Address the Saints Yesterday Afternoon,” *Deseret Evening News*, Aug. 30, 1897, 5; “Pioneers’ Day,” *Deseret Evening News*, July 26, 1880, 2; Wilford Woodruff journal, July 28, 1847, Church History Library, Salt Lake City.
3. “Minutes of the General Conference of the Church of Jesus Christ of Latter-day Saints, held at Great Salt Lake City, State of Deseret, April 6, 1851,” *Deseret News*, Apr. 19, 1851, 241.
4. “The Temple,” *Deseret News*, Feb. 19, 1853, 130; “Minutes of the General Conference,” *Deseret News*, Apr. 16, 1853, 146; “Minutes of the General Conference,” *Deseret News*, Apr. 30, 1853, 150.
5. “Address by President Brigham Young,” *Millennial Star*, Apr. 22, 1854, 241.
6. “Remarks by President Brigham Young,” *Deseret News*, Oct. 14, 1863, 97.
7. Presiding Bishopric presentation on the Salt Lake Temple to the First Presidency, Oct. 2015.
8. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ամփոփիչ ելույթ», *Լիստնես*, նոյեմբեր 2019, 121:
9. Եփեսացիս 2.20–21:
10. Սոցյանցների գրառում կատարված Քիմ Օլսեն Ուայթի կողմից:
11. «Աստծո Սրբեր», *Հիմներ և մանկական երգեր*, հ. 6:
12. “The Wise Man and the Foolish Man,” *Children’s Songbook*, 281; emphasis in original was removed in this instance.
13. 3 Նեփի 18.12–13, շեշտադրումն ավելացված է:
14. Ա Տիմոթեոս 6.19, շեշտադրումն ավելացված է:

Իմ թանկագին եղբայրներ և քույրեր. Զատկի և շարունակվող Վերականգնման այս ժամանակաշրջանում, ովսա՛ննա և ալեյո՛ւիա բացականչություններով, մենք տոնում ենք Քրիստոսի կենդանությունը: Իր կատարյալ սիրով Փրկիչը մեզ հավաստիացնում է. «Այս բաները խոսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղություն ունենաք: Աշխարհքում նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»:¹

Տարիներ առաջ, երբ ես և քույր Գոնզը այցելել էինք մի գեղեցիկ ընտանիքի, նրանց փոքր դուստրը՝ Այվին, ամոթխածությամբ ներս բերեց իր ջութակը պատյանով: Նա բարձրացրեց ջութակի աղեղը, ձգեց այն և բլեկնախեժ քսեց վրան: Ապա, աղեղը դրեց պատյանի մեջ, ծնկածալ ողջույնի ժեստ արեց և նստեց: Որպես սկսնակ՝ նա կիսվեց այն ամենով, ինչ գիտեր ջութակի մասին: Այժմ,

տարիներ անց, Այվին հրաշալի ջութակ է նվագում:

Մահկանացու այս կյանքում բոլորս էլ մի քիչ նման ենք Այվինն ու նրա ջութակին: Մենք սկսում ենք սկզբից: Համառությամբ փորձելով՝ մենք աճում ենք ու զարգանում: Ժամանակի ընթացքում բարոյական ազատ կամքը և մահկանացու փորձառությունները մեզ օգնում են ավելի շատ նմանվել Փրկիչին, երբ Նրա հետ աշխատում




Օլյո, Նորվեգիա

ենք Իր այգում² և հետևում ենք Նրա ուխտի ճանապարհին:

Տարեդարձները, ներառյալ այս երկուհարյուրամյակը, ընդգծում են վերականգնման օրինաչափությունները:³ Տոնելով Հիսուս Քրիստոսի ավետարանի շարունակվող վերականգնումը՝ մենք նաև նախապատրաստվում ենք Չատիկին: Երկու դեպքում էլ մենք ուրախանում ենք Քրիստոսի Գալուստով: Նա ապրում է ոչ միայն նախկինում, այլ նաև հիմա. ոչ թե պարզապես մի քանիսի համար, այլ բոլորի համար: Նա եկել է և գալիս է՝ սրտով կոտրվածներին բուժելու, գերիներին ազատելու, կոպրերին տեսողություն տալու, խոցվածներին ազատ արձակելու:⁴ Բոլորս կանք այդ ցուցակում: Նրա փրկագնող խոստումները ուժի մեջ են՝ անկախ մեր անցյալից, մեր ներկայից և մեր ապագայից:

Վաղը Արմավենիների կիրակին է: Արմավենու ճյուղերը Տիրոջով ցնծալու ավանդական սրբազան խորհրդանիշ են, ինչպես պատկերված է *Հիսուսի հանդիսատիոր մուտքը Երուսաղեմ* կտավում, երբ «ժողովուրդի բազմությունը . . . արմավենու ճյուղեր վերցրեց և նրան ընդառաջ ելավ»⁵ (Գուցե հետաքրքիր լինի իմանալ, որ Հարրի Անդերսոնի այդ կտավի բնօրինակը կախված է Նախագահ Նելսոնի գրասենյանի հետևում՝ նրա գրասենյակում): Հայտնության գրքում «սպիտակ զգեստներ հագած ու արմավենու ճյուղեր ձեռքերին» մարդիկ փառաբանում էին Աստծուն ու Գառնին:⁶ Կիրթլենդի տաճարի նվիրագործմանը «արդարության պարեգոտի» և «փառքի պասկի» հետ մեկտեղ նշվում են նաև արմավենու ճյուղերը:⁷

Իհարկե, Արմավենիների կիրակիի նշանակությունը ավելին է, քան բազմության կողմից արմավենու ճյուղերով Հիսուսին դիմավորելը: Արմավենիների կիրակի օրը Հիսուսի մուտքը Երուսաղեմ հավատացյալները ընդունեցին որպես մարգարեության իրականացում: Ինչպես Չաբարիան⁸ ու Մաղմոսերգուն մարգարեաբար կանխատեսել էին, Տերը ավանակի վրա ներս



ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՆՈՒՄԱԿԱՆ ՄԱՍԵՑ ԵՐՈՍՈՒՄԵՆ՝ ՀԱՐՐԱՆՈՒՄԸ

մտավ Երուսաղեմ և բազմությունը գիտակցելով բացականչեց. «Ովսաննա բարձունքներում»:⁹ Ովսաննա նշանակում է «աղաչում ենք, փրկի՛ր»:¹⁰ Ապա, ինչպես մենք ենք ուրախ գոչում. «օրհնեալ է Տիրոջ անունովն եկողը»:¹¹

Արմավենիների կիրակիին հաջորդող կիրակին Չատիկի կիրակին է: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանել է, որ Հիսուս Քրիստոսը «եկավ վճարելու պարտքը, որն իրենը չէր, այլ մեր պարտքն էր, որը չէինք կարողանում վճարել»:¹² Իրապես, Քրիստոսի Քավության շնորհիվ Աստծո բոլոր զավակները «կարող են փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին»:¹³ Չատիկին մենք երգում ենք ալելուիա: «Ալելու՛ լիա» նշանակում է՝ «Օրհնեցե՛ք Տեր Եհովային»:¹⁴ Հենդելի *Մեսիա* ստեղծագործության «Ալելու՛ լիա կրկներգը» Չատիկի սիրված հայտարարություն է, որ

Նա «թագավորների Թագավորն է և տերերի Տերը»:¹⁵

Արմավենիների և Չատիկի կիրակիների միջև ընկած սրբազան իրադարձությունները պատմություններ են ովսաննայի և ալելուիայի մասին: Ովսաննան մեր աղերսանքն է, որ Աստված փրկի: Ալելուիան մեր գովքի արտահայտություն է Տիրոջը՝ փրկության և վեհացման հույսի համար: Ովսաննայի և ալելուիայի բացականչությամբ մենք ընդունում ենք կենդանի Հիսուս Քրիստոսին որպես Չատիկի և վերջին օրերի վերականգնման աշխատանքի առանցքը:

Վերականգնման վերջին օրերի աշխատանքը սկսվում է աստվածահայտությամբ՝ Հայր Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի բառացի հայտնությամբ երիտասարդ մարգարե Ջոզեֆ Միթին: Մարգարե Ջոզեֆը ասել է. «Եթե երկինքը հինգ րոպեով բացվեր ձեզ համար, դուք ավելի շատ բան կսովորեիք, քան

երկնքի մասին գրված բոլոր բաները կարողալու շնորհիվ»¹⁶ Երկնքի կրկին բացվելու շնորհիվ մենք գիտենք և «հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն»¹⁷ հավերժական Աստվածազյախին:

1836 թվականի ապրիլի 3-ի Չատիկի կիրակի օրը՝ Վերականգնման վաղ օրերին, Կիրթլենդի տաճարի նվիրագործումից հետո կենդանի Հիսուս Քրիստոսը կրկին հայտնվեց: Նրան տեսնողները վկայեցին Նրա մասին կրակի և ջրի փոխրացնող հակադրության խոսքերով. «Նրա աչքերը կարծես *կրակի* բոցեր լինեին. նրա գլխի մազերը ճերմակ էին, ինչպես *մաքուր ձյուն*. նրա դեմքը փայլում էր *արևի պայծառությունից* վառ. և նրա ձայնն ասես *սրբնթաց մեծ ջրերի շտապյուն լինելը*, այսինքն՝ Եհովայի ձայնը»¹⁸:

Այդ ժամանակ մեր Փրկիչը հայտարարեց. «Ես եմ առաջինը և վերջինը. ես նա եմ, ով ապրում է, ես նա եմ, ով սպանվել էր. ես ձեր բարեխոսն եմ Հոր մոտ»¹⁹ Կրկին փոխրացնող հակադրություններ՝ առաջինը և վերջինը, ապրում է, ով սպանվել էր: Նա է Ալֆան և Օմեգան՝ սկիզբը և վերջը,²⁰ մեր հավատաքի հեղինակն ու ամբողջացնողը:²¹

Հիսուս Քրիստոսի հայտնվելուց հետո երևացին նաև Մովսեսը, Եղիասը և Եղիան: Աստվածային ցուցումով վաղեմի այս մեծ մարգարեները վերականգնեցին քահանայության բանալիները և իշխանությունը: Այդպիսով, «արդի տնտեսության բանալիները հանձնվել են»²² վերականգնված Եկեղեցուն՝ Աստծո գավակների օրհնության նպատակով:

Եղիայի գալուստը Կիրթլենդի տաճար նաև Հին Կտակարանի Մաղաքիայի մարգարեության իրականացումն էր, որ Եղիան պիտի վերադառնա «Տիրոջ մեծ և անեղ օրը գալուց առաջ»²³ Դրանով իսկ Եղիայի հայտնվելը ոչ պատահականորեն համընկավ հրեական Պասեքի այն շրջանի հետ, երբ ըստ ավանդության, ակնկալվում էր Եղիայի վերադարձը:

Բազմաթիվ նվիրյալ հրեական ընտանիքներ Եղիայի համար Պասեքի սեղանի շուրջ տեղ են թողնում: Ըստերը մինչև պռունկը մի գավաթ են լցնում՝ նրան հրավիրելու և հյուրընկալելու համար: Ոմանք էլ, Պասեքի ավանդական սեղերի ժամանակ, երեխաներից մեկին դառն մոտ են ուղարկում, երբեմն էլ դուռը մասամբ բաց թողնում, որպեսզի տեսնեն, թե արդյոք Եղիան դրսում սպասում է, որ ներս հրավիրեն:²⁴

Ի կատարումն բոլոր բաների՝ վերականգնման մարգարեության և խոստումի,²⁵ Եղիան եկավ, ինչպես խոստացել էր Չատիկի օրը և Պասեքը սկսվելիս: Նա բերեց կնքման իշխանությունը, որպեսզի կապի ընտանիքները և՛ երկրի վրա, և՛ երկնքում: Ինչպես Մորոնին ուսուցանել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթին, Եղիան կգա «և նա գավակների սրտերում կսերմանի հայրերին տված խոստումները, և գավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը: Եթե այդպես չլինի, – շարունակել էր Մորոնին, – ողջ երկիրն ամբողջովին կամալանա [Տիրոջ] գալստյան ժամանակ»²⁶ Եղիայի ոգին՝ Սուրբ Հոգու դրսևորումը, ծագումնաբանության, պատմության և տաճարային ծառայության միջոցով մեզ մոտեցնում է անցյալի, ներկայի և ապագայի մեր սերունդներին:

Եկեք նաև հակիրճ հիշենք, թե որն է Պասեքի նշանակությունը: Պասեքը հիշեցնում է Իսրայելի գավակների 400 տարվա ստրկությունից ազատագրումը: Ելից գիրքը պատմում է, թե ինչպես տեղի ունեցավ այդ ազատագրումը գորտերի, մժեղների, շնաճանճի, անասունների կոտորածի, փոշու ու խոցերի, կարկտի ու կրակի, մորեխների և թանձր խավարի պատուհասների միջոցով: Վերջին պատուհասը սպառնում էր երկրի բոլոր առաջնեկների մահով, բացի իսրայելացիների տներից, եթե նրանք դառն պյուներին անարատ գառան արյունով նշան անեին:²⁷

Մահվան հրեշտակը անցավ և վնաս չհասցրեց խորհրդանշական

գառի արյունով նշված տներին:²⁸ Մահվան հրեշտակից անվնաս մնալը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի՝ մահվան հանդեպ տարած հաղթանակը: Իրապես, Աստծո Գառան քավիչ արյունը մեր Բարի Հովվին զորություն է տալիս բոլոր վայրերում և իրավիճակներում վարագույրի երկու կողմի Իր ժողովրդին հավաքել Իր ապահով գավիթը:

Հատկանշական է, որ Մորմոնի Գիրքը «Քրիստոսի զորությունն ու հարությունը»²⁹ Չատիկի Էությունը, նկարագրում է երկու վերականգնման առումով:

Նախ՝ հարությունը ներառում է մեր «ճիշտ և կատարյալ կառուցվածքով» ֆիզիկական վերականգնումը՝ «ամեն վերջույթ և հող պիտի վերականգնվի», «նույնիսկ գլխի մի մազ չպիտի կորչի»³⁰ Այս խոստումը հույս է տալիս այն մարդկանց, ովքեր կորցրել են վերջույթները, ովքեր կորցրել են տեսնելու, լսելու կամ քայլելու կարողությունը կամ ովքեր տանում են անողոք մոլություններ, հոգեկանը կամ մյուս ունակությունները սահմանափակող հիվանդություններ: Նա գտնում է մեզ: Նա բուժում է մեզ:

Չատիկի և մեր Տիրոջ Քավության երկրորդ խոստումը այն է, որ հոգևոր առումով, «բոլոր բաները պիտի վերականգնվեն իրենց ճիշտ կարգով»³¹ Այդ հոգևոր վերականգնումը արտացոլելու է մեր գործերն ու ցանկությունները: Լավությունը ջուրը զցելու նման³² այն վերականգնելու է այն «ինչ բարի է», «ինչ արդարակյաց է», «ինչ արդար է» և «ինչ ողորմած է»³³ Պատահական չէ, որ Սլմա մարգարեն *վերականգնել* բառը գործածում է 22 անգամ,³⁴ երբ մեզ հորդորում է «վարվիր ազնվորեն, դատիր արդարացի և շարունակ բարիք գործիր»³⁵

Քանի որ «Աստված ինքն է քավում աշխարհի մեղքերը»³⁶ Տիրոջ Քավությունը կարող է վերականգնել ոչ միայն անցյալը, այլ նաև ապագան: Քանի որ նա գիտի մեր ցավերը, տառապանքները, հիվանդությունները և ամեն տեսակի մեր գայթակղությունները,³⁷ Նա կարող

է ողորմությամբ սատարել մեզ՝ ըստ մեր թուլությունների:»³⁸ Քանի որ Աստված «կատարյալ, արդար Աստված և նաև ողորմած Աստված» է, ողորմածության ծրագիրը կարող է «բավարարել արդարադատության պահանջները»:»³⁹ Մենք ապաշխարում ենք և անում ենք հնարավոր ամեն բան: Նա հավերժ օղակում է մեզ «իր սիրո բազուկներում»:»⁴⁰

Այսօր մենք տոնում ենք վերականգնումը և հարությունը: Չեզ հետ միասին, ես ցնծում եմ Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության շարունակվող վերականգնման համար: Այս գարնանից 200 տարի առաջ լույս և հայտնություն է շարունակում աշխարհ գալ Տիրոջ կենդանի մարգարեի և Իր անունով կոչված Եկեղեցու՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միջոցով, ինչպես նաև Մուրբ Հոգու գերբնական պարզևի՝ անձնական հայտնության և ներշնչանքի միջոցով:

Չեզ հետ միասին, Չատիկի այս տոներին ես վկայում եմ Աստծո՝ մեր Երկնային Հոր, և Նրա Միրելի Որդու՝ կենդանի Հիսուս Քրիստոսի մասին: Մահկանացու մարդիկ կան, որ դաժանորեն խաչվել են ու հետագայում հարություն առել: Բայց միայն կենդանի Հիսուս Քրիստոսն է, որ Իր կատարյալ հարություն առած տեսքով դեռևս կրում է խաչելության նշանները Իր ձեռքերին, ոտքերին և կողի վրա: Միայն Նա կարող է ասել. «Ես փորագրել եմ քեզ իմ ձեռքերի ափերի վրա»:»⁴¹ Միայն նա կարող է ասել. «Ես նա եմ, որին բարձրացրեցին: Ես Հիսուսն եմ, որին խաչեցին: Ես Աստծո Որդին եմ»:»⁴²

Փոքրիկ Այվիի և նրա ջութակի նման, մենք որոշ առումներով դեռ սկսնակ ենք: Իսկապես՝ «ինչ որ աչք չտեսաւ և ականջ չսեց և մարդի սիրտը չընկաւ, այն պատրաստեց Աստուած իրան սիրողների համար»:»⁴³ Այս ժամանակներում մենք շատ բան կարող ենք սովորել Աստծո բարության և այն մասին, որ Նրա սերը մեզանում աճելու ներուժ ունի, եթե մենք փնտրենք Նրան և օգնության ձեռք մեկնենք միմյանց: Նոր եղանակներով և նոր վայրերում մենք կարող ենք գործել

և կատարելագործվել՝ տող առ տող, բարություն առ բարություն՝ անհատապես և միասին:


Միրելի՛ եղբայրներ և քույրեր ամենուրեք, երբ ես հանդիպում եմ ձեզ և սովորում եմ ձեզ հետ, ձեր հավատքից ու բարությունից ես լցվում եմ ավետարանի հետաքրքրությամբ և երախտագիտությամբ: Ձեր վկայությունը և ավետարանական ճամփորդությունը հարստացնում են իմ վկայությունն ու ավետարանական ճամփորդությունը: Ձեր մտահոգությունն ու ուրախությունը, ձեր սերը Աստծո ընտանիքի և Սրբերի համայնքի հանդեպ, վերականգնված ճշմարտության և լույսի ձեր պատկերացրած ըմբռնումը ավելացնում է վերականգնված ավետարանի իմ ամբողջականությունը, որի կենտրոնում կենդանի Հիսուս Քրիստոսն է: Միասին մենք վստահաբար երգում ենք. «ամպի մեջ, թե արևի շողի, Տեր ինձ հետ եղիր»:»⁴⁴ Միասնաբար, մենք գիտենք, որ հոգւերի և անհանգստությունների մեջ էլ կարող ենք շատ օրհնություններ հաշվել:»⁴⁵ Մենք կարող ենք տեսնել, որ օրվա մանրամասներով և փոքր ու հասարակ բաներով մեծ բաներ են իրականանում մեր կյանքում:»⁴⁶

«Եվ կլինի այնպես, որ արդարները պիտի հավաքվեն բոլոր ազգերի միջից և պիտի գան Միոն՝ երգելով հավիտենական ուրախության երգեր»:»⁴⁷ Ովսաննայի և ալելուիայի այս տոներին, երգե՛ք ալելուիա, քանի որ Նա պիտի թագավորի հավիտյանս հավիտենից: Բացականչե՛ք ովսաննա Աստծուն ու Գառին: Հիսուս Քրիստոսի սուրբ ու նվիրական անունով, ամեն: ■

ՀՐՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 16.33:
2. Տես Հակոբ 5:
3. Ինչպես սուրբ գրություններն են կանխագուշակել՝ մարդկության պատմությունը ապրել է հոգևոր անկման ժամանակաշրջաններ կամ փուլեր, որ անվանում ենք ուրացություն կամ ապստամբություն, ինչպես նաև նոր լույսի ժամանակաշրջաններ, որ անվանում ենք հոգևոր վերականգնում. տե՛ս, օրինակ. Բ Թեսաղոնիկեցիս 2.3:
4. Տես Ղուկաս 4.18:
5. Հովհաննես 12.12-13; տես նաև Մատթեոս 21.8-9; Մարկոս 11.8-10:

6. Հայտնություն 7.9:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.76:
8. Տես Չարաբիա 9.9:
9. Մատթեոս 21.9:
10. Սուրբ գրքերի ուղեցույց, «Ովսաննա»: Հին Կատարանի ժամանակներից արմավենու ճյուղերի ծածանումը, ուղեցվելով «Փրկիչ, աղաչում եմ քեզ, ո՛վ Տեր» Սաղմոս 118.25 բացականչությամբ, ավանդական մեսիանական բառադարձ աղոթքի ամբողջ արտահայտությունն է. «Աղաչո՛ւմ եմ Տեր, փրկիչ. Աղաչո՛ւմ եմ Տեր, հաջողություն տուր»:
11. Եթեր 6.9, տես նաև 3 Նեփի 18.16; տես նաև 3 Նեփի 11.17:
12. Ռասսել Մ. Նելսոն, in *Handel's Messiah: Debtor's Prison* (video), ChurchofJesusChrist.org/media-library:
13. Հավատո Հանգանակ 1.3:
14. Տես Bible Dictionary, “Hallelujah.”
15. Ջորջ Ֆրեդերիկ Հենդել, *Messiah*, ed. T. Tertius Noble (1912), viii; տես նաև Հայտնություն 17.14:
16. *Եկեղեցու Նախագահների Ուսումնական Ջոզեֆ Սմիթ* (2007), 419:
17. Հավատո Հանգանակ 1.1:
18. Վարդապետություն և Ուխտեր 110.3, շեշտադրումն ավելացված է:
19. Վարդապետություն և Ուխտեր 110.4:
20. Տես Հայտնություն 1.8; 3 Նեփի 9.18; Վարդապետություն և Ուխտեր 19.1; 38.1; 45.7:
21. Տես Եբրայեցիս 12.2; Մորոնի 6.4:
22. Վարդապետություն և Ուխտեր 110.16:
23. Մաղաքիա 4.5:
24. Տես Stephen D. Ricks, “The Appearance of Elijah and Moses in the Kirtland Temple and the Jewish Passover,” *BYU Studies*, vol. 23, no. 4 (1986), 483–86, byustudies.byu.edu.
25. Տես Վարդապետություն և Ուխտեր 86.10, տես նաև Գործք 3.19–21:
26. Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.39, վերջին տարիներին «իրենց» դերանվան գործածությունը այստեղ շատ կարևոր են համարում:
27. Տես Ելից 7–12:
28. Տես Ելից 12.23:
29. Ալմա 41.2:
30. Ալմա 40.23:
31. Ալմա 41.4:
32. Տես Ժողովող 11.1:
33. Ալմա 41.13:
34. Ֆիզիկական և հոգևոր վերականգնումը շեշտող՝ *վերականգնել, վերականգնվել, վերականգնում* բառերը տարբեր ձևով 22 անգամ հանդիպում են Ալմա 40.22–24 և Ալմա 41 գլուխների հատվածներում:
35. Ալմա 41.14:
36. Ալմա 42.15:
37. Ալմա 7.11:
38. Տես Ալմա 7.12:
39. Ալմա 42.15:
40. 2 Նեփի 1.15:
41. Եսայիա 49.16, 1 Նեփի 21.16:
42. Վարդապետություն և Ուխտեր 45.52:
43. Ա Կորնթացիս 2.9:
44. “Abide with Me!” *Hymns*, no. 166.
45. Տես «Օրհնությունները հաշվիր», *Հիսուսի և մանկական երգեր*, էջ 8:
46. Տես Ալմա 37.6:
47. Վարդապետություն և Ուխտեր 45.71:



Լոդի Ռուբ Զաուր
Յուտայի, Պրովոցի Սլեյթ Բենիոն 14-րդ (հսպաներեն)
Ժխի անդամ

Ինչպես է քահանայությունն օրհնում երիտասարդներին

Քահանայության միջոցով մենք կարող ենք բարձրացվել: Քահանայությունը լույս է բերում մեր աշխարհ:

Երախտապարտ եմ այստեղ լինելու համար: Երբ պարզեցի, որ հնարավորություն եմ ունենալու խոսել ձեզ հետ այսօր, ես շատ հուզվեցի, բայց միևնույն ժամանակ, խիստ խոնարհված զգացի: Շատ ժամանակ անցկացրի՝ մտածելով, թե ինչով կարող եմ կիսվել և հուսով եմ Հոգին ուղղակի կխոսի ձեզ հետ իմ ուղերձի միջոցով:

Մորմոնի Գրքում Լեքին օրհնություն է տալիս իր որդիներից յուրաքանչյուրին, նախքան կյանքից հեռանալը, որն օգնում է նրանց տեսնել իրենց ուժեղ կողմերը և հավերժական ներուժը: Ես ութ երեխաներից ամենափոքրն եմ, և այս անցած տարի ես առաջին անգամ միակ երեխան էի տանը: Ինձ համար դժվար էր առանց իմ քույրերի և եղբայրների, և դժվար էր, որ կողքիս զրուցակից չունեի: Կային գիշերներ, երբ շատ միայնակ էի զգում: Երախտապարտ եմ ծնողներիս համար, ովքեր փորձում էին

անել ամեն ինչ ինձ օգնելու համար: Օրինակ, երբ հայրս առաջարկեց, որ ինձ մխիթարության համար քահանայության օրհնություն տար՝ մի հատկապես դժվարին պահի ընթացքում: Նրա օրհնությունից հետո անմիջապես փոփոխություններ չեղան, բայց ես կարողացա խաղաղություն և սեր զգալ իմ Երկնային Հորից և իմ հայրիկից: Ես օրհնված եմ զգում՝ արժանավոր հայր ունենալու համար, ով կարող է տալ քահանայության օրհնություններ, երբ ես դրանց կարիքն ունենում եմ: Նա օգնում է ինձ տեսնել իմ ուժեղ կողմերը և հավերժական ներուժը, ինչպես Լեքին արեց, երբ նա օրհնեց իր երեխաներին:

Անկախ ձեր հանգամանքներից, դուք միշտ կարող եք քահանայության օրհնությունների հասանելիությունն ունենալ: Ընտանիքի անդամների, ընկերների, ծառայող եղբայրների, քահանայության առաջնորդների և Երկնային Հոր


միջոցով, ով երբեք չի թողնի ձեզ, դուք կարող եք ստանալ քահանայության օրհնությունները: Երեց Նիլ Լ. Անդերսենն ասել է. «Քահանայության օրհնություններն անսահման ավելի մեծ են, քան այն մեկը, ում խնդրվում է տալ այդ պարզևր: . . . Երբ մենք արժանի ենք, քահանայության արարողությունները հարստացնում են մեր կյանքը»:¹

Մի հապաղեք օրհնություն խնդրել, երբ հավելյալ առաջնորդության կարիք եք ունենում: Մեր դժվարին պահերին է, որ մենք ամենից շատ ենք Հոգու կարիքն ունենում: Ոչ ոք կատարյալ չէ, և մենք բոլորս տանում ենք դժվարություններ: Մեզանից ոմանք գուցե տառապում են անհանգստությունից, ընկճախտից, կախվածությունից կամ ոչ լիարժեք լինելու զգացումներից: Քահանայության օրհնությունները կարող են օգնել մեզ հաղթահարել այդ մարտահրավերները և ստանալ խաղաղություն, մինչ առաջ ենք շարժվում դեպի ապագան: Հուսով եմ, որ ձգտում ենք այդ օրհնությունները ստանալուն արժանի ապրել:

Մեկ այլ ուղի, որով քահանայությունն օրհնում է մեզ՝ հայրապետական օրհնությունն է: Ես սովորել եմ դիմել իմ հայրապետական օրհնությանը, երբ տխուր կամ միայնակ եմ զգում: Իմ օրհնությունն օգնում է ինձ տեսնել իմ ներուժը և այն հատուկ ծրագիրը, որն Աստված ունի ինձ համար: Այն մխիթարում է ինձ և օգնում տեսնել իմ երկրային հեռանկարը: Այն հիշեցնում է ինձ



Սան Պաոլո, Բրազիլիա



Էնզո Սերժ Պետելո
Միդոու Վուդ ծխի անդամ, Պրովո, Յուտա, Էդգեմոնթ ցից

Ինչպե՞ս է քահանայությունն օրհնում երիտասարդներին

Մեզ հնարավորություն է տրվել հրեշտակների նման սպասավորել, քարոզել ավետարանը Երկրի բոլոր մայրցամաքներում և օգնել հոգիներին գալ դեպի Քրիստոս:

Եղբայրներ՝ և քույրեր՝, ես իսկապես երախտապարտ եմ, որ այս պատմական երեկոյի ընթացքում ձեզ հետ կարող եմ խոսել քահանայության սրբազան պարզևի և այն սքանչելի զորության մասին, որ այն ունի՝ օրհնելու երիտասարդներին այս տնտեսությունում: Աղոթում եմ, որ չնայած իմ անկատարություններին, Հոգին օգնի ինձ ուսուցանել ճշմարտությունը:

Առաջին նախագահությունը հիշեցրել է Ահարոնյան քահանայություն կրողներին, որ «դուք ապրում եք մեծ հնարավորությունների և մարտահրավերների օրերում, երբ վերականգնվել է քահանայությունը: Դուք Ահարոնյան քահանայության արարողությունները կատարելու իշխանություն ունեք: Այդ իշխանությունը աղոթքով և արժանիորեն գործադրելու դեպքում, դուք

մեծապես կօրհնեք ձեր շուրջը գտնվողների կյանքը»¹ Որպես Եկեղեցու երիտասարդ տղամարդիկ, մեզ նաև հիշեցվում է, որ մենք «Աստծո սիրելի [որդիներն] ենք, և Նա աշխատանք ունի [մեզ] համար կատարելու»,² և մենք օգնում ենք Նրա գործին՝ «իրականացնելու մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Քահանայությունը Փրկիչի ավետարանի արարողություններն ու ուխտերը սպասավորելու իշխանությունն է նրանց համար, ովքեր արժանի են դրանք ստանալ: Քահանայության այս արարողությունների և սրբազան ուխտերի միջոցով գալիս են Փրկիչի Քավության լիակատար օրհնությունները, որոնք օգնում են մեզ հասնել մեր աստվածային ճակատագրին:

Ջոզեֆ Սմիթը երիտասարդ տղամարդ էր, ով կանչվել էր

Աստծո կողմից՝ վերականգնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը, և այդ նպատակով նրան տրվեց քահանայություն, որը նա օգտագործեց՝ օրհնելու ողջ մարդկությանը: Վարդապետություն և Ուխտեր 135-ը մեջբերում է այն բազմաթիվ օրհնությունները, որոնք Ջոզեֆը տվել է այս տնտեսության երիտասարդներին: Մենք կարդում ենք. «Ջոզեֆ Սմիթը ... ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, որը երբևէ ապրել է նրա վրա: ... Նա առաջ բերեց Մորմոնի Գիրքը, ... ուղարկեց հավիտենական ավետարանի լրիվությունը, ... դեպի աշխարհի չորս կողմերը, առաջ բերեց այն հայտնություններն ու պատվիրանները, որոնք կազմում են Վարդապետություն և Ուխտեր[ը] ... , հավաքեց բազմահազար Վերջին Օրերի Սրբերի, ... և համբավ և անուն թողեց, որը չի կարող կորչել» (Վարդապետություն և Ուխտեր 135.3):

Որպեսզի Ջոզեֆի նման արդյունավետ ծառայենք, մենք պետք է արժանավայել օգտագործենք Տիրոջ քահանայության զորությունը: Մինչ Ջոզեֆը և Օլիվեր Քաուդերին թարգմանում էին Մորմոնի գիրքը, կամեցան մկրտվել, բայց նրանք չունեին համապատասխան իշխանություն: 1829 թվականի մայիսի 15-ին նրանք ծնկի իջան աղոթքով և նրանց այցելեց Հովհաննես Մկրտիչը, ով նրանց տվեց Ահարոնյան քահանայության բանալիներն ու իշխանությունը՝ ասելով. «Իմ ընկերակից ծառաներ, Մեսիայի անունով ես շնորհում եմ ձեզ Ահարոնի քահանայությունը, որը կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները» (Վարդապետություն և Ուխտեր 13.1):

Մեզ տրվել է հնարավորություն հրեշտակների նման սպասավորել, քարոզել ավետարանը Երկրի բոլոր մայրցամաքներում և օգնել հոգիներին գալ դեպի Քրիստոս:

Այս ծառայությունը մեզ համատեղ աշխատանքի մեջ է դնում Հովհաննես Մկրտիչի, Մորոնիի, Ջոզեֆ Միթի, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի և Տիրոջ այլ ջանասեր ծառաների հետ:


Մեր ծառայությունը Նրա քահանայության մեջ և Նրա հետ համախմբում է նրանց, ովքեր նվիրված են ճշգրտորեն հետևելու և ապրելու Տիրոջ ուսմունքներով, որը ես անձամբ գիտեմ, որ կարող է դժվար լինել, քանի որ մենք դիմակայում ենք երիտասարդության մարտահրավերներին: Բայց Նրա աշխատանքն իրականացնելիս Տիրոջ ընկերակից ծառաների հետ միավորվելը կօգնի մեզ ամրապնդվել հակառակորդի գայթակղությունների և խաբկանքների դեմ: Դուք կարող եք լինել լույսի փարոս բոլոր նրանց համար, ովքեր ինքնավստահ չեն: Ձեր ներքին լույսը կշողա այնքան պայծառ, որ բոլոր նրանք, ում հետ կշփվեք, ուղղակի կօրհնվեն ձեր ընկերակցության մեջ: Երբեմն կարող է դժվար լինել ճանաչել մեր հոգևոր ընկերակիցների ներկայությունը, բայց ես երախտապարտ եմ՝ գիտենալով, որ ես քահանայության հավատարիմ քվորումի անդամ եմ, որոնց հետ կարող եմ աշխատել, որպեսզի ավելի մոտենամ Քրիստոսին:

Մեր ընկերների և ընտանիքի հետ միասին, Մուրբ Հոգին մեր ամենահավատարիմ և հուսալի ընկերակիցներից մեկն է: Բայց որպեսզի հրավիրենք Նրա մշտական ընկերակցությունը, մենք պետք է ինքներս գտնվենք այն իրավիճակներում և տեղերում, որտեղ Նա կկամենա ներկա լինել: Սա կարելի է սկսել մեր սեփական տներում, երբ աշխատում ենք դրանք սուրբ տեղեր դարձնել՝ ընտանիքի հետ միասին մասնակցելով ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրությանը և աղոթքին, և ավելի կարևոր, երբ մենք անհատապես ուսումնասիրում ենք սուրբ գրությունները և աղոթում ինքնուրույն:

Այս տարվա սկզբին ինձ տրվեց մի հուզիչ, բայց համեստ

հնարավորություն՝ օգնել իմ փոքր քույր Օսիենին առաջադիմել ուխտի ճանապարհով՝ ընդունելով մկրտությունը և կատարելով սելեստիալ թագավորություն մտնելու համար նախատեսված պահանջներից մեկը: Նա հետաձգեց իր մկրտությունը մեկ ամսով, մինչև ես կարգվեցի քահանա, որպեսզի ինձ արտոնություն տար կատարել արարողությունը, մինչև մեր մյուս քույրերը նույնպես արտոնվեին աշխատել քահանայության հանձնարարության ներքո և կանգնեին որպես վկաներ: Երբ մենք կանգնած էինք ջրավազանի հակադիր կողմերում և պատրաստվում էինք ջուրը մտնել, ես նկատեցի նրա հուզմունքը, քանի որ այն համընկավ իմ հուզմունքին: Եվ ես միավորված զգացի նրա հետ՝ տեսնելով, որ նա ճիշտ որոշում էր կայացնում: Իմ քահանայությունը գործադրելու այդ հնարավորությունը ինձանից պահանջեց ավելի ուշադիր լինել և անփոյթ չլինել ավատարանով ապրելիս: Որպեսզի պատրաստվեի, այդ շաբաթ ես ամեն օր տաճար գնացի՝ ստանալով մայրիկիս, տատիկիս և քրոջս աջակցությունը և կատարելով մկրտություններ մահացածների համար:

Այդ փորձառությունն ինձ շատ բան ուսուցանեց քահանայության և այն մասին, թե ինչպես ես կարող էի գործադրել այն արժանավայել կերպով: Ես գիտեմ, որ բոլոր քահանայություն կրողները զգում են նույն բաները, ինչ ես զգացի, եթե հետևենք Նեփիի «կգնամ և կանեմ» օրինակին (տես 1 Նեփի 3.7): Մենք չենք կարող անգործ նստել և սպասել Տիրոջը, որ Նա օգտագործի մեզ Իր մեծ աշխատանքում: Մենք չպետք է սպասենք նրանց, ովքեր կարիք ունեն մեր օգնությանը, որ փնտրեն և գտնեն մեզ, մեր պարտականությունն է՝ որպես քահանայություն կրողներ օրինակ լինել և կանգնել որպես Աստծո վկաներ: Եթե մենք որոշումներ ենք կայացնում, որոնք խանգարում են մեր հավերժական առաջընթացին, մենք պետք է փոխվենք այժմ:



Սատանան կփորձի ամեն հնարավոր բան՝ պահելու մեզ հասարակ հաճույքների ձգտող մարմնական վիճակում: Բայց ես գիտեմ, որ եթե մենք ջանք գործադրենք, գտնենք նրանց, ովքեր կաջակցեն մեզ և ապաշխարենք ամեն օր, արդյունքում օրհնություններն աներևակայելի կլինեն, և մեր կյանքը հավերժ կփոխվի, երբ մենք առաջ շարժվենք ուխտի արահետով:

Ես գիտեմ, որ սա է ճշմարիտ Եկեղեցին Հիսուս Քրիստոսի, ով մեր Փրկիչն է և լիազորել է քահանայության բանալիներն Իր Առաքյալներին, ովքեր օգտագործում են դրանք՝ մեզ առաջընդդեմ համար, հատկապես այս դժվարին օրերում և նախապատրաստելու աշխարհը Իր վերադարձի համար:

Ես վկայում եմ, որ Ջոզեֆ Միթը վերականգնման մարգարեն է, և որ Նախագահ Նելսոնը այսօր մեր կենդանի մարգարեն է: Ես հրավիրում եմ մեզ բոլորիս ուսումնասիրել այս հիանալի քահանայություն կրողների կյանքը և ձգտել ամեն օր բարելավել ինքներս մեզ, որպեսզի կարողանանք պատրաստ լինել հանդիպելու մեր Արարիչին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Առաջին Նախագահություն. *Կատարել Աստծո հանդեպ մեր պարտականությունը* (գրքույկ, 2010), 5:
2. Միսրոնյան քահանայության քվորումի թեմա. *Ընդհանուր Ձեռնարկ. Շատայնի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում*, 10.1.2, ChurchofJesusChrist.org:



Ջին Բ. Բիլզեմ
Սփոփող միության գերագույն նախագահ

Միավորվել՝ Աստծո աշխատանքը կատարելիս

*Մեր աստվածային ներուժն իրականացնելու
ամենաարդյունավետ ուղին միասին աշխատելն է,
օրինված լինելով քահանայության զորությամբ և
իշխանությամբ:*

Թանկագին հրաշալի՝ քույրեր և եղբայրներ, հաճելի է լինել ձեզ հետ: Գրկում եմ իմ քույրերին և սրտառույզ ձեռքսեղմումներ եմ հղում իմ եղբայրներին՝ անկախ ձեր գտնվելու վայրից: Մենք միավորված ենք Տեր Հիսուս Քրիստոսի աշխատանքում:

Երբ մենք մտածում ենք Ադամի և Եվայի մասին, մեր առաջին միտքը հաճախ Եղեմի պարտեզում նրանց իդեալական կյանքի մասին է: Ես պատկերացնում եմ, որ եղանակը միշտ կատարյալ էր՝ ոչ շատ շոգ և ոչ շատ ցուրտ, և առատ, համեղ բանջարեղեն ու մրգեր էին աճում, որոնք հասանելի էին, այնպես որ նրանք կարող էին ուտել, երբ կամենային: Քանի որ սա նոր աշխարհ էր նրանց համար, շատ բան կար հայտնագործելու, ուստի, ամեն օրը հետաքրքիր էր, քանի որ նրանք շփվում էին կենդանական աշխարհի հետ և ուսումնասիրում նրանց գեղեցիկ միջավայրը: Նրանց նաև պատվիրաններ էին տրվել, որպեսզի հնազանդվեն, և տարբեր

ուղիներ կային այդ հրահանգներին մոտենալու, որը սկզբնական շրջանում առաջացնում էր որոշ անհանգստություն և շփոթություն:¹ Բայց, երբ նրանք կայացրին որոշումներ, որոնք հավերժ փոխեցին իրենց կյանքը, նրանք սովորեցին միասին աշխատել և միավորվեցին՝ իրենց և Աստծո բոլոր զավակների համար Նրա ունեցած նպատակների իրականացման համար:

Այժմ պատկերացրեք այդ նույն զույգին մահկանացու կյանքում: Նրանք ստիպված էին աշխատել իրենց ուտելիքի համար, կենդանիներից մի քանիսի համար *կրանք* սնունդ էին համարվում, և կային դժվարին մարտահրավերներ, որոնք կարող էին հաղթահարվել միայն այն ժամանակ, երբ նրանք միասին էին խորհրդակցում և աղոթում: Ես պատկերացնում եմ, որ գոնե մի քանի անգամ նրանք ունեցել են տարբեր կարծիքներ, թե ինչպես մոտենալ այդ մարտահրավերներին: Սակայն անկման

միջոցով նրանք իմացան, որ կարևոր էր գործել միասնության և սիրո մեջ: Աստվածային աղբյուրներից ստացած դասավանդման ընթացքում նրանց ուսուցանվեց փրկության ծրագիրը և Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները, որոնք այդ ծրագիրը գործուն էին դարձնում: Քանի որ նրանք հասկանում էին, որ իրենց երկրային և հավերժական նպատակը նույնն էր, նրանք գոհունակություն և հաջողություն գտան՝ սովորելով միասին սիրով և արդարությամբ աշխատել:

Երբ երեխաները ծնվեցին, Ադամն ու Եվան սովորեցրին իրենց ընտանիքին այն, ինչ իրենք սովորել էին երկնային սուրհանդակներից: Նրանք կենտրոնացած էին նաև իրենց երեխաներին օգնելու վրա, որ նրանք հասկանային և ընդունեին այն սկզբունքները, որոնք նրանց կերջանկացնեին այս կյանքում, ինչպես նաև կպատրաստեին վերադառնալ իրենց երկնային ծնողների մոտ՝ իրենց կարողությունները մեծացնելուց և Աստծուն իրենց հնազանդությունն ապացուցելուց հետո: Այդ ընթացքում Ադամն ու Եվան սովորեցին գնահատել իրենց տարբեր ուժեղ կողմերը և աջակցեցին միմյանց իրենց հավերժ նշանակալից գործում:²

Մինչ դարեր և ապա հազարամյակներ էին գալիս ու անցնում, տղամարդկանց և կանանց ոգեշնչված և փոխկապակցված ներդրումների հստակությունը մշուշապատվում էր ապատեղեկատվությամբ և թյուրլմբոնմամբ: Եղեմի պարտեզում այդ հրաշալի սկզբի և ներկայիս միջև ընկած ժամանակահատվածում հակառակորդը բավականին հաջողակ է եղել՝ նպատակ ունենալով բաժանել տղամարդկանց և կանանց մեր հոգիներին պարտության մատնելու համար: Լյուցիֆերը գիտի, որ եթե կարողանա վնաս հասցնել տղամարդկանց և կանանց միասնության զգացումին, եթե կարողանա շփոթեցնել մեզ մեր աստվածային արժեքի և ուխտի պարտականությունների վերաբերյալ, նրան կհաջողվի կործանել ընտանիքները,

որոնք հավերժության հիմնական միավորներն են:

Մատանան հրահրում է համեմատությունը որպես գործիք՝ ստեղծելով գերադասության կամ անլիարժեքության զգացում՝ թաքցնելով այն հավերժական ճշմարտությունը, որ տղամարդկանց և կանանց բնածին տարբերությունները Մատծուց են տրված և հավասարապես արժեքավոր են: Նա փորձել է ցածրացնել կանանց ներդրումները ինչպես ընտանիքում, այնպես էլ քաղաքացիական հասարակության մեջ՝ դրա միջոցով նվազեցնելով բարու համար նրանց ոգեշնչող ազդեցությունը: Նրա նպատակը եղել է ուժային պայքարի խթանումը, այլ ոչ թե տղամարդկանց և կանանց առանձնահատուկ ներդրումների հաղթահանոցը, որոնք լրացնում են միմյանց և նպաստում միասնությանը:

Այսպիսով, տարիների ընթացքում և ամբողջ աշխարհում հիմնականում անհետացավ կանանց և տղամարդկանց աստվածային փոխկապակցված, բայց դեռ տարբերվող ներդրումների և պարտականությունների վերաբերյալ լիակատար ըմբռնումը: Բազմաթիվ հասարակություններում կանայք ավելի շուտ տղամարդկանց ենթականերն էին, քան կողք կողքի զուգընկերը, նրանց գործունեությունը սահմանափակվում էր նեղ շրջանակով: Հոգևոր առաջընթացը դանդաղեց՝ հասնելով նվազագույնի այդ մութ ժամանակներում. իրականում, հոգևոր քիչ լույս կարող էր ներթափանցել գերիշխանության ավանդույթներով ներծծված մտքերն ու սրտերը:

Իսկ հետո վերականգնված ավետարանը «արևի պայծառությունը գերազանցող» լույսով փայլեց,³ երբ Հայր Մատված և նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Ջոզեֆ Մմիթ պատանուն, որը տեղի ունեցավ 1820 թ.-ի վաղ զարնանը այն սուրբ անտառապատ տարածքում՝ Նյու Յորքի ծայրամասում: Այդ իրադարձությունը սկիզբ դրեց երկնքից հայտնության ժամանակակից հոսքին: Քրիստոսի սկզբնական

Եկեղեցու առաջին տարրերից մեկը, որը պիտի վերականգնվեր, Մատծո քահանայության իշխանությունն էր: Մինչ վերականգնումը շարունակվում էր ծավալվել, տղամարդիկ և կանայք սկսեցին նորովի գիտակցել Նրա կողմից այդ սուրբ գործի մեջ լիազորված և առաջնորդված՝ որպես գործընկերներ աշխատելու կարևորությունն ու ներուժը:

1842թ.-ին, երբ երիտասարդ Եկեղեցու կանայք ցանկացան ձևավորել պաշտոնական խումբ՝ աշխատանքին օգնելու համար, նախագահ Ջոզեֆ Մմիթը ոգեշնչվեց կազմավորել նրանց «քահանայության ներքո քահանայության օրինակին համապատասխան»:⁴ Նա ասաց. «Այժմ ես բանալին շրջում եմ դեպի ձեր կողմը Մատծո անունով . . . սա ավելի լավ օրերի սկիզբն է»:⁵ Եվ քանի որ այդ բանալին շրջվեց, կանանց համար կրթական, քաղաքական և տնտեսական հնարավորությունները սկսեցին աստիճանաբար ընդլայնվել ամբողջ աշխարհում:⁶

Կանանց այս նոր Եկեղեցական կազմակերպությունը, որը կոչվեց Սվիտիոլ միություն, նման չէր այդ օրերի կանանց այլ միություններին, որովհետև այն հաստատվել էր մարգարեի կողմից, ով գործում էր քահանայության իշխանությամբ, որպեսզի կանանց իշխանություն տար՝ սուրբ պարտականություններ և պաշտոններ

զբաղեցնելու Եկեղեցու կառուցվածքում, ոչ թե նրանից առանձին:⁷

Մարգարե Ջոզեֆ Մմիթի օրերից սկսած մինչև մեր օրերը, բոլոր բաների շարունակական վերականգնումը լուսավորում բերեց քահանայության իշխանության և գործության անհրաժեշտության վերաբերյալ՝ օգնելով ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց, իրականացնել իրենց աստվածայնորեն նշանակված պարտականությունները: «Էրջերս մեզ ուսուցանեցին, որ այն կանայք, ովքեր ի սպաս են դրվել քահանայության բանալիներ կրող մի անձի ղեկավարության ներքո, գործում են *քահանայության իշխանությամբ* իրենց կոչումներում»:⁸

2019 թվականի հոկտեմբերին, նախագահ Ռասսել Մ. Նելսոնը սովորեցրեց, որ տաճարում օժտում ստացած կանայք ունեն *քահանայության զոլություն* իրենց կյանքում և իրենց տներում, քանի որ պահպանում են այն սուրբ ուխտերը, որոնք նրանք կապել են Մատծո հետ:⁹ Նա բացատրեց, որ «երկինքները նույնքան բաց են այն *կանանց* համար, ովքեր օժտում են ստացել քահանայության ուխտերից բխող Մատծո գործությամբ, որքան բաց են այն տղամարդկանց համար, ովքեր կրում են քահանայություն»: Եվ նա քաջալերեց յուրաքանչյուր քրոջ, «ազատ օգտագործել Փրկիչի



Միրակոզա, Յուտա, ԱՄՆ

գորությունը, որպեսզի օգնեք ձեր ընտանիքին և այլոց, ում դուք սիրում եք»:¹⁰

Այսպիսով, ի՞նչ է նշանակում սա՛՛ ձեր և ինձ համար: Քահանայության իշխանության և գորության ըմբռնումը ինչպե՞ս է փոխում մեր կյանքը: Բանալիներից մեկն այն է, որ երբ կանայք և տղամարդիկ միասին են աշխատում, մենք շատ ավելի ենք իրականացնում, քան երբ առանձին ենք աշխատում:¹¹ Մեր դերերը ավելի շուտ միմյանց լրացնող են, քան մրցակցական: Չնայած կանայք քահանայության պաշտոնի չեն ձեռնադրվում, ինչպես նշվեց նախկինում, նրանք օրհնված են քահանայության գորությամբ, քանի դեռ պահում են իրենց ուխտերը, և նրանք գործում են քահանայության իշխանությամբ, երբի սպաս են դրվում որևէ կոչման:

Օգոստոսի մի գեղեցիկ օր ես արտոնություն ունեցա նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետ նստել Ջոզեֆ և Էմմա Միլթոնների վերակառուցված տանը Հարմոնիում (Պենսիլվանիա), որի մոտակայքում վերականգնվեց Ահարոնյան Քահանայությունը այս վերջին օրերին: Այդ գրույցի ընթացքում նախագահ Նելսոնը խոսեց այն կարևոր դերի մասին, որ կանայք խաղաղացին վերականգնման մեջ:

Նախագահ Նելսոն. «Ամենակարևոր կողմերից մեկը, որի մասին ես հիշում եմ, երբ զալիս եմ քահանայության վերականգնման այս վայրը, այն կարևոր դերն է, որ կանայք խաղաղացին վերականգնման ընթացքում:

«Երբ Ջոզեֆը առաջին անգամ սկսեց թարգմանել Մորմոնի Գիրքը, ո՞վ էր գրագիրը: Դե, նա մի քիչ գրեց, բայց ոչ շատ: Էմման գրեց:

Իսկ հետո մտածում եմ, թե ինչպես Ջոզեֆը գնաց անտառ աղոթելու իրենց տան մոտ Պալմիրայում, (Նյու Յորք): Ո՞ր գնաց նա: Նա գնաց սրբազան պուրակ: Ինչո՞ւ նա գնաց այնտեղ: Որովհետև դա այն տեղն էր, որտեղ Մայրն էր գնում, երբ ցանկանում էր աղոթել:

Նրանք հենց այն երկու կանայք են, ովքեր կարևոր դեր ունեցան

քահանայության և Եկեղեցու Վերականգնման գործում: Կասկած չկա, մենք կարող ենք ասել, որ մեր կանայք ճիշտ նույնքան կարևոր են այսօր, որքան կարևոր էին այն ժամանակ: Իհարկե, նրանք կարևոր են»:

Էմմայի, Լյուսիի և Ջոզեֆի նման, մենք ավելի արդյունավետ ենք գործում, երբ կամենում ենք միմյանցից սովորել և միավորված ենք մեր նպատակով՝ դառնալ Հիսուս Քրիստոսի աշակերտներ և օգնել ուրիշներին այդ արահետում:

Մեզ ուսուցանում են, որ «քահանայությունն օրհնում է Աստծո զավակների կյանքը անհամար ուղիներով: . . . [Եկեղեցու] կոչումներում, տաճարային արարողություններում, ընտանեկան փոխհարաբերություններում և լուռ, անհատական ծառայության մեջ Վերջին Օրերի Սրբերը՝ կանայք և տղամարդիկ, առաջ են գնում քահանայության գորությամբ և իշխանությամբ: Տղամարդկանց և կանանց այս փոխկախվածությունը Նրա գորության միջոցով Աստծո աշխատանքը կատարելիս առանցքային է Մարգարե Ջոզեֆ Միլթոնի միջոցով վերականգնված Հիսուս Քրիստոսի ավետարանի համար»:¹²

Միասնությունը կարևոր է աստվածային աշխատանքի համար, որը մենք արտոնված ենք և կանչված կատարելու, բայց դա հենց այնպես տեղի չի ունենում: Լիարժեք ջանք ու ժամանակ է հարկավոր, որպեսզի իրոք խորհրդակցենք միմյանց հետ, լսենք միմյանց, հասկանանք մյուսների տեսակետները և կիսվենք փորձով, բայց այդ գործընթացը հանգեցնում է ավելի ոգեշնչված որոշումների: Լինի տանը, թե մեր Եկեղեցու պարտականությունների մեջ, մեր աստվածային ներուժն իրականացնելու ամենաարդյունավետ միջոցը համատեղ աշխատելն է, որն օրհնված է քահանայության գորությամբ և իշխանությամբ մեր տարբեր, բայց փոխլրացնող դերերում:

Ինչպիսի՞ն է այդ գործընկերությունը այսօրվա ուխտի կանանց

կյանքում: Թույլ տվեք կիսվել օրինակով:

Ալիսոնը և Ջոնը ունեին գործընկերություն, որը եզակի էր: Նրանք տանդեմ հեծանիվ էին վարում կարճ և երկար մրցավազքերում: Այդ մեքենայի վրա հաջող մրցելու համար երկու վարորդները պետք է ներդաշնակության մեջ լինեն: Նրանք պետք է ճիշտ ժամանակին թեքվեն նույն ուղղությամբ: Մեկը չի կարող գերիշխել մյուսի վրա, բայց նրանք պետք է հստակ հաղորդակցվեն, և յուրաքանչյուրն անի իր բաժինը: Կապիտանը առջևում վերահսկում է, թե երբ պետք է արգելակել և երբ կանգնել: Ստոկերը հետևի մասում պետք է ուշադրություն դարձնի այն ամենին, ինչ տեղի է ունենում և պատրաստ լինի լրացուցիչ ուժ տալ, եթե նրանք մի քիչ հետ են մնում, կամ թուլացնի, եթե շատ են մոտենում մյուս հեծանվորդներին: Նրանք պետք է միմյանց աջակցեն առաջընթացի համար և հասնեն իրենց նպատակին:

Ալիսոնը բացատրեց. «Առաջին անգամ կապիտանի պաշտոնում գտնվող անձն ասում էր. «Կանգնի՛ր», երբ մենք պետք է կանգնեինք, իսկ «արգելակի՛ր», երբ մենք պետք է դադարեցնեինք վարել: Որոշ ժամանակ անց ստոկերը սովորեց զգալ, երբ կապիտանը պետք է ասեր «կանգնել» կամ «արգելակել», և ոչ մի խոսք ասելու կարիք չկար: Մենք սովորեցինք լինել ներդաշնակ, թե ինչպես էին գործերը գնում միմյանց հետ և կարողանում էինք զգալ, երբ



Պրոկո, Յուսա, ՍՄՆ

մեկը մաքառում էր և [այդ պահին] մյուսը փորձում էր բարձրացնել թույլին: Այս ամբողջը իրականում վստահության և միասին աշխատելու մասին է:¹³

Ձոնը և Ալիսոնը միասնական էին ոչ միայն, երբ վարում էին իրենց հեծանիվը, այլև միասնական էին ամուսնության մեջ: Յուրաքանչյուրն ավելի շատ էր ցանկանում մյուսի երջանկությունը, քան իր անձնականը, յուրաքանչյուրը որոնում էր բարին միմյանց մեջ և աշխատում էր հաղթահարել ոչ այնքան լավ իր մեջ: Նրանք հերթով դեկավարում էին և հերթով տալիս ավելի շատ, երբ մի գործընկերը մաքառումների մեջ էր: Յուրաքանչյուրը գնահատում էր մյուսի ներդրումները և գտնում ավելի լավ պատասխաններ իրենց մարտահրավերներին, երբ նրանք միավորում էին իրենց տաղանդները և միջոցները: Նրանք իսկապես կապված են միմյանց հետ Քրիստոսանման սիրով:

Այսօր աստվածային ձևին ավելի համահունչ դառնալով՝ շատ կարևոր է միմյանց հետ միասնաբար աշխատել՝ «առաջինը ես» հաղորդագրություններով հանդերձ, որոնք շրջապատում են մեզ: Կանայք իսկապես ունեն որոշակի աստվածային պարզանքներ¹⁴ և նրանց տրված են առանձնահատուկ պարտականություններ, բայց դրանք ավել կամ պակաս կարևոր չեն, քան տղամարդկանց պարզանքներն ու պարտականությունները: *Ամեն ինչ* նախագծված է և անհրաժեշտ՝ առաջ բերելու Երկնային Հոր աստվածային ծրագիրը՝ Նրա զավակներից յուրաքանչյուրին տալով իր աստվածային ներուժի իրականացման լավագույն հնարավորությունը:

Այսօր, «Մենք կարիք ունենք կանանց, ովքեր մեր մայր Եվայի քաջությունն ու տեսլականն ունեն»,¹⁵ որ միավորվեն իրենց եղբայրների հետ՝ դեպի Քրիստոս հոգիներ բերելու համար:¹⁶ Տղամարդիկ պետք է դառնան իսկական գործընկերներ, այլ ոչ թե ենթադրեն, որ իրենք բացառապես պատասխանատու են կամ գործում են որպես «ձևական» գործընկերներ, մինչ աշխատանքի

մեծ մասը կանայք են կատարում: Կանայք պետք է պատրաստ լինեն «անելու քայլ առաջ [և] զբաղեցնեն [իրենց] իրավացի և անհրաժեշտ տեղը»¹⁷ որպես գործընկերներ, այլ ոչ թե մտածեն, որ իրենք պետք է այդ ամենը ինքնուրույն անեն կամ սպասեն, որ իրենց ասեն, թե ինչ անեն:¹⁸

Կանանց որպես կարևոր մասնակիցներ տեսնելը, չի նշանակում ստեղծել «հավասարություն», այլ հասկանալ վարդապետական ճշմարտություն: . Այդ նպատակին հասնելու համար ծրագիր ստեղծելու փոխարեն, մենք կարող ենք ակտիվորեն աշխատել, գնահատելով կանանց, ինչպես Աստված է անում՝ որպես կարևոր գործընկերներ փրկության և վեհացման աշխատանքում:

Դուք պատրաստ եք: Արդյո՞ք կձգտենք հաղթահարել մշակութային նախապաշարմունքները և փոխարենը ընդունենք աստվածային օրինակներ և հմտություններ, որոնք հիմնված են հիմնարար վարդապետության վրա: Նախագահ Ռասել Մ. Նելսոնը հրավիրում է մեզ «քայլել ձեռք ձեռքի տված այս սրբազան աշխատանքում . . . [որպեսզի] օգնենք պատրաստել աշխարհը Տիրոջ Երկրորդ Գալուստիին»:¹⁹ Երբ անենք, մենք կսովորենք գնահատել յուրաքանչյուր անհատի ներդրումները և կմեծացնենք արդյունավետությունը, որով մենք կատարում ենք մեր աստվածային դերերը: Մենք կզգանք ավելի մեծ ուրախություն, քան երբևէ զգացել ենք:

Թող մեզանից յուրաքանչյուրն ընտրի միավորվել Տիրոջ ոգեշնչած ուղիով՝ օգնելով Նրա գործի առաջընթացին: Մեր սիրելի Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՐՈՒՄՆԵՐ

1. Տես Ծննդոց 3.1–18, Մովսես 4.1–19:
2. Տես Մովսես 5.1–12: Այս հատվածներն ուսուցանում են Ադամի և Եվայի ճշմարիտ գործընկերության մասին. նրանք միասին երեխաներ ունեցան (հատված 2), նրանք աշխատեցին միասին՝ ապահովելով իրենց և իրենց ընտանիքին (հատված 1), նրանք աղոթեցին միասին (հատված 4), նրանք հնազանդվեցին Աստծո պատվիրաններին և միասին զոհեր մատուցեցին (հատված 5), նրանք սովորեցին (հատված 4, 6–11) և միասին ուսուցանեցին Հիսուս Քրիստոսի

- սի ավետարանը իրենց երեխաներին (հատված 12):
3. Ջոզեֆ Մմիթ-Պատմություն 1.16:
 4. Joseph Smith, in Sarah M. Kimball, “Auto-Biography,” *Woman’s Exponent*, Sept. 1, 1883, 51; տես նաև *Եկեղեցու նախագահների նախաքննարկ. Ջոզեֆ Մմիթ* (2007), 451:
 5. Joseph Smith, in “Nauvoo Relief Society Minute Book,” 40, josephsmithpapers.org.
 6. See George Albert Smith, “Address to the Members of the Relief Society,” *Relief Society Magazine*, Dec. 1945, 717.
 7. See John Taylor, in Nauvoo Relief Society Minutes, Mar. 17, 1842, available at churchhistorianspress.org. Ըստ Էլիզա Ռ. Մնուոլի, Ջոզեֆ Մմիթը ուսուցանել է նաև, որ կանայք պաշտոնապես կազմակերպվել են նախորդ տնտեսություններում (see Eliza R. Snow, “Female Relief Society,” *Deseret News*, Apr. 22, 1868, 81; *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* [2011], 1–7):
 8. Տես Դավիթ Հ. Օուրս, «Բահանայության բանալիներն ու իշխանությունը», *Լիստնուս*, մայիս 2014, 49–52:
 9. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Հոգևոր զանձեր», *Լիստնուս*, նոյեմբեր 2019, 78, 79:
 10. Ռասսել Մ. Նելսոն, «Հոգևոր զանձեր», 77:
 11. «Բայց վերականգնված ավետարանն ուսուցանում է այն հավերժական գաղափարը, որ ամուսիններն ու կանայք *փոխադարձաբար կախված են* միմյանցից: Նրանք հավասար են: Նրանք գործընկերներ են» (Բրյուս Ռ. և Մարի Կ. Հեյֆն, «Անցնելով շենը և դառնալով հավասար գործընկերներ», *Լիստնուս*, օգոստոս 2007, 28):
 12. Gospel Topics, “Joseph Smith’s Teachings about Priesthood, Temple, and Women,” topics.ChurchofJesusChrist.org.
 13. Անձնական նամակագրություն:
 14. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրանք իմ քույրերին», *Լիստնուս*, նոյեմբեր 2015, 95–97:
 15. Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրանք իմ քույրերին», 97:
 16. Տես *Ընդհանուր ձեռնարկ. Ծառայել Հիսուս Քրիստոսի՝ Վերջին Օրերի Եկեղեցուն*, 1.4, ChurchofJesusChrist.org.
 17. Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրանք իմ քույրերին», 97:
 18. Իմ սիրելի՛ քույրեր, ինչպիսին էլ որ լինի ձեր կոչումը, հանգամանքները, մենք ձեր տավարությունների, մտքերի և ոգեշնչման կարիքն ունենք: Մենք ուզում ենք, որ դուք խոսեք և արտահայտվեք ձյախ ու ցցի խորհուրդներում: Մենք ուզում ենք, որ յուրաքանչյուր ամուսնացած քույր խոսի որպես «իր *սխալող բերող* և *լիստեղծ* գործընկեր», երբ միասնաբար անում ենք ձեր ընտանիքի կառավարման գործում: Լինեք ամուսնացած, թե ամուրի, քույրեր, դուք ունեք առանձնահատուկ ունակություններ և հատուկ ներդրումներ, որ ստացել էք Աստծուց որպես պարգև: Մենք՝ եղբայրներս, չենք կարող ընդօրինակել ձեր յուրահատուկ ազդեցությունը: . . .
 - . . . Մենք ձեր ուժի կարիքն ունենք» (Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրանք իմ քույրերին», 97):
 19. Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրանք իմ քույրերին», 97:

ՄՐԱՔԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Դավիթ Ն. Օհանյան
Սուրբին Խորհրդակցական



Ռաամել Մ. Ներսիսյան
Նախագահ



Հենրի Բ. Այրիկյան
Երկրորդ Խորհրդակցական

ՏԱՄՆԵՐԿՈՒ ՄՐԱՔՅԱՆՆԵՐԻ ՔԿՈՐՈՒՄ



Մ. Ռասսեյ Բաղլարյու



Տեֆիր Ռ. Հոլլանտ



Դիտեր Ֆ. Ուկարոյֆ



Դեյվիդ Ա. Բեթևար



Քվենթին Լ. Քուք



Դ. Թոդ Քրիստոֆերսոն



Նիլ Լ. Սարգսյան



Ռոնալդ Ա. Ռաբբանտ



Գարի Ի. Սթրիվանսոն



Դեյվ Գ. Ոննլանտ



Տեֆիր Վ. Գոլգ



Ուլիսես Ստարեն

ՅՈՒԹԱՆԱՍՏՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Լ. Ութիկ Զլեթոն



Պատրիկ Քիրոն



Քարլ Բ. Քուք



Ռոբերտ Ա. Քար



Տերենս Մ. Վիլսոն



Հուն Ա. Թեքսելյուա



Կարոս Ա. Գոդր

ԲԱՐՉԱԳՈՒՅՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՐ ՅՈՒՆԱՄԱՌՈՒԱԿԱՆՆԵՐ

					
Սարգիսյան Ա. Նորմանատիս	Վերնիկովի Թ. Քիշուր	Քրիստաֆի Գրիգոր	Հուդոյի Հ. Մարտիրոս	Լեյթեն Դ. Փերցիս	Մոխան Վիլանտես
					
Ռուբեն Վ. Այրի	Վաների Վ. Թորոն	Վուրջեն Ֆ. Գոնզալես	Ջեյմս Բ. Մարտիրոս	Փոլ Բ. Փայլեր	Խոան Դաբրե Վիլար
					
Հուն Լ. Արևստ	Ջ. Ղևն Թորոն	Բրուք Դ. Նեյս	Ռիկարդ Ջ. Մեյլ	Ջոն Զ. Փիլգրիմ	Տակաչի Վարդ
					
Խորեն Ս. Ալմարադ	Ֆրանս Ի. Վուտա	Քրիստին Ա. Համիլտոն	Ջոն Ա. Մալքոն	Ռաֆայել Ի. Փիլո	Թանիելա Բ. Վալդր
					
Յան Ա. Արտեր	Լեգրան Դ. Քրիտիկ Կրո.	Ալլեն Դ. Նեյսի	Ջալ Ա. Մալքե	Ջան Դ. Ուսպեն	Ալան Դ. Ուրբեր
					
Վ. Սարկ Բաճեք	Բենջամին Ռեշոյան	Մեթու Ա. Հովանի	Հուրտ Մոնտան	Լին Գ. Ռոբին	Չի Հոկ (Սեմ) Վոկ
					
Խորեն Թ. Բանդար	Քելվին Դ. Դաքս	Վիկտոր Վ. Ջեյմս	Մարտին Բ. Նաչ	Սիրո Շալ	Խորեն Ֆ. Ջեբար
					
Դեյվիդ Ա. Բաքստեր	Երվանդ Գյոբ	Դեյվիդ Փ. Հոնդեր	Փիլիպ Կ. Մառտին	Գարի Բ. Սարին	Վազգիտիկ Յամաշիտա
					
Ռանդալ Վ. Բենք	Տիմոթի Ջ. Դայն	Ջեյմս Դ. Յաչի	Կ. Բրեք Նաթան	Էլան Ա. Շուրց	Էլան Ա. Շուրց
					
Խորեն Թ. Բանդար	Քելվին Դ. Դաքս	Վիկտոր Վ. Ջեյմս	Մարտին Բ. Նաչ	Սիրո Շալ	Խորեն Ֆ. Ջեբար
					
Ռանդալ Վ. Բենք	Տիմոթի Ջ. Դայն	Ջեյմս Դ. Յաչի	Կ. Բրեք Նաթան	Էլան Ա. Շուրց	Էլան Ա. Շուրց

ՆԱՏԻՎԱԿԱՆՆԵՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՏՈՒԹՅՈՒՆ

		
Դիմ Ս. Դեյվիս Մուսցին Խորհրդական	Ջեռարդ Կրեյն Նախագահող Եպիսկոպոս	Վ. Քրիստֆեր Վարդ Խորհրդական

ԲԱՐՉԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԱՆՆԵՐ

									
Միլոն Վանդրո Մուսցին Խորհրդական	Սարկ Լ. Շոյ Նախագահ	Փան Է. Նյուտան Եպիսկոպոս	Միշել Քրից Մուսցին Խորհրդական	Բոնիշ Շ. Քորոն Նախագահ	Բիլի Քրիվեն Եպիսկոպոս	Շերոն Յոնան Մուսցին Խորհրդական	Ջիմ Բ. Բիլլան Նախագահ	Ռեյնադ Է. Ընթրոն Խորհրդական	Լյուս Լ. Նարկեն Մուսցին Խորհրդական

		
Միստր Ս. Քրիտիկ Մուսցին Խորհրդական	Ստիվեն Ջ. Աստ Նախագահ	Բրեյդ Դ. Վիկտոր Եպիսկոպոս Խորհրդական



Նախագահ Հենրի Բ. Այրիկզ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդակալ

Նա գնում է մեր առջևից

Տերը առաջնորդում է Իր ավետարանի վերականգնումը և Իր Եկեղեցին: Նա կատարելապես գիտի ապագան: Նա հրավիրում է ձեզ գործի անցնել:

Իմ սիրելի՛ եղբայրներ ու քույրեր, ես երախտապարտ եմ, որ ձեզ հետ մասնակցում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու այս զերագույն համաժողովին: Հրավիրելով մեզ մտորելու, թե արդի տնտեսության Իր Եկեղեցու Տիրոջ վերականգնումը ինչպես է օրհնել մեզ և մեր հարազատներին, նախագահ Ասատկ Մ. Նելսոնը

խոստացել էր, որ մենք կունենանք ոչ միայն հիշարժան, այլ նաև անմոռանալի փորձառություն:

Ես հիշարժան փորձառություն եմ ունեցել, ինչը, համոզված եմ, դուք էլ եք ունեցել: Իսկ թե անմոռանալի կլինի այն, թե ոչ, կախված է յուրաքանչյուրիցս: Ինձ համար այն կարևոր է, քանի որ այս համաժողովին նախապատրաստվելու

փորձառությունը փոխել է ինձ, և ես ցանկանում եմ, որ այն շարունակական լինի: Թույլ տվեք բացատրել:

Իմ նախապատրաստության ժամանակ ես կարդացի Վերականգնման մասին մի արձանագրություն: Ես բազմաթիվ անգամներ կարդացել էի այդ իրադարձության մասին՝ որպես մի կարևոր ժողովի հաշվետվություն, որին մասնակցել էր Ջոզեֆ Սմիթը՝ Վերականգնման մարզարեն: Բայց այս անգամ այդ արձանագրության մեջ ես նկատեցի, թե ինչպես է Տերը Իր եկեղեցում առաջնորդում մեզ՝ Իր աշակերտներին: Ես նկատեցի, թե մահկանացուներին համար ինչ նշանակություն ունի, որ մեզ առաջնորդում է աշխարհի Փրկիչը՝ Արարիչը, ով գիտի անցյալի, ներկայի և ապագայի բոլոր բաները: Նա ուսուցանում է քայլ առ քայլ և առաջնորդում է մեզ առանց ստիպելու:

Իրադարձությունը, որը ես նկարագրում եմ, տեղի է ունեցել վերականգնման կարևոր պահին: Հանգստության օր էր՝ 1836 թ. ապրիլի 3-ը, Օհայոյի Կիրթլենդի տաճարում, նվիրագործումից յոթ օր անց: Աշխարհի պատմության այդ փառահեղ պահը Ջոզեֆ Սմիթը բացատրել է պարզ խոսքերով: Այդ իրադարձության մեծ մասը արձանագրված է Վարդապետություն և Ուխտեր 110-րդ բաժնում.

«Կեսօրին ես օգնեցի մյուս Նախագահներին՝ Տիրոջ ընթրիքը Եկեղեցուն բաժանելիս, այն ստանալով Տասներկուսից, որոնց արտոնությունն էր այդ օրը պաշտոնավարել սրբազան սեղանի մոտ: Մատուցելով այս ծառայությունն իմ եղբայրներին՝ ես վերադարձա բեմ, իջեցված վարագույրների ետևը, և խոնարհվեցի, Օլիվեր Քատլերի հետ, հանդիսավոր և ցածրաձայն աղոթքի մեջ: Աղոթքից վեր կենալուց հետո, հետևյալ տեսիլքը բացվեց մեզ երկուսիս:»¹

Վարագույրը հեռացվեց մեր մոտքերից, և մեր հասկացողության աչքերը բացվեցին:

Մենք տեսանք Տիրոջը, ամբիոնի բազրիքի վրա կանգնած, մեր առաջ. և նրա ոտքերի տակ

ՀԻՍՏՈՆ ԲՈՒԿՍԵՐՆԵՐ ՀԱՅՏԱԿՈՒՄԷ ԵՄՐԱՎՈՐԷ ՔՈՅՏԵՑ ՍՈՒՊՈՐՏ ԵՎ ՕՒԿՆԵՐ ԶԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐԸ



աղյուսապատ սաթագույն հատակ էր մաքուր ոսկուց:

Նրա աչքերը կարծես կրակի բոցեր լինեին. նրա գլխի մազերը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը. նրա դեմքը փայլում էր արևի պայծառությունից վառ. և նրա ձայնն ասես շառաչում մեծ ջրերի հնչում լինեք, այսինքն՝ Եհովայի ձայնը, ասելով.

Ես եմ առաջինը և վերջինը. ես նա եմ, ով ապրում է, ես նա եմ, ով սպանվել էր. ես ձեր բարեխոսն եմ Հոր մոտ:

Ահա, ձեր մեղքերը ներված են ձեզ. դուք մաքուր եք իմ առաջ. հետևաբար, բարձրացրեք ձեր գլուխները և ցնծացեք:

Թող ձեր եղբայրների սրտերը ցնծան, և թող իմ ողջ ժողովրդի սիրտը ցնծա, որ իրենց զորությամբ կառուցել են այս տունն իմ անվան համար:

Քանզի ահա, ես ընդունել եմ այս տունը, և իմ անունը պիտի լինի այստեղ. և ես ողորմությամբ կհայտնվեմ իմ ժողովրդին այս տանը:

Այո, ես կհայտնվեմ իմ ծառաներին և կխոսեմ նրանց հետ իմ իսկ ձայնով, եթե իմ ժողովուրդը պահի իմ պատվիրանները և չպղծի այս սուրբ տունը:

Այո, հազարավորների և բյուրավորների սրտերը մեծապես կցնծան այն օրհնությունների հետևանքով, որոնք պիտի թափվեն, և օծման հետևանքով, որով իմ ծառաներն օծվել են այս տանը:

Եվ այս տան համբավը պիտի տարածվի օտար երկրներում. և սա է սկիզբն այն օրհնության, որը պիտի թափվի իմ ժողովրդի գլխին: Ճիշտ այդպես: Ամեն:

Այս տեսիլքը փակվելուց հետո երկինքները կրկին բացվեցին մեզ համար. և Մովսեսը հայտնվեց մեր առաջ և հանձնեց մեզ աշխարհի չորս մասերից Իսրայելը հավաքելու և հյուսիսային երկրից տասը ցեղերին առաջնորդելու բանալիները:

Դրանից հետո Եղիաբը հայտնվեց և հանձնեց Մբրահամի ավետարանի տնտեսությունը, ասելով, որ մեզանով և մեր հետևորդներով

պիտի օրհնվեն մեզ հաջորդող բոլոր սերունդները:

Այս տեսիլքը փակվելուց հետո, մեկ այլ վեհ և փառահեղ տեսիլք պայթեց մեր առաջ. քանզի Եղիա մարգարեն, որն առանց մահ ճաշակելու երկինք էր վերցվել, կանգնեց մեր առաջ և ասաց.

«Ահա, ժամանակը լիովին մոտեցել է, որը խոսվել է Մաղաքիայի բերանով, – վկայելով, որ նա [Եղիան] կուղարկվի, նախքան Տիրոջ գալստյան մեծ և ահեղ օրը, – Հայրերի սրտերը դեպի զավակները դարձնելու համար, և զավակներինը՝ դեպի հայրերը, չլինի թե ողջ երկիրը զարկվի անեծքով, –

Հետևաբար, այս տնտեսության բանալիները հանձնվում են ձեր ձեռքը. և դրանով դուք կարող եք իմանալ, որ Տիրոջ մեծ և ահեղ օրը մոտ է, նույնիսկ դռների մոտ»:²

Այսպիսով, ես բազմաթիվ անգամներ կարդացել եմ այս պատմությունը: Ես զգացել եմ Մուրբ Հոգու հավաստիացումը, որ պատմությունը ճշմարիտ է: Բայց երբ ուսումնասիրում ու նախապատրաստվում էի այս համաժողովին, ես ավելի մեծ պարզությամբ նկատեցի Տիրոջ զորությունը Իր աշակերտներին Իր աշխատանքի մանրամասներում առաջնորդելիս:

Կիրթլենդի տաճարում Մովսեսի կողմից Իսրայելի տան հավաքման բանալիները Ջոզեֆին հանձնելուց յոթ տարի առաջ, Մորմոնի Գրքի տիտղոսաթերթից Ջոզեֆն իմացավ, որ գիրքը պետք է «ցույց տա Իսրայելի տան մնացորդին, . . . որպեսզի նրանք կարողանան իմանալ Տիրոջ ուխտերը, որ նրանք վտարված չեն հավիտյան»: 1831 թվականին Տերը Ջոզեֆին ասաց, որ Իսրայելի հավաքումը սկսվելու է Կիրթլենդից, «Եվ այնտեղից [Կիրթլենդից], նրանք, ում ես կամենամ, առաջ պիտի գնան բոլոր ազգերի մեջ, . . . քանզի Իսրայելը պիտի փրկվի, և ես պիտի առաջնորդեմ նրանց»:³

Չնայած միսիոներական աշխատանքը անհրաժեշտ էր Իսրայելը հավաքելու համար, Տերը իր առաջնորդներին ոգեշնչեց ուսուցանել Տասներկուսին, որոնք մեր վաղ

միսիոներների առաջնեկներից էին. «Հիշեք, մինչև չստանաք ձեր օժտումը, դուք չպետք է գնաք ազգերի մեջ քարոզելու»:⁴

Տիրոջ քայլ առ քայլ ծրագրում Կիրթլենդի տաճարը, կարծես, կարևոր էր ամրվազն երկու պատճառով. նախ՝ Մովսեսը սպասում էր տաճարի ավարտմանը, որպեսզի վերականգնի Իսրայելի հավաքման բանալիները: Եվ երկրորդ՝ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Մմիթը ուսուցանել է, որ «Տերը պատվիրեց Սրբերին կառուցել մի տաճար [Կիրթլենդի տաճարը], որում նա կարող էր հանձնել իշխանության բանալիները, և որտեղ առաքյալները կարող էին օժտվել և պատրաստվել վերջին անգամ այգին էտելու»:⁵ Չնայած տաճարային օժտումը այսօր մեզ հայտնի ձևով Կիրթլենդի տաճարում չի կատարվել, որպես մարգարեությունների իրականացում, այնտեղ սկսեցին ներկայացվել նախնական տաճարային արարողություններ, ինչպես նաև հոգևոր դրսևորումների մեծ հոսք եղավ, որը առաքելության կանչվածներին զինեց խոստացված օժտմամբ՝ «ի վերուստ զորությամբ»,⁶ որի շնորհիվ միսիոներական ծառայությունը մեծ հավաքման արդյունք տվեց:

Երբ Իսրայելի հավաքման բանալիները հանձնվեցին Ջոզեֆին, Տերը ոգեշնչեց մարգարեին՝ Տասներկուսի անդամներին ուղարկել առաքելության: Երբ ուսումնասիրում էի, ինձ համար պարզ դարձավ, որ Տերը մանրակրկիտ նախապատրաստել էր Տասներկուսին՝ առաքելության գնալու այլ երկրներ, որտեղ մարդիկ պատրաստ էին նրանց



Սան Պաոլո, Բրազիլիա



հավատալու և աջակցելու: Ժամանակի ընթացքում նրանց միջոցով հազարավոր մարդիկ եկան Տիրոջ վերականգնված եկեղեցի:

Ըստ մեր արձանագրությունների՝ Բրիտանական կղզիներում Տասներկուսի երկու առաքելությունների ընթացքում մոտ 7,500–8000 մարդ էր մկրտվել: Այն միսիոներական աշխատանքի հիմք դրեց Եվրոպայում: 19-րդ դարի վերջին մոտ 90 000 մարդ էր հավաքվել Սմերիկայում, որոնց մեծ մասը Բրիտանական կղզիներից ու Սկանդինավիայից էին:⁷ Տերը ոգեշնչեց Ջոզեֆին և այդ հավատարիմ միսիոներներին, ովքեր գնացին աշխատելու, և այնպիսի բերք հավաքեցին, որն այդ ժամանակ, կարծես, իրենց ուժերից վեր էր: Բայց իր կատարյալ կանխատեսության և նախապատրաստության շնորհիվ Տերը այն հնարավոր դարձրեց:

Հիշում եք Վարդապետություն և Ուխտերի ակնհայտորեն պարզ ու գրեթե բանաստեղծական խոսքերը.

«Ահա, ժամանակը լիովին մոտեցել է, որը խոսվել է Մաղաքիայի բերանով, – վկայելով, որ նա [Եղիան] կողարկվի, նախքան Տիրոջ գալստյան մեծ և ահեղ օրը, –

Հայրերի սրտերը դեպի զավակները դարձնելու համար, և զավակներինը՝ դեպի հայրերը, չլինի թե ողջ երկիրը զարկվի անեծքով, –

Հետևաբար, այս տնտեսության բանալիները հանձնվում են ձեր ձեռքը, և դրանով դուք կարող եք իմանալ, որ Տիրոջ մեծ և ահեղ օրը մոտ է, նույնիսկ դռների մոտ»:⁸

Ես վկայում եմ, որ Տերը տեսել է հեռու ապագան, և թե ինչպես է Նա մեզ առաջնորդելու, որպեսզի օգնենք Իրեն իրականացնելու Իր նպատակները վերջին օրերին:

Տարիներ առաջ, երբ ես ծառայում էի Նախագահող եպիսկոպոսությունում, ինձ հանձնարարվել էր վերահսկել այն նախագծման և զարգացման խումբը, որը ստեղծեց այն, ինչ մենք անվանեցինք «FamilySearch» վեբ կայք: Ես զգուշանում եմ ասել, որ «վերահսկել եմ» նրա ստեղծումը, ոչ թե «ուղղորդել եմ» այն: Շատ փայլուն մարդիկ թողեցին իրենց կարիերան և եկան ստեղծելու այն, ինչ ցանկանում էր Տերը:

Առաջին Նախագահությունը նպատակ էր դրել նվազեցնել արարողությունների կրկնօրինակումը: Նրանց հիմնական մտահոգությունը անձի համար կատարված արարողությունները ստուգելու համակարգի բացակայությունն էր: Երկար ժամանակ, որն ինձ տարիներ էր թվում, Առաջին Նախագահությունը ինձ հարցնում էր. «Ե՞րբ է պատրաստ լինելու»:

Մեծ կարողություն ունեցող մարդկանց աղոթքի, ջանասիրության և անձնական զոհաբերության շնորհիվ հանձնարարությունը կատարվեց: Այն իրականացավ քայլ առ քայլ: Առաջին խնդիրը «FamilySearch» կայքը դյուրին դարձնելն էր նրանց համար, ովքեր դժվարանում էին համակարգչով աշխատել: Ավելի շատ փոփոխություններ եղան, և ես գիտեմ, որ դեռ

շատ կլինեն, քանի որ, լուծելով մեկ ոգեշնչված խնդիր, մենք դուռ ենք բացում ապագայի հավասարապես կարևոր, բայց դեռևս անտեսանելի զարգացումների հայտնության համար: Այսօր տեսնում ենք, որ «FamilySearch» կայքը ծառայում է ոչ միայն արարողությունների կրկնօրինակումից խուսափելու հարթակ, այլև դառնում է Տիրոջ Վերականգնման աշխատանքի մեկ բաժինը:

Տերը թույլ է տալիս բարելավումներ կատարել, օգնելով մարդկանց ձեռք բերել ծանոթության զգացողություն և նույնիսկ սեր՝ իրենց նախնիների հանդեպ, և տաճարային արարողություններ կատարել նրանց համար: Այժմ, Տիրոջ կանխագիտության համաձայն, երիտասարդները դառնում են իրենց ծնողների և ծխի անդամների համակարգչային մարզիչները: Բոլորը մեծ ուրախություն են գտնում այս ծառայության մեջ:

Եղիայի ոգին փոխում է երիտասարդների ու մեծահասակների, զավակների ու ծնողների, թոռների և պապ ու տատերի սրտերը: Տաճարները շուտով կրկին ուրախությամբ կծրագրեն մկրտության հնարավորություններ և այլ սրբազան արարողություններ: Մեր նախնիներին ծառայելու և ծնողներին զավակների հետ կապելու ցանկությունը աճում է:

Տերը կանխատեսել էր այդ ամենի գալուստը: Նա քայլ առ քայլ իրականացվող ծրագիր ունի դրա համար, ինչպես որ կատարել է մյուս փոփոխությունները Եկեղեցում: Նա հավատարիմ մարդիկ էր մեծացրել ու պատրաստել, ովքեր ընտրեցին դժվար գործը լավ ձևով կատարել: Նա միշտ համբերատար սիրով օգնում է մեզ սովորել «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ»:⁹ Նա հաստատուն է իր մտադրությունների ժամանակացույցի և հերթականության հարցում, բայց և այնպես հավաստիացնում է, որ զոհաբերությունը հաճախ անսպասելի օրինություն է բերում:

Ես ավարտում եմ Տիրոջը երախտագիտություն հայտնելով, որ

ոգեչնչել էր Նախագահ Նելսոնին հրավիրել ինձ զոհաբերություն անել՝ նախապատրաստվելով այս համաժողովին: Նախապատրաստության յուրաքանչյուր ժամ, յուրաքանչյուր աղոթք օրհնություն է բերել ինձ:

Ես հրավիրում եմ իմ ուղերձը լսողներին ու կարդացողներին հավատալ, որ Տերը առաջնորդում է Իր ավետարանի Վերականգնումը և Իր Եկեղեցին: Նա գնում է մեր առջևից: Նա կատարելապես գիտի ապագան: Նա հրավիրում է ձեզ գործի անցնել: Նա ընկերանում է ձեզ գործի ընթացքում: Նա ծրագիր ունի ձեր ծառայության համար: Եվ անգամ զոհաբերությամբ ծառայելիս, դուք ուրախություն կգտնեք, երբ օգնում եք մարդկանց բարձրանալ և պատրաստ լինել Նրա Գալուստին:

Ես վկայում եմ, որ Հայր Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Մա Նրա Եկեղեցին է: Նա ճանաչում և սիրում է ձեզ: Նա առաջնորդում է ձեզ: Նա ձեզ համար ուղի է պատրաստել: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՍԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 110, բաժնի նախադրություն: տես նաև Joseph Smith, "History, 1838–1856, volume B-1 [1 September 1834–2 November 1838]," Apr. 3, 1836, 727, josephsmithpapers.org;
2. Վարդապետություն և Ուխտեր 110.1–16:
3. Karl Ricks Anderson, *The Savior in Kirtland: Personal Accounts of Divine Manifestations* (2012), 276; Վարդապետություն և Ուխտեր 38.33:
4. Տրվել է Օլիվեր Քատլերիի առաքելական հանձնարարության մեջ, "Minute Book 1," Feb. 21, 1835, 162, josephsmithpapers.org;
5. Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie (1955), 2:234.
6. Վարդապետություն և Ուխտեր 38.32:
7. Stu James B. Allen, Ronald K. Esplin, and David J. Whittaker, *Men with a Mission: The Quorum of the Twelve Apostles in the British Isles, 1837–1841* (1992), 53, 302; Brandon S. Plewe, ed., *Mapping Mormonism: An Atlas of Latter-day Saint History* (2012), 104:
8. Վարդապետություն և Ուխտեր 110.14–16:
9. 2 Նեփի 28.30:



Նախագահ Դալլին Հ. Օուքս
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Մեկքիսեղեկյան քահանայությունը և բանալիները

Եկեղեցում քահանայության իշխանությունը գործադրվում է քահանայության ղեկավարի առաջնորդությամբ, ով կրում է տվյալ քահանայության բանալիները:

Ես նախընտրեցի խոսել Աստծո քահանայության մասին: Այս թեմայով արդեն խոսել են նախորդ խոսնակներից երեքը, որոնք մեզ ուսուցանել են, թե ինչպես է քահանայությունն օրհնում կանանց, երիտասարդ կանանց և երիտասարդ տղամարդկանց:

Քահանայությունը սուրբ գործություն և իշխանություն է, որը կրում են վստահության հիմքերով, և այն պետք է օգտագործվի Աստծո գործի համար՝ ի օգուտ Նրա բոլոր զավակների: *Քահանայությունը* մարդիկ չեն, ովքեր կարգվել են քահանայության պաշտոնի, կամ նրանք, ովքեր գործադրում են քահանայության իշխանությունը: Մարդիկ, ովքեր կրում են քահանայությունը, «քահանայություն»-ը չեն: Վարզված մարդկանց մենք չպետք է վերաբերվենք որպես *քահանայության*, պատշաճ կլինի նրանց վերաբերվել որպես քահանայության *կրողների*:

Քահանայության գործությունը գոյություն ունի և՛ Եկեղեցում, և՛

ընտանեկան միավորում: Մակայն քահանայության գործությունը և քահանայության իշխանությունը տարբեր կերպ են գործում Եկեղեցում և ընտանիքում: Այդ ամենը կարգավորվում է Տիրոջ հիմնադրած սկզբունքների համաձայն: Աստծո ծրագրի նպատակն է՝ առաջնորդել Իր զավակներին դեպի հավերժական կյանք: Մահկանացու ընտանիքները էական դեր ունեն այդ ծրագրում: Եկեղեցին գոյություն ունի, որպեսզի ապահովի վարդապետությամբ, իշխանությամբ և արարողություններով, որոնք անհրաժեշտ են ընտանեկան հարաբերությունները հավերժության համար պատրաստելու համար: Այսպիսով, ընտանեկան միավորը և Հիսուս Քրիստոսի Եկեղեցին միմյանց ամրապնդող փոխհարաբերություններ ունեն: Քահանայության օրհնությունները, ինչպես օրինակ ավետարանի լրիվությունը և այնպիսի արարողությունները, ինչպիսիք

են մկրտությունը, հաստատումը, Մուրբ Հոգու պարզև ստացումը, տաճարային օժտումը և հավերժական ամուսնությունը, մատչելի են թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց:¹

Քահանայությունը, որի մասին խոսում ենք այստեղ, Մելքիսեդեկյան Քահանայությունն է, որը վերականգնվել է ավետարանի վերականգնման սկզբում: Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին ձեռնադրվեցին Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից, ովքեր հայտարարեցին, որ «կրում են արքայության և ժամանակների լրության տնտեսության բանալիները» (Վարդապետություն և Ուխտեր 128.20): Այս ավագ առաքյալները այդ իշխանությունը ստացել էին անձամբ Փրկիչից: Քահանայության մյուս բոլոր իշխանությունները կամ պաշտոնները Մելքիսեդեկյան Քահանայության հավելումներն են (տես Վարդապետություն և Ուխտեր 107.5), քանի որ այն «կրում է նախագահելու իրավունքը և գորություն ու իշխանություն ունի եկեղեցու բոլոր պաշտոնների վրա, աշխարհի բոլոր դարաշրջաններում» (Վարդապետություն և Ուխտեր 107.8):

Եկեղեցում ավելի բարձր՝ Մելքիսեդեկյան Քահանայության և ավելի ցածր՝ Միսիսեդեկյան Քահանայության իշխանությունը գործադրվում է քահանայության ղեկավարի՝ օրինակ, եպիսկոպոսի կամ նախագահի կողմից, ով կրում է տվյալ քահանայության բանալիները: Որպեսզի հասկանանք եկեղեցում քահանայության իշխանության գործադրումը, մենք պետք է հասկանանք քահանայության բանալիների սկզբունքը:

Թագավորության Մելքիսեդեկյան Քահանայության բանալիները շնորհիվ էին Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, բայց դրանով չէր ավարտվել քահանայության բանալիների վերականգնումը: Քահանայության որոշ բանալիներ տրվեցին ավելի ուշ: Ժամանակի այս տնտեսությունում, Կիրթլենդում (Օհայո) առաջին տաճարի նվիրագործումից հետո, երեք

մարգարեներ՝ Մովսեսը, Եղիասը և Եղիան, վերականգնեցին «այս տնտեսության բանալիները», այդ թվում՝ Բարայելի հավաքման և Տիրոջ տաճարների աշխատանքի բանալիները (տես Վարդապետություն և Ուխտեր 110), ինչպես Նախագահ Այրինգը քիչ առաջ համոզիչ կերպով նկարագրեց:

Բանալիների գործածման ամենածանոթ օրինակը՝ քահանայության արարողությունների կատարումն է: Արարողությունը հանդիսավոր գործողություն է, որը նշանակում է ուխտերի կապում և օրհնությունների խոստում: Եկեղեցում բոլոր արարողությունները կատարվում են քահանայության ղեկավարի իշխանության ներքո, ով կրում է այդ արարողության բանալիները:

Արարողությունը մեծամասամբ կատարում են քահանայության պաշտոնում կարգված անձինք, ովքեր գործում են քահանայության բանալիները կրողի ղեկավարության ներքո: Օրինակ՝ Միսիսեդեկյան Քահանայության տարբեր պաշտոնների կրողները կատարում են հաղորդության արարողությունը եպիսկոպոսի բանալիների և առաջնորդության ներքո, ով կրում է Միսիսեդեկյան Քահանայության բանալիները: Նույն սկզբունքը վերաբերում է քահանայության արարողություններին, որոնցում կանայք են ծառայում տաճարում: Չնայած կանայք քահանայության պաշտոն չեն կրում, նրանք կատարում են տաճարային սրբազան արարողություններ տաճարի նախագահի իշխանության ներքո, ով կրում է տաճարի արարողությունների բանալիները:

Բանալիները կրողի ղեկավարության ներքո քահանայության իշխանության մեկ այլ օրինակ են կանայք և տղամարդիկ, ովքեր կանչված են ավետարանի ուսուցանելու համար՝ լինի դա դասարաններում, տեղական ծխերում, թե միսիսեդեկյան տարածքում: Մեկ այլ օրինակ են նրանք, ովքեր ծխում կանչված են ղեկավար պաշտոնում և ղեկավարելու ընթացքում

գործադրում են քահանայության իշխանությունը, ելնելով իրենց կոչումներից, ձեռնադրված լինելով, ինչպես նաև ղեկավարվելով քահանայության ղեկավարի կողմից, ով կրում է բանալիները ծխում կամ ցցում: Այսպես է գործում քահանայության իշխանությունն ու գորությունը, և այսպես են այն վայելում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:²

Քահանայության իշխանությունը նաև գործադրվում է, և նրա օրհնությունները հասանելի են դառնում վերջին օրերի սրբերի ընտանիքներում: Ընտանիք ասելով ես նկատի ունեմ ամուսնացած քահանայություն կրող տղամարդուն և կնոջը և նրանց երեխաներին: Ես նաև ներառում եմ իդեալական հարաբերությունների տարատեսակները, որոնք առաջանում են մահվան կամ ամուսնալուծության պատճառով:

Այն սկզբունքը, որ քահանայության իշխանությունը կարող է գործադրվել միայն մեկի ղեկավարության ներքո, ով կրում է այդ գործառնության բանալիները, առանցքային է եկեղեցում, բայց կիրառելի չէ ընտանիքում: Օրինակ, հայրը նախագահում է և գործադրում քահանայությունը իր ընտանիքում քահանայության իշխանությամբ, որն ինքը կրում է: Նա չունի քահանայության բանալիները կրողի ղեկավարման կամ հաստատման կարիքը, որպեսզի կատարի իր ընտանեկան տարբեր գործառնությունները: Այդ գործառնություններն են՝ խորհուրդ տալ ընտանիքի անդամներին, անցկացնել ընտանեկան ժողովներ, քահանայության օրհնություններ տալ կնոջն ու երեխաներին և առողջության օրհնություններ տալ ընտանիքի անդամներին կամ ուրիշներին:³ Եկեղեցու իշխանավորները ուսուցանում են ընտանիքի անդամներին, սակայն չեն ուղղորդում քահանայության իշխանության գործադրումն ընտանիքում:

Նույն սկզբունքը կիրառվում է այն դեպքում, երբ հայրը

բացակայում է, և մայրն է ընտանիքի ղեկավարը: Նա նախագահում է իր տանը և նպաստում է, որ քահանայության գործությունն ու օրհնությունները հասանելի լինեն իր ընտանիքում իր օժտման և տաճարում իր կնքման շնորհիվ: Թեև նա լիազորված չէ քահանայության օրհնություններ տալ, որոնք կարող է տալ միայն քահանայության որոշակի պաշտոն ունեցողը, սակայն նա կարող է կատարել ընտանիքի ղեկավարման մյուս բոլոր գործառնությունները: Դա անելով, նա գործադրում է քահանայության գործությունը երեխաների օգտի համար, որոնք ընտանիքում իր նախագահության ներքո են:⁴

Եթե հայրերը մեծարեն քահանայությունն իրենց ընտանիքներում, դա ավելի շատ առաջ կտանի Եկեղեցու առաքելությունը, քան մյուս գործառնությունները, որ նրանք անում են: Մելքիսեդեկյան Քահանայություն կրող հայրերը պետք է գործադրեն իրենց իշխանությունը «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով» (Վարդապետություն և Ուխտեր 121.41): Բարձր մակարդակով քահանայության իշխանության գործադրումը շատ կարևոր է ընտանիքում: Քահանայություն կրողները պետք է նաև պահեն պատվիրանները, որպեսզի նրանք ունենան քահանայության գործությունը՝ օրհնություններ տալու իրենց ընտանիքի անդամներին: Նրանք պետք է զարգացնեն ընտանեկան սիրալիր հարաբերություններ, որպեսզի ընտանիքի անդամները ցանկանան օրհնություն խնդրել նրանցից: Եվ ծնողները պետք է խրախուսեն, որ ընտանիքում քահանայության շատ օրհնություններ տրվեն:⁵

Այս համաժողովի օրերին, երբ մենք ապաստան ենք փնտրում ավերիչ համավարակով պայմանավորված մեր մահկանացու մտահոգություններից, մեզ ուսուցանում են հավերժության մեծ սկզբունքները: Ես հորդորում եմ յուրաքանչյուրիս, որ մեր աչքը «պարզ» լինի՝ ստանալու հավերժության այս



ճշմարտությունները, որպեսզի մեր մարմինը «լցված լինի լույսով» (3 Նեփի 13.22):

Աստվածաշնչում և Մորմոնի Գրքում զետեղված, բազմությանն ուղղված Իր քարոզում Փրկիչն ուսուցանել է, որ մահկանացու մարմինները կարող են լի լինել լույսով կամ խավարով: Մենք, իհարկե, ցանկանում ենք լույսով լի լինել, և մեր Փրկիչն ուսուցանել է մեզ, թե ինչպես կարող ենք դա անել: Մենք պետք է լսենք հավերժության ճշմարտությունների մասին ուղերձները: Նա օգտագործել է աչքի օրինակը, որի միջոցով մենք լույս ենք լցնում մեր մարմնի մեջ: Եթե մեր աչքը «պարզ» լինի, այլ կերպ ասած, եթե մենք կենտրոնանում ենք հավերժական լույս և հասկացողություն ստանալու վրա, ապա ինչպես Նա բացատրել է. «քո ամբողջ մարմինը լցված կլինի լույսով» (Մատթեոս 6.22, 3 Նեփի 13.22): Բայց եթե մեր «աչքը չար լինի», այսինքն, երբ մենք չարն ենք փնտրում և մեր մարմինը դրանով ենք լցնում, ապա Նա զգուշացրել է. «քո ամբողջ մարմինը լցված կլինի խավարով» (հատված 23): Այլ խոսքերով, մեր մարմնի լույսը կամ խավարը կախված է նրանից, թե ինչպես ենք մենք տեսնում, կամ ստանում հավերժական այն

ճշմարտությունները, որոնք մեզ ուսուցանվում են:

Մենք պետք է հետևենք Փրկիչի հրավերին՝ փնտրել և խնդրել, որ հասկանանք հավերժության ճշմարտությունները: Նա խոստանում է, որ մեր Երկնային Հայրը ցանկանում է բոլորին ուսուցանել իրենց փնտրած ճշմարտությունները (տես 3 Նեփի 14.8): Եթե մենք դա ենք ցանկանում, և մեր աչքը «պարզ» է դրանք ստանալու համար, Փրկիչը խոստանում է, որ հավերժության ճշմարտությունները «կբացվեն» մեզ համար (տես 3 Նեփի 14.7-8):

Հակառակ դրան, սատանան ձգտում է շփոթեցնել մեր մտածողությունը կամ մոլորության մեջ զգել մեզ կարևոր հարցերի շուրջ, որոնցից են Աստծո քահանայության գործառնությունները: Փրկիչը զգուշացրել է մեզ. «Զգուշացեք կեղծ մարգարեներից, ովքեր գալիս են ձեզ մոտ ոչխարների հանդերձներով, բայց ներսից նրանք հոշոտող գայլեր են» (3 Նեփի 14.15): Նա այս հուշումն է տվել, որպեսզի օգնի մեզ ընտրել ճշմարտությունը տարբեր ուսմունքներից, որոնք կարող են շփոթեցնել մեզ. «Դուք պիտի ճանաչեք նրանց իրենց պտուղներից» (3 Նեփի 14.16): «Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը բարի պտուղ բերել» (հատված 18): Հետևաբար, մենք պետք է նայենք արդյունքներին՝ այսինքն, այն սկզբունքների «պտուղներին», որոնք մեզ ուսուցանվում են, և մարդկանց, ովքեր ուսուցանում են: Մա լավագույն պատասխանն է այն բազմաթիվ առարկություններին, որոնք մենք լսում ենք Եկեղեցու, նրա վարդապետությունների, քաղաքականության և ղեկավարության հասցեին: Հետևեք Փրկիչի տված հուշումին: Նայեք պտուղներին՝ արդյունքներին:

Երբ մենք մտածում ենք ավետարանի պտուղների և Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու մասին, ցնծում ենք, թե Եկեղեցին իր ապրող անդամների կյանքի ընթացքում ինչպես

ընդարձակվեց Ինտերմաունթըն Վեստ տարածաշրջանի տեղական համայնքներից, այժմ ընդգրկելով ավելի քան 16 միլիոն անդամներ, որոնց մեծամասնությունը բնակվում է Միացյալ Նահանգներից դուրս՝ այլ երկրներում: Այդ աճի հետ մեկտեղ, մենք զգացել ենք, թե ինչպես է մեծացել անդամներին օժանդակելու Եկեղեցու կարողությունը: Մենք օգնում ենք պահել պատվիրանները, վերականգնված ավետարանը քարոզելու պարտականություններում, Իսրայելի հավաքման և ամբողջ աշխարհում տաճարների կառուցման գործում:

Մենք առաջնորդվում ենք մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից, որի առաջնորդությունը Տերն օգտագործել է գրանցելու համար այն առաջընթացը, որը մենք զգացել ենք նրա ղեկավարման ավելի քան երկու տարիների ընթացքում: Այժմ մենք կօրհնվենք, լսելով Նախագահ Նելսոնի ելույթը, ով կուսուցանի մեզ, թե ինչպես բարելավենք մեր առաջընթացը Հիսուս Քրիստոսի այս վերականգնված Եկեղեցում, այս դժվարին ժամանակներում:

Ես վկայում եմ այդ ամենի ճշմարտացիության մասին, և միանում եմ մեր մարգարեի համար ասվող ձեր աղոթքներին, ով հաջորդիվ ելույթ կունենա, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆԵՐ

1. Տես Դավիթ Ն. Օուքս, "Priesthood Authority in the Family and the Church", *Liahona*, Nov. 2005, 24–27:
2. Տես Russell M. Nelson, "Spiritual Treasures," *Liahona*, Nov. 2019, 76–79; Dallin H. Oaks, "Priesthood Authority in the Family and the Church," 24–27; Dallin H. Oaks, "The Keys and Authority of the Priesthood," *Liahona*, May 2014, 49–52:
3. Տես Դավիթ Ն. Օուքս, «Քահանայության գործությունները», *Լիստոնա*, մայիս 2018, 65–68
4. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Հոգևոր զանձեր», 76–79
5. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորել Սասոն գործությամբ և իշխանությամբ», *Լիստոնա*, մայիս 2018, 68–75, Դավիթ Ն. Օուքս, «Քահանայության գործությունները», 65–68:



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցու Նախագահ

Բացել երկինքներն օգնության համար

Եկե՛ք գործի դնենք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատը:

Ինչպիսի՞ եզակի և հիանալի նիստ էր սա: Շնորհակալություն, սիրելի՛ Լաուդի և Էնզո: Դուք շատ լավ ներկայացրիք Եկեղեցու հրաշալի երիտասարդ կանանց և երիտասարդ տղամարդկանց:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մենք այսօր շատ բան լսեցինք Եկեղեցու վերականգնման մասին. այն Եկեղեցու, որը հաստատել է մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, Իր երկրային ծառայության ժամանակ: Այդ վերականգնումը սկսվեց 200 տարի առաջ՝ զարնանը, երբ Հայր Աստված և նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին երիտասարդ Ջոզեֆ Սմիթին:

Այդ բացառիկ տեսիլքից 10 տարի անց Մարգարե Ջոզեֆ Սմիթը և ևս հինգ հոգի կանչվեցին դառնալու Տիրոջ վերականգնված Եկեղեցու հիմնադիր անդամները:

1830 թվականի ապրիլի 6-ին հավաքված այդ փոքրիկ խումբը դարձել է ավելի քան 16 միլիոն անդամ ունեցող համաշխարհային կազմակերպություն: Այն բարի գործերը, որոնք այս Եկեղեցին ամբողջ աշխարհով մեկ իրականացնում է մարդկանց տառապանքները թեթևացնելու և մարդկության համար վերելք ապահովելու համար, հայտնի է բոլորին: Բայց

Եկեղեցու հիմնական նպատակն է՝ օգնել տղամարդկանց, կանանց և երեխաներին, որ նրանք հետևեն Տեր Հիսուս Քրիստոսին, պահեն Նրա պատվիրանները և արժանանան օրհնություններից ամենամեծին՝ Աստծո և իրենց սիրելիների հետ հավերժական կյանքին:¹

Նշելով 1820 թվականին մեկնարկած իրադարձությունը, կարևոր է հիշել, որ թեև մենք ակնածանք ենք տաժում Ջոզեֆ Սմիթի հանդեպ՝ որպես Աստծո մարգարեի, սա Ջոզեֆ Սմիթի Եկեղեցին չէ, և ոչ էլ Մորմոնի Եկեղեցին է: Սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է: Լա ճշգրտորեն հրամայեց, թե ինչպես պետք կոչել Իր Եկեղեցին. «Քանզի այսպես պիտի կոչվի իմ Եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»:²

Ես նախկինում խոսել եմ անհրաժեշտ շտկումների մասին, թե ինչպես պետք է լինի Եկեղեցու անունը:³ Այդ ժամանակվանից ի վեր շատ բան է արվել այդ շտկումը կատարելու համար: Ես անչափ շնորհակալ եմ Նախագահ Մ. Ռասսել Բալլարդին և Տասներկու Առաքյալների ամբողջ Քվորումին, ովքեր այդքան ջանք են գործադրել այդ աշխատանքը ղեկավարելու համար,

ինչպես նաև մեկ ուրիշ նախաձեռնության աշխատանքը, որի մասին ես կհայտարարեմ այս երեկո:

Եկեղեցու ղեկավարներն ու բաժինները, հարակից իրավաբանական անձիք, միլիոնավոր անդամներ և այլ մարդիկ այժմ օգտագործում են Եկեղեցու ճիշտ անունը: Եկեղեցու պաշտոնական ռճի ուղեցույցը ճշգրտվել է: Եկեղեցու գլխավոր կայքն այժմ՝ ChurchofJesusChrist.org է: Է- փոստի, դոմեյնի անունների և սոցիալական լրատվամիջոցների հասցեների ալիքները թարմացվել են: Մեր սիրելի երգչախումբն այժմ անվանում են Տաճարային Հրապարակի Թաբերնաքլի երգչախումբ:

Մենք գործադրել ենք այս բացառիկ ջանքերը, որովհետև, երբ հեռացնում ենք Տիրոջ անունը *Իր* Եկեղեցու անունից, մենք անգուշաբար հեռացնում ենք *Նրան* մեր երկրպագության և կյանքի կիզակետից: Երբ մկրտության

ժամանակ Փրկիչի անունը վերցնում ենք մեզ վրա, մենք պարտավորվում ենք մեր մտքով, խոսքերով և գործողություններով վկայել, որ Հիսուսը Քրիստոսն է:⁴

Նախկինում ես խոստացել եմ, որ եթե «մեր ուժերի ներածին չափով ձգտենք վերականգնել Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունը, ապա [Նա] Իր գործությունն ու օրհնությունները կհեղի Վերջին Օրերի Սրբերի գլխին այնպես, ինչպես մենք երբեք չենք տեսել»:⁵ Ես նորոգում եմ այդ խոստումն այսօր:

Որպեսզի հիշենք Նրան և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ճանաչենք որպես *Տիրոջ Եկեղեցի*, մենք ուրախ ենք ներկայացնելու մի խորհրդանիշ, որը ցույց կտա Հիսուս Քրիստոսի կենտրոնական տեղն Իր Եկեղեցում:

Այս խորհրդանիշը ներառում է անկյունաքարի մեջ գտնվող Եկեղեցու անվանումը: Հիսուս Քրիստոսը «անկյունի գլուխն է»:⁶

Խորհրդանիշի կենտրոնում տեղադրված է Թորվալդսենի մարմարե արձանը՝ *Քրիստոսը*: Այն պատկերում է հարություն առած, *սայրոդ* Տիրոջը, ով փորձում է գրկել բոլոր նրանց, ովքեր կզան Իր մոտ:

Խորհրդանշորեն, Հիսուս Քրիստոսը կանգնած է կամարի տակ: Կամարը հիշեցնում է հարություն առած Փրկիչին, որը դուրս է եկել գերեզմանից Իր խաչելությանը հաջորդող երրորդ օրը:

Այս խորհրդանիշը շատերին պետք է ծանոթ թվա, քանի որ մենք վաղուց արդեն վերականգնված ավետարանը նույնացրել ենք *սայրոդ*, հարություն առած Քրիստոսի հետ:

Այս խորհրդանիշն այժմ կօգտագործվի որպես տեսողական նույնականացում Եկեղեցու պաշտոնական գրականության, նորությունների և իրադարձությունների համար:⁷ Դա կհիշեցնի բոլորին, որ սա Փրկիչի Եկեղեցին է, և այն ամենը, ինչ մենք անում ենք՝ որպես Նրա Եկեղեցու անդամներ, կենտրոնանում է Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի վրա:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, վաղը Ծաղկազարդն է, որը Երեց Գոնգն այդքան պերճախոս ուսուցանեց: Այդ օրը սկսում ենք հատուկ շաբաթը, որն ավարտվում է Չատիկով: Որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, որ ապրում են այն օրերում, երբ COVID-19-ի համավարակն ամբողջ աշխարհը դարձրեց խառնաշփոթ, եկեք շխտենք միայն Քրիստոսի մասին, քարոզենք Քրիստոսի մասին, կամ օգտագործենք Քրիստոսը ներկայացնող խորհրդանիշը:

Եկե՛ք գործի դնենք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատը:

Ինչպես գիտեք, Եկեղեցու անդամներն ամիսը մեկ օր պահում են ծոմի օրերնքը:

Ծոմապահության վարդապետությունը հին է: Աստվածաշնչյան հերոսներն այն կիրառել են ամենավաղ ժամանակներից: Մովսեսը, Դավիթը, Եզրասը, Նեեմիան, Եսթերը, Եսայիան, Դանիելը, Հովելը և շատ ուրիշներ ծոմ են պահել և



քարոզել ծոմապահությունը:⁸ Եսայիայի գրած տողերում, Տերն ասել է. «Միս սա է ծոմը, որին ես հավանում եմ. Լուծիր անիրաւութեան կապանքները, բաց արա լուծի կոշկոտները, և ջարդաւածներին ազատ թող տուր»:⁹

Պողոս առաքյալը Կորնթոսի սրբերին հորդորեց «որ ծոմապահութեան եւ՝ աղօթքի պարապովք»:¹⁰ Փրկիչն անձամբ հայտարարեց, որ որոշ գործեր չեն ստացվի, «եթե ոչ աղօթքով և ծոմով»:¹¹

Սոցիալական լրատվամիջոցների տեսանյութում ավելի շուտ ասել եմ, որ «որպէս բժիշկ և վիրաբույժ, ես մեծապէս հիացած եմ բժշկության բնագավառի մասնագետների, գիտնականների և բոլոր մարդկանց աշխատանքով, ովքեր շուրջօրյա ռեժիմով փորձում են կանգնեցնել COVID-19-ի տարածումը»:¹²

Այժմ, որպէս Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նախագահ և Հիսուս Քրիստոսի առաքյալ, ես *գլխուտ*, որ Աստված «ունի ողջ գործությունը, ողջ իմաստությունը և ողջ հասկացողությունը. նա ըմբռնում է բոլոր բաները, և նա ողորմած էակ է, ի վերկություն նրանց, ովքեր կապաշխարեն ու կհավատան նրա անունին»:¹³

Այսպիսով, մեծ նեղությունների ժամանակ, ինչպէս այն դեպքում, երբ հիվանդությունը հասնում է համավարակի չափերի, ամենաբնական բանը մեզ համար մեր Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Մեծ Բ դիմելն է, որ նրանք ցույց տան

Երկրի ժողովրդին օրհնելու իրենց զարմանալի ուժը:

Իմ տեսաուղերձում հրավիրել եմ բոլորին 2020 թվականի մարտի 29-ին, կիրակի օրը, միանալ ծոմապահությանը: Ձեզանից շատերը, գուցէ, տեսել են տեսանյութը և միացել ծոմապահությանը: Ոմանք՝ գուցէ չեն միացել: Այժմ մեզ կրկին օգնություն է անհրաժեշտ երկնքից:

Այսպիսով, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, այսօր երեկոյան Մոսիայի որդիների ոգով, որոնք շատ ծոմ էին պահել և աղօթել,¹⁴ և 2020 թվականի ապրիլի մեր գերագույն համաժողովի շրջանակներում, ես կոչ եմ անում մեկ այլ համաշխարհային ծոմապահության: Բոլոր նրանց համար, ում առողջությունը թույլ կտա, եկեք ծոմ պահենք, աղօթենք և մեկ անգամ ևս միավորենք մեր հավատքով: Եկեք աղօթքով խնդրենք, որ ազատվենք այս համաշխարհային համավարակից:

Հրավիրում եմ *բուրդին*, այդ թվում նաև ոչ մեր հավատքի մարդկանց, ապրիլի 10-ին՝ Ավագ ուրբաթին, ծոմ պահել և աղօթել, որպէսզի առկա համավարակը հնարավոր լինի վերահսկել, խնամակալները պաշտպանված լինեն, տնտեսությունն ուժեղանա և կյանքը կարգավորվի:

Ինչպէ՞ս ենք մենք ծոմ պահում: Մովորաբար երկու անգամվա սննդի բաժինը, կամ 24 ժամը բավարար է: Բայց դուք եք որոշում, թե ինչն է ձեզ համար զոհաբերություն, երբ հիշեք այն մեծագույն զոհաբերությունը, որը Փրկիչը կատարեց ձեզ համար: Եկեք միավորվենք և խնդրենք ապաքինում ամբողջ աշխարհով մեկ:

Բարի ուրբաթը կլինի *այն* կատարյալ օրը, երբ մեր Երկնային Հայրը և Նրա Որդին կլսեն *մեզ*:

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես իմ խորին սերն եմ արտահայտում ձեր հանդեպ և բերում եմ իմ վկայությունն



այն գործի աստվածայնության մասին, որում մենք ներգրավված ենք: Մա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է: Նա կանգնած է Եկեղեցու գլխին և ուղղորդում է այն ամենը, ինչ մենք անում ենք: Ես գիտեմ, որ Նա կպատասխանի Իր ժողովրդի խնդրանքներին: Ես այդ մասին վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՉՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:
2. Վարդապետություն և Ուխտեր 115.4:
3. Տես Ռասսել Մ. Նելսոն , «Եկեղեցու ճիշտ անունը», *Լիստինգ*, նոյեմբեր 2018, 87-89:
4. Տես Ռասսել Մ. Նելսոն , «Եկեղեցու ճիշտ անունը», 88:
5. Ռասսել Մ. Նելսոն , «Եկեղեցու ճիշտ անունը», 89:
6. Տես Եփեսացիս 2.20:
7. Եկեղեցու խորհրդանիշի սուրբ էությունը հարգելու և օրենքով պաշտպանելու համար Եկեղեցու պաշտոնական խորհրդանիշը պետք է օգտագործվի միայն Մոսիայի Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից հաստատվելու դեպքում: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ, կապվելով Եկեղեցու Մտավոր սեփականության գրասենյակի հետ՝ cor-intellectualproperty@ChurchofJesusChrist.org հասցեով:
8. Տես Ելից 34.28, Ա Թագավորաց 12.16, Եզրաս 10.6, Նեմիա 1.4, Եսթեր 4.16, Եսայիա 58.3, Դանիել 9.3, Հովել 2.12:
9. Եսայիա 58.6, շեղազիրն ավելացված է:
10. Ա Կորնթացիս 7.5:
11. Մատթեոս 17.21, շեշտադրումն ավելացված է:
12. Ռասսել Մ. Նելսոն, «Մարգարեն բոլորին հրավիրում է ծոմ պահել և աղօթել COVID-19- ից օգնության համար», 26 մարտի 2020 թ., newsroom.ChurchofJesusChrist.org:
13. Ամա 26.35:
14. Տես Ամա 17.3:



Լոնդոն Սևալիա



Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մարգարեության իրականացում

Մարգարեությունները, որոնք իրականացվել են Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնմամբ, բազմաթիվ են:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, պատիվ ունեմ ելույթ ունենալ այս պատմական գերագույն համաժողովում, երբ նշում ենք Ջոզեֆ Մմիթի Առաջին տեսիլքի տարեդարձը, երբ նա տեսավ Հայր Աստծուն և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսին մի վայրում, ինչն, անկասկած, Սրբազան պուրակ է: Այդ տեսիլքը փառահեղ սկիզբն էր ավետարանի Վերականգնման և այն ամենի, ինչը հետևեց դրան՝ Մորմոնի Գրքից մինչև քահանայության իշխանության և բանալիների վերադարձը, Տիրոջ ճշմարիտ եկեղեցու կազմավորումը, սկիզբը Աստծո տաճարների, մարգարեների ու առաքյալների, ովքեր առաջնորդում են աշխատանքն այս վերջին օրերում:

Աստվածային ծրագրով, մղվելով Սուրբ Հոգու կողմից, Աստծո հնադարյան մարգարեները մարգարեանում էին Վերականգնման և այն մասին, ինչ պետք է գա մեր օրերում՝ վերջին տնտեսության և ժամանակների լրիվության ժամանակ: Այդ աշխատանքը «ոգեշնչել է [վաղ օրերի տեսանողների] հոգիները»:¹ Մերունդներ շարունակ նրանք կանխագուշակել են, երազել, կանխատեսել

և մարգարեացել են երկրի վրա Աստծո արքայության ապագայի մասին, ինչը Եսայիան անվանել է «գարմանալիք և գարմանք»:²

Մարգարեությունները, որոնք իրականացվել են Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնմամբ, ներառյալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, բազմաթիվ են: Մակայն այսօր ես կառանձնացնեմ իմ նախընտրածներից մի քանիսը: Դրանք ես սովորել եմ Երեխաների միության իմ սիրելի ուսուցիչներից և իմ հրեշտակ մոր ծնկներին:

Դանիելը, ով սանձեց առյուծներին Տեր Հիսուս Քրիստոսի

հանդեպ իր հավատքի շնորհիվ և հանդիպեց Աստծո սպասավորող հրեշտակների միջամտությանը, երազում տեսավ մեր օրերը: Մեկնաբանելով Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի երազը, Դանիելը մարգարեացավ, որ Տիրոջ եկեղեցին վերջին օրերին փոքր քարի նման «սարից կկտրվի առանց ձեռքի»:³ «Առանց ձեռքի» նշանակում է, որ աստվածային միջամտությամբ Տիրոջ Եկեղեցին կմեծանա այնքան, մինչև կլցնի ամբողջ երկիրը «հավիտյանս չի ավերվիլ . . . [այլ] կմնա հավիտյանս»:⁴

Դա մի մեծ վկայություն է այն մասին, որ Դանիելի խոսքերն իրականանում են, երբ աշխարհով մեկ եկեղեցու անդամները դիտում և լսում են այսօրվա համաժողովը:

Հավատարիմ Պետրոս առաքյալը նկարագրել է «ամեն բաների հաստատուելու ժամանակները . . . հավիտենից հետե»:⁵ Պողոս առաքյալը գրել է, որ ժամանակների լրության ժամանակ, Աստված «ամեն բան կբովանդակի Քրիստոսումը»,⁶ «որի անկիսնի գլուխը Յիսուս Քրիստոսն է»:⁷ Այդ մարգարեությունների իրականացումն ուժգին զգացի, երբ մասնակցեցի Իտալիայի Հռոմի տաճարի նվիրագործմանը: Բոլոր մարգարեներն ու առաքյալները բերում էին Հիսուս Քրիստոսի, աշխարհի Քավիչի մասին իրենց վկայությունը, ինչպես Պետրոս ու Պողոս առաքյալները: Եղբայրներ՝ և քույրեր՛ր, Եկեղեցին այդ հաստատման կենդանի օրինակ է, և մեր անդամները վաղուց վկայել



Նորթ Սոլթ Լեյք, Յուտա

են այդ աստվածային մարգարեությունների մասին:

Եզիպտոսից Հովսեփը մարգարեացել է, որ վերջին օրերին. «Տերը՝ իմ Աստվածը, մի տեսանող կբարձրացնի, որը կլինի մի ընտրյալ տեսանող՝ իմ երանքի պտղի համար»:⁸ «Քանզի նա կկատարի [Տիրոջ] գործը»:⁹ Այդ տեսանողը Ջոզեֆ Մմիթն էր՝ Վերականգնման մարգարեն:

Հովհաննես Հայտնիչը մարգարեացել է Ամենագործի հրեշտակի մասին, ով Վերականգնման կարևոր տարրերն իրար է միացնում հետևյալ բառերով. «Ես տեսայ մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ, որ յալիտենական աստիք ուներ, որ աստարաներ երկրի վերայ բնակողներին. Ես ամեն ազգի եւ ցեղի եւ լեզուի եւ ժողովրդի»:¹⁰ Մորոնին էր այդ հրեշտակը: Նա տեսավ մեր օրերը, ինչպես գրված է Մորմոնի Գրքում: Իր բազմաթիվ այցելություններով նա Ջոզեֆ Մմիթին նախապատրաստեց իր ծառայությանը, այդ թվում «Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին» գրքի թարգմանությանը:

Այլ մարգարեներ կանխագուշակել են մեր օրերի մասին: Մաղաքիան խոսել է Եղիայի մասին, ով կդարձնի «հայրերի սիրտը դեպի որդիքը եւ որդկանց սիրտը՝ դեպի իրանց հայրերը»:¹¹ Եղիան եկավ, և արդյունքում մենք այսօր ունենք աշխարհով մեկ տեղակայված 168 տաճարներ: Յուրաքանչյուր տաճար ծառայում է արժանի անդամներին, որոնք կատարում են սրբազան ուխտեր և ստանում են օրհնյալ արարողություններ իրենց և իրենց հանգուցյալ նախնիների համար: Մաղաքիայի նկարագրած այս սուրբ աշխատանքը «ամենակարևոր դերն ունի Արարիչի ծրագրում Իր զավակների հավերժական ճակատագրի համար»:¹²

Մենք ապրում ենք այդ մարգարեության ժամանակներում. մենք այն մարդիկ ենք, ովքեր պատասխանատու են Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը դիմավորելու համար. մենք պետք

է հավաքենք Աստծո զավակներին՝ նրանց, ովքեր կլսեն և կընդունեն հավիտենական ավետարանի ճշմարտությունները, ովստերը և խոստումները: Նախագահ Նելսոնը դա անվանում է «այսօր երկրի վրա գոյություն ունեցող *մեծագույն* մարտահրավերը, *մեծագույն* նպատակը, և *մեծագույն* աշխատանքը»:¹³ Այդ հրաշքի մասին ես բերում եմ իմ վկայությունը:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հանձնարարությամբ, այս տարվա փետրվարին ես նվիրագործեցի Հարավային Աֆրիկայի Դուրբան տաճարը: Այդ օրը ես կհիշեմ ողջ կյանքում: Ես այն անդամների հետ էի, ովքեր ընդունել էին ավետարանը՝ ինչպես վաղուց մարգարեացել էր Երեմիան. «քաղաքից մեկին, եւ ազգատոհմից՝ երկուսին»:¹⁴ Հիսուս Քրիստոսի վարդապետությունը միավորում է բոլորիս ամբողջ աշխարհում՝ որպես Աստծո որդիներ և դուստրեր, որպես եղբայրներ և քույրեր ավետարանում: Անկախ նրանից, թե ինչպիսի տեսք ունենք կամ ինչպես ենք հագնվում, մենք Հոր հետ մեկ ժողովուրդ ենք, ում ծրագիրն ի սկզբանե եղել է և այն է, որ Իր ընտանիքը վերամիավորվի՝ տաճարային սրբազան ուխտեր կապելով և պահելով:

1834 թվականին Օհայո նահանգի Կիրթլենդի մի դպրոցում հավաքված քիչ թվով քահանայության կրողներին մարգարե Ջոզեֆ Մմիթը մարգարեացել է. «Միայն մի բուռ քահանայություն եք տեսնում այստեղ, բայց այս Եկեղեցին կլցնի Հյուսիսային և Հարավային Ամերիկան՝ այն կլցնի ողջ աշխարհը»:¹⁵

Վերջին տարիներին ես ճամփորդել եմ ամբողջ աշխարհով և հանդիպել Եկեղեցու անդամներին: Տասներկուսի քվորումի իմ եղբայրները նմանատիպ հանձնարարություններ են ունեցել: Մակայն, ով կարող է հասնել մեր սիրելի մարգարե Նախագահ Նելսոնին, ով Եկեղեցու նախագահ ծառայելու իր առաջին երկու տարիների ընթացքում հանդիպել է Սրբերին «32 երկրներում և

ԱՄՆ տարածքներում», որ¹⁶ վկայի ապրող Քրիստոսի մասին:

Ես հիշում եմ, երբ ստացա իմ միսիայի կանչը՝ որպես երիտասարդ տղամարդ: Ես ուզում էի ծառայել Գերմանիայում, ինչպես իմ հայրը, եղբայրը և քրոջս ամուսինը: Չսպասելով որևէ մեկին, ես շտապեցի փոստարկղ և բացեցի միսիայի կանչը: Ես կարդացի, որ կանչվել եմ Արևելյան Նահանգների Միսիա, որի գլխավոր գրասենյակը տեղակայված էր Նյու Յորք Միթիում: Ես հիասթափվեցի, ուստի ներս մտա և միսիաբարության համար բացեցի սուրբ գրությունները: Ես սկսեցի կարդալ Վարդապետություն և Ուխտերը. «Միա, տե՛ս, ես բազում ժողովուրդ ունեմ այս վայրում, մերձակա շրջաններում. և արդյունավետ դուռ պիտի բացվի մերձակա շրջաններում, արևելյան այս հողում»:¹⁷ Այդ մարգարեությունը, տրված Մարգարե Ջոզեֆ Մմիթին 1833 թվականին, հայտնություն էր ինձ համար: Ես այդ ժամանակ հասկացա, որ ինձ կանչել էին այն միսիան, որտեղ Տերը ցանկանում էր, որ ես ծառայեմ: Ես մտածեցի Վերականգնման ու դրա ազդեցիկ մեկնարկի մասին, երբ մեր Երկնային Հայրը խոսեց Ջոզեֆ Մմիթի հետ և ասաց. «Մա է իմ սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»:¹⁸

Ամբողջ Եկեղեցու համար մեծ նշանակություն ունի Եսայիայի մարգարեությունը, որը տրվել է Հիսուս Քրիստոսի ծնունդից ավելի քան 700 տարի առաջ. «Ես կլինի օրերի վերջին, որ հաստատ կլինի Տիրոջ տան սարը՝ սարերի գլխին, . . . Ես յորդելով նորա մօտ կգնան բոլոր ազգերը»:¹⁹

Իմ մտքում այսօր ես պատկերացնում եմ մեր միլիոնավոր անդամներին և ընկերներին, ովքեր միացած են այս հեռարձակմանը՝ էլեկտրոնային տարբերակով, հեռուստատեսությամբ, համացանցով կամ այլ միջոցներով: Մենք նստած ենք միասին, կարծես «սարերի գլխին»:²⁰ Բրիգամ Յանգն էր, ով ասաց մարգարեական «սա է ճիշտ վայրը» խոսքերը:²¹ Սրբերը, նրանցից մի քանիսն իմ

ռահվիրա նախնիները, աշխատում էին Միոն հիմնել Ռոքի լեռներում «երկրի ազգերին թելադրողների կամքով և ցանկությամբ»:²²

Ես այսօր կանգնած եմ այն սուրբ հողի վրա, որը միլիոնավոր այցելուներ է գրավել: 2002 թվականին Սուրբ Լեյք Միթին հյուրընկալեց ձմեռային Օլիմպիական խաղերը: Թաբերնաքլի երգչախումբը երգեց բացման արարողություններում, և եկեղեցին համերգներ ու ծրագրեր առաջարկեց բազմաթիվ ազգերի հյուրերի և մասնակիցների համար: Տաճարի պատկերը միշտ հիշելու եմ աշխարհով մեկ հեռարձակվող գիշերային լուրերի հեռարձակման ժամանակ:

Տարիների ընթացքում Միացյալ Նահանգների նախագահներ, թագավորներ, դատավորներ, վարչապետեր, դեսպաններ և շատ երկրներից պաշտոնատար անձինք են եկել Սուրբ Լեյք Միթի և հանդիպել մեր ղեկավարների հետ: Նախագահ Նելսոնը հյուրընկալել է Գունավոր Բնակչության Չարգացման Ազգային Մտցիացիայի

կազմակերպության առաջնորդներին՝ Միացյալ Նահանգների մի կազմակերպություն, որը պաշտպանում է առանց ռասայական խտրականության մարդկանց հավասար իրավունքները: Հիշում եմ կանգնած այս ընկերների և ղեկավարների կողքին, երբ Նախագահ Նելսոնը միացավ նրանց և կոչ արեց «աշխարհում ավելի մեծ քաղաքակրթություն և ռասայական ներդաշնակություն սահմանելու» մասին:²³

Դրանից բացի, շատերն են եկել Տաճարային հրապարակ և խորհրդակցել եկեղեցու ղեկավարների հետ: Օրինակ՝ անցած տարի, ընդամենը մի քանի անուն նշելու համար ասեմ, որ մենք ընդունեցինք Միացյալ ազգերի 68-րդ քաղաքացիական հասարակության խորհրդաժողովը, մի համաշխարհային հավաքույթ, որն իր տեսակի մեջ առաջինն էր Նյու Յորքի սահմաններից դուրս: Մենք հանդիպեցինք Վիետնամի կրոնական հարցերով հանձնաժողովի, Կուբայի, Ֆիլիպինների, Արգենտինայի, Ռումինիայի, Մուդանի, Քաթարի և Մաուրիցիայի ղեկավարների հետ: Մենք ողջունեցինք նաև Մուսուլմանական համաշխարհային լիգայի գլխավոր քարտուղարին:

Այն, ինչ ես նկարագրում եմ, Եսայիայի մարգարեության իրականացումն է, որ վերջին օրերին ազգերը հորդելու են դեպի «Տիրոջ տան սարը»:²⁴ Սուրբ Լեյքի մեծ տաճարը կանգնած է այդ վեհության և փառքի կենտրոնում:

Բնապատկերը չէ, որ գրավում է մարդկանց, թեև շրջակայքը հոյակապ է.

դա մաքուր կրոնի էությունն է, որը դրսևորվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու և նրա ժողովրդի ոգով, աճով, բարությանը և առատաձեռնությամբ. մեր սիրտ շնորհիվ է, ինչպես Աստված է սիրում, և ավելի վեհ գործի նկատմամբ մեր նվիրվածության շնորհիվ է, որը Ջոզեֆ Միթը կոչեց «Քրիստոսի գործը»:²⁵

Մենք չգիտենք, թե Փրկիչը երբ կվերադառնա, բայց սա մենք իսկապես գիտենք: Մենք պետք է սրտով և մտքով պատրաստ լինենք, արժանի լինենք Նրան ընդունելուն և պատվով դառնանք այն ամենի մասը, ինչի մասին վաղուց մարգարեացել են:

Ես վկայում եմ, որ նախագահ Ռասսել Մ. Նելսոնը երկրի վրա Տիրոջ մարգարեն է, և նրա կողքին են առաքյալները՝ կանչված Աստծո կողմից, հաստատված որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, Վերականգնումը շարունակվում է:

Կավարտեմ Ջոզեֆ Միթի մարգարեական խոսքերով, որոնք ես վկայում եմ, որ ճշմարիտ են. «Ճշմարտության Դրոշմը վեր է խոյացած. ոչ մի անսուրբ ձեռք չի կարող կանգնեցնել աշխատանքի առաջընթացը, հալածանքները կարող են մոլեզներ, ամբոխները կարող են միավորվել, զորքեր կարող են հավաքվել, զրպարտությունները կարող են արատավորել, բայց Աստծո ճշմարտությունն առաջ կգնա համարձակ, ազնիվ, անկախ, մինչև այն ներթափանցի յուրաքանչյուր մայրցամաք, այցելի ամեն երկիր, անցնի ամեն պետություն և հնչի յուրաքանչյուրի ականջում, մինչև Աստծո նպատակներն իրականացվեն, և Մեծ Եհովան ասի՝ աշխատանքը կատարված է»:²⁶ Մույնով վկայում եմ, որ Ջոզեֆ Միթի այս մարգարեությունները կատարվում են:

Խոստանում եմ, որ եթե դուք հետևեք մեր սիրելի մարգարե՝ նախագահ Ռասսել Մ. Նելսոնի, նրա խորհրդականների, Առաքյալների և Եկեղեցու մյուս



Պրոֆ. Յուսա, ԱՄՆ

դեկավարների ներշնչված խորհուրդներին, և եթե դուք ուշադրություն դարձնեք հնադարյան մարգարեներին, որոնք կանխագուշակել են մեր օրերը, դուք ձեր սրտի խորքում և ձեր հոգում կզգաք Վերականգնման հոգին և աշխատանքը: Ես խոստանում եմ, որ ձեր կյանքում կտեսնեք Աստծո ձեռքը, կլսեք Նրա հուշումները և կզգաք Նրա սերը: Հիսուս Քրիստոսի անունով, Նրա ավետարանի և Նրա Եկեղեցու վերականգնման հանդեպ երախտագիտությամբ և ի նշան Նրա անզուգական սիրո, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. *Եկեղեցու Նախագահների Ուսումնասիրություն. Ջոզեֆ Սմիթ* (2007), 515:
2. Եսայիա 29.14:
3. Դանիել 2.45, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 65.2:
4. Դանիել 2.44:
5. Գործք Առաքելոց 3.21:
6. Եփեսացիս 1.10:
7. Եփեսացիս 2.20:
8. 2 Նեփի 3.6:
9. 2 Նեփի 3.8:
10. Հայտնություն 14.6:
11. Մադաքիա 4.6:
12. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լյախոնա*, մայիս 2017, 145:
13. Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» (պատանիների համաշխարհային հոգևոր հավաք, հունիսի 3, 2018), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org:
14. Երեմիա 3.14:
15. Ջոզեֆ Սմիթ, *Եկեղեցու Նախագահների ուսումնասիրություն. Վիլֆորդ Վուլթոթ* (2004), 26:
16. See Valerie Johnson, "President Nelson Became the Prophet 2 Years Ago. What Has Happened Since Then?" *Church News*, Jan. 13, 2020, thechurchnews.com.
17. Վարդապետություն և Ուխտեր 100.3:
18. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17:
19. Եսայիա 2.2, տես նաև Միքիա 4.1-2:
20. Եսայիա 2.2:
21. «Սա է ճիշտ վայրը» արտահայտությունն առաջինը վերագրվեց Բրիգամ Յանգին՝ Վիլֆորդ Վուլթոթի կողմից, երբ նա ելույթ էր ունենում ռահվիրաների օրվա տոնակատարության ժամանակ, 1880 թվականի հուլիսին (see "Pioneers' Day," *Deseret Evening News*, July 26, 1880, 2):
22. Brigham Young, Mar. 31, 1861, Historian's Office reports of speeches, 1845-1885, Church History Library, Salt Lake City.
23. See "First Presidency and NAACP Leaders Call for Greater Civility, Racial Harmony," May 17, 2018, newsroom.ChurchofJesusChrist.org.
24. Եսայիա 2.2, տես նաև Միքիա 4.1-2:
25. *Ուսումնասիրություն. Ջոզեֆ Սմիթ*, 352:
26. *Ուսումնասիրություն. Ջոզեֆ Սմիթ*, 142:



Բոնևի Հ. Զորդոն
Երիտասարդ կանանց գերագույն նախագահ

Որ նրանք կարողանան տեսնել

Փնտրեք և աղոթեք այն հնարավորությունների համար, որ թույլ տաք ձեր լույսը շողա, և մյուսները կարողանան տեսնել ճանապարհը, որը տանում է դեպի Հիսուս Քրիստոսը:

Եղբայրներ՝ և քույրեր՝, մեր սրտերն օրհնվել և նորոգվել են այն Հոգով, որը զգացինք այս համաժողովի ժամանակ:

Երկու հարյուր տարի առաջ լույսի մի սյուն իջավ մի երիտասարդ տղայի վրա ծառերի պուրակում: Այդ լույսի մեջ Ջոզեֆ Սմիթը տեսավ Հայր Աստծուն և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին: Նրանց լույսը ցրեց այն հոգևոր խավարը, որը ծածկում էր երկիրը և ցույց տվեց առջևի ճանապարհը Ջոզեֆ Սմիթի և բոլորիս համար: Այդ օրը բացված լույսի շնորհիվ մենք կարող ենք ստանալ օրհնությունների լրիվությունը, որոնք հասանելի են մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Նրա ավետարանի Վերականգնման զորության շնորհիվ մենք կարող ենք լցվել մեր Փրկիչի լույսով: Այնուամենայնիվ, այդ լույսը նախատեսված չէ միայն ձեզ և ինձ համար: Հիսուս Քրիստոսը մեզ կոչ է արել՝ «թող ձեր լույսն այնպես շողա այս ժողովրդի առաջ, որ նրանք կարողանան տեսնել ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որը երկնքում է»:՝ Ինձ դուր

է եկել «որ նրանք կարողանան տեսնել» արտահայտությունը: Դա Տիրոջ սրտանց հրավերն է, որ ավելի անկեղծ օգնենք մյուսներին տեսնելու ճանապարհը և դրանով իսկ գալ Քրիստոսի մոտ:

Երբ ես 10 տարեկան էի, մեր ընտանիքը պատիվ ունեցավ հյուրընկալելու Երեց Լ. Թոմ Փերիին Տասներկու Առաքյալների Քվորումից, երբ նա հանձնարարությամբ գտնվում էր իմ քաղաքում:

Օրվա վերջում, մեր ընտանիքը և Փերիների ընտանիքը նստեցին մեր հյուրասենյակում, որպեսզի վայելեն մայրիկիս պատրաստած համեղ խնձորի կարկանդակը, իսկ Երեց Փերին պատմում էր պատմություններ աշխարհի Մրբերի մասին: Ես ոգևորված էի:

Ուշ էր արդեն, երբ մայրս ինձ կանչեց խոհանոց և մի պարզ հարց տվեց. «Բոնևի, դու կերակրե՞լ ես հավերին»:

Միտոս թրթռաց և պատասխանեցի, որ չեմ կերակրել: Զցանկանալով հեռանալ Տիրոջ Առաքյալի ներկայությունից, ես առաջարկեցի, որ հավերը ծոմ պահեն մինչև առավոտ:

Մայրս կտրուկ պատասխանեց «ո՛չ»: Հենց այդ ժամանակ էրեց Փերին մտավ խոհանոց և իր եռանդուն, խանդավառ ձայնով հարցրեց. «Լսեցի, որ ինչ-որ մեկը պետք է հավերին կերակրի»: Կարո՞ղ ենք ես ու իմ որդին միանալ ձեզ»:

Օ՛, այժմ ինչպիսի մեծ ուրախություն դարձավ հավերին կերակրելու գործընթացը: Ես վազեցի, որ վերցնեմ մեր մեծ դեղին լապտերը: Լավ տրորված արահետով ես ոգևորված առաջնորդեցի նրանց դեպի հավերի բունը: Զեռքիցս կախված լապտերով մենք անցանք եգիպտացորենի և ցորենի դաշտերով:

Հասնելով ճանապարհը հատող ոռոգման առվին, ես բնագոգաբար ցատկեցի դրա վրայով, ինչպես նախկինում շատ անգամ էի արել: Ես չէի նկատում, որ Երեց Փերին դժվարությամբ էր գտնում ճանապարհն այդ մութ ու անծանոթ արահետի վրա: Անընդհատ շարժվող իմ լապտերի լույսի պատճառով նա չնկատեց առուն: Մշտական լույսը չտեսնելու պատճառով նա ոտքն ուղիղ դրեց ջրի մեջ և բարձրաձայն հառաչեց: Խուճապի մատնվելով, ես շրջվեցի և տեսա, որ իմ նոր ընկերն իր թաց ոտքը հանում է ջրից և շարժելով ոտքը՝ փորձում է ջուրը հեռացնել ծանր կաշվե կոշիկի միջից:

Թրջված և ջրով ներծծված կոշիկով, երեց Փերին օգնեց ինձ կերակրել հավերին: Երբ վերադառնում էինք, նա մեղմ հրահանգեց. «Բռնի, ես պետք է տեսնեմ ճանապարհը: Լույսը պետք է երևա ոտքիս տակ»:

Ես լուսավորում էի, բայց այնպես չէի լուսավորում, որը կօգներ երեց Փերին: Այժմ իմանալով, որ նրան պետք է իմ լույսը, որպեսզի ապահով գտնի ճանապարհը, ես լապտերը պահեցի անմիջապես նրա առաջ և մենք կարողացանք վստահ վերադառնալ տուն:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, տարիներ շարունակ մտածել եմ երեց Փերիից սովորած սկզբունքի մասին: Տիրոջ՝ «թող ձեր լույսը շողա» հրավերը ոչ միայն լույսի շողն անկայուն շարժելու և աշխարհն ընդհանուր առմամբ ավելի պայծառ

դարձնելու մասին է: Խոսքը մեր լույսը կենտրոնացնելու մասին է, որպեսզի մյուսները կարողանան տեսնել ճանապարհը, որը տանում է դեպի Քրիստոսը: Դա Բարայելը *Վաղագրության այս կողմում* հավաքելն է. օգնելն է, որ ուրիշները տեսնեն Աստծո հետ սրբազան ուխտեր կապելու և պահելու հաջորդ քայլը:²


Փրկիչը վկայել է. «Ահա, ե՛ս եմ լույսը. ես օրինակ եմ ծառայում ձեզ համար»:³ Եկեք դիտարկենք Նրա օրինակներից մեկը:

Ջրհորի մոտ գտնվող կինը սամարացի էր, ով չէր ճանաչում Հիսուս Քրիստոսին և շատերի կողմից համարվում էր որպես իր հասարակությունից օտարված: Հիսուսը հանդիպեց և զրույցի բռնվեց նրա հետ: Նա այդ կնոջ հետ խոսեց ջրի մասին: Ապա, Նա այդ կնոջն առաջնորդեց դեպի ավելի շատ լույսը, երբ հայտարարեց, որ Ինքը «կենդանի ջուր է»:⁴

Քրիստոսը կարեկցում էր և տեղյակ էր նրա ու նրա կարիքների մասին: Նա հանդիպեց այդ կնոջն այն վայրում, որտեղ կինը գտնվում էր այդ պահին և սկսեց խոսել ինչ-որ ծանոթ և ընդհանուր բանի մասին: Եթե նա չշարունակեր դրանից հետո, ապա դա մի հաճելի հանդիպում կլիներ: Բայց դրանից հետո այդ կինը չէր գնա քաղաք և հայտարարի. «Եկեք տեսեք . . . Արդեօք նա՞ է Քրիստոսը»:⁵ Աստիճանաբար, զրույցի ընթացքում նա բացահայտեց Հիսուս Քրիստոսին, և չնայած իր անցյալին, այդ կինը դարձավ լույսի օրինակ՝ լուսավորելով ճանապարհը, որ ուրիշները տեսնեն:⁶

Այժմ եկեք խոսենք երկու մարդու մասին, որոնք հետևեցին լույսով շողալու Փրկիչի օրինակին: Վերջերս իմ ընկերը՝ Քեվինը, ընթրում էր մի գործադիր տնօրենի հետ: Նա անհանգստացած էր, թե ինչի՞ մասին պիտի զրուցեր այդ երկու ժամվա ընթացքում: Հետևելով հուշմանը Քեվինը հարցրեց. «Պատմե՛ք ինձ ձեր ընտանիքի մասին: Որտեղի՞ց են նրանք սերում»:

Այդ պարունը շատ քիչ բան գիտեր իր ծագումնաբանության



Բրիգամ Սիթի, Յուտա, ԱՄՆ

մասին, ուստի Քեվինը հանեց հեռախոսը և ասաց. «Ես ունեմ մի ծրագիր, որը մարդկանց միացնում է իրենց ընտանիքներին: Տեսնենք, թե ինչ կարող ենք գտնել»:

Երկարատև քննարկումից հետո Քեվինի նոր ընկերը հարցրեց. «Ինչո՞ւ է ընտանիքն այդքան կարևոր ձեր եկեղեցում»:

Քեվինը պարզ պատասխան տվեց. Մենք հավատում ենք, որ շարունակում ենք ապրել մեր մահից հետո: Եթե մենք ճանաչում ենք մեր նախնիներին և նրանց անունները տանում ենք մի սուրբ վայր, որը կոչվում է տաճար, մենք կարողանում ենք կատարել ամուսնության արարողություններ, որոնք մեր ընտանիքները միասին են պահում նույնիսկ մահից հետո»:⁷

Քեվինը խոսեց մի թեմայի մասին, որն ընդհանուր էր իր և իր նոր ընկերոջ համար: Այնուհետև նա գտավ Փրկիչի լույսի և սիրո մասին վկայելու եղանակը:

Երկրորդ պատմությունը Էլլայի մասին է, ով խաղում է համալսարանական բասկետբոլի թիմում: Նա օրինակ ծառայեց այն ժամանակ, երբ համալսարանում ստացավ իր միսիայի կանչը: Նա որոշեց իր միսիայի կանչի նամակը բացել իր թիմի առջև: Նրանք գրեթե ոչինչ չգիտեին Հիսուս Քրիստոսի եկեղեցու մասին և չէին հասկանում Էլլայի ծառայելու



ցանկությունը: Էլլան անընդհատ աղոթել էր, որպեսզի իմանար, թե ինչպես բացատրել իր միսիա կանչվելու նորությունն այնպես, որ իր թիմակիցները զգան Հոգին: Նրա պատասխանը հետևյալն էր:

«Ես պատրաստեցի ցուցադրություն PowerPoint-ով, քանի որ ինձ մոտ դա լավ է ստացվում», - ասել է Էլլան: Նա պատմեց նրանց 400-ից ավել միսիաներից մեկում ծառայելու և նոր լեզու սովորելու հնարավորության մասին: Նա ընդգծեց արդեն իսկ ծառայող հազարավոր միսիոներների: Էլլան ցուցադրությունն ավարտեց Փրկիչի նկարով և այս կարճ վկայությամբ. «Բասկետբոլն իմ կյանքի ամենակարևոր բաներից մեկն է: Գտնվելով հեռու իմ ընտանիքից, ես երկրով մեկ ճամփորդել եմ, որ խաղամ այս մարզիչի և թիմի համար: Միակ երկու բաները, որոնք ինձ համար ավելի կարևոր են, քան բասկետբոլը, դրանք իմ հավատքն ու իմ ընտանիքն են»:⁸

Այժմ, եթե մտածում եք, որ սրանք «1000 վատտ հզորությամբ»

լույսի հրաշալի օրինակներ են, իսկ դուք «20 վատտ հզորությամբ լամպ եք», հիշեք, որ Փրկիչը վկայեց. «Ե՛ս եմ լույսը, որը դուք պետք է բարձր պահեք»:⁹ Նա հիշեցնում է մեզ, որ Նա կբերի լույսը, եթե մենք պարզապես ուրիշներին մատնանշենք Նրա կողմը:

Մենք միասին բավականաչափ լույս ունենք *հենց հիսուս* կիսվելու համար: Մենք կարող ենք օգնել ինչ-որ մեկին կատարել հաջորդ քայլը դեպի Հիսուս Քրիստոսը, իսկ հետո հաջորդը և այսպես շարունակ:

Հարցրեք ինքներդ ձեզ. «Ո՞ւմ է պետք լույսը, որը դուք ունեք, որպեսզի գտնեն այն ճանապարհը, որն անհրաժեշտ է իրենց, բայց որը չեն տեսնում»:

Իմ սիրելի՛ ընկերներ, ինչո՞ւ է լույսի շողն այդքան կարևոր: Տերն ասել է մեզ, որ «երկրի վրա դեռ շատերը կան . . . որոնք ճշմարտությունից հեռու են մնացել, միայն որովհետև չգիտեն որտեղ գտնեն այն»:¹⁰ Մենք կարող ենք օգնել: Մենք կարող ենք զիտակցաբար

մեր լույսը տարածել, որ ուրիշները կարողանան տեսնել: Մենք կարող ենք հրավեր հղել:¹¹ Մենք կարող ենք ճանապարհի գնալ նրանց հետ, ովքեր քայլ են անում դեպի Փրկիչը՝ անկախ նրանից, որքան երերուն են քայլում: Մենք կարող ենք հավաքել Իսրայելը:

Ես վկայում եմ, որ Տերը կմեծացնի յուրաքանչյուր փոքր ջանք: Սուրբ Հոգին կհուշի մեզ, թե ինչ ասել կամ անել: Նման ջանքերը գուցե պահանջեն, որ դուրս գանք հարմարավետության գոտուց, բայց կարող ենք վստահ լինել, որ Տերը կօգնի, որ մեր լույսը շողա:

Որքա՞ն երախտապարտ եմ Փրկիչի լույսի համար, որը շարունակում է առաջնորդել այս Եկեղեցին հայտնության միջոցով:

Հրավիրում եմ բոլորիս հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին և կարեկցանքով հոգ տանել մեզ շրջապատողների մասին: Փնտրեք և աղոթեք այն հնարավորությունների համար, որ թույլ տաք ձեր լույսը շողա, և մյուսները կարողանան տեսնել ճանապարհը, որը տանում է դեպի Հիսուս Քրիստոսը: Նրա խոստումը մե՞ծ է. «Ով որ իմ ետևից գա, նա խավարումը չի գնալ, այլ կեանքի լույսը կընդունի»:¹² Ես վկայում եմ, որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսն է ճանապարհը, ճշմարտությունը, կյանքը, լույսը և աշխարհի սերը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

- 3 Նեփի 12.16:
- Տես Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի Հույսը» (Երիտասարդների համաշխարհային հոգևոր հավաք, 3 հունիսի, 2018թ), HopeofIsrael.ChurchofJesusChrist.org
- 3 Նեփի 18.16:
- Տես Հովհաննես 4.9–30:
- Հովհաննես 4.29:
- See Robert and Marie Lund, “The Savior’s Respect for Women,” *Liahona*, Mar. 2015, 32–36.
- Մնձնական նամակագրություն:
- Մնձնական նամակագրություն:
- 3 Նեփի 18.24:
- Վարդապետություն և Ուխտեր 123.12:
- Տես Դիտեր Ֆ. Ուլդորֆ, «Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում», *Ljshuhnuu*, մայիս 2019, 15–18:
- Հովհաննես 8.12:



Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հույսի կատարյալ պայծառություն

Քանի որ Վերականգնումը վերահաստատեց այն հիմնարար ճշմարտությունը, որ Աստված գործում է այս աշխարհում, մենք կարող ենք հուսալ, և պետք է հուսանք, նույնիսկ այն դեպքում, երբ լավ բաներ քիչ են կատարվում:

Անցյալ տարվա հոկտեմբերին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հրավիրեց մեզ *պատրաստվել* 2020թ. ապրիլի այս համաժողովին, յուրաքանչյուրս անհատապես ուսումնասիրելով *անցյալի* էջերը, որպեսզի տեսնենք Աստծո ձեռքն Իր վեհափառությամբ՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման գործում: Ես և քույր Հոլլանդն ամենայն պատասխանատվությամբ մոտեցանք այս մարզարեական հրավերին: Մենք պատկերացրեցինք, իբրև ապրում ենք 1800-ականների սկզբներին և այդ ժամանակի կրոնական ուղղությունների ականատեսը լինում: Մեր պատկերացրած միջավայրում, մենք ինքներս մեզ հարցնում ենք՝ Ի՞նչ է պակասում այստեղ: Ի՞նչ կցանկանայինք, որ լիներ: Մենք ի՞նչ բանի *հույս* ունենք, որ Աստված կտա մեզ ի պատասխան մեր հոգևոր ձգտումների:

Ակնհայտ է մի բան, որ երկու դար առաջ մենք մեծ հույս կունենայինք, որ վերականգնվեր Աստծո մասին ավելի ճշմարիտ գիտելիք,

քան շատերն այդ ժամանակ ունեին: Այդ գիտելիքը թաքնված էր, քանի որ Նա կարծես գտնվում էր սխալներով և թյուրիմացություններով հագեցած դարաշրջանների հետևում: Ինչպես ասել է Ռիլյամ Էլերի Չենինգը՝ այդ ժամանակի կրոնական հայտնի գործիչներից մեկը, մենք պիտի փնտրեինք «Աստծո ծնողական հատկանիշը», որը Չենինգի խոսքով «քրիստոնեության առաջին մեծ վարդապետությունն էր»:¹ Այդպիսի վարդապետությունը պիտի ընկալեր Աստվածությունը որպես հոգատար Երկնային Հայր, ոչ թե՛ որպես բիրտ դատավոր, ով անողորմ արդարադատություն է կիրառում, կամ բացակայող տանտեր, ով ժամանակին զբաղվել էր երկրային գործերով, սակայն այժմ գտնվում էր տիեզերքի մեկ այլ ծայրում:

Այո՛, մեր հույսերը 1820 թվականին պետք է որ կապված լինեին Աստծուն գտնելու հետ, ով ներկա ժամանակ նույնպես կյստեր մարդկանց հետ և կառաջնորդեր նրանց, ինչպես անում էր հնում, իրական

Հոր՝ սիրո ամենամեծ դրսևորումը պարունակող իմաստով: Հաստատ Նա *չէր* լինի սառնասիրտ, քմահաճ բռնապետ, ով փրկության համար կրնորեր և կառանձնացներ մի քանիսին, իսկ մարդկային ընտանիքի մյուս անդամներին կհանձններ նզովքի ճիրաններին: Ո՛չ, Նա կլիներ մեկը, ում ամեն մի գործողությունը, աստվածային հոչակմամբ, կլիներ «ի օգուտ աշխարհի. քանզի նա սիրում է աշխարհն»² և դրա յուրաքանչյուր բնակչին: Այդ սերը կլիներ Իր Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին երկիր ուղարկելու գերագույն պատճառը:³

Խոսելով Հիսուսի մասին, եթե մենք ապրեինք 19-րդ դարի սկզբում, մենք մեծ տագնապով կգիտակցեինք, որ Փրկիչի կյանքի և Հարության իրական լինելու կասկածները սկսում էին զգալի ազդեցություն ունենալ քրիստոնեական աշխարհում: Հետևաբար, մենք հույս կունենայինք, որ ամբողջ աշխարհի համար ի հայտ կգար ապացույց, որը կհաստատեր աստվածաշնչյան վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է՝ բառացիորեն Աստծո Որդին, Ալֆան և Օմեգան, և այս աշխարհին հայտնի միակ Փրկիչը: Մենք կուզեինք, որ մեր փայլալայած հույսերի շարքում սուրբգրային որևէ ապացույց ի հայտ գար, մի բան, որը կարող էր լինել Հիսուս Քրիստոսի մեկ այլ վկայություն՝ ընդլայնելով և ավելացնելով մեր գիտելիքը՝ Նրա զարմանահարաշ ծննդյան, հրաշալի ծառայության, քավող զոհաբերության և փառահեղ Հարության մասին: Իսկապես, այդպիսի փաստաթուղթը կլիներ «արդարություն ցած [ուղարկված] երկնքից. և ճշմարտություն առաջ [ուղարկված] երկրից»:⁴

Դիտարկելով այդ ժամանակի քրիստոնեական աշխարհը, մենք հույս կունենայինք գտնել Աստծո կողմից լիազորված մեկին, ով իրապես կունենար քահանայության իշխանություն, ով կմկրտեր մեզ, կշնորհեր Մուրբ Հոգու պարգևը և կսպասավորեր ավետարանի բոլոր արարողությունները, որոնք



անհրաժեշտ էին վեհացման համար: 1820 թվականին մենք հույս կունենայինք, որ կկատարվեին Եսայիայի, Միքիայի և հնօրյա մյուս մարգարեների պերճախոս խոստումները՝ կապված Տիրոջ փառահեղ տան վերադարձի հետ:⁵ Մենք կցնծայինք՝ տեսնելով կրկին հաստատված սուրբ տաճարների փառքը, Հոգու ներկայությամբ, արարողություններով, զորությամբ, հավերժական ճշմարտություններ ուսուցանելու, անձնական վերքեր բուժելու և ընտանիքները հավերժ միասին կապելու իշխանությամբ: Ես ամենուրեք կփնտրեի, որ գտնեի մեկին, ով իրավասու կլիներ ասելու ինձ և իմ սիրելի Պատրիշիային, որ մեր ամուսնությունը կնքված է ժամանակի և ողջ հավերժության համար, և երբեք չլսեի կամ չպարտադրվեի մեզ այն հետապնդող անեծքը՝ «մինչև մահը բաժանի ձեզ»: Ես գիտեմ, որ «[մեր] Հօր տանը շատ բնակարաններ կան»,⁶ սակայն, ես կարծում եմ, որ, եթե ես այնքան

բախտավոր լինեի, որ ժառանգելի դրանցից մեկը, այն ինձ համար փլուզվող հյուղից լավը չէր լինի, եթե Պատն ու մեր երեխաները ինձ հետ չկիսեին այդ ժառանգությունը: Ինչ վերաբերում է մեր նախնիներին, ապա նրանցից ոմանք ապրել և մահացել են հին ժամանակներում՝ առանց նույնիսկ լսելու Հիսուս Քրիստոսի անունը, ուստի, մենք հույս կունենայինք, որ վերականգնվեին աստվածաշնչյան ամենաարդար և ողորմած դրույթները. երբ ապրողները փրկող արարողություններ են կատարում իրենց մահացած ազգականների համար:⁷ Ոչ մի աշխատանք, իմ պատկերացմամբ, չէր կարող ամենայն շքեղությամբ ցուցադրել սիրող Աստծո հոգածությունը Իր երկրային բոլոր զավակների համար՝ անկախ նրանից, թե նրանք երբ են ապրել և որտեղ են մահացել: Դե, 1820 թվականի մեր հույսերի ցուցակը կարող էր շարունակվել, սակայն Վերականգնման թերևս

ամենակարևոր հաղորդագրությունն այն է, որ այդ հույսերն ապարդյուն չէին լինի: Մրբազան պուրակում սկիզբ առնելով, և առ այսօր, այդ ցանկությունները սկսեցին իրականանալ և դարձան, ինչպես Պողոս Առաքյալը և այլոք են ասել, իսկական խարիսխ հոգու համար՝ կայուն և հաստատուն:⁸ Այն, ինչի համար ժամանակին հույս ենք ունեցել, այժմ պատմություն է դարձել:

Ահա, թե ինչու մենք կարող ենք հետ նայել 200 տարի և տեսնել աշխարհում Աստծո բարության դրսևորումը: Բսկ ի՞նչ է լինելու ապագայում: Մենք դեռ հույսեր ունենք, որոնք չեն իրականացել: Նույնիսկ խոսելու ժամանակ մենք միահամուռ ուժերով պայքարում ենք COVID-19-ի դեմ, որը խորհրդավոր կերպով հիշեցում է այն մասին, որ ավազի հատիկից⁹ 1,000 անգամ փոքր վարակը¹⁰ կարող է ծնկի բերել ամբողջ մարդկությանը և համաշխարհային տնտեսությունները: Մենք աղոթում ենք նրանց համար, ովքեր կորցրել են իրենց սիրելիներին այս ժամանակակից ժանտախտի պատճառով, ինչպես նաև նրանց համար, ովքեր ներկայումս վարակված են կամ ծայրահեղ ծանր վիճակում են: Մենք, անշուշտ, աղոթում ենք նրանց համար, ովքեր այսպիսի հիանալի բժշկական օգնություն են ցուցաբերում: Երբ մենք հաղթահարենք վարակը, և այդպես էլ լինելու է, եկեք բոլորս պարտավորվենք ազատել աշխարհը սովի վարակից, համայնքներն ու ազգերը՝ աղքատության վարակից: Եկեք հուսանք, որ կունենանք այնպիսի դպրոցներ, որտեղ աշակերտները ուսում կստանան և չեն վախենա, որ իրենց վրա կկրակեն, հուսանք, որ Աստծո յուրաքանչյուր զավակը կունենա անձնական արժանապատվության պարզևր և ազատ կլինի՝ ռասայական, էթնիկական կամ կրոնական *ոչ ուն* տեսակի նախապաշարմունքից: Այս ամենի հիմքում ընկած է մեր անմար հույսը՝ ավելի մեծ նվիրվածություն ցուցաբերել երկու մեծագույն պատվիրաններին. սիրել

Աստծուն՝ պահելով Նրա խորհուրդները և սիրել մեր մերձավորներին՝ ցուցաբերելով բարություն և կարեկցանք, համբերություն և ներողատություն:¹¹ Այս երկու աստվածային հրահանգները դեռևս կան, և միշտ կլինեն, քանզի միակ իրական հույսը, որ ունենք՝ մեր երեխաներին ավելի լավ աշխարհ տալն է, քան այն, որը նրանք ճանաչում են:¹²

Այս համընդհանուր ցանկություններն ունենալուց բացի, շատերն այսօր ունեն նեղ անձնական հույսեր. բարելավել ամուսնությունը, կամ երբեմն, պարզապես ամուսնանալ, հույս ունեն հաղթել կախվածությունը, հույս, որ հեռացած զավակը կվերադառնա, որ ֆիզիկական և հուզական տարբեր տեսակի ցավերը կդադարեն: Քանի որ Վերականգնումը վերահաստատեց այն հիմնարար ճշմարտությունը, որ Աստված գործում է այս աշխարհում, մենք *կարող ենք* հուսալ, և *պետք է* հուսանք, նույնիսկ այն դեպքում, երբ լավ բաներ քիչ են կատարվում: Միա, թե որն է սուրբ գրության հաստատված իմաստը, երբ կարողում ենք, թե Աբրահամը կարողացավ առանց հույսի հույսով հավատալ,¹³ այսինքն, նա կարողացավ հավատալ, չնայած կային *շխախտություն* բոլոր պատճառներն առ այն, որ ինքն ու Մառան երեխա կունենային, կարծես թե, ընդհանրապես հնարավոր չէր: Մյսայիսով, ես հարցնում եմ. «Եթե մեր 1820 թվականների հույսերից շատերը սկսեցին իրականանալ, երբ աստվածային լույսի փայլն ընկավ ծնկի եկած պատանու վրա, Նյու Յորքի հյուսիսում գտնվող ժառաջատ վայրում, ինչու՞ չպետք է հույս ունենանք, որ մեր արդար ցանկությունները և Քրիստոսին նմանվելու ձգտումները դեռ կարող են հրաշքով, զարմանալիորեն պատասխան ստանալ ամեն հույսի Աստծուց»: Մենք բոլորս պետք է հավատանք, որ այն, ինչ ցանկանում ենք արդարությամբ, կարող է մի օր, ինչ-որ կերպ իրականություն դառնալ:

Եղբայրներ և քույրեր, մենք գիտենք, թե որոնք էին 19-րդ դարի

սկզբում կրոնի պակասությունները: Ավելին, մենք գիտենք այսօրվա կրոնական պակասություններից մի բան, որը դեռևս չի բավարարում քաղցը և հույսը չբացահայտվածի հանդեպ: Մենք գիտենք, որ այդ անբավարվածությունը որոշ մարդկանց հեռացնում է ավանդական եկեղեցական հաստատություններից: Մենք նաև գիտենք, որ ինչպես գրել է մի հուսահատ գրող՝ «ներկայիս կրոնական ղեկավարներից շատերը կարծես բացարձակ չեն հասկանում», թե ինչպես դիմագրավել այս մերժումը, և, ի պատասխան, առաջարկում են «թերապևտիկ դեիզմի» «ջրալի շիլա», էժան խորհրդանշական ակտիվություն, լավ փաթեթավորված հերետիկոսություն, [երբեմն էլ, պարզապես] ձանձրալի անհեթեթություն»,¹⁴ և այս ամենն այն ժամանակ, երբ աշխարհին շատ ավելին է հարկավոր, երբ աճող սերունդն արժանի է ունենալ շատ ավելին, և երբ Հիսուսի օրերում Նա շատ ավելին էր սովել: Որպես Քրիստոսի աշակերտներ, մենք կարող ենք մեր օրերում ավելի բարձր լինել, քան հին իսրայելացիներն էին, ովքեր տրտնջում էին. «Մեր ոսկորները չորացան եւ մեր հույսը փչացաւ»: ¹⁵ Իսկապես, եթե ի վերջո կորցնենք մեր հույսը, ապա կկորցնենք մեր գոտեպնդող վերջին հատկանիշը: *Divina Commedia* աստվածային կատակերգության մեջ, հենց դժոխքի դարպասի վերևում Դանթեն նախազգուշացում էր գրել բոլոր նրանց համար, ովքեր ճամփորդում էին այդտեղով. «Ո՛վ մտնողներ, թողեք ձեր հույսը համայն»: ¹⁶ Իրոք, երբ հույս չկա, այն, ինչ մնում է՝ երկու կողմից բոցավառվող դժոխքի հուրն է:

Մյսայիսով, երբ նահանջելու տեղ այլևս չունենք, ինչպես ասվում է օրհներգում. «օգնականները ձայնողվեցին, սփոփանքն անհետացավ»,¹⁷ մեր անփոխարինելի արժանիքներից մեկը կլինի հույսի թանկագին պարզևը, որն անբաժան կերպով կապված է Աստծո հանդեպ մեր հավատքի և մարդկանց հանդեպ մեր գթասրտության հետ:

Այս 200-ամյա հոբելյանական տարում, երբ մենք հետ ենք նայում տեսնելով այն ամենն, ինչ մեզ տրվել է և ուրախանում ենք իրականություն դարձած բազմաթիվ հույսերի համար, մտքիս են գալիս մի վերադարձած գեղեցիկ քույր միսիոների արտահայտած խոսքերը, երբ մի քանի ամիս առաջ Յոհանեսբուրգում նա մեզ ասաց. «[Մենք] այսքան բան չենք ստացել, որ միայն այսքանը ստանայինք»:¹⁸

Բառափոխելով սուրբ գրություններում զետեղված ոգեշնչված հրաժեշտի խոսքերից մեկը՝ Նեփի մարգարեի և այդ երիտասարդ քրոջ հետ ես ասում եմ.

«Իմ սիրելի՛ եղբայրներ [և քույրեր], հետո, երբ դուք [ստացել եք Վերականգնման այս առաջին պտուղները], ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ արված է: Միա, ես ասում եմ ձեզ՝ ո՛չ. . . .

Դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, *ունենալով հույսի կատարյալ պայծառություն*, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: . . . Եթե դուք [դա անեք] . . . այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք»:¹⁹

Ես շնորհակալություն եմ հայտնում, իմ եղբայրներ և քույրեր, այն ամենի համար, ինչ մեզ տրվել է ժամանակի այս վերջին և ամենամեծ տնտեսությունում՝ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի տնտեսությունում: Ավետարանից բխող պարզևներն ու օրհնությունները ինձ համար ամեն ինչ են, ամեն ինչ. այնպես որ՝ ջանալով շնորհակալություն հայտնել իմ Երկնային Հորը դրանց համար, ես պիտի «պահեմ խոստումներ և քայլեմ մղուններ՝ ննջելուց առաջ»,²⁰ Եկեք առաջ մղվենք՝ սեր ունենալով մեր սրտում, քայլելով «հույսի պայծառությամբ»,²¹ որը լուսավորում է դեպի ապագա տանող սուրբ ճանապարհը, որի վրա մենք կանգնած ենք շուրջ 200 տարի: Ես վկայում եմ, որ ապագան նույնքան հրաշքներով լի է լինելու և

առատորեն օրհնված, որքան անցյալը: Մենք բոլոր պատճառներն ունենք՝ հուսալու ավելի մեծ օրհնությունների համար, քան նրանք, որ արդեն ստացել ենք, քանի որ սա Ամենակարող Աստծո գործն է, սա շարունակական հայտնության Եկեղեցին է, սա Քրիստոսի անսահման շնորհի և բարեգործության ավետարանն է: Ես վկայում եմ այս բոլոր ճշմարտությունների և շատ այլ բաների մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "The Essence of the Christian Religion," in *The Works of William E. Channing* (1888), 1004.
2. 2 Նեփի 26.24:
3. Տես Հովհաննես 3.16–17:
4. Մովսես 7.62:
5. Տես Եսայիա 2.1–3, Եզեկիել 37.26, Միքիա 4.1–3, Մաղաբիա 3.1:
6. Հովհաննես 14.2:
7. Տես Ս Կորնթացիս 15.29, Վարդապետություն և Ուխտեր 128.15–17:
8. Տես Եբրայեցիս 6.19, Եթեր 12.4:
9. See Na Zhu and others, "A Novel Coronavirus from Patients with Pneumonia in China, 2019," *New England Journal of Medicine*, Feb. 20, 2020, 727–33.
10. See "Examination and Description of Soil Profiles," in *Soil Survey Manual*, ed. C. Ditzler, K. Scheffe, and H. C. Monger (2017), nracs.usda.gov.
11. Տես Մատթեոս 22.36–40, Մարկոս 12.29–33, տես նաև Ղևառացոց 19.18, Երկրորդ Օրհնաց 6.1–6:
12. Տես Եթեր 12.4:
13. Տես Հռովմայեցիս 4.18:
14. R. J. Snell, "Quiet Hope: A New Year's Resolution," *Public Discourse: The Journal of the Witherspoon Institute*, Dec. 31, 2019, thepublicdiscourse.com.
15. Եզեկիել 37.11:
16. This is the phrase as popularly translated. Սա ժողովրդի կողմից թարգմանված արտահայտությունն է: Այնուամենայնիվ, ավելի բառացի թարգմանությունն է՝ «Ո՛վ մտնողներ, թողեք ձեր հույսը համայն» (Dante Alighieri, "The Vision of Hell," in *Divine Comedy*, trans. Henry Francis Cary [1892], canto III, line 9):
17. "Abide with Me!" *Hymns*, no. 166.
18. Judith Mahlangu (mistake conference near Johannesburg, South Africa, Nov. 10, 2019), in Sydney Walker, "Elder Holland Visits Southeast Africa during 'Remarkable Time of Growth,'" *Church News*, Nov. 27, 2019, thechurchnews.com.
19. 2 Նեփի 31.19–20, շեշտադրումն ավելացված է:
20. "Stopping by Woods on a Snowy Evening," lines 14–16, in *The Poetry of Robert Frost: The Collected Poems*, ed. Edward Connery Lathem (1969), 225.
21. 2 Նեփի 31.20



Երեց Դեյվիդ Ա. Բեդևար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Թող այդ տունը կառուցվի իմ անվան համար (Վարդապետություն և Ուխտեր 124.40)

Տաճարներում ստացած ուխտերն ու արարողությունները կարևոր են մեր սրտերը սրբացնելու և Աստծո որդիների ու դուստրերի վերջնական վեհացման համար:

200 տարի առաջ Սրբազան Գուրակում երիտասարդ Ջոզեֆ Մմիթը տեսավ և խոսեց Աստծո՝ Հավերժական Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ: Նրանցից Ջոզեֆն իմացավ Աստվածազլխի ճշմարիտ բնույթի և շարունակվող հայտնության մասին, քանի որ այս աստվածային տեսիլքը մուտք էր գործում վերջին օրերի «ժամանակների լրության տնտեսության մեջ»:¹

Մտավորապես երեք տարի անց, ի պատասխան անկեղծ աղոթքի, 1823թ. սեպտեմբերի 21-ի երեկոյան Ջոզեֆի ննջասենյակը լցվեց լույսով, մինչև այն «զարձավ կեսօրից էլ լուսավոր»:² Նրա մահճակալի կողքին հայտնվեց մի անձնավորություն, կոչեց երիտասարդ տղային իր անունով և հայտնեց, որ «ինքը սուրհանդակ է, Աստծո ներկայությունից ուղարկված . . . , և որ իր անունը Մորոնի է»:³ Նա ցուցումներ տվեց Ջոզեֆին Մորոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ:

Եվ այնուհետև Մորոնին մեքերեց Հին Կտակարանի Մաղաքիայի գրքից, Թագավոր Հակոբոսի տարբերակում օգտագործված լեզվի մի փոքր տարբերությամբ.

«Ահա, ես ձեզ կհայտնեմ Քահանայությունը, Եղիա մարգարեի ձեռքով, նախքան Տիրոջ մեծ ու ահեղ օրվա գալը:

Եվ նա զավակների սրտերում կսերմանի հայրերին տված խոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը: Եթե այդպես չլինի, ողջ երկիրն ամբողջովին կամայանա նրա գալստյան ժամանակ»:⁴

Կարևոր է, որ Մորոնիի ցուցումները Ջոզեֆ Մմիթին Եղիայի առաքելության վերաբերյալ սկիզբ դրեցին վերջին օրերում տաճարային և ընտանեկան աշխատանքին և հանդիսացան վերականգնման հիմնական տարրը «ամեն բաների հաստատուելու ժամանակներում, որոնց համար խոսեց Աստուած իր

բոլոր սուրբ մարգարեների բերանովը յախտենից հետև»:⁵

Այժմ, ես կխոսեմ Սուրբ Հոգու օգնության մասին, երբ միասին սովորենք ուխտերի, արարողությունների և օրհնությունների վերաբերյալ, որոնք հասանելի են մեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տաճարներում:

Եղիայի վերադարձը

Ես կսկսեմ՝ տալով մի հիմնարար հարց. Եղիայի վերադարձն ինչո՞ւ էր կարևոր:

«Մենք սովորում ենք վերջին օրերի հայտնություններից, որ Եղիան կրել է Մեքիսեդեկյան Քահանայության կնքման զորությունը»⁶ և «եղել է վերջին մարգարեն, որն այն ունեցել է՝ նախքան Հիսուս Քրիստոսի ժամանակները»:⁷

Մարգարե Ջոզեֆ Մմիթը բացատրել է. «Եղիայի ոգին, զորությունը և կոչումն է, որ դուք զորություն ունենաք կրելու բանալիները . . . *Մեքիսեդեկյան Քահանայության լրության* . . . , և ստանաք . . . Աստծո թագավորությանը վերաբերող բոլոր արարողությունները, հայրերի սրտերը դեպի զավակները դարձնելու համար և զավակներին՝ դեպի հայրերը, նույնիսկ նրանց, ովքեր երկնքում են»:⁸

Կնքման այս սուրբ իշխանությունը անհրաժեշտ է, որպեսզի. «այն, որ երկրի վրա կապես, կապված կլինի երկնքում. և այն, որ երկրի վրա արձակես, արձակված կլինի երկնքում»:⁹

Ջոզեֆը հետագայում հստակեցնում է. «Աստված ինչպե՞ս կփրկի այս սերունդը: Նա կուղարկի Եղիա մարգարեին: . . . Եղիան կբացահայտի ուխտերը, որոնցով հայրերի սրտերը կկնքվեն իրենց զավակների սրտերի հետ, իսկ զավակների սրտերը՝ հայրերի»:¹⁰

Եղիան Մովսեսի հետ հայտնվեց Կերպարանափոխման սարի վրա և շնորհեց այս իշխանությունը Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին:¹¹ 1836թ. ապրիլի 3-ին Կիրթլենդի Տաճարում Եղիան, Մովսեսը և Եղիասը նույնպես հայտնվեցին



Պատկերը պատկերում է Եղիայի վերադարձը 1836 թ. ապրիլի 3-ին Կիրթլենդի Տաճարում:

և նույն քահանայության բանալիները հանձնեցին Ջոզեֆ Մմիթին և Օլիվեր Քաուլերին:¹²

1836թ. Եղիայի միջոցով կնքման իշխանության վերականգնումը անհրաժեշտ էր երկիրը Փրկիչի Երկրորդ Գալստյան համար նախապատրաստելու համար և սկիզբ դրեց մեծապես աճող և աշխարհով մեկ տարածվող հետաքրքրությանը ընտանեկան պատմության ուսումնասիրության վերաբերյալ:

Փոխելով, դարձնելով և սրբելով սրտերը

Կանոնիկ գրքերում *սիրտ* բառն օգտագործվում է ավելի քան 1000 անգամ: Այս պարզ, բայց կարևոր բառը հաճախ ցույց է տալիս անհատի ներքին զգացմունքները: Մեր սիրտը՝ մեր ցանկությունների, սիրո, նպատակների, դրդապատճառների և վերաբերմունքի համագումարը, սահմանում է, թե ով ենք մենք, և որոշում, թե մենք

ինչ կդառնանք: Իսկ Տիրոջ գործի էությունն է՝ փոխել, դարձնել և սրբել սրտերը ավետարանի ուխտերի և քահանայության արարողությունների միջոցով:

Մենք չենք կառուցում կամ մուտք գործում սուրբ տաճարներ միայն անհատական կամ ընտանեկան հիշարժան փորձառություններ ունենալու համար: Ավելի շուտ, տաճարներում ստացած ուխտերը և կատարված արարողությունները կարևոր են մեր սրտերը սրբացնելու և Աստծո որդիների ու դուստրերի վերջնական վեհացման համար:

Ջավակների սրտերում սերմանել հայրերին, ներառյալ՝ Աբրահամին, Իսահակին, Հակոբին տված խոստումները, դարձնել զավակների սրտերը դեպի իրենց հայրերը, կատարել ընտանեկան պատմության հետազոտություն և տաճարային փոխարինող արարողություններ. սրանք

աշխատանքներ են, որոնք օրհնում են անհատներին վարագույրի երկու կողմերում: Երբ մենք ջերմե-
ռանդ ներգրավվում ենք այս սուրբ
գործի մեջ, մենք հնազանդվում
ենք Աստծուն ու մեր մերձավորին
սիրելու և ծառայելու պատվիրան-
ներին:¹³ Եվ այդպիսի անձնագրի
ծառայությունն օգնում են մեզ իրոք
«Լսելի՛ Նրան»¹⁴ և գալ Փրկիչի մոտ:¹⁵

Ամենասրբազան ուխտերն ու
քահանայության արարողություն-
ները ստացվում են միայն տաճա-
րում՝ Աստծո տանը: Այն ամենը,
ինչ ուսուցանվում է և արվում է
տաճարում, շեշտադրում է Հիսուս
Քրիստոսի և Երկնային Հոր երջան-
կության մեծ ծրագրում Նրա դերը:

Փոփոխություն և ներսից դուրս

Նախագահ Էզրա Թաֆտ Բեն-
սոնը նկարագրել է մի կարևոր
օրինակ, որը Քավիչը օգտագոր-
ծում է՝ իրականացնելով «մարդու
անմահությունը և հավերժական
կյանքը»:¹⁶ Նա ասել է. «Տերն աշխա-
տում է ներսից դուրս: Աշխարհն
աշխատում է դրսից ներս: Աշխար-
հը մարդկանց հանում է փլատակ-
ներից: Քրիստոսը դուրս է հանում
փլատակները մարդկանց միջից,
իսկ այնուհետև նրանք իրենց
հանում են փլատակներից: Աշխար-
հը կոչվում է մարդկանց՝ փոխելով
նրանց միջավայրը: Քրիստոսը
փոխում է մարդկանց, ովքեր հետո
փոխում են իրենց միջավայրը:
Աշխարհը ձևավորում է մարդկային
վարքը, իսկ Քրիստոսը կարող է
փոխել մարդկային էությունը»:¹⁷

Քահանայության արարողու-
թյունները և ուխտերը կարևոր են
հոգևոր վերածննդի և փոխակեր-
պման շարունակվող գործընթա-
ցում, դրանք նաև այն միջոցներն
են, որոնք Աստված է նշանակել,
որոնցով Տերը աշխատում է մեզա-
նից յուրաքանչյուրի հետ *ներսից
դուրս*: Ուխտերը, որոնք անասան
պատվում ենք և միշտ հիշում, և
գրված են «կենդանի Աստուծոյ
Հոգովը. . . սրտի մարմնեղէն
տախտակների վերայ»,¹⁸ ապա-
հովում են նպատակ և հավաս-
տիացում թե՛ այս կյանքի, թե՛



հավերժության օրհնությունների
համար: Արարողությունները,
որոնք ստանում ենք արժանիորեն
և միշտ հիշում, բացում են երկնքի
դարպասները, որոնց միջոցով
աստվածայնության գործությունը
կարող է հոսել մեր կյանք:

Մենք չենք գալիս տաճար,
որպեսզի թաքնվենք կամ փախչենք
աշխարհի չարիքից: Ավելի շուտ
մենք գալիս ենք տաճար, որպես-
զի հաղթենք աշխարհի չարիքը:
Երբ մեր կյանք ենք հրավիրում
«աստվածայնության գործույն-
ը»¹⁹ ստանալով քահանայության
արարողությունները և կապելով
ու պահելով սրբազան ուխտերը,
մենք օրհնվում ենք մեր ուժից վեր
գործությամբ,²⁰ որպեսզի հաղթահա-
րենք մահկանացության գայթակ-
ղություններն ու դժվարությունները
և գործենք բարիք՝ դառնալով բարի:

Այս տան համբավը պիտի տարածվի օտար երկրներում

Այս տնտեսության առաջին
տաճարը կառուցվեց Կիրթլենդում
(Օհայո) և նվիրագործվեց 1836թ.
մարտի 27-ին:

Նվիրագործումից մեկ շաբաթ
անց Մարգարե Զոզեֆ Սմիթին
տրված հայտնության մեջ Տերը
հայտարարեց.

«Թող իմ ողջ ժողովրդի սիր-
տը ցնծա, որ իրենց գործությամբ

կառուցել են այս տունն իմ անվան
համար: . . .

Այո, հազարավորների և բյուրա-
վորների սրտերը մեծապես կցնծան
այն օրհնությունների հետևանքով,
որոնք պիտի թափվեն, և օժտման
հետևանքով, որով իմ ծառաներն
օժտվել են այս տանը:

Եվ այս տան համբավը պիտի
տարածվի օտար երկրներում.
և սա է սկիզբն այն օրհնության,
որը պիտի թափվի իմ ժողովրդի
գլխին:²¹

Խնդրում եմ ուշադրություն
դարձնել հետևյալ արտահայտու-
թյուններին՝ *հազարավորների և
բյուրասիրների սրտերը մեծապես
կցնծան, և այս տան համբավը
պիտի տարածվի օտար երկր-
ներում*: Սրանք 1836թ. ապրիլի
հրաշալի հայտարարություններն
են, երբ Եկեղեցին ուներ միայն մի
քանի անդամ և մեկ տաճար:

Այսօր՝ 2020 թվականին, մենք
ունենք 168 գործող տաճար-
ներ: Եվս քառասունինը տաճար
գտնվում են կառուցման կամ
վերանորոգման փուլում, կամ
հայտարարված են: Տիրոջ տները
կառուցվում են «ծովի կղզիների»
վրա²² և այն երկրներում ու տեղե-
րում, որոնք նախկինում շատերի
կողմից համարվում էին անհավա-
նական վայրեր տաճարի համար:

Օժտման արարողությունը
ներկայումս ներկայացվում է 88
լեզուներով և մատչելի կլինի
շատ լրացուցիչ լեզուներով, քանի
որ տաճարները կառուցվում են
Աստծո ավելի շատ զավակնե-
րի օրհնելու համար: Հաջորդ 15
տարիների ընթացքում կկրկնա-
պատկվի լեզուների թիվը, որոնցով
անցկացվում են տաճարային
արարողությունները:

Այս տարի մենք նախապատ-
րաստական աշխատանքներ կկա-
տարենք և կսկսենք 18 տաճարների
շինարարություն: Ի տարբերություն
սրա, 150 տարի տևեց առաջին 18
տաճարների կառուցումը 1830թ.
Եկեղեցու կազմավորումից մինչև
Տոկիո ճապոնիա տաճարի նվիրա-
գործումը նախագահ Սպենսեր Վ.
Քիմբալի կողմից 1980թ.:

Դիտարկենք տաճարային աշխատանքի արագացումը, որը տեղի է ունեցել հենց նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կյանքի ընթացքում: Երբ Ռասսել Մ. Նելսոնը ծնվեց 1924 թվականի սեպտեմբերի 9-ին, Եկեղեցին ուներ վեց գործող տաճարներ:

60 տարի անց, 1984թ. ապրիլի 7-ին, երբ նա առաքյալ կարգվեց, 26 տաճարներ էին գործում. 60 տարում 20 տաճարներ ավելացան:

Երբ նախագահ Նելսոնը հաստատվեց Եկեղեցու նախագահ, 159 տաճարներ արդեն գործում էին, իսկ որպես Տասներկուսի Քվորումի անդամ 34 տարիների նրա ծառայության ընթացքում տաճարների թիվն ավելացավ 133-ով:

2018 թվականի հունվարի 14-ին Եկեղեցու նախագահ դառնալուց հետո նախագահ Նելսոնը հայտարարել է 35 նոր տաճարների կառուցման մասին:

Գործող տաճարների ինստունվեց տոկոսը նվիրագործվել են նախագահ Նելսոնի կյանքի ընթացքում, 84 տոկոսը նվիրագործվել են նրա առաքյալ կարգվելուց հետո:

Միշտ կենտրոնացել ամենակարևոր բաների վրա

Որպես Տիրոջ վերականգնված Եկեղեցու անդամներ, մենք «մնում ենք զարմացած» վերջին օրերում Նրա աշխատանքի շարունակ աճող տեմպից: Եվ ավելի շատ տաճարներ կկառուցվեն:

Բրիգամ Յանգը մարգարեացել է. «Այս աշխատանքն իրականացնելու համար պետք է լինի ոչ թե մեկ, այլ հազարավոր տաճարներ, հազարավոր և տասնյակ հազարավոր տղամարդիկ և կանայք կզնան այդ տաճարները և կպաշտոնավարեն արարողությունները այն մարդկանց համար, ովքեր ապրել են հազարամյակներ առաջ, և որոնց մասին իրագրել է միայն Տերը»:²³

Հասկանալի է, որ յուրաքանչյուր նոր տաճարի հայտարարումը մեծ ուրախության աղբյուր և պատճառ

է՝ Տիրոջը շնորհակալություն հայտնելու համար: Մակայն մենք հիմնականում պետք է կենտրոնանանք ուխտերի և արարողությունների վրա, որոնք կարող են փոխել մեր սրտերը և խորացնել մեր նվիրումը Փրկիչին, ոչ թե պարզապես շենքի տեղակայման և գեղեցկության վրա:

Հիմնարար պարտականությունները, որ մենք ունենք՝ որպես Տիրոջ վերականգնված Եկեղեցու անդամներ, հետևյալն են.

(1) «Լսել[ն]ք Նրան»²⁴ և փոխենք մեր սրտերը ուխտերի և արարողությունների միջոցով, (2) և ուրախությամբ կատարենք աստվածայնորեն նշանակված պարտականությունները՝ տաճարային օրհնություններ առաջարկելով ողջ մարդկության ընտանիքին վարագույրի երկու կողմերում: Նրա ղեկավարությամբ և օգնությամբ մենք իսկապես կիրականացնենք այս սրբազան պարտականությունները:

Սիրոնի կառուցումը

Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է.

«Սիրոնի հաստատումն այն գործն է, որը բոլոր դարերում հետաքրքրել է Աստծո ժողովրդին. Դա այն հիմքն է, որի վրա առանձնակի բերկրանքով հենվել են մարգարեները, քահանաներն ու թագավորները. Նրանք հույս են ունեցել ուրախ ակնկալիք ունենալով այն օրվա համար, որում մենք ապրում ենք, և ոգեշնչված երկնային և ուրախության ակնկալիքներով, նրանք երգել են, գրել և մարգարեացել մեր այսօրվա համար, սակայն մահացել են չտեսնելով այն, . . . որը թողնվել է, որ մենք տեսնենք, մասնակցենք և օգնենք, որ առաջ տանենք Վերջին օրերի փառքը»:²⁵

«Երկնային Քահանայությունը կմիավորվի երկրայինի հետ, առաջ բերելու այդ մեծ նպատակները, . . . մի աշխատանք, որն Աստված և հրեշտակները մտածել էին հրճվանքով անցած սերունդների համար, որը խանդավառեց

հնադարյան հայրապետերի և մարգարեների հոգիները, մի աշխատանք, որը նախատեսված է առաջ բերել խավարի զորությունների կործանումը, երկրի նորացումը, և մարդկային ընտանիքի փրկությունը»:²⁶

Ես հանդիսավոր կերպով վկայում եմ, որ Հայրն ու Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին և Եղիան վերականգնեց կնքման իշխանությունը: Տաճարային սրբազան ուխտերն ու արարողությունները կարող են ամրապնդել մեզ և սրբել մեր սրտերը, երբ մենք «Լսել[ն]ք Նրան»,²⁷ և զորություն ու աստվածայնություն ստանանք մեր կյանքում: Եվ ես վկայում եմ, որ այս վերջին օրերի աշխատանքը կկործանի խավարի ուժերը և կիրականացնի մարդկության ընտանիքի փրկությունը: Այս ճշմարտությունների մասին ես ուրախությամբ վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եփեսացիս 1.10:
2. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.30:
3. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33:
4. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.38–39:
5. Գործք Առաքելոց 3.21:
6. Սուրբ գրքերի ուղեցույց, «Եղիա»:
7. Սուրբ գրքերի ուղեցույց, «Եղիա»:
8. *Եկեղեցու նախագահների ուսումնական Ջոզեֆ Սմիթ* (2007), 311, շեշտադրումն ավելացված է
9. Մատթեոս 16.19, տես նաև Մատթեոս 18.18, Հելաման 10.7, Վարդապետություն և Ուխտեր 124.93, 132.46:
10. *Ուսումնական Ջոզեֆ Սմիթ*, 313:
11. Տես Մատթեոս 17.3:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 110.13–16:
13. Տես Մատթեոս 22.34–40:
14. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17:
15. Տես Օմնի 1.26, Մորոնի 10.30, 32:
16. Մովսես 1.39
17. Ezra Taft Benson, “Born of God,” *Ensign*, Nov. 1985, 6.
18. Բ Կորնթացիս 3.3:
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.20–21:
20. Տես “Lord, I Would Follow Thee,” *Hymns*, no. 220:
21. Վարդապետություն և Ուխտեր 110.6, 9–10:
22. 2 Նեփի 29.7:
23. *Եկեղեցու նախագահների ուսումնական Ջոզեֆ Սմիթ* (1997), 310:
24. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17:
25. *Ուսումնական Ջոզեֆ Սմիթ*, 186:
26. *Ուսումնական Ջոզեֆ Սմիթ*, 514–15.
27. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17:



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցու Նախագահ

Լսիր Նրան

*Մեր Հայրը գիտի, որ երբ մենք շրջապատված ենք
անորոշությամբ և վախով, այն, ինչը մեզ կօգնի
ամենից շատ՝ Նրա Որդուն լսելն է:*

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, անչափ երախտապարտ եմ, որ տեխնոլոգիայի կիրառմամբ մենք կարողացանք միասին հանդիպել և երկրպագել այս կիրակի առավոտյան: Մեծապես օրհնված ենք այն գիտելիքի համար, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է երկրի վրա:

Անցած մի քանի շաբաթների ընթացքում մեզանից շատերի անձնական կյանքը խաթարվել է: Երկրաշարժեր, հրդեհներ, ջրհեղեղներ, ժանտախտներ և դրանց հետևանքները խաթարել են առօրյան և առաջացրել սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների և խնայողությունների պակաս:

Այս ամենի մեջ մենք գովաբանում և շնորհակալություն ենք հայտնում ձեզ, որ որոշում եք կայացրել լսելու Տիրոջ խոսքն այս խառը ժամանակներում և միանալ մեզ գերագույն համաժողովին: Թանձրացող խավարը, որն ուղեկցում է նեղություններին, ավելի է պայծառացնում Հիսուս Քրիստոսի լույսը: Պարզապես մտածեք այն բարի գործերի մասին, որոնք բոլորս կարող ենք կատարել համաշխարհային ընդլվման այս ժամանակահատվածում: Փրկիչի հանդեպ ձեր սերն ու հավատքը ինչ-որ մեկի համար կարող է լավ

խթան հանդիսանալ, որ նա բացահայտի Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնումը:

Անցած երկու տարիների ընթացքում Քույր Նելսոնը և ես ամբողջ աշխարհով մեկ հանդիպել ենք ձեզանից հազարավորների հետ: Միասին հավաքվել ենք բացօթյա բեմերում և հյուրանոցների սրահներում: Ամեն տեղ ես զգացել եմ, որ գտնվում եմ Տիրոջ ընտրյալ ժողովրդի ներկայության մեջ և վկա եմ եղել Իսրայելի հավաքմանը, որը տեղի է ունեցել աչքիս առաջ:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, որին «մեր նախահայրերը փափագող ակնկալիքով սպասել են»:¹ Մենք

կենդանի վկան ենք այն բանի, ինչը մարգարե Նեփին տեսավ *միայն տեսիլքում*, որ «Աստծո Գառնի գործությունը» կիջնի «Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա, որոնք ցրված էին ողջ երկրի երեսին. և նրանք զինված էին արդարությամբ և Աստծո գործության մեծ փառքով»:²

Դո՛ւք, իմ եղբայրներ և քույրեր, այն տղամարդկանց, կանանց և երեխաների թվում եք, որոնց Նեփին տեսավ: Մտածեք այդ մասին:

Անկախ նրանից, թե որտեղ եք ապրում և ինչ հանգամանքներում եք գտնվում, Տեր Հիսուս Քրիստոսը *ձեր* Փրկիչն է, իսկ Աստծո մարգարեն՝ Ջոզեֆ Սմիթը, *ձեր* մարգարեն է: Նա նախակարգվել էր այս երկրի հիմնադրումից առաջ, որպեսզի լիներ այս վերջին տնտեսության մարգարեն, երբ «ոչինչ ետ չի պահվի»³ Սրբերից: Վերականգնման այս շարունակական գործընթացի ժամանակ հայտնությունը շարունակում է հոսել Տիրոջից:

Ի՞նչ է ձեզ համար նշանակում, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է երկրի վրա:

Դա նշանակում է, որ դուք և ձեր ընտանիքը կարող եք հավերժ կնքվել միասին: Դա նշանակում է, որ քանի որ դուք մկրտվել եք այն մարդու կողմից, ով իշխանություն ունի Հիսուս Քրիստոսի կողմից և հաստատվել է Նրա Եկեղեցու անդամ, դուք կարող եք վայելել Մուրբ Հոգու մշտական ընկերակցությունը: Նա կառաջնորդի և



Նյու Յորք Սիթի, Նյու Յորք, ԱՄՆ

կպաշտպանի ձեզ: Դա նշանակում է, որ դուք երբեք չեք մնա անխիթար վիճակում կամ չեք մնա առանց Աստծո զորության օգնության: Դա նշանակում է, որ քահանայության զորությունը կարող է օրհնել ձեզ, երբ ստանաք կարևոր արարողությունները, ուխտեր կապեք Աստծո հետ և պահեք դրանք: Այդ ճշմարտությունները մեծ խարխալ են մեր հոգու համար, հատկապես այս ժամանակներում, երբ մորիկները մոլեգնում են:

Մորմոնի Գիրքը պատմում է երկու մեծ քաղաքակրթությունների դասական վերելքի ու անկման մասին: Նրանց պատմությունը ցույց է տալիս, որ մարդկանց մեծամասնության համար հեշտ է մոռանալ Աստծուն, մերժել Տիրոջ մարգարեների նախազգուշացումները և փնտրել իշխանություն, ժողովրդականություն և մարմնական հաճույքներ:⁴ Մարգարեները նախկինում անընդհատ հայտարարել են «մեծ և զարմանալի բաներ մարդկանց, որոնց նրանք չեն հավատացել»:⁵

Այդպես է նաև մեր օրերում: Տարիների շարունակ նվիրագործված բեմերից մեծ ու զարմանալի խոսքեր են լսվում երկրի վրա: Իսկ մարդկանց մեծամասնությունը դեռ չի ընդունում այս ճշմարտությունները, կամ այն պատճառով, որ չգիտեն, թե որտեղ գտնեն այն,⁶ կամ այն պատճառով, որ նրանք լսում են նրանց, ովքեր չգիտեն ամբողջ ճշմարտությունը, կամ էլ այն պատճառով, որ նրանք մերժել են ճշմարտությունը՝ հօգուտ աշխարհիկ ձգտումների:

Հակառակորդը խելացի է: Հազարավյակներ շարունակ նա բարին չար էր դարձնում, իսկ չարը՝ բարի:⁷ Նրա ուղերձները կարող են լինել բարձր, հանդուգն և պարծենկոտ:

Սակայն, մեր երկնային Հոր ուղերձները զարմանալիորեն տարբերվում են: Նա հաղորդակցվում է պարզ, հանգիստ և այնպես հստակ, որ մենք չենք կարող չհասկանալ Նրան:⁸

Օրինակ, երբ Նա Իր Միաձին Որդուն ծանոթացրեց երկրի վրա ապրող մարդկանց հետ, նա



ՔՐԻՍՏՈՍ ԱՆՏՆԱԿՈՒՄ ԷՄԻՆԵՆՏԻՆԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆՆԵՐԸ

օգտագործեց զարմանալիորեն քիչ բառեր: Կերպարանավորման սարի վրա Աստված Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին ասաց. «Դա է իմ սիրելի Որդին. Դորան լսեցեք»:⁹ Նրա խոսքերը հնագույն Լիառատ երկրում հետևյալն էին. «Միա իմ Միրելի Որդին, որից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը, լսե՛ք նրան»:¹⁰ Այդ կարևոր հայտարարության մեջ, որը բացեց այս տնտեսությունը, Աստված պարզապես ասաց Ջոզեֆ Մմիթին. «Մա է Իմ Միրելի Որդին. Լսի՛ր Նրան»:¹¹

Այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մտածեք այն իրողության մասին, որ նոր թվարկած այս երեք դեպքերում, մինչ Հայրը կներկայացներ Որդուն, մարդիկ վախի և ինչ-որ չափով հուսահատության վիճակի մեջ էին:

Առաքյալները վախեցան, երբ տեսան, որ Կերպարանավորման սարի վրա Հիսուս Քրիստոսը շրջապատված է ամպով:

Նեփիաացիները վախեցան, քանի որ մի քանի օր շարունակ մնացել էին կործանման և խավարի մեջ:

Երկինքները բացվելուց առաջ Ջոզեֆ Մմիթը գտնվում էր խավարի ուժի տիրապետության տակ:

Մեր Հայրը գիտի, որ երբ մենք շրջապատված ենք անորոշությամբ և վախով, այն, ինչը մեզ կօգնի ամենից շատ՝ Նրա Որդուն լսելն է:

Քանի որ, երբ մենք ձգտում ենք լսել, իսկապես լսել Նրա Որդուն, մենք առաջնորդվում և իմանում ենք, թե ինչ անել ցանկացած պարագայում:

Վարդապետություն և Ուխտերի առաջին բառը *սկսանք դնելն է*:¹² Դա նշանակում է «լսել հնազանդվելու մտադրությամբ»:¹³ Ականջ դնել նշանակում է՝ «լսել Նրան». *լսել*, թե ինչ է Փրկիչն ասում, իսկ հետո *մշք դարձնել* Նրա խորհրդին: Այդ երկու բառով՝ «Լսիր Նրան», Աստված մեզ տալիս է հաջողության, երջանկության և ուրախության օրինակն այս կյանքում: Մենք պետք է *լսենք* Տիրոջ խոսքերը, *սկսանք դնենք* դրանց և *մշք դարձնենք* նրան, ինչ Նա ասել է մեզ:

Երբ ձգտում ենք դառնալ Հիսուս Քրիստոսի աշակերտները, *Նրան լսելու* մեր ջանքերը պետք է լինեն

ավելի գիտակցված: Պահանջվում է աշխուրջ և հետևողական աշխատանք, որպեսզի մեր առօրյա կյանքը լցվի Նրա խոսքով, Նրա ուսմունքներով և Նրա ճշմարտություններով:

Մենք պարզապես չենք կարող ապավինել այն տեղեկատվությանը, որին մենք բախվում ենք սոցիալական լրատվամիջոցներում: Առցանց գոյություն ունեցող միլիարդավոր բառերով և գովազդներով հագեցած աշխարհում, որոնք հակառակորդն անընդհատ սերմանում է իր աղմկոտ ու ստոր ջանքերով, որտե՞ղ *կայրող ենք* գնալ, որ լսենք Նրան:

Կարող ենք դիմել սուրբ գրություններին: Նրանք մեզ սովորեցնում են Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին, Նրա Քավության մեծության և մեր Հոր երջանկության ու փրկագնման մեծ ծրագրի մասին: Ամեն օր Աստծո խոսքի մեջ ընկղմվելը շատ կարևոր է հոգևոր գոյատևման համար, հատկապես՝ աճող ընդվզման այս օրերին: Երբ ամեն օր սնվենք Քրիստոսի խոսքերով, Քրիստոսի խոսքերը կասեն մեզ, թե ինչպես արձագանքենք այն դժվարություններին, որոնց, չէինք մտածի, որ երբևէ կբախվենք:

Մենք կարող ենք նաև *լսել Նրան* տաճարում: Տիրոջ տունը ուսուցման տուն է: Այնտեղ Տերն ուսուցանում է Իր ձևով: Այնտեղ յուրաքանչյուր արարողություն ուսուցանում է Փրկիչի մասին: Այնտեղ մենք սովորում ենք, թե ինչպես կարելի է բացել վարագույրը և ավելի որոշակիորեն հաղորդակցվել երկնքի հետ: Այնտեղ մենք սովորում ենք, թե ինչպես սաստել հակառակորդին և ապավինել Տիրոջ քահանայության զորությանը, որ գորացնի մեզ և նրանց, ում սիրում ենք: Այնտեղ ապաստան գտնելու համար բոլորս պետք է մեծապես շահագրգռված լինենք:

Երբ COVID-19- ի այս ժամանակավոր սահմանափակումները վերացվեն, խնդրում ենք պարբերաբար ժամանակ հատկացնել տաճարում երկրպագելու և ծառայելու

համար: Այդ ժամանակի յուրաքանչյուր րոպեն կօրհնի ձեզ և ձեր ընտանիքն այնպես, ինչպես ուրիշ *ոչինչ* չի կարող օրհնել: Ժամանակ տրամադրեք խորհելու այն մասին, թե ինչ եք լսում և զգում, երբ այնտեղ եք: Խնդրեք Տիրոջը ձեզ ուսուցանել, թե ինչպես բացել երկինքները, որ օրհնվի ձեր և այն մարդկանց կյանքը, ում սիրում և ծառայում եք:

Թեև ներկայումս հնարավոր չէ երկրպագել տաճարում, ես հրավիրում եմ ձեզ ավելի շատ մասնակցել ընտանեկան պատմության աշխատանքին, ներառյալ ընտանեկան պատմության ուսումնասիրությանը և ինդեքսավորմանը: Ես խոստանում եմ, որ երբ դուք ավելի շատ ժամանակ տրամադրեք տաճարային և ընտանեկան պատմությանը, դուք կմեծացնեք և կբարելավեք Նրան լսելու ունակությունը:

Մենք նաև ավելի հստակ ենք *լսում Նրան*, երբ բարելավում ենք Սուրբ Հոգու շշուկները ճանաչելու մեր ունակությունը: Երբեք, քան հիմա այնքան հրատապ չի եղել իմանալ, թե ինչպես է Հոգին խոսում ձեզ հետ: Աստվածազլխում Սուրբ Հոգին սուրհանդակ է: Նա կհուշի այնպիսի մտքեր, որոնք Հայրը և Որդին ցանկանում են, որ դուք ստանաք: Նա Մխիթարիչն է: Նա խաղաղության զգացողություն կբերի ձեր սրտին: Նա վկայում է ճշմարտության մասին և կհաստատի ճշմարտությունը, երբ լսեք և կարդաք Տիրոջ խոսքը:

Ես կրկին խնդրում եմ, որ դուք անեք *այն ամենը*, ինչ անհրաժեշտ է՝ ձեր հոգևոր ունակությունն ավելացնելու համար, որպեսզի ստանաք անձնական հայտնություն:

Դա կօգնի ձեզ իմանալ, թե ինչպես առաջ շարժվել ձեր կյանքում, ինչ անել ճգնաժամի ժամանակ և ինչպես տարբերել հակառակորդի գայթակղություններն ու խաբեությունները և խուսափել դրանցից:

Վերջապես, մենք *լսում ենք Նրան*, երբ ականջ ենք դնում մարգարեների, տեսանողների և հայտնողների խոսքերին: Հիսուս Քրիստոսի կարգված առաքյալները միշտ վկայում են Նրա մասին:

Նրանք մատնանշում են ուղին, երբ մենք քայլում ենք մահկանացու փորձառությունների մեր մռայլ լաբիրինթոսի ուղիով:

Ի՞նչ կլինի, երբ դուք ավելի գիտակցված լսեք, ականջ դնեք և ուշք դարձնեք նրան, ինչ ասել է Փրկիչը, և ինչ է Նա ասում հիմա իր մարգարեների միջոցով: Ես խոստանում եմ, որ դուք ավելի մեծ ուժ կստանաք՝ պայքարելու գայթակղության, դժվարության և թուլության դեմ: Ես խոստանում եմ հրաշքներ՝ ձեր ամուսնության, ընտանեկան հարաբերությունների և ամենօրյա աշխատանքի մեջ: Եվ ես խոստանում եմ, որ ուրախություն զգալու ձեր կարողությունը կավելանա նույնիսկ այն դեպքում, երբ ձեր կյանքում մեծանա իրարանցումը:

2020 թ. այս ապրիլյան գերագույն համաժողովն առիթ է նշելու մի իրադարձություն, որը փոխեց աշխարհը: Երբ մենք անհամբեր սպասում էինք Ջոզեֆ Մմիթի Առաջին տեսիլքի 200-ամյակին, Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը մտածում էին, թե *մենք* ինչ կարող էինք անել՝ նշելու այս եզակի իրադարձությունը:

Այդ երրորդության հայտնվելով սկիզբ է դրվում Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնմանը և մուտք ենք գործում ժամանակների լրության տնտեսություն:

Մենք մտածում էինք, թե արդյո՞ք պետք է հուշարձան կանգնեցվի: Բայց հաշվի առնելով այդ Առաջին տեսիլքի պատմական և միջազգային եզակի ազդեցությունը, մենք զգացինք, որ պետք է ստեղծել հուշարձան ոչ թե գրանիտից կամ քարից, այլ բառերից՝ հանդիսավոր և սրբազան հռչակագրի գրված խոսքեր, ոչ թե փորագրված «քարե թիթեղների» վրա, այլ փորագրված մեր սրտերի «մարմնական թիթեղների» վրա:¹⁴

Եկեղեցու կազմավորումից հետո միայն հինգ հռչակագիր է ընդունվել, որոնցից վերջինը՝ «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», ներկայացվել է

Նախագահ Գորգոն Բ. Հինքլիի կողմից 1995 թ-ին:

Այժմ, երբ մտածում ենք աշխարհի պատմության մեջ այս նշանակալի ժամանակաշրջանի և ցրված Բարայելը հավաքելու Տիրոջ պարտականության մասին՝ ի նախապատրաստություն Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին, մենք՝ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, ընդունում ենք հետևյալ հռչակագիրը: Նրա վերնագիրն է՝ «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնումը. Երկու-հարյուրամյա հռչակագիր աշխարհին»: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը այդ հռչակագրի հեղինակն է: Այն թվագրված է 2020 թվականի ապրիլին: Նախապատրաստվելով այսօրվան, ես այս հռչակագիրը նախօրոք ձայնագրել եմ Սրբազան պուրակում, որտեղ Ջոզեֆ Մմիթն առաջին անգամ տեսավ Հորը և Որդուն:

«Մենք հանդիսավոր կերպով հայտարարում ենք, որ Աստված սիրում է Իր զավակներին աշխարհի յուրաքանչյուր երկրում: Հայր Աստվածը մեզ տվել է աստվածային ծնունդ, անզուգական կյանք և Իր Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի անսահման քավող զոհաբերությունը: Հոր զորությամբ Հիսուսը կրկին հարություն առավ և հաղթեց մահին: Նա մեր Փրկիչն է, մեր Օրինակն ու մեր Քավիչը:

Երկու հարյուր տարի առաջ, 1820 թվականի գարնանային մի գեղեցիկ առավոտ, երիտասարդ Ջոզեֆ Մմիթը, ցանկանալով իմանալ, թե որ եկեղեցուն միանա, գնաց աղոթելու իր տան մոտի անտառում, որը գտնվում էր ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի ծայրամասում: Նա հարցեր ուներ իր հոգու փրկության վերաբերյալ և հավատում էր, որ Աստված կուղղորդի իրեն:

Խոնարհությամբ հայտարարում ենք, որ ի պատասխան նրա աղոթքի, Հայր Աստված և նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Ջոզեֆին և հանդիսավոր բացեցին

«ամեն ինչի վերականգնումը» (Գործք Առաքելոց 3.21), ինչպես կանխագուշակվել էր Աստվածաշնչում: Այդ տեսիլքում նա իմացավ, որ առաջին Առաքյալների մահից հետո Քրիստոսի Նոր Կտակարանի եկեղեցին կորսվել է Երկրից: Ջոզեֆը պետք է գործիք դառնար այդ եկեղեցու վերադարձի գործում:

Մենք հաստատում ենք, որ Հոր և Որդու ղեկավարության ներքո երկնային սուրհանդակներն իջան՝ Ջոզեֆին հրահանգելու և Հիսուս Քրիստոսի եկեղեցին կրկին վերականգնելու համար: Հարություն առած Հովհաննես Մկրտիչը վերականգնեց մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտելու իշխանությունը: Առաջին տասներկու առաքյալներից երեքը՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, վերականգնեցին առաքյալների կոչումները և քահանայության իշխանության բանալիները: Եկան նաև ուրիշներ, այդ թվում՝ Եղիան, ով վերականգնեց ընտանիքները հավիտյան միավորելու իշխանությունը հավերժական հարաբերություններում, որը գերազանցում է մահին:

Մենք նաև վկայում ենք, որ Ջոզեֆ Մմիթին տրվեց Աստծո պարզև ու զորությունը թարգմանելու հնագույն հիշատակարանը՝ Մորմոնի Գիրքը. Եվ մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին: Այս սուրբ գրքի էջերը պարունակում են Արևմտյան կիսագնդի ժողովրդին մատուցած Հիսուս Քրիստոսի անձնական ծառայության պատմությունը Նրա հարությունից անմիջապես հետո: Այն ուսուցանում է կյանքի նպատակը և բացատրում է Քրիստոսի վարդապետությունը, որն այդ նպատակի համար կարևոր նշանակություն ունի: Մորմոնի Գիրքը, լինելով Աստվածաշնչի ուղեկից սուրբ գրություն, վկայում է, որ բոլոր մարդիկ սիրող երկնային Հոր որդիներն ու դուստրերն են, որ Նա աստվածային ծրագիր ունի մեր կյանքի համար, և որ Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսն այսօր խոսում է այնպես, ինչպես հին օրերում:

Մենք հայտարարում ենք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, որը կազմավորվել է 1830 թվականի ապրիլի 6-ին, Քրիստոսի Նոր Կտակարանի վերականգնված եկեղեցին է: Այս եկեղեցին խարսխված է իր գլխավոր անկյունաքարի՝ Հիսուս Քրիստոսի կատարյալ կյանքին և Նրա անսահման Քավությանն ու իրական Հարությանը: Հիսուս Քրիստոսը ևս մեկ անգամ կանչել է առաքյալներ և նրանց տվել քահանայության իշխանություն: Նա հրավիրում է, որ բոլորս գանք դեպի Իրեն և Իր Եկեղեցին, ստանանք Սուրբ Հոգին, փրկության արարողությունները և ձեռք բերենք հարատև ուրախություն:

Արդեն անցել է երկու հարյուր տարի այն պահից, երբ Վերականգնումը սկիզբ դրվեց Հայր Աստծո և Նրա սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի կողմից: Ամբողջ աշխարհում միլիոնավոր մարդիկ գիտելիք են ստացել այս մարգարեական իրադարձությունների մասին:

Մենք ուրախությամբ հայտարարում ենք, որ խոստացված Վերականգնումը առաջ է շարժվում շարունակական հայտնության միջոցով: Երկիրն այլևս երբեք նույնը չի լինի, քանի որ Աստված «ամեն բան [կ]բովանդակի Քրիստոսումը» (Եփեսացիս 1.10):

Ակնածանքով և երախտագիտությամբ, մենք՝ որպես Նրա Առաքյալներ, հրավիրում ենք բոլորին իմանալ, ինչպես մենք գիտենք, որ երկինքները բաց են: Մենք հաստատում ենք, որ Աստված Իր սիրելի որդիների և դուստրերի համար հայտնում է Իր կամքը: Մենք վկայում ենք, որ նրանք, ովքեր աղոթքով կուսումնասիրեն Վերականգնման ուղերձը և կգործեն հավատքով, կօրհնվեն և անձնական վկայություն կստանան նրա աստվածային ծագման և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի խոստացված Երկրորդ Գալուստին աշխարհը նախապատրաստելու նպատակի մասին:¹⁵

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, դա մեր երկուհարյուրամյա

հռչակագիրն է աշխարհին, որը վերաբերում է Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնմանն իր լրիվության մեջ: Այն թարգմանվել է 12 լեզուներով: Շուտով կթարգմանվի այլ լեզուներով: Այն անմիջապես հասանելի կլինի Եկեղեցու կայքում, որտեղից կարող եք ձեռք բերել կրկնօրինակը: Ուսումնասիրեք այն առանձին և ձեր ընտանիքի անդամների ու ընկերների հետ: Խորհեք ճշմարտությունների մասին և մտածեք, թե այդ ճշմարտություններն ի՞նչ ազդեցություն կունենան ձեր կյանքի վրա, եթե լսեք դրանք, ակնաչ դնեք և ուշք դարձնեք այն պատվիրաններին և ուխտերին, որոնք լրացնում են այդ ճշմարտությունները:

Ես գիտեմ, որ Ջոզեֆ Միխթր նախակարգված մարզարեն է, որին Տերն ընտրեց այս վերջին տնտեսությունը բացելու համար: Նրա միջոցով Տիրոջ եկեղեցին վերականգնվեց երկրի վրա: Ջոզեֆն իր վկայությունը կնքեց իր արյամբ: Որքա՞ն շատ եմ սիրում և հարգում նրան:

Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նրա Եկեղեցին վերականգնվել է: Նա և Նրա Հայրը՝ մեր Երկնային Հայրը, հսկում են մեզ: Ես դա վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՍԵՐ


1. Վարդապետություն և Ուխտեր 121.27:
2. 1 Նեփի 14.14:
3. Վարդապետություն և Ուխտեր 121.28:
4. Տես 1 Նեփի 22.23:
5. Եթեր 12.5:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 123.12:
7. Տես Մատթեոս 5.20, 2 Նեփի 15.20:
8. Տես 2 Նեփի 25.4, Ալմա 5.43:
9. Մարկոս 9.7, Ղուկաս 9.35:
10. 3 Նեփի 11.7:
11. Ջոզեֆ Միխթր-Պատմություն 1.17:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.1:
13. Հին Կտակարանում *սկսանք դնել* եզրույթը թարգմանվել է եբրայերենի *շահու* բառից, որը հաստատուն բառ է և նշանակում է «լսել հնազանդվելու մտադրությամբ»: *Սկսանք դնել* բառը սուրբ գրքերում հանդիպող բառ է, որը հանդիպում է Վարդապետություն և Ուխտերի 40-րդ բաժնում:
14. Տես Բ Կորնթացիս 3.3:
15. Այս թարգմանությունը նախնական է: Հռչակագրի պաշտոնական թարգմանությունը հասանելի կլինի գալիք ամիսների ընթացքում:

Ովսաննա բացականչություն

Ներկայացված է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ

Այժմ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, նշելով Հոր և Որդու մասին Ջոզեֆ Միխթրի Առաջին տեսիլքը, մենք զգացել ենք, որ պատշաճ կլինի ուրախանալ միասին՝ մասնակցելով Ովսաննա բացականչությանը:

Այս սրբազան բացականչությունն այս տնտեսության ժամանակ ասվել է 1886թ.-ի մարտի 27-ին, Կիրթլենդի Տաճարի նվիրագործման ժամանակ: Մեր օրերում այն ասվում է յուրաքանչյուր տաճարի նվիրագործման ժամանակ: Դա սրբազան տուրք է Հոր և Որդու համար, որը խորհրդանշում է բազմության արձագանքը, երբ Փրկիչը հաղթական մուտք գործեց Երուսաղեմ: Այն նաև վերահաստատում է այդ օրը սրբազան պուրակում երիտասարդ Ջոզեֆի ունեցած փորձառությունը, մասնավորապես այն, որ Հայրն ու Որդին երկու փառավորված Էակներ են, ում մենք երկրպագում և փառաբանում ենք:



Բաունթիֆուլ, Յուտա, ԱՄՆ

Ես հիմա ցույց կտամ, թե ինչպես է կատարվում Ովսաննա բացականչությունը: Դա անելիս, հրավիրում եմ լրատվամիջոցների մեր գործընկերներին այս շատ սրբազան պահվածքին վերաբերվել արժանապատվորեն և հարգանքով:

Մասնակիցներից յուրաքանչյուրը վերցնում է մաքուր սպիտակ թաշկինակ, բռնում է դրա մի անկյունից, շարժում այն և բոլորը միասին միահամուռ ձայնով ասում են՝ «Ովսաննա, Ովսաննա, Ովսաննա Մստծուն ու Գառին», կրկնում դա երեք անգամ, որից հետո ասում «Ամեն, Ամեն և Ամեն»: Եթե չունեք սպիտակ թաշկինակ, կարող եք պարզապես ձեռքը շարժել:

Եղբայրներ և քույրեր, այժմ ես հրավիրում եմ ձեզ ոտքի կանգնել և մասնակցել Ովսաննա բացականչությանը, որից հետո կհնչեն «Ովսաննա» և «Մստծո Հոգին»¹ օրհներգերը:

Խմբավարի ազդանշանից հետո խնդրում ենք միանալ և երգել «Մստծո Հոգին» օրհներգը:

*Ովսաննա, Ովսաննա, Ովսաննա Մստծուն ու Գառին:
Ովսաննա, Ովսաննա, Ովսաննա Մստծուն ու Գառին:
Ովսաննա, Ովսաննա, Ովսաննա Մստծուն ու Գառին:
Ամեն, Ամեն և Ամեն: ■*

ՀՂՈՒՍ

1. *Օրհներգեր*, հ. 28:



Նախագահ Դավիթ Ն. Օուրս
Առաջին Նախագահության առաջին խորհրդակալ

Մեծ ծրագիրը

Մենք, որ գիտենք Աստծո ծրագիրը և նրան մասնակցելու ուխտ ենք կապել, հստակ պատասխանատվություն ունենք ուսուցանելու այդ ճշմարտությունները:

Անգամ եզակի փորձությունների ու մարտահրավերների պայմաններում, մենք իրապես օրհնված ենք: Այս գերագույն համաժողովը Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման հարստության և ուրախության մեծ բաժին պարզեց մեզ: Մենք ուրախություն ապրեցինք՝ լսելով Հոր և Որդու տեսիլքի մասին, որով սկսվեց Վերականգնումը: Մեզ հիշեցրեցին Մորմոնի Գրքի հրաշքով երևան գալու մասին, որի առանցքային նպատակն է վկայել Հիսուս Քրիստոսի և Նրա վարդապետության մասին: Մարգարեներին և անձամբ մեզ եկող հայտնությունների ուրախ իրականությունը թարմություն պարզեց մեզ: Մենք լսեցինք

անգին վկայություններ Հիսուս Քրիստոսի անսահման Քավության և Նրա բառացի հարության մասին: Եվ մեզ սովորեցրին Նրա ավետարանի լրիվության այլ ճշմարտություններ, որոնք հայտնվել էին Չոզեֆ Մմիթին այն բանից հետո, երբ Հայր Աստված հայտարարել էր այդ նոր կոչված մարգարեին. «Մա է իմ սիրելի Որդին: Լսի՛ր Նրան:» (Չոզեֆ Մմիթ-Պատմություն 1.17):

Մենք հաստատվեցինք քահանայության և նրա բանալիների վերականգնման գիտելիքներում: Մենք վերահաստատվեցինք մեր վճռականության մեջ, որ Տիրոջ վերականգնված եկեղեցին պետք է հայտնի լինի իր պատշաճ՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի եկեղեցի անունով: Եվ մեզ առաջարկեցին միանալ ծումպահության և աղոթքի, որպեսզի նվազագույնի հասցնենք համաշխարհային ավերիչ համաճարակի ներկա և ապագա հետևանքները: Այս առավոտ մենք ոգեշնչվեցինք Տիրոջ կենդանի մարգարեի կողմից, որը ներկայացրեց Վերականգնման պատմական մի հռչակագիր: Մենք հաստատում ենք հռչակագրի հայտարարությունը, որ «նրանք, ովքեր աղոթքով կուսումնասիրեն Վերականգնման ուղերձը և հավատքով

քայլ կանեն, կօրհնվեն և անձնական վկայություն կստանան նրա աստվածային ծագման և մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի խոստացված Երկրորդ Գալստի համար աշխարհը նախապատրաստելու նպատակի մասին»:¹

Ծրագիրը

Այս ամենը աստվածային ծրագրի մաս է, որի նպատակն է Աստծո զավակներին վեհացում ստանալու և Նրա նման դառնալու հնարավորություն ընձեռել: Վերականգնման հայտնություններից մեկը համարվող այդ ծրագիրը, որը սուրբ գրություններում ակնարկվում է որպես «երջանկության մեծ ծրագիր», «փրկագնման ծրագիր», և «փրկության ծրագիր» (Ամա 42.8, 11, 5), սկսվել է Երկնային խորհրդում: Որպես ոգիներ՝ մենք ցանկություն ունեինք հասնել հավերժական կյանքին, որը վայելում էին մեր երկնային ծնողները: Այդ ժամանակ մենք առաջադիմել էինք այնքան, որքան հնարավոր էր առանց ֆիզիկական մարմնում մահկանացու փորձի: Այդ փորձը ապահովելու նպատակով՝ Հայր Աստված ծրագրեց ստեղծել այս երկիրը: Ծրագրած մահկանացու կյանքում մենք մեղքից կեղտոտվելու էինք, քանի որ անցնելու էինք հակադրության միջով, որն անհրաժեշտ էր մեր հոգևոր աճի համար: Մենք նաև ենթակա կլինեինք ֆիզիկական մահվան: Մահից և մեղքից մեզ վերականգնելու համար Երկնային Հոր ծրագիրը Փրկիչ էր նախատեսում: Նրա հարությունը բոլորին կփրկագներ մահից, և Նրա քավիչ զոհաբերությունը կվճարեր այն գինը, որն անհրաժեշտ կլիներ, որ բոլորը մեղքից մաքրվեին նախանշված պայմաններով, որը կնպաստեր մեր զարգացմանը: Հիսուս Քրիստոսի Քավությունը առանցքային դեր ունի Հոր ծրագրում:

Երկնային խորհրդում Աստծո բոլոր հոգևոր զավակները ծանոթացան Հոր ծրագրին՝ մահկանացու լինելու հետևանքներին ու փորձություններին, երկնային օգնությանը



Պրոֆ. Յուսա, ՄՄՆ



պատվիրաններին և Նրա ծրագրին հակառակ գործել: Այն նաև պահանջում է, որ մենք մահկանացու այլ հակադրությունների ենթարկվենք, որոնք կարող են գալ ուրիշների մեղքերի կամ տկարությունով ծնվելու արդյունքում: Մնհրաժեշտ աճը, երբեմն գալիս է ավելի շուտ տառապանքի և ձախողությունների, քան հարմարավետության և հանգստության միջոցով: Եվ մահկանացու հակադրություններից ոչ մեկը չէր կարող հասնել իր հավերժական նպատակին, եթե աստվածային միջամտությունը մեզ ազատեր մահկանացու կյանքի անբարենպաստ հետևանքներից:

Ծրագիրը բացահայտում է մեր ճակատագիրը հավերժության մեջ, մահկանացու կյանքի մեր ճամփորդության նպատակն ու պայմանները և երկնային օգնությունը, որ մենք կստանանք: Աստծո պատվիրանները մեզ նախազգուշացնում են, որ չընկնենք վտանգավոր իրավիճակների մեջ: Ոգեշնչված ղեկավարների ուսմունքները ուղղորդում են մեզ և՛ մեր հավերժական ճամփորդությունը խթանող հավաստիացումներ են տալիս:

Աստծո ծրագիրը չորս մեծ հավաստիացում է տալիս մեզ՝ օգնելով անցնել մեր մահկանացու ճանապարհը: Այդ բոլորը մեզ հասել է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, որը ծրագրի առանցքային մասն է: *Մտաշինը*՝ հավաստիացումն է, որ Իր տառապանքների շնորհիվ մենք կարող ենք մաքրվել այն մեղքերից, որի համար սպաշխարում ենք: Այն ժամանակ, ողորմած վերջին դատավորը «այլևս չի հիշի դրանք» (Վարդապետություն և Ուխտեր 58.42):

Երկրորդը այն է, որ Քավության շնորհիվ Փրկիչը Իր վրա է վերցրել մահկանացու կյանքի մյուս բոլոր թույլությունները: Մա մեզ թույլ է տալիս աստվածային օգնություն և ուժ ստանալ՝ կրելու մահկանացության անխուսափելի բեռները՝ թե՛ անձնականը, թե՛ ընդհանուրը, ինչպիսին են պատերազմն ու համաճարակը: Մորմոնի գիրքը ներկայացնում է Քավության

և փառահեղ ճակատագրին: Մենք տեսնում էինք վերջը ի սկզբանե: Այս երկրի վրա մահկանացու ծնունդ ստացած մարդիկ ընտրել են Հոր ծրագիրը և պաշտպանել այն խորհրդին հաջորդած պայքարում: Շատերը նաև ուխտ են կապել Հոր հետ, թե ինչ են անելու մահկանացու կյանքում: Դեռևս հայտնի չդարձած ձևով, հոգիների աշխարհում մեր գործողությունները ազդել են մահկանացու կյանքի մեր հանգամանքների վրա:

Մահկանացու կյանքը և հոգիների աշխարհը

Այժմ ամփոփ կլիտսեմ Հոր ծրագրի որոշ տարրերի մասին, որոնք ազդում են մեզ վրա՝ մահկանացու ճամփորդության ընթացքում և հանդերձյալ հոգևոր աշխարհում:

Աստծո ժառանգների համար մահկանացու կյանքի և դրան հետևող հետմահու աճի նպատակը Նրա նման դառնալն է: Դա

Երկնային Հոր ցանկությունն է Իր բոլոր զավակների համար: Այդ ուրախալի ճակատագրին հասնելու համար հավերժական օրենքները պահանջում են, որ մենք մաքրագործված էակներ դառնանք Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, որպեսզի կարողանանք ապրել Հոր և Որդու ներկայության մեջ և վայելենք վեհացման օրհնությունները: Ինչպես սովորեցնում է Մորմոնի Գիրքը՝ Նա հրավիրում է «բոլորին»՝ գալ իր մոտ և ճաշակել իր բարությունից. և նա չի մերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն, սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, այդ թե կին. և նա հիշում է հեթանոսներին. և բոլորը նույնն են Աստծո համար» (2 Նեփի 26.33. տես նաև Ալմա 5.49):

Աստվածային ծրագրով նախատեսված էակը դառնալու նպատակը մեզանից պահանջում է ընտրություններ կատարել մերժելու ընդդիմադիր չարին, որը մահկանացուներին գայթակղում է Աստծո

այս կենսական գործության սուրբ գրային ամենապարզ նկարագրությունը: Փրկիչը Իր վրա վերցրեց «իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները [և թույլությունները]: . . . Նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների» (Ալմա 7.11-12):

Երրորդը՝ Փրկիչը, իր անսահման Քավության շնորհիվ, վերացնում է մահվան վերջնականությունը և մեզ տալիս է ուրախ հավաստիացում, որ բոլորս հարություն կառնենք: Մորմնի Գիրքը ուսուցանում է. «Արդ, այս վերականգնումը պիտի գա բոլորին, ծերին ու երիտասարդին, ճորտին ու ազատին, տղամարդուն ու կնոջը, ամբարիշտին ու արդարին. և նույնիսկ մի մազ իսկ նրանց գլխից չի կորչի. այլ ամեն ինչ պիտի վերականգնվի իր կատարյալ կառուցվածքով» (Ալմա 11.44):

Չատկի այս օրերին մենք տոնում ենք Հարության իրականությունը: Այն մեզ ուժ և հեռանկար է տալիս համբերելու մեր և մեր հարազատների դեմ ծառայած մահկանացու մարտահրավերներին, ինչպիսին են ֆիզիկական, մտավոր կամ էմոցիոնալ տկարությունները, որ մեզ հետ են ի ծնե կամ ձեռք ենք բերում մահկանացու կյանքի ընթացքում: Հարության շնորհիվ մենք գիտենք, որ այդ մահկանացու տկարությունները ժամանակավոր են:

Վերականգնված ավետարանը հավաստիացնում է, որ Հարությունը կարող է ներառել մեր ընտանիքի անդամների՝ ամուսնու, կնոջ, երեխաների և ծնողների կողքին լինելու հնարավորությունը: Մա գորեղ քաջալերանք է մեզ համար, որպեսզի կատարենք մահկանացու կյանքի մեր ընտանեկան պարտականությունները: Այն մեզ օգնում է սիրով ապրել այս կյանքում և ուրախ միավորման ու շփումների ակնկալիք ունենալ հանդերձյալ կյանքում:

Չորրորդը և վերջինը՝ ժամանակակից հայտնության ուսմունքն է,

որ մեր առաջընթացը չի սահմանափակվում մահկանացու կյանքով: Այս կարևոր հավաստիացման մասին հայտնությունները շատ չեն: Մեզ ասում են, որ այս կյանքն է նախապատրաստվելու ժամանակը, որպեսզի հանդիպենք Աստծուն, և որ չպետք է հետաձգենք մեր ապաշխարությունը (տես Ալմա 34:32-33): Չնայած դրան, մեզ ուսուցանում են, որ հոգիների աշխարհում ավետարանը քարոզվում է անգամ «ամբարիշտների ու անհնազանդների մեջ, որոնք մերժել էին ճշմարտությունը» (Վարդապետություն և Ուխտեր 138.29) և որ այդ ուսուցանվողները նախքան Վերջին դատաստանը ապաշխարելու հնարավորություն կունենան (տես 31-34, 57-59 հատվածները):

Միս մի քանի այլ սկզբունքներ երկնային Հոր ծրագրի վերաբերյալ: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը մեզ յուրահատուկ հեռանկար է տալիս՝ մաքրաբարոյության, ամուսնության և երեխաներ բերելու վերաբերյալ: Այն ուսուցանում է, որ Աստծո ծրագրի համաձայն՝ ամուսնությունը անհրաժեշտ է Աստծո ծրագրի նպատակների իրականացման, մահկանացու ծնունդ տալու աստվածային նշանակված պայմանների և հավերժական կյանքին ընտանիքի անդամներին նախապատրաստելու համար: «Ամուսնությունն Աստծո կողմից է կարգված մարդու համար, – ասել է Տերը, – որպեսզի երկիրը կատարի իր ստեղծման նպատակը» (Վարդապետություն և Ուխտեր 49.15-16): Այս հարցում Նրա ծրագիրը հակասում է աշխարհի որոշ ազդեցիկ ուժերին՝ օրենքով և սովորույթներով:

Մահկանացու կյանք ստեղծելու գործությունն ամենավեհ գործությունն է, որ Աստված տվել է Իր զավակներին: Առաջին պատվիրանը այն պարտադիր դարձրեց Ադամի և Եվայի համար, բայց տրվեց ևս մեկ կարևոր պատվիրան, որպեսզի արգելվի նրա չարաշահումը: Ամուսնության կապերից դուրս որդեծնության գործության ցանկացած տեսակի գործածությունը

տղամարդկանց և կանանց տրված աստվածային հատկանիշի այս կամ այն աստիճանի մեղսագործություն, նվաստացում և այլասերում է: Վերականգնված ավետարանը կարևորում է այդ մաքրաբարոյության օրենքը, ինչը բացատրվում է Աստծո ծրագրի իրականացման գործում մեր որդեծնության գործության նպատակի ըմբռնմամբ:

Ո՞րն է հաջորդ քայլը:

Վերականգնումը նախաձեռնող Առաջին Տեսիլքի այս 200 տարիների ընթացքում մենք սովորել ենք Տիրոջ ծրագիրը և երկու դար է քաջալերվում ենք Նրա վերականգնված Եկեղեցու օրհնություններով: 2020 թվականը ժողովուրդը անվանում է անցյալի իրադարձությունների 20/20 տեսողություն (ճշգրիտ տեսնելու ունակություն):

Ինչևէ, երբ նայում ենք դեպի ապագա, մեր տեսլականը ավելի քիչ համոզիչ է: Մենք գիտենք, որ Վերականգնումից երկու դար անց, հոգիների աշխարհը այժմ ներառում է բազմաթիվ մահկանացու փորձառություն անցած ծառայողներ, որոնք քարոզում են այնտեղի հոգիներին: Մենք գիտենք նաև, որ այժմ մենք ունենք ավելի շատ տաճարներ, որպեսզի կատարենք հավերժության արարողությունները նրանց համար, ովքեր ապաշխարում և ընդունում են Տիրոջ ավետարանը մահվան վարագույրի երկու կողմերում: Այդ ամենը խթանում է մեր երկնային Հոր ծրագիրը: Աստծո սերը այնքան մեծ է, որ բացառությամբ այն քչերի, ովքեր միտումնավոր դառնում են կորստի որդիներ, Նա փառքի ճակատագիր է ապահովել բոլոր Իր զավակների համար (տես Վարդապետություն և Ուխտեր 76.43):

Մենք գիտենք, որ Փրկիչը կվերադառնա և կլինի հազարամյա խաղաղ թագավորություն՝ Աստծո ծրագրի մահկանացու բաժինը ավարտելու համար: Մենք գիտենք նաև, որ կլինի արդարների և անարդարների տարբեր հարություն, որին կհետևի յուրաքանչյուր անձի վերջին դատաստանը:

Մենք կդատվենք ըստ մեր գործերի, մեր սրտի ցանկությունների և ըստ նրա, թե ինչպիսի մարդ ենք մենք դարձել: Այդ դատաստանը Աստծո բոլոր զավակներին կստիպի գնալ այն փառքի թագավորությունը, որի համար նրանց հնազանդությունը բավարար է և որտեղ նրանք հարմարավետ կզգան: Նրանց բոլորի դատավորը մեր Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը (տես Հովհաննես 5.22, 2 Նեփի 9.41): Նրա ամենագիտությունը Նրան տալիս է կատարյալ իմացություն թե՛ չապաշխարած ու չփոխված, թե՛ ապաշխարած ու արդար մեր բոլոր գործողությունների և ցանկությունների վերաբերյալ: Հետևաբար, Նրա դատաստանից հետո բոլորս կխոստովանենք, որ «նրա դատաստանները արդար են» (Մոսիա 16.1):

Ավարտելով՝ ես կիսվում եմ համոզմունքով, որը ձեռք եմ բերել անվան հեռացումից և ուրացությունից հետո Եկեղեցի վերադառնալու բազմաթիվ խնդրագրեր ու նամակներ կարդալուց: Մեր անդամներից շատերը լիովին չեն հասկանում փրկության ծրագիրը, որը պատասխանում է վերականգնված Եկեղեցու վարդապետության և ոգեշնչված քաղաքականության վերաբերյալ հարցերի մեծամասնությանը: Մենք, որ գիտենք Աստծո ծրագիրը և նրան մասնակցելու ուխտ ենք կապել, հստակ պատասխանատվություն ունենք ուսուցանելու այդ ճշմարտությունները և մեր մահկանացու պայմանների սահմանում, հանուն մեր մերձավորների, հնարավորինս ամեն ինչ անելու, որ դրանք տարածվեն: Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի ու Քավչի մասին, ով այդ ծրագիրը հնարավոր է դարձնում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄ

1. «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնում. Երկուհարյուրամյա հռչակագիր աշխարհին» Ռասսել Մ. Նելսոն, «Լսիր Նրան», *Լիստոնս*, մայիս 2020, 91:



Երեց Զվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մարգարեներին տրված շարունակական հայտնության օրհնությունը և անձնական հայտնությունն առաջնորդում են մեր կյանքը

Շարունակական հայտնությունը ստացվել և ստացվում է Տիրոջ հաստատած ուղիներով:

Այսօր ես կխոսեմ մարգարեների շարունակական հայտնության և շարունակական անձնական հայտնության մասին, որոնք առաջնորդում են մեր կյանքը: Երբեմն մենք հայտնություն ենք ստանում նույնիսկ այն ժամանակ, երբ չգիտենք Տիրոջ նպատակները: Երբ 1994 թվականի հունիսին Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդը կանչվեց առաքյալ, կարճ ժամանակ անց ես մի գեղեցիկ հայտնություն ստացա, որ նա կկանչվի առաքյալ: Ես տարածքային ներկայացուցիչ էի և ոչ մի պատճառ չէի տեսնում

նման գիտելիք ստանալու համար: Բայց 1960-ականների սկզբներին մենք զուգրնկերներ էինք, երբ ծառայում էինք Անգլիայի միսիայում, և ես շատ սիրեցի նրան: Այդ փորձառությունը համարում եմ գործվագույթ ողորմածություն ինձ համար: Վերջին տարիներին ես մտածում էի, թե արդյոք Տերն ինձ պատրաստում էր դառնալու կրտսեր Առաքյալ Տասներկուսի այդ հրաշալի զուգրնկերոջ համար, ով իմ կրտսեր զուգրնկերն էր, երբ երիտասարդ միսիոներներ էինք:¹ Ես երբեմն զգուշացնում

եմ երիտասարդ միսիոներներին բարյացակամ գտնվել իրենց կրտսեր զուգընկերների հանդեպ, քանի որ երբեք չեն իմանա, թե նրանք երբ կարող են դառնալ իրենց ավագ զուգընկերը:

Ես ամուր վկայություն ունեմ, որ այս վերականգնված Եկեղեցին առաջնորդում է մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը: Նա գիտի, թե ում կանչի Իրեն Առաքյալ և ինչ կարգով կանչի նրանց: Նա նաև գիտի, թե ինչպես նախապատրաստի Իր ավագ առաքյալին՝ լինել Եկեղեցու մարգարե և նախագահ:

Այս առավուտ մենք օրհնվեցինք, երբ լսեցինք մեր սիրելի մարգարե նախագահ Ռասսել Մ. Նելսոնին, ով աշխարհին ներկայացրեց խորհմաստ երկուհարյուրամյա հռչակագիրը՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության Վերականգնման մասին:² Նախագահ Նելսոնի այդ ազդեցիկ հռչակագիրը հստակեցրեց, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին իր ծագման, գոյության և ապագայի դիրքի համար պարտական է շարունակական հայտնությանը: Նոր հռչակագիրը խորհրդանշում է սիրող Հոր կապն Իր զավակների հետ:

Սվելի շուտ նախագահ Սպենսեր Վ. Քիմբլին արտահայտել է այն, ինչ ես զգում եմ այսօր: Նա ասել է. «Ամեն ինչից առավել, . . . մենք պետք է երախտապարտ լինենք նրա համար, որ երկինքներն իսկապես բաց են, և որ Հիսուս Քրիստոսի վերականգնված եկեղեցին հիմնված է հայտնության վեմի վրա: Ծարունակվող հայտնությունն իսկապես ապրող Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի կենսարար արյունն է»:³

Ենովք մարգարեն կանխատեսել էր այն օրերը, որոնցում մենք ապրում ենք: Տերը հայտնեց Ենովքին այն մեծ ամբարշտության մասին, որը կտիրեր, և մարգարեացավ «մեծ նեղությունների» մասին, որոնք տեղի կունենան: Այնուամենայնիվ, Տերը խոստացավ. «Բայց իմ ժողովրդին ես կպահպանեմ»:⁴ «Արդարություն ցած կուղարկեմ երկնքից. և

ճշմարտություն առաջ կուղարկեմ երկրից, որ վկայություն բերեն իմ Միածնի մասին»:⁵

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը մեծ զորությամբ ուսուցանել է, որ Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը, ի հայտ է եկել երկրից՝ իրականացնելով Ենովքին ասած Տիրոջ խոսքը: Հայրը և Որդին, հրեշտակներն ու մարգարեները, ովքեր հայտնվեցին մարգարե Ջոզեֆ Սմիթին, «երկնքից ուղարկվեցին, որպեսզի արքայությունում վերականգնեն անհրաժեշտ զորությունները»:⁶

Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացավ հայտնություն հայտնության հետևից: Դրանցից մի քանիսը կհնչեն այս համաժողովի ընթացքում: Մարգարե Ջոզեֆի կողմից ստացված բազմաթիվ հայտնություններ մեզ համար պահպանվել են Վարդապետություն և Ուխտերում: Եկեղեցու բոլոր կանոնիկ աշխատությունները պարունակում են այս վերջին տնտեսությունում Տիրոջ միտքն ու կամքը մեզ համար:⁷

Բացի այս հրաշալի հիմնարար սուրբ գրություններից, մենք օրհնված ենք ապրող մարգարեների շարունակական հայտնությամբ: Մարգարեները «Տիրոջ լիազորված գործակալներն են, որոնք իրավասու են խոսել Նրա անունից»:⁸

Որոշ հայտնություններ վիթխարի նշանակություն ունեն, իսկ մյուսները մեծացնում են մեր հասկացողությունը աստվածային հիմնական ճշմարտությունների մասին և ուղեցույց են հանդիսանում մեր օրերի համար:⁹

Մենք անչափ երախտապարտ ենք 1978 թվականի հունիսին նախագահ Սպենսեր Վ. Քիմբլին



տրված հայտնության համար, որը քահանայության և տաճարային օրհնությունները տարածում է Եկեղեցու բոլոր արժանավոր տղամարդկանց վրա:¹⁰

Ես ծառայել եմ Տասներկուսից շատերի հետ, ովքեր ներկա էին և մասնակցում էին, երբ նա ստացավ այդ արժեքավոր հայտնությունը: Նրանցից յուրաքանչյուրն իր առանձին խոսքում հաստատել է հզոր և միավորող հոգևոր առաջնորդությունը, որը զգացել են նախագահ Քիմբլը և մնացածները: Ծառերն ասում էին, որ դա ամենահզոր հայտնությունն էր, որը նրանք ստացել էին այդ ժամանակաշրջանից առաջ կամ հետո:¹¹

Մեզանից նրանք, ովքեր այժմ ծառայում են Տասներկու առաքյալների քվորումում, օրհնվել են մեր օրերում, երբ ներկայիս մարգարեների միջոցով նշանակալից հայտնություններ են ստացվել:¹² Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Տիրոջ լիազորված գործակալն է եղել, *հստկապես*, հայտնությունների առումով, որպեսզի օգնի ընտանիքներին իրենց տներում կառուցել հավատքի սրբավայրեր, հավաքել ցրված Իսրայելը վարագույրի երկու կողմերում և օրհնել օժտված անդամներին տաճարային սրբազան արարողությունների հարցերում:



Երբ մեր տներն օրհնելու կարևոր փոփոխությունները հայտարարվեցին 2018 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ, ես վկայեցի, «որ Առաջին Նախագահության Խորհրդի և Տասներկու Առաքյալների Քվորումի տաճարային քննարկումներում և . . . հետո, երբ մեր սիրելի մարգարեն խնդրանքով դիմեց Տիրոջը հայտնության համար, . . . հզոր հաստատում ստացան բոլորը»:¹³

Այն ժամանակ տաճարային սրբազան արարողություններին վերաբերող այլ հայտնություններ տրվեցին, բայց չհայտարարվեցին կամ չիրագործվեցին:¹⁴ Այս առաջնորդությունը սկսվեց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի անհատական մարգարեական հայտնությամբ և գործընթացի մասնակիցների սիրող և հզոր հաստատումով: Նախագահ Նելսոնը մասնավորապես ներգրավեց քույրերին, որոնք նախագահում են Միոփող միության, Երիտասարդ կանանց և Երեխաների միության կազմակերպությունները: Վերջին առաջնորդությունը, որը տրվեց տաճարում և ուղղված էր Առաջին նախագահությանը և Տասներկու Առաքյալներ քվորումին, խորապես հոգևոր և գործվոր էր: Ամեն

մեկս հասկացանք, որ ստացել ենք Տիրոջ մտքի, կամքի և խոսքի համաձայն:¹⁵

Ես ամենայն վճռականությամբ հայտարարում եմ, որ շարունակական հայտնությունը ստացվել և ստացվում է Տիրոջ հաստատած ուղիներով: Ես վկայում եմ, որ այսօր առավոտյան Նախագահ Նելսոնի նոր հռչակագիրը բոլոր մարդկանց օրհնելու հայտնություն է:

Մենք բոլորին հրավիրում ենք սևվել Տիրոջ սեղանից:

Մենք հայտարարում ենք նաև մեր անկեղծ ցանկությունը վերամիավորվելու նրանց հետ, ում վկայությունները թուլացել են, եղել են քիչ ակտիվ կամ իրենց անունները հանել են Եկեղեցու գրանցումներից: Մենք ցանկանում ենք ձեզ հետ սևվել «Քրիստոսի խոսքերով» Տիրոջ սեղանի մոտ, որպեսզի սովորենք այն, ինչ մենք բոլորս պետք է սովորենք:¹⁶ Մենք ունենք ձեր կարիքը: Եկեղեցին ունի ձեր կարիքը: Տերն ունի ձեր կարիքը: Մենք սրտանց աղոթում ենք, որ դուք միանաք մեզ և երկրպագեք աշխարհի Փրկիչին: Մենք գիտենք, որ ձեզանից ոմանք վիրավորվել են, ձեր հանդեպ անբարեխիղճ կամ այլ վարք են դրսևորել, որը Քրիստոսանման չէ: Մենք գիտենք նաև, որ ոմանք դժվարություններ են ունեցել իրենց հավատքի հետ, որոնք, գուցե, ամբողջովին չգնահատվեն, չհասկացվեն կամ լուծում չստանան:

Մեր կայուն ու հավատարիմ անդամներից ոմանք որոշ ժամանակ դժվարություններ են ունեցել իրենց հավատքի հետ: Ես սիրում եմ Վ. Վ. Ֆելիսի իրական պատմությունը, ով լքել էր Եկեղեցին և Միսսուրիի դատարանում վկայություն էր տվել մարգարե Ջոզեֆ Մմիթի դեմ: Ապաշխարելուց հետո նա գրեց Ջոզեֆին. «Ես գիտեմ իմ իրավիճակը, դու դա գիտես, և Աստված դա գիտի, և ես ուզում եմ փրկվել, եթե իմ ընկերները օգնեն ինձ»:¹⁷ Ջոզեֆը ներեց նրան, վերադարձրեց նրան ծառայության և սիրով գրեց. «Քանզի հին ընկերները, ի վերջո, ընկերներ են մնում»:¹⁸

Եղբայրներ՝ և քույրեր՝, անկախ ձեր իրավիճակից, իմացեք, որ Եկեղեցին և նրա անդամները ձեզ հետ կընդունեն:

Անձնական հայտնությունն առաջնորդում է մեր կյանքը

Անձնական հայտնությունը հասանելի է բոլոր նրանց, ովքեր խոնարհաբար առաջնորդություն են փնտրում Տիրոջից: Այն նույնքան կարևոր է, որքան մարգարեական հայտնությունը: Սուրբ Հոգուց ստացած անձնական, հոգևոր հայտնությունը հանգեցրել է նրան, որ միլիոնավոր մարդիկ ստանան այն վկայությունը, որն անհրաժեշտ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ մկրտվելու և հաստատվելու համար:

Անձնական հայտնությունը մկրտությունից հետո ստացած մեծ օրհնություն է, երբ մենք «սրբագործվում ենք՝ ընդունելով Սուրբ Հոգին»:¹⁹ Կարող եմ հիշել մի հատուկ հոգևոր հայտնություն, երբ 15 տարեկան էի: Իմ թանկագին եղբայրը Տիրոջից առաջնորդություն էր փնտրում, թե ինչպես պատասխանի մեր սիրելի հորը, ով չէր ցանկանում, որ իմ եղբայրը միսիա ծառայի: Ես նույնպես աղոթեցի անկեղծ մտադրությամբ և ստացա անձնական հայտնություն ավետարանի ճշմարտացիության մասին:

Սուրբ Հոգու դերը

Անձնական հայտնությունը հիմնված է Սուրբ Հոգուց ստացված հոգևոր ճշմարտությունների վրա:²⁰ Սուրբ Հոգին ամեն ճշմարտության, հատկապես, Փրկիչի տված ճշմարտության հայտնողն ու վկայողն է: Առանց Սուրբ Հոգու մենք իսկապես չէինք կարող իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է: Նրա կարևորագույն դերն է՝ վկայել Հոր և Որդու, նրանց կոչումների և նրանց փառքի մասին:

Սուրբ Հոգին կարող է գորեղ ազդեցություն ունենալ բոլորի վրա:²¹ Այս ազդեցությունը կայուն չի լինի, քանի դեռ մարդը չի մկրտվել և չի ստացել Սուրբ Հոգու պարգևը: Սուրբ Հոգին նաև

մաքրող միջոց է ապաշխարության և ներման գործընթացում:

Հոգին շփվում է զարմանալի ձևերով: Տերն օգտագործել է այս գեղեցիկ նկարագրությունը.

«Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Մուրֆ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում:

Արդ, ահա, սա է հայտնության ոգին»:²²

Չնայած դրա ազդեցությունը կարող է լինել աներևակայելի հզոր, այն ամենից հաճախ ցածր, մեղմ և հանդարտ ձայն է:²³ Մուրֆ գրությունները պարունակում են բազմաթիվ օրինակներ այն մասին, թե ինչպես է Հոգին ազդում մեր մտքի վրա, այդ թվում խաղաղություն խոսելով մեր մտքին,²⁴ զբաղեցնելով մեր միտքը,²⁵ լուսավորելով մեր միտքը²⁶ և նույնիսկ ձայն ուղարկելով մեր մտքին:²⁷

Որոշ սկզբունքներ, որոնք պատրաստում են մեզ հայտնություն ստանալու համար, ներառում են.

- Աղոթել հոգևոր առաջնորդության համար: Սկնածանքով և խոնարհաբար մենք պետք է փնտրենք և խնդրենք,²⁸ լինենք համբերատար ու ենթարկվող:²⁹
- Նախապատրաստվել ոգեշնչման համար: Դա պահանջում է, որ մենք ներդաշնակ լինենք Տիրոջ ուսմունքների հետ և կատարենք Նրա պատվիրանները:

- Արժանիորեն ճաշակել հաղորդությունը: Երբ այդպես ենք վարվում, մենք վկայում և ուխտում ենք Աստծո հետ, որ մեզ վրա ենք վերցնում Նրա Մուրֆ Որդու անունը, որ հիշում ենք Նրան և պահում ենք Նրա պատվիրանները:

Այս սկզբունքները մեզ նախապատրաստում են ընդունել, հասկանալ և հետևել Մուրֆ Հոգու հուշումներին և առաջնորդությանը: Դա ներառում է «խաղաղարար բաները,– որոնք բերում են ուրախություն [և] . . . կյանք հավերժական»:³⁰

Մեր հոգևոր պատրաստությունը մեծապես լավանում է, երբ մենք կանոնավոր ուսումնասիրում ենք ավետարանի սուրբ գրություններն ու ճշմարտությունները և մեր մտքում խորհում ենք այն առաջնորդության մասին, որը մենք փնտրում ենք: Բայց հիշեք, որ համբերատար լինեք և վստահեք Տիրոջ ժամանակին: Առաջնորդությունը տալիս է ամենակարող Տերը, երբ Նա «գիտակցաբար որոշում է մեզ դպրոց ուղարկել»:³¹

Հայտնություն մեր կոչումներում և հանձնարարություններում

Մուրֆ Հոգին նաև հայտնություն կտա մեր կոչումներում և հանձնարարություններում: Իմ փորձից գիտեմ, որ կարևոր հոգևոր առաջնորդությունը ամենից հաճախ գալիս է այն ժամանակ, երբ մենք

փորձում ենք օրհնել ուրիշներին մեր պարտականությունները կատարելիս:

Ես հիշում եմ, որ երբ երիտասարդ եպիսկոպոս էի, հուսահատ զանգ ստացա մի ամուսնական զույգից, նախքան գործնական հանդիպման գնալու համար ինքնաթիռ կնստելի: Մինչև նրանց ժամանելը, ես Տիրոջն աղերսեցի, որ իմանամ, թե ինչպես կարող եմ օգնել նրանց: Բնձ հայտնի դարձավ խնդրի էությունը և այն, թե ինչ պետք է պատասխանելի: Այդ հայտնությամբ տրված առաջնորդությունը թույլ տվեց ինձ կատարել եպիսկոպոսի իմ կոչման սուրբ պարտականությունը, չնայած ժամանակի սղությանը: Բոլոր եպիսկոպոսներն աշխարհով մեկ նույնպես կհամաձայնեն ինձ հետ: Որպես ցցի նախագահ, ես ոչ միայն ստացա կարևոր հայտնություն, այլև ստացա անձնական *ճշգրտում*, որն անհրաժեշտ էր Տիրոջ նպատակներն իրականացնելու համար:

Վստահեցնում եմ ձեզ, որ յուրաքանչյուրս կարող ենք ստանալ սուրբ առաջնորդություն, քանի դեռ խոնարհաբար աշխատում ենք Տիրոջ այգում: Մեր առաջնորդության մեծ մասը գալիս է Մուրֆ Հոգուց: Երբեմն և որոշ նպատակների համար այն անմիջապես գալիս է Տիրոջից: Ես անձամբ եմ վկայում, որ դա ճիշտ է: Ամբողջ Եկեղեցու վերաբերյալ առաջնորդությունը տրվում է Եկեղեցու նախագահին և մարգարեին:

Մենք, որպես ժամանակակից Առաքյալներ, արտոնություն ենք ունեցել աշխատել և ճամփորդել մեր ներկայիս մարգարե նախագահ Նելսոնի հետ: Ես կվերաձևակերպեմ այն, ինչ ասաց Վիլֆորդ Վուդրուֆը մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին. դա հավասարապես վերաբերում է Նախագահ Նելսոնին: Ես տեսել եմ «Աստծո Հոգու գործերը նրա հետ և նրան տրված Հիսուս Քրիստոսի հայտնությունները, ինչպես նաև այդ հայտնությունների իրականացումը»:³²

Իմ խոնարհ խնդրանքն այսօր այն է, որ մեզանից յուրաքանչյուրը



ՈՆԵՐՍՐՈՐԳ, ՍԴՅԱՅԻՆ, ՍՄՆ



փնտրի շարունակական հայտնություն մեր կյանքն առաջնորդելու համար և հետևի Հոգուն, երբ մենք երկրպագում ենք Հայր Աստծուն՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով, որի մասին ես վկայում եմ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. 1960 թվականին, երբ երիտասարդ տղաների համար միսիոներական ծառայության տարիքը 20-ից իջեցվեց 19 տարեկան, ես վերջին 20 տարեկաններին մեկն էի, իսկ երեք Ջեֆրի Ռ. Հոլլանդը առաջին 19 տարեկան երիտասարդներից մեկն էր:
2. Տես «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնումը. Երկու-հարյուրամյա հռչակագիր աշխարհին», Ռասսել Մ. Նելսոն, «Լսի՛ր Նրան», *Liahona*, մայիս 2020 թ., 91: Այս հռչակագրին միանում են ևս հինգ հռչակագրեր, որոնք տրվել են այս տնտեսությունում Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից:
3. *Եկեղեցու Նախագահների ուսումնքները. Սպիններ Վ. Քլեյբայ* (2006), 243, տես նաև Մատթեոս 16.13–19:
4. Մովսես 7.61:
5. Մովսես 7.62: Տերը շարունակել է. «Եվ արդարությունով ու ճշմարտությունով ես կսրբեմ երկիրը, ասես ջրհեղեղով, որպեսզի հավաքեմ իմ ընտրյալներին աշխարհի չորս կողմերից» (Մովսես 7.62, տես նաև Մաղմուս 85.11):

6. Ezra Taft Benson, “The Gift of Modern Revelation,” *Ensign*, Nov. 1986, 80.
7. See Ezra Taft Benson, “The Gift of Modern Revelation,” 80.
8. Hugh B. Brown, “Joseph Smith among the Prophets” (Sixteenth Annual Joseph Smith Memorial Sermon, Logan Institute of Religion, Dec. 7, 1958), 7.
9. See Hugh B. Brown, “Joseph Smith among the Prophets,” 7. Բոլոր դեպքերում, հայտնությունները ներդաշնակ են նախորդ մարգարեների տրված Աստծո խոսքի հետ:
10. Տես Պաշտոնական Հայտարարություն 2, տես նաև 2 Նեփի 26.33: Այդ հայտնությունն իրականացրել է այն վարդապետությունը, որն ամրագրված է Մորմոնի Գրքում. «Մորմոնի Գիրքը սովորեցնում է, որ «բոլորը նույնն են Աստծո համար», այդ թվում՝ «սև և սպիտակ, ստրուկ և ազատ, այր թե կին» (2 Նեփի 26.33): Այդ ուշագրավ հայտնությունն ընդունվեց և հաստատվեց Մոլթ Լեյքի տաճարի սուրբ վերնատանը՝ Առաջին Նախագահության Խորհրդի և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից:
11. Առաքյալներից շատերը նշել են, որ հայտնությունն այնքան հզոր էր և այնքան սրբազան, որ այն նկարագրելու համար բառերը չէին բավականացնում, և ինչ-որ առումով կնվազեցնեին հայտնության խորը և գործը բնույթը:
12. Տես «Վնտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Liahona*, մայիս 2017, 145: Այս հայտարարությունը արվել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից Սփոփող միության գերագույն ժողովին 1995 թ. սեպտեմբերի 23-ին, Մոլթ Լեյք

- Սիթիում: Տես նաև Թոմաս Մ. Մոնտոն, «Բարի գալուստ համաժողով», *Liahona* նոյ. 2012, 4–5: Նախագահ Մոնտոնը հայտարարեց միսիոներական ծառայության համար ավելի ցածր տարիքի պահանջի մասին:
13. Քվենթին Լ. Քուք, «Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը», *Liahona*, նոյեմբեր 2018, 11:
 14. Տաճարային սրբազան արարողություններին առնչվող հայտնություններն իրականացվել են բոլոր տաճարներում սկսած 2019 թվականի հունվարի 1-ից: Կարևոր է հասկանալ, որ տաճարային արարողությունների վերաբերյալ հաստուկ մանրամասները քննարկվում են միայն տաճարում: Այնուամենայնիվ, սկզբունքներն ուսուցանվում են: Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը գեղեցիկ ձևով ուսուցանեց տաճարային ուխտերի և արարողությունների նշանակությունը, և թե ինչպես նրանց միջոցով «Աստծո զորությունը կարող է հորդել մեր կյանք» (“Let This House Be Built unto My Name,” *Liahona*, May 2020, 86):
 15. Այդ գործընթացը և կայացրած հանդիպումները տեղի են ունեցել Մոլթ Լեյքի տաճարում 2018 թվականի հունվար, փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին: Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի վերջին հայտնությունը տրվել է 2018 թվականի ապրիլի 26-ին:
 16. Տես 2 Նեփի 32.3:
 17. Տես *Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 1, *The Standard of Truth, 1815–1846* (2018), 418:
 18. *Saints*, 1:418.
 19. 3 Նեփի 27.20:
 20. Սուրբ Հոգին Աստվածազվյալի անդամ է (տես 1 Նովիաննես 5.7, «Վարդապետություն և Ուխտեր 20.28»): Նա ունի ոգեղեն մարմին և նման է մարդու (տես «Վարդապետություն և Ուխտեր 130.22»): Նրա ազդեցությունը կարող է լինել ամենուր: Նա միավորված է մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկիչի հետ:
 21. Քրիստոսի Լույսի և Քրիստոսի Լույսի ու Սուրբ Հոգու միջև տարբերության մասին խոր պատկերացում կազմելու համար, տես 2 Նեփի 32, «Վարդապետություն և Ուխտեր 88.7, 11–13, «Քրիստոսի Լույսը», *Bible Dictionary: Տես նաև Բոյդ Ք. Փաքեր*, «Քրիստոսի լույսը», *Liahona*, ապրիլ 2005, 8–14:
 22. «Վարդապետություն և Ուխտեր 8.2–3:
 23. Տես Հեյլաման 5.30, «Վարդապետություն և Ուխտեր 85.6:
 24. Տես «Վարդապետություն և Ուխտեր 6.23:
 25. Տես «Վարդապետություն և Ուխտեր 128.1:
 26. Տես «Վարդապետություն և Ուխտեր 11.13:
 27. Տես Եմովա 1.10:
 28. Տես Մատթեոս 7.7–8:
 29. Տես Մոսիա 3.19:
 30. «Վարդապետություն և Ուխտեր 42.61:
 31. Neal A. Maxwell, *All These Things Shall Give Thee Experience* (2007), 31.
 32. Վիլֆորդ Վուդրուֆ, *Եկեղեցու Նախագահների ուսումնքները. Չոզնեք Սիթի* (2007), 283:



Երեց Ռիկարդո Պ. Խիմենս
Յոթանասունից

Ապաստան գտնել կյանքի փոթորիկներից

*Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունն այն
ապաստանն է, որը մեզ բոլորիս անհրաժեշտ է՝
անկախ այն փոթորիկներից, որոնք քայքայում են
մեր կյանքը:*

Դեռևս 90-ականների կեսերին՝ համալսարանում սովորելու տարիներին, ես աշխատում էի Սանտիագոյի (Չիլի) հրշեջ ծառայության չորրորդ ջոկատում: Ծառայության ընթացքում որպես գիշերային պահակախմբի անդամ, ես ապրում էի հրշեջ կայանում: Տարեվերջին ինձ ասացին, որ Ամանորի նախօրեին պետք է լինեի հրշեջ կայանում, քանի որ այդ օրը գրեթե միշտ արտակարգ դրություն էր լինում: Ես զարմացած պատասխանեցի. «Իսկապե՞ս»:

ՀԿեսգիշերին, երբ գործընկերներիս հետ սպասում էի, Սանտյագոյի կենտրոնում հրավառություն սկսվեց: Մենք սկսեցինք գրկել և բարեմաղթանքներ ասել միմյանց: Հանկարծ հրշեջ կայանում զանգերը սկսեցին հնչել՝ նշելով, որ արտակարգ դրություն կա: Մենք վերցրինք մեր սարքավորումները և ցատկեցինք հրշեջ մեքենան: Դեպքի վայր մեկնելիս, երբ անցնում էինք նոր տարին տոնող մարդկանց բազմության կողքով, ես նկատեցի, որ նրանք հիմնականում հանգիստ և անհոգ են:

Նրանք հանգստանում և վայելում էին տաք ամառային գիշերը: Այնուամենայնիվ մոտակայքում ինչ-որ տեղ, մարդիկ, որոնց մենք շտապում էինք օգնել, լուրջ խնդիրներ ունեին:

Այս փորձառությունն օգնեց ինձ հասկանալ, որ չնայած, երբեմն մեր կյանքը կարող է համեմատաբար սահուն ընթանալ, բայց կզա ժամանակը յուրաքանչյուրիս համար, երբ կբախվենք անսպասելի մարտահրավերների և փոթորիկների, որոնց դժվար կլինի դիմանալ: Ֆիզիկական, մտավոր, ընտանեկան և գործազրկության մարտահրավերները, բնական աղետները և կյանքի կամ մահվան այլ խնդիրները փոթորիկների մի քանի օրինակներ են, որոնց կբախվենք այս կյանքում:

Այս փոթորիկներին բախվելիս մենք հաճախ ենք հուսահատության կամ վախի զգացում ունենում: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Հավատքը վախի հակաթույնն է». *հավատք սառ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը* («Ցույց ձեր հավատքը», *Լիսիոնա*, մայիս 2014, 29): Տեսնելով փոթորիկները,

որոնք փոխում են մարդկանց կյանքը, ես եկա այն եզրահանգման, որ անկախ նրանից, թե ինչպիսի փոթորիկ է հարվածում մեզ, անկախ նրանից, թե կա դրա լուծումը կամ երևում է դրա վերջը, կա միայն մեկ ապաստան, և այն միակն է բոլոր տեսակի փոթորիկների համար: Մեր Երկնային Հոր կողմից տրամադրված այս միակ ապաստանը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է և Նրա Քավությունը:

Մեզանից ոչ ոք պաշտպանված չէ այդ փոթորիկներից: Մորմնի Գրքի մարգարե Հելամանը հետևյալն է ուսուցանել մեզ. «Հիշեք, որ դա մեր Քավի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վախի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի» (Հելաման 5.12):

Երեց Ռոբերտ Գ. Հեյլը, ով հարատև փոթորիկների հետ կապված իր սեփական փորձառություններն է ունեցել, ասել է. «Տառապանքը համընդհանուր է, բայց թե ինչպես ենք մենք արձագանքում տառապանքին, անհատական է: Տառապանքը մեզ կարող է տանել երկու



Օսլո, Նորվեգիա

ճանապարհներից մեկով: Այն կարող է լինել զորացնող և մաքրագործող փորձառություն, որը զուգորդվում է հավատքի հետ, կամ այն կարող է լինել կործանարար ուժ մեր կյանքում, եթե մենք հավատք չունենանք Տիրոջ քավիչ զոհաբերության հանդեպ» («Your Sorrow Shall Be Turned to Joy», *Ensign*, Nov. 1983, 66):

Որպեսզի վայելենք այն ապաստանը, որն առաջարկում է Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը, մենք պետք է հավատք ունենանք Նրա հանդեպ. հավատք, որը թույլ կտա մեզ բարձրանալ սահմանափակ, երկրային հեռանկարի բոլոր ցավերից վեր: Նա խոստացել է, որ մեր բեռները կթեթևացնի, եթե մենք դիմենք Նրան մեր բոլոր գործերում:

«Ինձ մօտ եկեք [ասել է Նա], ամեն վաստակածներ և բեռնատրուածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վերայ առեք իմ լուծը եւ ինձանից սովորեցեք. Որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերի համար հանգստութիւն կ'զտնէք:

«Որովհետեւ իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս 11.28–30, տես նաև Մոսիա 24.14–15):

Ասում են, որ «նա, ով հավատք ունի, որևէ բացատրություն անհրաժեշտ չէ: Նրան, ով հավատք չունի, բոլոր բացատրություններն

անարդյունք են»: (Այս հայտարարությունը վերագրվել է Յոնաս Մքվինասին, բայց, ամենայն հավանականությամբ, նրա ուսմունքների ոչ ճշգրիտ վերածնակերպումն է:) Այնուամենայնիվ, մենք սահմանափակ պատկերացում ունենք այն բաների մասին, որոնք տեղի են ունենում այստեղ՝ երկրի վրա, և հաճախ մենք պատասխաններ չենք ունենում *ինչու* հարցին: Ինչո՞ւ է դա տեղի ունենում: Ինչո՞ւ է դա պատահում *ինձ* հետ: Ի՞նչ պետք է սովորեմ: Երբ պատասխանները շրջանցում են մեզ, այդ դեպքում Լիբերթիի բանտում մեր Փրկիչի կողմից մարգարե Ջոզեֆ Սմիթին ասված խոսքերը լիովին կիրառելի են.

«Որդիս, խաղաղություն քո հոգուն. քո ձայնորդություններն ու քո չարչարանքները կտուեն միայն մի փոքր պահ.

Եվ հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի» (Վարդապետություն և Ուխտեր 121.7–8):

Չնայած նրան, որ շատ մարդիկ իսկապես հավատում են *Հիսուս Քրիստոսին*, հիմնական հարցն այն է, թե արդյո՞ք մենք *հավաստում ենք* Նրան և արդյո՞ք մենք *հավաստում ենք* այն բաներին, որոնք Նա ուսուցանում է մեզ և խնդրում է, որ մենք անենք: Միգուցե ինչ-որ մեկը մտածի. «Ի՞նչ գիտի Հիսուս

Քրիստոսը, թե ինչ է կատարվում ինձ հետ: Ինչպե՞ս Նա գիտի, թե ինձ ինչ է պետք երջանիկ լինելու համար»: Ճշմարիտ, մեր Քավիչի և բարեխոսի մասին էր Եսայիա մարգարեն խոսում, երբ ասում էր.

«Նա անարգուած եւ մարդկանց երեսից ընկած, հարուածների տէր եւ ցաւի տեղեակ եղաւ: . . .

Յիրաւի՛ Նա մեր ցաւերը վեր առաւ, եւ մեր վիշտերը բեռնեց իր վերայ: . . .

Բայց նա խոցուովեց մեր օրինազանցությունների համար, խոշտանգվեց մեր անօրինությունների համար. մեր խաղաղության պատիժը նրա վրա էր. և նրա վերքերով ենք մենք բժշկված» (Եսայիա 53.3–5):

Պետրոս առաքյալը մեզ նույնպես ուսուցանել է Փրկիչի մասին, երբ ասել է. «Որ ինքն մեր մեղքերն իր մարմնումը խաչափայտի վերայ բարձրացրեց. որ մեղքերիցը հեռանալով արդարութեան համար ապրենք, որ նորա խոցերովը բժշկուեցաք» (1 Պետրոս 2.24):

Չնայած մոտենում էր Պետրոսի նահատակության ժամանակը, նրա խոսքերը վախով կամ հոռետեսությամբ չեն լցված, այլ ավելի շուտ նա սովորեցնում էր Մրբերին «ուրախանալ», չնայած նրանք «տրտմած են կերպ կերպ փորձանքների մեջ»: Պետրոսը խորհուրդ տվեց մեզ հիշել, որ «մերը



ՔՐԻՍՏՈՍԸ ԳԵՐԵՆԱԼԱՆՈՒՄԸ, ԱՆՅԷԼ.Ք. ԱՍՆԱ

հաւատքի փորձառութիւնը» . . . թէն կրակով է փորձվում, կտանի դեպի «գովութեան պատուի եւ փառքի Յիսուս Քրիստոսի յայտնութիւնումը» և «մեր» հոգիների փրկութիւնը» (1 Պետրոս 1.6-7,9):

Պետրոս շարունակեց.
«Միրելիներ, օտար բան մի համարէք այն բոբբոքուած նեղութիւնը որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թէ մի օտար բան է պատահում ձեզ:

«Այլ ուրախ եղէք իբրեւ թէ Քրիստոսի չարչարանքին մասնակից եղածներ, որ նորա փառքի յայտնութեան ժամանակումն էլ ցնծալով ուրախանաք» (1 Պետրոս 4.12-13):

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ «Մրբերը կարող են ուրախ լինել ամեն իրավիճակում: . . . Երբ մեր կյանքը կենտրոնացած է Աստծո փրկութեան ծրագրի վրա . . . և Հիսուս Քրիստոսի ու Նրա ավետարանի վրա, մենք ուրախություն ենք զգում, անկախ այն բանից՝ մեր կյանքում ինչ-որ բան տեղի է ունենում, թե ոչ: Ուրախությունը գալիս է Նրանից ու Նրա շնորհիվ: Նա է ամեն ուրախության աղբյուրը» («Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիստինա*, նոյեմբեր 2016, 82):

Իհարկէ, ավելի հեշտ է ասել այս բաները, երբ փոթորիկի մեջ չենք գտնվում, քան ապրել փոթորիկի ժամանակ և կիրառել դրանք: Բայց ինչն էլ ձեր եղբայրը, հուսով եմ, որ դուք կարող եք զգալ, որ ես անկեղծորեն փորձում եմ ձեզ հետ կիսվել, թէ որքան կարևոր է իմանալ, որ Հիսուս Քրիստոսը և Նրա Քափությունն այն ապաստանն է, որը մեզ բոլորիս անհրաժեշտ է՝ անկախ այն փոթորիկներից, որոնք քայքայում են մեր կյանքը:

Ես գիտեմ, որ մենք բոլորս Աստծո զավակներն ենք, Նա սիրում է մեզ և մենք մենակ չենք: Հրավիրում եմ ձեզ գալ և տեսնել, որ Նա կարող է թեթևացնել ձեր բեռը և լինել այն ապաստանը, որը դուք փնտրում եք: Եկեք և օգնեք մյուսներին գտնել այն ապաստանը,

որն այդքան ցանկանում են: Եկեք և մնացեք մեզ հետ այս ապաստանում, ինչը կօգնի ձեզ դիմակայել կյանքի փոթորիկներին: Ամենակին կասկած չունեն, որ եթէ գաք՝ դուք կտեսնեք, կօգնեք, և կմնաք:

Ալմա մարգարեն իր որդուն՝ Հելամանին, վկայեց հետևյալը. «Ես գիտեմ, որ ովքեր որ դնեն իրենց վատահոյությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների, և իրենց տագնապների, և իրենց չարչարանքների մեջ, և պիտի բարձրացվեն վերջին օրը» (Ալմա 36.3):

Փրկիչն Բնքն է ասել.
«Թող ձեր սրտերը մխիթարվեն . . . քանզի ամեն մարմին իմ ձեռքում է. հանգիստ եղեք և իմացեք, որ ես եմ Աստված: . . .

«Ուստի, մի վախեցեք, անգամ մահից. քանզի այս աշխարհում ձեր ուրախությունը լիակատար չէ, բայց ինձանով ձեր ուրախությունը լիակատար է» (Վարդապետություն և Ուխտեր 101.16, 36):

«Be Still, My Soul (Հանդարտվիր հոգիս)» օրհներգը, որը բազամաթիվ առիթներով ներշնչել է ինձ, պարունակում է մխիթարության ուղերձ: Երգի խոսքերը.

*Հանդարտվիր հոգիս, ժամը մոտենում է,
Երբ հավիտյան կյանքնք Տիրոջ հետ,
Երբ հիասթափությունը, վիշտը և վախն անցնում են,
Ցավը մոռացվում ու մաքուր սիրտ ուրախությունն է վերականգնվում:
Հանդարտվիր հոգիս, երբ*



*Վրոխությունն ու արցունքներն անցնեն,
Ապահովությունն ու օրհնությունն ի վերջո կունենանք»: (Hymns, no. 124)*

Կյանքի փոթորիկներին բախվելիս ես գիտեմ՝ եթէ մենք առավելագույն ջանքեր գործադրենք և ապավինենք Հիսուս Քրիստոսին և Նրա Քափությանը՝ որպես մեր ապաստանի, մենք կօրհնվենք այն հանգստությամբ, սփոփանքով, ուժով, ժուժկալությամբ և խաղաղությամբ, որը մենք փնտրում ենք՝ մեր սրտերում համոզված լինելով, որ երկրի վրա մեր ժամանակի վերջում կլսենք Վարդապետի խոսքերը. «Լա՛ւ, բարի եւ հաւատարիմ ծառայ. մտիր քո տիրոջ ուրախութիւնը» (Մատթեոս 25.21): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Օլմոն, Մարգա Մարգա, Չիլի



Երեց Դիտեր Տ. Ուխտորճ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Եկեք և միացեք մեզ

Մենք հրավիրում ենք Աստծո բոլոր զավակներին ողջ աշխարհում միանալ մեզ այս մեծ աշխատանքում:

Իմ թանկագին եղբայրներ և քույրեր, իմ թանկագին ընկերներ, ամեն շաբաթ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները ողջ աշխարհում երկրպագում են մեր սիրելի Երկնային Հորը՝ տիեզերքի Աստծուն և Թագավորին, և Նրա Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Մենք խորհում ենք Հիսուս Քրիստոսի՝ միակ անմեղ հոգու, ով երբևէ ապրել է, Աստծո անարատ Գառի կյանքի և ուսմունքների շուրջ: Որքան հնարավոր է հաճախ, մենք ճաշակում ենք հաղորդությունը՝ ի հիշատակ Նրա զոհաբերության, և ընդունում, որ Նա է մեր կյանքի կենտրոնը:

Մենք սիրում ենք Նրան, մենք պատվում ենք Նրան: Անսահման և հավերժական սերը մղեց Հիսուս Քրիստոսին տառապել ու մահանալ ձեզ համար և ինձ համար: Նա կտրեց ու բացեց մահվան դարպասները, փշրեց այն խոչընդոտները, որոնք բաժանում էին ընկերներին և սիրելիներին,¹ և հույս բերեց հուսահատվածին, բժշկում՝ հիվանդին և ազատություն՝ գերյալին:²

Մենք Նրան ենք նվիրաբերում մեր սիրտը, մեր կյանքը և մեր ամենօրյա նվիրումը: Այդ իսկ պատճառով «մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, [և] մենք քարոզում

ենք Քրիստոսի մասին, . . . որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են սպասվինել իրենց մեղքերի թողության համար»:³

Փորձենք աշակերտ լինել

Ինչևէ, Հիսուս Քրիստոսի աշակերտ լինելը ներառում է շատ ավելին, քան Քրիստոսի մասին խոսելը և քարոզելը: Փրկիչն անձամբ վերականգնեց Իր Եկեղեցին, որ օգնի մեզ ավելի նմանվել Իրեն: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հիմնվեց, որպեսզի ավելի շատ հնարավորություն տա կիրառելու աշակերտության հիմունքները: Եկեղեցում մեր մասնակցությամբ մենք սովորում ենք ճանաչել և գործել՝ համաձայն Սուրբ Հոգու հուշումների: Մենք զարգացնում ենք ուրիշներին կարեկցանքով և բարյացակամությամբ օգնության հասնելու ունակություն:

Այդ ջանքերը պետք է գործի դրվեն ողջ կյանքում և պահանջում են մշտական փորձեր:

Հմուտ մարզիկները անթիվ ժամեր են անցկացնում իրենց սպորտի հիմունքները վարժեցնելու համար: Բուժքույրերը, ցանցային աշխատողները, ատոմային ինժեներները և նույնիսկ ես՝ որպես

Հարիեթի խոհանոցի մրցակցային սիրողական խոհարար, դառնում ենք ունակ և հմուտ միայն այն ժամանակ, երբ ջանասիրաբար կիրառում ենք մեր արհեստը:

Որպես ավիաընկերության կապիտան, ես հաճախ մարզում էի օդաչուներին մի բարդ սարքի միջոցով, որը վերարտադրում էր թռիչքի փորձը: Սարքը ոչ միայն օգնում է օդաչուներին սովորել թռիչքի հիմունքները, այլ նաև թույլ է տալիս նրանց հայտնվել անսպասելի իրադարձություններում, որոնց կարող են հանդիպել իրական օդանավ ղեկավարելիս, և արձագանքել դրանց:

Նույն սկզբունքները վերաբերում են Հիսուս Քրիստոսի աշակերտներին:

Հիսուս Քրիստոսի Եկեղեցում ակտիվ մասնակցությունը և դրա ընձեռած բազմազան հնարավորությունները կօգնեն մեզ ավելի լավ պատրաստվել կյանքի փոփոխվող հանգամանքներին, ինչպիսին էլ լինեն դրանք, կամ որքան էլ լուրջ լինեն դրանք: Որպես Եկեղեցու անդամներ, մեզ խրախուսում են ընկղմվել Աստծո խոսքերում Նրա հին ու նոր ժամանակների մարգարեների միջոցով: Մեր Երկնային Հորն ուղղված անկեղծ ու խոնարհ աղոթքի միջոցով մենք սովորում ենք ճանաչել Սուրբ Հոգու ձայնը: Մենք ընդունում ենք ծառայելու, ուսուցանելու, ծրագրելու, սպասավորելու և ղեկավարելու կոչումները: Այդ



Միլլրիկ, Յուսա, ՄՄՆ

հնարավորությունները մեզ թույլ են տալիս աճել հոգով, մտքով և բնավորությամբ:

Դրանք կօգնեն մեզ պատրաստվել կապելու և պահելու սրբազան ուխտերը, որոնք կօրհնեն մեզ այս կյանքում և գալիք կյանքում:

Եկե՛ք, միացե՛ք մեզ

Մենք հրավիրում ենք Աստծո բոլոր զավակներին ողջ աշխարհում միանալ մեզ այս մեծ աշխատանքում: Եկե՛ք և տեսե՛ք Նույնիսկ COVID-19-ի այս դժվարին ժամանակներում հանդիպեք մեզ հետ առցանց: Հանդիպեք մեր միսիոներների հետ առցանց: Պարզեք ինքներդ ձեր համար, թե իրենից ինչ է ներկայացնում այս Եկեղեցին: Երբ այս դժվարին ժամանակն անցնի, հանդիպեք մեզ հետ մեր տներում և մեր երկրպագության վայրերում:

Մենք հրավիրում ենք ձեզ գալ և օգնել: Եկեք և ծառայեք մեզ հետ՝ սպասավորելով Աստծո զավակներին, հետևելով Փրկիչին և դարձնելով այս աշխարհը ավելի լավ վայր:

Եկե՛ք և պատկանե՛ք Դուք մեզ ավելի ուժեղ կղարձնեք: Դուք ևս կդառնաք ավելի լավ, ավելի բարի և ավելի երջանիկ: Ձեր հավատքը կխորանա և կդառնա ավելի կայուն, ավելի ընդունակ՝ դիմակայելու իրարանցումներին և կյանքի անսպասելի փորձություններին:

Եվ ինչպե՞ս պետք է սկսենք: Կան բազմաթիվ հնարավոր եղանակներ:

Մենք հրավիրում ենք ձեզ կարդալ Մորմոնի Գիրքը: Եթե չունեք դրա մի օրինակ, կարող եք կարդալ այն ChurchofJesusChrist.org⁴ կայքում կամ ներբեռնել Մորմոնի Գիրքը հավելվածը: Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, և Հին ու Նոր Կտակարանների գուգրնկերը: Մենք սիրում ենք այս բոլոր սուրբ գրություններն ու սովորում դրանցից:

Մենք հրավիրում ենք ձեզ որոշ ժամանակ անցկացնել ComeuntoChrist.org կայքում, որպեսզի պարզեք, թե Եկեղեցու

անդամներն ինչ են ուսուցանում և ինչին են հավատում:

Հրավիրեք միսիոներներին այցելել ձեզ առցանց կամ հնարավոր տարածքներում ձեր տուն. նրանք ունեն հույսի և բժշկության ուղերձ: Այդ միսիոներները մեր թանկագին որդիներն ու դուստրերն են, ովքեր ծառայում են աշխարհի տարբեր վայրերում՝ ծախսելով իրենց իսկ ժամանակն ու գումարը:

Հիսուս Քրիստոսի Եկեղեցում դուք կգտնեք այնպիսի մարդկանց, որոնք ձեզանից շատ չեն տարբերվում: Դուք կգտնեք մարդկանց, ովքեր ունեն ձեր օգնության կարիքը և ովքեր ուզում են օգնել ձեզ, մինչ դուք փորձում եք դառնալ լավագույն մարդը, որ կարող եք՝ Աստծո ստեղծած այն անձնավորությունը, որը պիտի դառնաք:

Փրկիչը պատրաստ է գրկաբաց ընդունել բոլորին

Գուցե դուք մտածում եք. «Ես սխալներ եմ թույլ տվել իմ կյանքում: Վստահ չեմ, որ կարող եմ երբևէ պատկանել Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն: Աստծուն չի կարող հետաքրքրել ինձ նման մարդը»:

Հիսուս Քրիստոսը, չնայած «թագավորների Թագավորն է»,⁵ Մեսիան, «կենդանի Աստուծոյ Որդին»,⁶ խորապես մտահոգվում է Աստծո զավակներից յուրաքանչյուրի համար: Ես հոգ է տանում անկախ անձի վիճակից՝ աղքատ կամ հարուստ, անկատար կամ արդար: Իր մահկանացու կյանքի ընթացքում Փրկիչը ծառայեց բոլորին. երջանիկ և հաջողության հասածներին, կոտրված ու մոլորվածներին, և նրանց, ովքեր կորցրել էին հույսը: Մարդիկ, ում Նա ծառայում և սպասավորում էր, հաճախ առանձնակի դիրք, գեղեցկություն կամ հարստություն չունեին: Մարդկիկ, որոնց ևս բարձրացնում էր, հաճախ փոխարենը չէին կարող առաջարկել ավելին, քան երախտագիտություն, խոնարհ սիրտ և հավատ ունենալու ցանկություն:

Եթե Հիսուսն Իր մահկանացու կյանքն անցկացրեց՝

սպասավորելով «այս փոքր եղբայրների[ն]»,⁷ արդյո՞ք նա չի սիրի նրանց այսօր: Արդյո՞ք Նրա Եկեղեցում տեղ չի գտնվի Աստծո բոլոր զավակների համար: Նույնիսկ նրանց համար, ովքեր անարժան, մոռացված կամ միայնակ են զգում իրենց:

Գոյություն չունի կատարելության շեմ, որին դուք պետք է հասնեք Աստծո շնորհին արժանալու համար: Պարտադիր չէ, որ ձեր աղոթքներն ասվեն բարձրաձայն, պերճախոս կամ քերականորեն ճիշտ լինեն, որպեսզի հասնեն երկինք:

Իսկապես, Աստված աչառ չէ՞. աշխարհի կողմից արժևորվող բաները ոչինչ են Նրա համար: Նա գիտի ձեր սիրտը, և Նա սիրում է ձեզ՝ անկախ ձեր կոչումից, ֆինանսական վիճակից կամ Ինստագրամի հետևորդների թվից:

Երբ դարձնենք մեր սիրտը դեպի մեր Երկնային Հայրը և մոտենանք Նրան, մենք կզգանք, որ Նա մոտենում է մեզ:⁹

Մենք բոլորս էլ Նրա սիրելի զավակներն ենք:

Նույնիսկ նրանք, ովքեր մերժում են Նրան:

Նույնիսկ նրանց, ովքեր համառ, անկարգապահ երեխաների նման զայրոյթով են լցվում Աստծո և Նրա Եկեղեցու հանդեպ, հավաքում են ճամպուկները և աղմուկով փակելով դուռը հայտարարում, որ հեռանում են և երբեք չեն վերադառնալու:

Երբ երեխան փախչում է տանից, նա գուցե չնկատի պատուհանից նայող մտահոգ ծնողներին: Միբառատ սրտերով նրանք հետևում են իրենց որդու կամ դստեր հեռանալուն, հուսալով, որ իրենց թանկագին զավակը ինչ-որ բան կտվորի այս դառը փորձից և, հնարավոր է, նորովի կտեսնի կյանքը և, ի վերջո, կվերադառնա տուն:

Այդպես էլ մեր սիրող Երկնային Հոր դեպքում է: Նա սպասում է մեր վերադարձին:

Ձեր Փրկիչը, սիրո և կարեկցանքի արցունքներն աչքերին,

սպասում է ձեր վերադարձին: Նույնիսկ, երբ դուք ձեզ հեռացած եք զգում Աստծուց, Նա տեսնում է ձեզ. Նա կարեկցանքով լի գրկաբաց վազում է ձեզ դիմավորելու:¹⁰ Եկե՛ք և պատկանե՛ք:

Աստված մեզ թույլ է տալիս սովորել մեր սխալներից

Մենք ուխտավորներ ենք, որ քայլում ենք մահկանացու կյանքի արահետով՝ ամենուր փնտրելով իմաստ և բացարձակ ճշմարտություն: Հաճախ, մենք տեսնում ենք միայն մեր առջև գտնվող ուղիղ ճանապարհը. մենք չենք կարող տեսնել, թե ուր են տանելու ճանապարհի ոլորանները: Մեր սիրելի Երկնային Հայրը մեզ չի տվել բոլոր պատասխանները: Նա ակնկալում է, որ շատ բաներ մենք ինքներս պարզենք մեր համար: Նա ակնկալում է, որ մենք հավատանք. նույնիսկ, եթե դա դժվար է անել:

Նա ակնկալում է, որ մենք ուղղենք մեր կորացած մեջքը և վճռականություն ցուցաբերենք կատարելու ևս մեկ քայլ առաջ:

Սա է սովորելու և աճելու ուղին: Արդյո՞ք անկեղծորեն ցանկանում եք, որ ամեն բան ամեն մանրամասնությամբ մեկնաբանվեր ձեզ համար: Արդյո՞ք անկեղծորեն ցանկանում եք, որ ամեն հարցի պատասխանը տրվեր: Ամեն ճանապարհի գծագրվե՞ր ձեզ համար:

Կարծում եմ, որ մեզանից շատերը շատ շուտ կհոգնեին երկնային նմանատիպ մանրակրկիտ ղեկավարումից: Կյանքի կարևոր դասերը մենք սովորում ենք փորձառության միջոցով: Մեր սխալներից սովորելու միջոցով: Մպաշխարելու և ինքնուրույն հասկանալու միջոցով, որ «ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»:¹¹

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, մահացավ, որպեսզի մեր սխալները չդատապարտեն մեզ և ընդմիշտ դադարեցնեն մեր առաջընթացը: Նրա շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել, և մեր սխալները կարող են դառնալ քայլեր դեպի ավելի մեծ փառքը:

Կարիք չկա, որ դուք միայնակ անցնեք այդ ուղին: Մեր Երկնային Հայրը չի թողել մեզ թափառելու խավարում:

Սհա թե ինչու 1820 թվականի գարնանը Նա Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ հայտնվեց պատանի Ջոզեֆ Սմիթին:

Մի պահ մտածե՛ք այդ մասին: Տիեզերքի Աստվածը հայտնվե՞ց մարդուն:

Սա առաջինն էր բազում հանդիպումներից, որոնք Ջոզեֆն ունեցավ Աստծո և երկնային այլ էակների հետ: Խոսքերից շատերը, որոնք աստվածային էակները խոսեցին նրա հետ, արձանագրված են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու սուրբ գրություններում: Դրանք հեշտությամբ հասանելի են դառնում: Բոլորը կարող են կարդալ դրանք և ինքնուրույն ուսումնասիրել ուղերձը, որ Աստված ունի մեզ համար մեր օրերում:

Մենք հրավիրում ենք ձեզ ինքնուրույն ուսումնասիրել դրանք:

Ջոզեֆ Սմիթը շատ երիտասարդ էր, երբ ստացավ այս հայտնությունները: Դրանցից շատերը տրվեցին, նախքան կլրանար նրա 30 տարին:¹² Նա փորձառու չէր, և գուցե որոշ մարդկանց կարծիքով արժանի չէր լինելու Տիրոջ մարգարեն:

Ինչևէ, Տերը կանչեց նրան. հետևյալ օրինաչափությունը մենք նկատում ենք սուրբ գրություններում:

Աստված չսպասեց, որ գտներ կատարյալ մեկին՝ ավետարանը վերականգնելու համար:

Այլապես Նա մինչ հիմա էլ պիտի սպասեր:

Ջոզեֆը շատ նման էր ձեզ և ինձ: Չնայած Ջոզեֆը սխալներ թույլ տվեց, Աստված նրա միջոցով իրականացրեց Իր մեծ նպատակները:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հաճախ կրկնում էր խորհրդի այս խոսքերը. «Ում Տերը կանչում է, Տերը որակավորում է»:¹³

Պողոս Առաքյալը խորհուրդ արեց Կորնթոսի Սրբերի հետ.

«Հենց ձեր կոչումին մտիկ արեք, եղբայրներ և քույրեր, որ ոչ թե շատ իմաստուններ մարմնի կողմանէ, եւ ոչ թե շատ զօրատրներ, եւ ոչ թե շատ ազնուականներ»:¹⁴

Իր նպատակներն իրականացնելու համար Տերն օգտագործում է թույլերին և հասարակ մարդկանց: Այս ճշմարտությունը վկայում է այն մասին, որ Աստծո զորությամբ է, ոչ թե մարդու, որ երկրի վրա կատարվում է Նրա գործը:¹⁵

Լսե՛ք Նրան, հետևե՛ք Նրան

Երբ Աստված հայտնվեց Ջոզեֆ Սմիթին, Նա ներկայացրեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և ասաց. «Լսի՛ր Նրան»:¹⁶

Իր կյանքի մնացած մասը նա անցկացրեց լսելով Նրան և հետևելով Նրան:

Ինչպես Ջոզեֆի դեպքում, մեր աշակերտությունը սկսվում է Փրկիչ Հիսուս Քրիստոսին լսելու և հետևելու որոշմամբ:

Եթե ցանկանում եք հետևել Նրան, լցվեք հավատքով և ձեր վրա վերցրեք Նրա խաչը:

Դուք կտեսնեք, որ *խկասյես* պատկանում եք Նրա Եկեղեցուն. ջերմ ու հյուրընկալ մի վայր, որտեղ կարող եք միանալ աշակերտության և երջանկության մեծ գործին:

Ես հուսով եմ, որ Առաջին Տեսիլքի երկհարյուրամյակին, մինչ մենք կմտորենք և կտվորենք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնման մասին, մենք կգիտակցենք, որ դա պարզապես պատմական իրադարձություն չէ: Դուք և ես



Օսլո, Նորվեգիա

վճռական մասն ենք կազմում այս մեծ, շարունակվող պատմության: Ուրեմն, ո՞րն է ձեր և իմ բաժինը:

Դա Հիսուս Քրիստոսի մասին սովորելն է: Նրա խոսքերն ուսումնասիրելն է: Նրան լսելը և Նրան հետևելն է՝ ակտիվորեն մասնակցելով այս մեծ աշխատանքին: Ես հրավիրում եմ ձեզ գալ և պատկանել:

Պարտադիր չէ, որ դուք կատարյալ լինեք: Դուք միայն պետք է ցանկություն ունենաք զարգացնելու ձեր հավատքը և ամեն օր ավելի մոտենալու Նրան:

Մեր բաժինն է՝ սիրել ու ծառայել Աստծուն և սիրել ու ծառայել Աստծո զավակներին:

Երբ դուք անեք դա, Աստված կպարտրի ձեզ Իր սիրով, ուրախությամբ և որոշակի առաջնորդությամբ այս կյանքի ընթացքում, նույնիսկ ամենալուրջ և վտանգավոր իրավիճակներում:

Այդ մասին ես վկայում եմ և թողնում եմ ձեզ իմ օրհնությունը խորը երախտագիտությամբ և սիրով ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ, մեր Փրկիչի և Ուսուցչի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Եփեսացիս 2.13-14:
2. Տես Դուկաս 4.18:
3. 2 Նեփի 25.26:
4. Տես Մորմոնի Գիրքը ChurchofJesusChrist.org/study/scriptures/bofm-ում:
5. Ա Տիմոթեոս 6.12:
6. Տես Մատթեոս 16.15-17:
7. Մատթեոս 25.40:
8. Տես Գործք Առաքելոց 10.34:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.63:
10. Տես հոր վերաբերմունքը, ով տեսնում է իր անառակ որդու վերադարձը Դուկաս 15.20-ում:
11. Ալմա 41.10:
12. Օրինակ, Վարդապետություն և Ուխտերի 138 բաժիններից ավելի քան 100-ը հայտնություններ են, որոնք Ջոզեֆ Սմիթը ստացել է մինչև 30 տարին լրանալը 1835թ. դեկտեմբերի 23-ին:
13. Thomas S. Monson, "Duty Calls," *Ensign*, May 1996, 44.
14. Ա Կորնթացիս 1.26, Նոր վերանայված կանոնիկ տարբերակը:
15. Տես Ա Կորնթացիս 1.28-29, Բ Կորնթացիս 4.7:
16. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17:



Երեց Լ. Ուիթնի Բլայթս
Յոթանասունի Նախագահությունից

Լավագույն տները

Փրկիչը կատարյալ ճարտարագետ է, շինարար և ներաշխարհի ձևավորող: Նրա նախագիծը մեր հոգիների կատարելագործումն է և հավերժական ուրախությունը:

Վերջերս Մուլթ Լեյք Սիթիում աչքիս ընկավ մի գովազդային վահանակ: Այն գովազդում էր կահույքի և ներքին ձևավորման մի ընկերություն: Այն պարզապես ասում էր. «Լավագույն տների սպասարկում Մուլթ Լեյք Սիթիում»:

Գովազդը տպավորիչ էր՝ ո՞րն է «լավագույն տունը»: Ես սկսեցի մտածել այդ հարցի մասին, հատկապես երեխաների վերաբերյալ, ում կինս՝ Քեթին և ես էինք մեծացրել, և այն երեխաների, որ այսօր նրանք էին մեծացնում: Ինչպես ամենուրեք ծնողները, մենք անհանգստանում էինք և աղոթում մեր ընտանիքի համար: Մենք դա դեռ անում ենք: Մենք անկեղծորեն ամենալավն ենք ցանկանում նրանց: Ինչպե՞ս կարող են նրանք և նրանց երեխաներն ապրել լավագույն տներում: Ես մտածեցի Եկեղեցու անդամների տների մասին, որտեղ Քեթին և ես արտոնություն էինք ունեցել այցելել: Մեզ հրավիրել էին տներ Կորեայում և Քենիայում, Ֆիլիպպիններում և Պերուում, Լաոսում և Լատվիայում: Թույլ տվեք կիսվել լավագույն տների վերաբերյալ չորս դիտարկումներով:

Առաջինը՝ Տիրոջ տեսանկյունից, լավագույն տներ հիմնելը ամբողջովին կապված է այդտեղ ապրող

մարդկանց անձնական հատկանիշների հետ: Այդ տները լավը չեն դառնում դրանց տերերի կահույքի կարևորությամբ կամ երկարակեցությամբ, կամ մարդկանց մաքուր եկամտի արժեքով, կամ սոցիալական կարգավիճակով: Ցանկացած տան լավագույն բնորոշիչը տան բնակիչների մեջ արտացոլված Քրիստոսի պատկերն է: Այն, ինչ մեծ նշանակություն ունի՝ բնակիչների հոգիների ներքին ձևավորումն է, այլ ոչ թե ինքնին կառուցվածքը:

Քրիստոսի այդ հատկանիշները ձեռք են բերվում «ժամանակի ընթացքում»¹ ուխտի արահետի վրա նպատակաուղղված առաջընթացով: Քրիստոսանման հատկանիշները զարդարում են նրանց կյանքը, ովքեր ձգտում են ապրել բարության: Նրանք տները լցնում են ավետարանի լույսով, անկախ այն բանից՝ նրանից հատակը հողից է, թե՛ մարմարից: Եթե, նույնիսկ, դուք միակն եք ձեր ընտանիքում, ով հետևում է «ձգտեք այս բաներին» հորդորին,² դուք կարող եք ձեր ներդրումը կատարել ձեր ընտանիքի տան հոգևոր ձևավորման գործում:

Մենք հետևում ենք Տիրոջ խորհրդին, որպեսզի «կազմակերպվենք,

նախապատրաստենք ամեն անհրաժեշտ բան. և հաստատենք մի տուն» կազմակերպելով, պատրաստելով և հաստատելով մեր հոգևոր կյանքը, ոչ թե մեր անշարժ գույքը: Երբ մենք համբերությամբ հետևում ենք Փրկիչի ուխտի արահետին, մեր տունը դառնում է «փառքի տուն, կարգ ու կանոնի տուն», [և] Աստծո տուն»:³

Երկրորդը, լավագույն տների բնակիչները ժամանակ են գտնում ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հրավիրել է մեզ «կերպարանափոխել» և «վերակառուցել» մեր տները ավետարանն ուսումնասիրելու միջոցով:⁴ Նրա հրավերը գնահատում է, որ լավագույն տներում ապրում է անձնական աճի նուրբ, կարևոր աշխատանքը և վերակառուցում մեր թուլությունները: Ամենօրյա ապաշխարությունը փոխակերպման գործիք է, որը հնարավորություն է տալիս մեզ աճել՝ դառնալով մի քիչ ավելի բարի, ավելի սիրառատ և ավելի հասկացող: Սուրբ գրությունների ուսումնասիրությունը մեզ ավելի է մոտեցնում Փրկիչին, ում առատ սերն ու շնորհն օգնում է մեր աճին:

Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը և Թանկագին Մարգարիտը պատմում են պատմություններ ընտանիքների մասին, այնպես որ զարմանալի չէ, որ այդ աստվածային հատորները անզուգական դասագրքեր են՝ լավագույն տներ կառուցելու համար: Դրանք տալիս են ծնողների անհանգստության, գայթակղության վտանգների, արդարության հաղթանակի, սովի և առատության փորձությունների և պատերազմի սարսափների ու խաղաղության պարզևների ժամանակագրությունը: Կրկին և կրկին սուրբ գրությունները ցույց են տալիս մեզ, թե ինչպես են ընտանիքները հաջողության հասնում արդար ապրելով, և ինչպես են նրանք ձախողվում՝ հետամուտ լինելով այլ ուղիների:

Երրորդ, լավագույն տները հետևում են Տիրոջ կողմից ստեղծած

Նրա լավագույն տան՝ տաճարի նախագծին: Տաճարի կառուցումը սկսվում է հիմնական քայլերով՝ հողակտորը թփուտներից մաքրելով և հարթեցնելով: Հողատարածքը մաքրելու այդ սկզբնական ջանքերը կարելի է համեմատել հիմնական պատվիրանները պահելու հետ: Պատվիրանները հիմքն են, որի վրա կառուցվում է աշակերտությունը: Կայուն աշակերտությունը առաջնորդում է մեզ դառնալ ամուր, կայուն և անասան՝⁵ տաճարի պողպատյա կմախքի նման: Այդ ամուր կմախքը թույլ է տալիս Տիրոջը ուղարկել Իր Հոգին՝ փոխելու մեր սրտերը:⁶ Մրտի զորեղ փոփոխություն ունենալը նման է տաճարի ներքին հարդարանքին գեղեցիկ առանձնահատկություններ ավելացնելուն:

Երբ մենք շարունակում ենք հավատքով, Տերն աստիճանաբար փոխում է մեզ: Մենք ստանում ենք Նրա պատկերը մեր դեմքին և սկսում արտացոլել սեր և Նրա բնավորության գեղեցկությունը:⁷ Երբ մենք ավելի ենք նմանվում Նրան, Նրա տանը կզգանք՝ ինչպես մեր տանը, իսկ Նա մեր տանը կզգա՝ ինչպես Իր տանը:

Մենք կարող ենք պահպանել մեր տան սերտ կապը Նրա տան հետ, արժանի լինելով և օգտագործելով տաճարային երաշխավորագիր այնքան հաճախ, որքան հանգամանքները թույլ են տալիս: Երբ այդպես ենք անում, Տիրոջ տան սրբությունը հանգչում է նաև մեր տների վրա:

Սուրբ Լեյքի հոյաշուք տաճարը կանգնած է մտակայքում: Կառուցվելով ռահվիրաների կողմից տարրական գործիքներով, տեղական նյութերով և անվերջ քրտնաջան աշխատանքով, տաճարը կառուցվեց 1853-1893 թվականներին: Լավագույնը, ինչ կարող էին առաջարկել Եկեղեցու վաղ օրերի անդամները ճարտարագիտության, ճարտարապետության և ներքին ձևավորման մեջ, ստեղծեց մի գլուխգործոց, որը ճանաչվում է միլիոնավորների կողմից:

Մոտ 130 տարի է անցել տաճարի

նվիրագործումից ի վեր: Ինչպես Գարի Բ. Մթիվենսոնը նշեց երեկ, տաճարը նախագծելու համար օգտագործված ճարտարագիտական սկզբունքները փոխարինվել են ավելի նոր, անվտանգ չափանիշներով: Տաճարի ճարտարագիտական և կառուցվածքային թույլ կողմերի վերականգնման ձախողումը [կնշանակել] դավաճանել ռահվիրաների վստահությանը, ովքեր արեցին հնարավոր ամեն բան, իսկ հետո թողեցին տաճարի խնամքը հաջորդ սերունդներին:

Եկեղեցին սկսել է քառամյա վերականգնման նախագիծ՝ բարելավելու տաճարի կառուցվածքային և սեյսմիկ կայունությունը:⁸ Հիմքը, հատակները և պատերը կամրացվեն: Այսօր առկա լավագույն ճարտարագիտական գիտելիքները տաճարը կհամապատասխանեցնեն ժամանակակից չափանիշներին: Մենք չենք կարողանա տեսնել կառուցվածքային փոփոխություններ, բայց դրանց հետևանքները կլինեն իրական և կարևոր: Այս ողջ աշխատանքում կպահպանվեն տաճարի ներքին հարդարանքի գեղեցիկ էլեմենտները:

Մենք պետք է հետևենք Սուրբ Լեյքի տաճարի վերանորոգման ժամանակ մեզ տրված օրինակին և ժամանակ տրամադրենք գնահատելու մեր անհատական հոգևոր սեյսմիկ ճարտարագիտությունը՝ համոզվելով համար, որ այն արդիական է: Պարբերական ինքնազննահատումը, Տիրոջից հարցնելուն զուգահեռ՝ «Էլ ի՞նչ պակասություն ունեմ ես»,⁹ կարող է օգնել մեզանից յուրաքանչյուրին ներդրում կատարել լավագույն տուն կառուցելու համար:

Չորրորդ, լավագույն տները ապաստան են կյանքի փոթորիկներից: Տերը խոստացել է, որ նրանք, ովքեր պահում են Աստծո պատվիրանները, «նրանք կբարգավաճեն երկրում»:¹⁰ Աստծո բարգավաճումը, չնայած կյանքի խնդիրներին, առաջ շարժվելու ուժն է:

2002 թվականին ես մի կարևոր դաս սովորեցի խնդիրների մասին: Պարագվայի Ասունսիոն քաղաքում

գտնվելիս ես հանդիպեցի քաղաքի ցցի նախագահների հետ: Այդ ժամանակ Պարագվայը կանգնած էր սարսափելի ֆինանսական ճգնաժամի առջև, և Եկեղեցու անդամներից շատերը տառապում էին և ի վիճակի չէին ծայրը ծայրին հասցնել: Բժ միսիայից ի վեր Հարավային Ամերիկայում չի եղել և երբեք չէի եղել Պարագվայում: Ես ընդամենը մի քանի շաբաթ էի ծառայել այդ տարածաշրջանի նախագահությունում: Մտածելով այդ նախագահներին առաջնորդություն տալու իմ անկարողության մասին, ես խնդրեցի, որ ինձ ասեն միայն այն, ինչը լավ էր գնում իրենց ցցերում: Առաջին ցցի նախագահը պատմեց ինձ այն գործերի մասին որոնք լավ էին գնում: Հաջորդը նշեց այն բաները, որոնք լավ էին գնում և մի քանի խնդիրներ: Մինչև հասանք ցցի վերջին նախագահին, նա նշեց միայն մի շարք տհաճ մարտահրավերների մասին: Մինչ ցցի նախագահները բացատրում էին իրավիճակի ծավալների մասին, ես ավելի ու ավելի էի անհանգստանում, գրեթե հուսահատվում նրա համար, թե ինչ ասեմ:

Հենց որ վերջին ցցի նախագահն ավարտում էր իր դիտարկումները, մի միտք ծագեց գլխումս. «Երեք Քլեյթոն, նրանց այս հարցը տվեք. «Նախագահներ՝, ձեր ցցերի անդամներից, ովքեր վճարում են լրիվ տասանորդ, վճարում են առատաձեռն ծոմապահություն, մեծարում են իրենց կոչումները Եկեղեցում, փաստորեն այցելում են իրենց [ծխի] ընտանիքներին՝ որպես տնային ուսուցիչներ կամ այցելող ուսուցիչներ¹¹ ամեն ամիս, անցկացնում են ընտանեկան երեկո, ուսումնասիրում են սուրբ գրությունները, և ամեն օր ասում են ընտանեկան աղոթք, նրանցից քանի՞սն ունեն խնդիրներ, որոնք իրենք ինքնուրույն չեն կարողանում լուծել, և եկեղեցին ստիպված է քայլեր ձեռնարկել և լուծել նրանց խնդիրներն իրենց համար»:

Արձագանքելով իմ ստացած հուշմանը, ես ցցի նախագահներին ուղղեցի այդ հարցը:

Նրանք զարմացած լռությամբ նայեցին ինձ, իսկ հետո ասացին. «*Pues, ninguno,*» որը նշանակում է. «Դեհ, ոչ մեկը»: Այնուհետև նրանք ինձ պատմեցին, որ այդ անդամներից ոչ մեկը, ով կատարում էր այդ բոլոր բաները, խնդիրներ չունեցան, որոնք ի վիճակի չլինեին ինքնուրույն լուծել: Ինչո՞ւ: Որովհետև նրանք ապրում էին լավագույն տներում: Նրանց հավատարիմ ապրելակերպն ապահովեց նրանց ուժ, տեսական և երկնային օգնություն, որի կարիքը նրանք ունեին, տնտեսական խառնաշփոթում, որով շրջապատված էին իրենք:

Մա չի նշանակում, որ արդարները չեն հիվանդանա, տառապի դժբախտ պատահարներից, բայցվի բիզնեսի շրջադարձերին կամ դիմակայի կյանքի բազմաթիվ այլ դժվարությունների: Մահկանացությունը միշտ մարտահրավերներ է բերում, բայց ժամանակ առ ժամանակ ես տեսել եմ, որ նրանք, ովքեր ձգտում են հնազանդվել պատվիրաններին, օրհնվում են, որ խաղաղությամբ և հույսով գտնեն իրենց առաջ գնալու ուղին: Այդ օրհնությունները հասանելի են ամենքին:¹²

Դավիթը հայտարարել է. «Եթե Տերը չչինե տունը՝ զուր են աշխատում նորա շինողները»:¹³ Ուր էլ որ ապրեք, ինչպիսի տեսք էլ ձեր տունն ունենա, և ինչպիսին էլ որ լինի ձեր ընտանիքի կազմը, դուք կարող եք օգնել՝ կառուցել լավագույն տունը ձեր ընտանիքի համար: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը տալիս է ծրագրեր այդ տան համար: Փրկիչը կատարյալ ճարտարագետ է, շինարար և ներաշխարհի ձևավորող: Նրա նախագիծը մեր հոգիների կատարելագործումն է և հավերժական ուրախությունը: Նրա սիրառատ օգնությամբ, ձեր հոգին կարող է լինել այն ամենը, ինչ Նա կամենում է, որ այն լինի. և դուք կարող եք լինել ձեր իսկ լավագույն տարբերակը՝ պատրաստված հիմնելու և ապրելու լավագույն տանը:

Ես երախտագիտությամբ վկայում եմ, որ մեր բոլորիս Աստվածը և Հայրն ապրում է: Նրա Որդին՝



Օլմոն, Մարգա Մարգա, Չիլի

Տեր Հիսուս Քրիստոսը, ողջ մարդկության Փրկիչն է ու Քավիչը: Նրանք սիրում են մեզ կատարելապես: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ թագավորությունն է երկրի վրա: Կենդանի մարգարեները և առաքյալները այսօր առաջնորդում են այն: Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը լավագույն տուն հիմնադրելու համար կատարյալ ծրագիրն է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 7.21:
2. Հավատո Հանգանակ 1.13:
3. Վարդապետություն և Ուխտեր 88.119:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր», *Liahon*, նոյ. 2018, 113:
5. Տես 1 Նեփի 2.10, Մոսիա 5.15, 3 Նեփի 6.14:
6. Տես Մոսիա 5.2, Ալմա 5.7:
7. Տես Ալմա 5.14, 19:
8. 2020 թ.-ի մարտի 18-ին տեղի ունեցած երկրաշարժը, կտրուկ ցույց տվեց նախագիծը իրականացնելու անհրաժեշտությունը:
9. Մատթեոս 19.20:
10. Մոսիա 2.22:
11. Տես այն ուսուցումը և այցելությանը ուսուցումն անվանափոխվել են սպասավորության 2018 թ.-ին (տես Ռասսել Մ. Նելսոն, «Մպասավորում», *Liahon*, մայիս 2018, 100):
12. Երբ մենք ընտրում ենք չապրել պատվիրանների համաձայն, ապա Տիրոջ օրհնությունները ինչ-որ չափով հետ են քաշվում: Մորմոնի Գրքում նկատված այս կրկնվող օրինաչափությունը երբեմն կոչվում է արդարակեցության և ամբարշտության շրջան (տես *Մորմոնի Գրքի ուսանողական ձեռնարկը* [Եկեղեցու կրթական համակարգի ձեռնարկ, 2009], 414, ChurchofJesusChrist.org):
13. Մաղմուս 127.1:



Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Կիսվել Վերականգնման և Հարության ուղերձով

Վերականգնումը պատկանում է աշխարհին, և դրա ուղերձը հատկապես հրատապ է այսօր:

Այս գերագույն համաժողովի ընթացքում մենք ուրախությամբ խոսել ու երգել ենք հնում մարգարեացված «ամեն բաների հաստատուելու»¹ մասին, այն մասին, որ «ամեն բան [կ]բովանդակուի Քրիստոսումը»,² ավետարանի լրիվության, քահանայության և Հիսուս Քրիստոսի Եկեղեցու՝ երկիր վերադարձի մասին, և այս ամենը մենք ամփոփում ենք «Վերականգնումը» վերնագրում:

Սակայն Վերականգնումը ոչ միայն նրանց համար է, ովքեր ուրախանում են դրանով այսօր: Առաջին տեսիլքի հայտնությունները նախատեսված չէին միայն Ջոզեֆ Միլթի համար, այլ տրվեցին որպես լույս և ճշմարտություն ցանկացած մարդու, ով «իմաստութեան պակասություն ունի»:³ Մորմոնի Գիրքը մարդկության սեփականությունն է: Քահանայության փրկարար և վեհացնող արարողությունները նախապատրաստվել էին յուրաքանչյուր անձնավորության համար, ներառելով նրանց, ովքեր լքել են այս մահկանացու կյանքը: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցին և դրա օրհնությունները նախատեսված են բոլոր ցանկացողների համար: Մուրբ Հոգու

պարզ կարող են ունենալ բոլորը: Վերականգնումը պատկանում է աշխարհին, և դրա ուղերձը հատկապես հրատապ է այսօր:

«Ուստի, որքան մեծ է այս բաները հայտնի դարձնելու կարևորությունը երկրի բնակիչներին, որպեսզի նրանք իմանան, որ չկա մարմին, որ կարող է բնակվել Աստծո ներկայության մեջ, բացի դա լինի Մուրբ Մեսիայի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով, որը վայր է դնում իր կյանքը՝ ըստ մարմնի, և կրկին վերցնում է այն, Հոգու զորությամբ,

որպեսզի կարողանա իրագործել մեռելների հարությունը»:⁴

Այն օրից, երբ Մարգարեի եղբայրը՝ Սեմյուել Մմիթը, լցրեց իր պայուսակը Մորմոնի Գրքի նոր տպագրված օրինակներով և ոտքով ճամփա ընկավ՝ կիսվելու նոր սուրբ գրությամբ, Մրբերն անդադար աշխատել են «այս բաները հայտնի դարձնել երկրի բնակիչներին»:

1920 թվականին, այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Օ. Մակքեյը սկսեց մեկամյա շրջագայություն Եկեղեցու միսիաներում: 1921 թվականի մայիսին նա կանգնած էր Ֆագալիի (Մամոա) մի փոքրիկ գերեզմանատանը, Թոմաս և Մարա Հիլթոնների երեք փոքրիկների՝ դստեր և երկու որդիների լավ խնամված գերեզմանների մոտ: Այս փոքրիկները, որոնցից ավագը երկու տարեկան էր, մահացել էին այն ժամանակ, երբ Թոմասը և Մարան ծառայում էին որպես երիտասարդ միսիոներ գույզ 1800-ականների վերջին:

Նախքան Յուտայից հեռանալը, Երեց Մակքեյը խոստացավ Մարային՝ այժմ այրի, որ նա կայցելեր նրա երեխաների գերեզմանին Մամոայում, քանի որ Մարան երբեք հնարավորություն չէր ունեցել վերադառնալու այնտեղ: Երեց Մակքեյը պատասխան նամակ գրեց նրան. «Ձեր երեք փոքրիկները, Քույր Հիլթոն, ամենապերճախոս



Բլաֆլեյլ, Յուտա, ԱՄՆ

լռությամբ . . . շարունակում են ձեր ազնվական միսիոներական աշխատանքը, որը սկիզբ էր առել մոտավորապես երեսուն տարի առաջ: Ապա նա ավելացրել էր իր իսկ գրած մի քառատող.

*Միտող ձեռքերը փակեցին նրանց
աչքերը մարող,
Միտող ձեռքերում համազենցին փոքրիկ մատները նրանց,
Օտար ձեռքերը զարդարում են
համեստ գերեզմանը նրանց,
Որ պատվում են օտարները, ուր
սգում են անժամտները:⁵*

Այս պատմությունը լույս մեկն է հազարներից, հարյուր հազարներից, որ խոսում է վերջին 200 տարիների ընթացքում հանուն Վերականգնման ուղերձը կիսելու զոհաբերած ժամանակի, հարստության և կյանքերի մասին: Յուրաքանչյուր ազգին, ցեղին, լեզվին ու ժողովրդին հասնելու մեր ձգտումը չի նվազում այսօր, ինչի վկաներն են տասը հազարավոր երիտասարդ տղամարդիկ, կանայք և զույգերը, որ ներկայումս ծառայում են համաձայն լիաժամկետ միսիայի կանչերի, նաև Եկեղեցու բոլոր անդամները, ովքեր արձագանքում են Փիլիպպոսի հրավերին՝ եկ և տես,⁶ և միլիոնավոր դուրսերը, որ ամեն տարի ծախսվում են ողջ աշխարհում այդ ջանքերին աջակցելու համա:

Մինչդեռ մեր հրավերները չեն ներառում հարկադրանք, հուսանք, որ մարդիկ դրանք համոզվի կզտնեն: Իսկ որպեսզի դա այդպես լինի, կարծում եմ պահանջվում է առնվազն երեք բան. առաջինը՝ ձեր սերը, երկրորդը՝ ձեր օրինակը և երրորդը՝ Մորմոնի Գրքի օգտագործումը ձեր կողմից:

Մեր հրավերները չեն կարող բխել մեր անձնական հետաքրքրություններից, այլ պետք է արտահայտեն անկեղծ սեր, սեր, որը «հեռացնում է վախը»:⁷ Այդ սերը, որը հայտնի է որպես գթություն՝ Քրիստոսի մաքուր սեր, մեր խնդիրքն է: Մեզ հրավիրում, նույնիսկ պատվիրում են «աղոթել Հորը, սրտի ողջ



Մորմոնի Հավատարմության Գրքի 2-րդ գլուխի 1-ին հոդվածի 1-ին պատկեր

կորովով, որ [մենք] կարողանանք լցված լինել այդ սիրով»:⁸

Որպես օրինակ, ես կիսվում եմ փորձառությամբ, որը պատմել է Քույր Լանետ Հո Չինգը, ով ներկայումս ծառայում է ամուսնու՝ Նախագահ Ֆրենսիս Հո Չինգի՝ Սամուա Ափիա Միսիայի նախագահի հետ: Քույր Հո Չինգը պատմում է.

«Տարիներ առաջ մեր երիտասարդ ընտանիքը տեղափոխվեց մի փոքրիկ տնակ Լախում (Հավայան կղզիներ): Մեր ավտոտնակը վերածվել էր մի փոքրիկ բնակարանի, որտեղ ապրում էր Ջոնաթան անունով մի մարդ: Ջոնաթանը մեր հարևանն էր եղել նաև մեկ այլ վայրում: Զգալով, որ դա պատահական չէր, որ Տերը մեզ նույն վայրն էր ուղարկում, մենք որոշեցինք ավելի բաց խոսել Եկեղեցու մեր անդամության և միջոցառումների մասին: Ջոնաթանը վայելում էր մեր ընկերությունը և սիրում ժամանակ անցկացնել

մեր ընտանիքի հետ: Նրան դուր էր գալիս ավետարանի մասին սովորելը, սակայն նա հետաքրքրված չէր Եկեղեցուն նվիրվելով:

Ժամանակի ընթացքում մեր երեխաները սկսեցին կոչել նրան հորեղբայր Ջոնաթան: Մեր ընտանիքի աճին համընթաց մեծանում էր նաև մեր հանդեպ Ջոնաթանի հետաքրքրությունը: Տոների, ծնունդների, դպրոցի և Եկեղեցու միջոցառումների հրավերներին ավելացան նաև ընտանեկան երեկոները և երեխաների մկրտությունները:

Մի օր ես զանգ ստացա Ջոնաթանից: Նա օգնության կարիք ուներ: Նա տառապում էր շաքարային դիաբետով, որն էլ ոտքի ծանր վարակ էր առաջացրել, և պահանջվում էր անդամահատում: Մեր ընտանիքը և հարևանությամբ ապրող ծխի անդամները նրա կողքին եղան փորձության այդ ողջ ընթացքում: Մենք հերթով

այցելում էինք հիվանդանոց, և տրվում էին քահանայության օրհնություններ: Մինչ Ջոնաթանը վերականգնողական կենտրոնում էր, Սփոփող միության քույրերի օգնությամբ մենք մաքրեցինք նրա բնակարանը: Քահանայության եղբայրները թեքահարթակ կառուցեցին նրա դռան մոտ և վանդակապատեր լողարանում: Երբ Ջոնաթանը վերադարձավ տուն, նա շատ զգացված էր:

Ջոնաթանը նորից սկսեց միսիոներական դասերը: Նոր Տարուց մեկ շաբաթ առաջ նա զանգեց ինձ և հարցրեց, «Ի՞նչ եք անելու Նոր Տարվա նախօրեին»: Ես հիշեցրի նրան մեր ամենամյա խնջույքի մասին: Սակայն, ի պատասխան, նա ասաց, «Ես ուզում եմ, որ դուք գաք իմ մկրտությանը: Ես ցանկանում եմ ճիշտ սկսել այս տարին»: «Եկ և տես», «եկ և օգնիր» և «եկ և մնա» հրավերներ հղելուց 20 տարի անց այդ թանկագին հոգին պատրաստ էր մկրտվելու:

2018 թվականին, երբ մենք կանչվեցինք միսիայի նախագահ և գուգրնկեր Մամոայում, Ջոնաթանի առողջական վիճակը վատանում էր: Մենք աղերսեցինք նրան ամուր մնալ ու սպասել մեր վերադարձին: Նա մոտ մեկ տարի պայքարեց, սակայն Տերը պատրաստում էր նրան վերադառնալու տուն: Նա խաղաղ հեռացավ կյանքից 2019թ. ապրիլին: Իմ դուստրերը մասնակցեցին իրենց «հորեղբայր Ջոնաթանի» հուղարկավորությանը և երգեցին այն նույն երգը, որը երգել էինք նրա մկրտությանը:

Վերականգնման ուղերձով հաջողությամբ կիսվելու երկրորդ պահանջը կներկայացնեմ հետևյալ հարցի միջոցով. Ի՞նչը կարող է ձեր հրավերը գրավիչ դարձնել մարդկանց համար: Արդյո՞ք դա դուք չեք, ձեր կյանքի օրինակը: Շատերին, ովքեր լսել և ընդունել են Վերականգնման ուղերձը, ի սկզբանե գրավել է այն, ինչ տեսել են Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամի կամ անդամների մեջ: Գուցե դա եղել է ուրիշների հանդեպ նրանց վերաբերմունքը, բաներ, որ ասել կամ չեն

ասել, տոկունությունը, որ ցուցաբերել են դժվարին իրավիճակներում, կամ պարզապես նրանց էությունը:՞

Ինչ էլ դա լինի, մենք չենք կարող անտեսել այն փաստը, որ մենք պետք է առավելագույնս հասկանանք և ապրենք համաձայն վերականգնված ավետարանի սկզբունքների, որպեսզի մեր հրավերները հրավիրող լինեն: Դա մի բան է, ինչն այսօր հաճախ կոչում են իսկություն: Եթե Քրիստոսի սերն ապրում է մեր մեջ, ուրիշները կիմանան, որ նրանց հանդեպ մեր սերն իրական է: Եթե Մուրբ Հոգու լույսը շողում է մեր մեջ, այն կարտացոլի նրանց մեջ Քրիստոսի լույսը:¹⁰ Դուք ձեր էությամբ հաստատում եք ձեր հրավերի իսկությունը՝ զալ և վայելել Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության ուրախությունը:

Երրորդ պահանջը առավելագույն օգտագործումն է դարձի բերող այն գործիքի, որը Տերը նախատեսել է ավետարանի այս վերջին տնտեսության համար՝ Մորմոնի Գիրքը: Այն Ջոզեֆ Միթի մարգարեական կոչման ակնհայտ ապացույցն է և Հիսուս Քրիստոսի աստվածայնության և Հարության համոզիչ ապացույցը: Երկնային Հոր փրկագնման ծրագիրը, որը բացահայտվում է դրանում, իրեն հավասարը չունի: Երբ դուք կիսվում եք Մորմոնի Գրքով, դուք կիսվում եք Վերականգնումով:

Երբ Ջեյսոն Օլսենը պատանի էր, ընտանիքի անդամները և ուրիշները նրան շարունակ զգուշացրել էին չդառնալ քրիստոնյա: Ինչևէ, նա ուներ երկու լավ ընկեր, ովքեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու անդամ էին, և նրանք հաճախ էին քննարկում կրոնը: Նրա ընկերները՝ Շեան և Դեյվը, հարգանքով հերքում էին փաստերը, որոնք ուրիշները բերել էին Ջեյսոնին Հիսուս Քրիստոսին հավատալու դեմ: Ի վերջո, նրանք Մորմոնի Գրքի մի օրինակ տվեցին նրան, ասելով. «Այս գիրքը կպատասխանի քո հարցերին: Խնդրում ենք, կարդա այն»: Նա դժկամությամբ ընդունեց գիրքը և դրեց իր ուսապարկում, որտեղ այն մնաց

ամիսներ շարունակ: Նա չէր ուզում թողնել այն տանը, որտեղ նրա ընտանիքը կարող էր տեսնել այն, և չէր ուզում հիասթափեցնել Շեանին և Դեյվին՝ վերադարձնելով այն: Ի վերջո, նա կանգ առավ գիրքն այրելու որոշման վրա:

Մի երեկո, կրակայրիչը մի ձեռքում և Մորմոնի Գիրքը մյուսում, նա պատրաստվում էր այրել գիրքը, երբ ձայն լսեց իր մտքում, որն ասում էր. «Մի՛ վառիր իմ գիրքը»: Նա զարմանքից քար կտրեց: Ապա, մտածելով որ ձայնը լոկ իր երևակայության արդյունքն էր, նա կրկին փորձեց վառել կրակայրիչը: Կրկին, իր մտքում նա ձայն լսեց. «Գնա քո սենյակը և կարդա իմ գիրքը»: Ջեյսոնը պահեց կրակայրիչը, հետ գնաց իր սենյակ, բացեց Մորմոնի Գիրքը և սկսեց կարդալ: Նա կարդում էր օրեր շարունակ, հաճախ մինչև լուսաբաց: Երբ Ջեյսոնը հասավ ավարտին և աղոթեց, նա գրեց. «Ես ոտքից գլուխ լցվել էի Հոգով . . . Ես լցված էի լույսով . . . Դա ամենաուրախ փորձառությունն էր, որ երբևէ ունեցել էի իմ կյանքում»: Նա մկրտվեց և հետագայում ինքն էլ դարձավ միսիոներ:

Գուցե ակնհայտ է, որ անկախ մեծ սիրուց և անկեղծությունից, Վերականգնման ուղերձով կիսվելու մեր հրավերներից շատերը, եթե ոչ մեծամասնությունը, կմերժվեն: Սակայն հիշեք սա. յուրաքանչյուր ոք արժանի է նման հրավերի. «բոլորը նույնն են Աստծո համար»,¹¹ Տերը գոհ է մեր գործադրած յուրաքանչյուր ջանքից՝ անկախ արդյունքից, մերժված հրավերը պատճառ չէ, որ մեր շփումները դադարեցվեն, և այսօրվա հետաքրքրության պակասը կարող է վաղը նույն հաջողությամբ հետաքրքրության վերածվել: Անկախ ամեն բանից՝ մեր սերը հարատև է:

Եկեք չմոռանանք, որ Վերականգնումն առաջ եկավ մեծ փորձությունների և զոհաբերության միջոցով: Այս թեման կքննարկենք մեկ ուրիշ անգամ: Այսօր մենք հրճվում ենք Վերականգնման պտուղներով, որոնցից կարևորագույններից մեկը կրկին երկրի վրա



և երկնքում կապելու զորությունն է:¹² Ինչպես տարիներ առաջ նշել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին. «Եթե ուրիշ ոչինչ առաջ չգար հանուն վերականգնման տարած բոլոր չարչարանքներից, տառապանքներից ու ցավից, քան սուրբ քահանայության կնքման զորությունը, որն ընտանիքները հավերժ կապում է, հանուն դրա արժեք անցնել այդ ամենի միջով»:¹³

Վերականգնման ամենամեծ խոստումը փրկագնումն է Հիսուս Քրիստոսի միջոցով: Հիսուս Քրիստոսի Հարությունն ապացույցն է այն բանի, որ Նա իսկապես զորություն ունի փրկագնելու բոլորին, ովքեր կգան Իր մոտ, կփրկագնի նրանց ցավից, անարդարությունից, վշտից, մեղքից և նույնիսկ մահից: Այսօր Ծաղկազարդի Կիրակին է. մեկ շաբաթ անց՝ Ջատիկը: Մենք հիշում ենք, մենք միշտ հիշում ենք մեր մեղքերը քավելու համար Քրիստոսի չարչարանքներն ու մահը և մենք տոնում ենք կիրակիներից այդ ամենահրաշալիս՝ Տիրոջ օրը, երբ Նա հարություն առավ

մեռելներից: Հիսուս Քրիստոսի Հարության շնորհիվ Վերականգնումն իմաստ ունի, մեր մահկանացու կյանքն իմաստ ունի, և, ի վերջո, մեր իսկ գոյությունն ունի իմաստ:

Ջոզեֆ Մմիթը՝ Վերականգնման մեծ մարգարեն, հարություն առած Քրիստոսի վերաբերյալ բերում է իր վկայությունը մեր ժամանակներում. «Որ նա ապրո՞ւմ է: Քանզի մենք տեսանք նրան, նույնիսկ Աստծո աջ կողմում»:¹⁴ Ես խոնարհաբար ավելացնում եմ իմ վկայությունը Ջոզեֆի և նրանից առաջ ու

նրան հաջորդող բոլոր առաքյալների ու մարգարեների վկայություններին, որ Հիսուս Նազովրեցին խոստացված Փրկիչն էր, Աստծո Միածին Որդին և ողջ մարդկության հարություն առած Քավիչը:

«Մենք վկայում ենք, որ նրանք, ովքեր աղոթքով

կուսումնասիրեն Վերականգնման ուղերձը և հավատքով քայլ կանեն, կօրհնվեն և անձնական վկայություն կստանան նրա աստվածային ծագման և մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի խոստացված Երկրորդ Գալուստի համար աշխարհը նախապատրաստելու նպատակի մասին»:¹⁵ Քրիստոսի Հարությունը հաստատում է Նրա խոստումները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Գործք Առաքելոց 3.21:
2. Եփեսացիս 1.10:
3. Հակոբոս 1.5:
4. 2 Նեփի 2.8:
5. David O. McKay, letter to Sarah M. Hilton, June 3, 1921, Church History Library, Salt Lake City.
6. Հովհաննես 1.46:
7. Տես Ա Հովհաննես 4.18:
8. Մորոնի 7.48:
9. Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը նշել է. «Յուրաքանչյուր մարդ, ով ապրում է այս աշխարհում, ազդեցություն է գործում՝ ինչպես բարու, այնպես էլ չարի վրա: Դա այն չէ միայն, ինչ նա ասում է, այն չէ միայն, ինչ նա անում է: Դա նրա Եությունն է: Ամեն մարդ, ամեն անձնավորություն արտագույն է իր Եությունը» (*Teachings of Presidents of the Church: David O. McKay* [2003], 227):
10. Տես Հովհաննես 1.9, Վարդապետություն և Ուխտեր 88.6-13, 93.2:
11. 2 Նեփի 26.33:
12. Տես Մատթեոս 16.19, 18.18, Վարդապետություն և Ուխտեր 110.14-16, 132.19, 46:
13. Gordon B. Hinckley, “As One Who Loves the Prophet,” in Susan Easton Black and Charles D. Tate Jr., eds., *Joseph Smith: The Prophet, the Man* (1993), 6.
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.22-24:
15. “The Restoration of the Fulness of the Gospel of Jesus Christ: A Bicentennial Proclamation to the World,” Apr. 5, 2020, in Russell M. Nelson, “Hear Him,” *Liahona*, May 2020, 91.



Սենյի, Յուսա, ԱՄՆ



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցու Նախագահ

Առաջ գնացեք հավատքով

*Ես օրհնում եմ ձեզ խաղաղությամբ և Տիրոջ
հանդեպ ածող հավատքով:*

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մոտենալով այս պատմական համաժողովի ավարտին, մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում Տիրոջը: Երաժշտությունը վեհացնող էր, ուղերձները ոգեշնչող:

Այս համաժողովի ընթացքում շատ ուշագրավ պահեր ապրեցինք: Այս երկուհարյուրամյակին մենք ներկայացրեցինք աշխարհին մի հռչակագիր, որը հայտարարում է իր լրիվության մեջ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման իրականության մասին:

Մենք նշեցինք Վերականգնումը Օվսաննա բացականչությամբ:

Մենք հայտնի դարձրեցինք մի նոր խորհրդանիշ, որն արտահայտում է մեր հավատը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ և հանդիսանում է Եկեղեցու տեղեկավարության և նյութերի տեսողական ճանաչման գործիք:

Մենք հրավիրում ենք բոլորին անցկացնել ծոմապահության և աղոթքի միջազգային օր, որպեսզի ներկայիս համավարակը վերահսկելի դառնա, բուժաշխատողները պաշտպանված լինեն, տնտեսությունն ուժեղանա և կյանքը կարգավորվի: Այդ ծոմը տեղի կունենա ապրիլի 10-ին՝

Ավագ Ուրբաթ: Ինչպիսի՛ հրաշալի Ուրբաթ է դա լինելու:

Հաջորդ կիրակի Չատիկ է, և մենք կրկին նշում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Քավությունը և Հարությունը: Նրա Քավության շնորհիվ հարության Նրա պարզև հասանելի է բոլոր նրանց, ովքեր երբևէ ապրել են: Եվ հավերժական կյանքի Նրա պարզև հասանելի է բոլոր նրանց, ովքեր կարժանանան դրան՝ հավատարիմ մնալով Իր սուրբ տաճարներում կատարած արարողություններին և կապած ուխտերին:

2020 թվականի ապրիլյան այս գերագույն համաժողովի, ինչպես մեկնարկող այս սուրբ շաբաթվա բազմաթիվ ոգեշնչող ուղերձները կարելի է ամփոփել երկու աստվածային պատգամ-բառերով՝ «Լսիր Նրան»:¹ Մենք աղոթում ենք, որ կենտրոնանալով Երկնային Հոր, ով ասել է այդ խոսքերը, և Նրա Միերկի Որդի՝ Հիսուս Քրիստոսի վրա, դուք կկարողանաք ձեր հիշողության մեջ պահել և արտաբերել այն ամենը, ինչ ասվեց: Մենք աղոթում ենք, որ դուք սկսեք նորովի *խկսալես* լսել, ուշք դարձնել և հետևել Փրկիչի խոսքերին:² Ես խոստանում եմ, որ վախճան կպակասի, իսկ հավատը կաճի:

Ընդհակառակը մեր տները հավատքի ճշմարիտ սրբավայրեր դարձնելու ձեր ցանկության համար, որտեղ Տիրոջ Հոգին կարող է բնակվել: *Եկ, հետևիր ինձ* ավետարանի ուսուցման մեր ծրագիրը կշարունակի օրհնել ձեր կյանքը: Այս ուղղությամբ ձեր հետևողական ջանքերը, անգամ այն ժամանակ, երբ զգում եք, թե հաջողության չեք հասնում, կփոխեն ձեր կյանքը, ձեր ընտանիքի կյանքը և ամբողջ աշխարհը: Մենք կամրանանք, եթե դառնանք Տիրոջ ավելի քաջարի աշակերտները, պաշտպանելով և ներկայացնելով Նրան, ուր էլ որ լինենք:

Այժմ եկեք խոսենք տաճարների մասին: Մենք ունենք ամբողջ աշխարհում 168 նվիրագործված տաճար: Մյուսները գտնվում են պլանավորման և շինարարության տարբեր փուլերում: Երբ հայտարարում են նոր տաճարի կառուցման ծրագրերը, այն դառնում է մեր սրբազան պատմության մասը:

Տարօրինակ կարող է հնչել նոր տաճարների մասին հայտարարելը, երբ մեր բոլոր տաճարները ժամանակավորապես փակ են:

Ավելի քան մեկ դար առաջ, Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը 1893 թ.-ին Սուլթ Լեյք Սիթիի տաճարի նվիրագործման իր աղոթքում կանխատեսել էր այն պայմանները, որոնցում այսօր մենք գտնվում ենք: Չեզանից շատերը վերջերս, գուցե, հանդիպել են այդ նշանավոր աղոթքի հատվածներին սոցիալական մեդիայում:

Լսեք Աստծո զորեղ մարգարեի այս աղերսանքը. «Երբ Քո ժողովուրդը հնարավորություն *չունենա* մտնելու այս սուրբ տունը . . . և երբ մարդիկ ճնշված և անհանգիստ լինեն, շրջապատված դժվարություններով . . . և դարձնեն իրենց երեսները դեպի Քո սուրբ տունը և խնդրեն Քեզ տալ ազատում, տալ օգնություն, որ Քո գործությունը գործադրվի իրենց համար, մենք աղերսում ենք, որ Դու նայես ներքև՝ Քո սուրբ վայրից՝ ողորմությամբ . . . և լսես նրանց աղաչող ձայները:

Կամ, երբ Քո ժողովրդի զավակները, գալիք ժամանակներում, որևէ պատճառով առանձնացվեն այս վայրից . . . և աղաչանքով դիմեն Քեզ իրենց չարչարանքների և վշտի խորքից, որ հանգստություն ու ազատում տաս իրենց, մենք խոնարհաբար աղերսում ենք Քեզ, որ . . . լսես նրանց աղաչող ձայները և շնորհես նրանց այն օրինությունները, որոնք խնդրում են»։³

Եղբայրներ՝ և քույրեր, մեր ճգնաժամային օրերին, երբ տաճարները փակ են, դուք, միևնույնն է, կարող եք ապավինել ձեր տաճարային ուխտերի և օժտման գործույթները, պատվելով ձեր ուխտերը: Խնդրում ենք, այս օրերին, երբ տաճարները փակ են, շարունակեք ապրել տաճարին արժանի կյանքով, կամ դարձեք տաճարին արժանի:

Խոսեք տաճարի մասին ձեր ընտանիքների և ընկերների հետ: Քանի որ Հիսուս Քրիստոսը այն ամենի առանցքն է, ինչ մենք անում ենք տաճարում, որքան ավելի շատ եք մտածում տաճարի մասին, այնքան ավելի շատ եք մտածում Նրա մասին: Ուսումնասիրեք և աղոթեք, որպեսզի ավելին իմանաք այն գործության և գիտելիքի մասին, որոնցով օժտվել եք, կամ որոնցով դեռ կօժտվեք:

Այսօր մենք ուրախությամբ հայտարարում ենք հետևյալ վայրերում ութ նոր տաճարներ կառուցելու ծրագրերի մասին. Բահիյա Բլանկա, Արգենտինա; Թալախասի, Ֆլորիդա; Լուբուբաշի, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն; Պիտսբուրգ, Պենսիլվանիա; Բենին Սիթի, Նիգերիա; Սիրակուզա, Յուտա; Դուբայ, Միացյալ Արաբական Էմիրություններ; Շանհայ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

Քոլոր ութ վայրերում Եկեղեցու ճարտարապետները կաշխատեն տեղական իշխանությունների հետ, որպեսզի տաճարները ներդաշնակ լինեն տվյալ համայնքի ճարտարապետության հետ և դառնան զեղեցիկ ավելացում այդ համայնքին:



ՄԱՅՐԱՍՆԻ ԱՄԵՐԻԿԱՆԻ ԱՅԿՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐՎՈՅՆ ՆԱԿԱՐԻ ԵՄԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆՊԵՏՈՒՄ

Դուբայում տաճարի ծրագիրը մշակվեց ի պատասխան գթաշատ հրավերի, որը մենք երախտագիտությամբ ընդունեցինք:

Շանհայի հետ կապված ծրագիրը շատ կարևոր է: Երկու տասնամյակից ավել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում բնակվող տաճարային արժանավորություն ունեցող անդամները հաճախում էին Հոնգ Բոնգի տաճարը Չինաստանում: Մակայն 2019թ. հուլիսին այդ տաճարը փակվեց՝ դեռևս երկար ժամանակ առաջ ծրագրված և շատ անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների համար:

Շանհայում, համեստ բազմաֆունկցիոնալ հավաքատունը հնարավորություն կտա չինացի անդամներին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում շարունակել մասնակցել տաճարային արարողություններին՝ իրենց և իրենց նախնիների համար:⁴

Յուբանջուր երկրում այս Եկեղեցին իր անդամներին ուսուցանում է հարգել, հնազանդվել և հետևել օրենքին:⁵ Մենք

ուսուցանում ենք ընտանիքի, լավ ծնողներ և օրինակելի քաղաքացիներ լինելու կարևորությունը: Հարգելով Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքները և կարգը, Եկեղեցին այնտեղ չի ուղարկում քարոզող միսիոներների, և կշարունակի այդպես վարվել:

Չինաստանում ապրող և աշխատող արտասահմանցիները և չինացի անդամների համայնքները կշարունակեն հավաքվել իրարից առանձին: Եկեղեցու իրավական կարգավիճակն այնտեղ մնում է *անսխալիս*: Տարածքի օգտագործման նախնական փուլում մտտքը միայն պայմանավորվածությամբ կլինի: Շանհայում Տիրոջ տունը չի ծառայի որպես ժամանան վայր այլ երկրներից զբոսաշրջիկների համար:

Այս նոր ութ տաճարները մասփավան վարագույրի երկու կողմերում կօրհնեն շատ մարդկանց կյանքեր: Տաճարները Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնման պասկն են հանդիսանում: Իր բարության և մեծահոգությամբ Աստված ավելի է մոտեցնում տաճարի

օրհնությունները Իր զավակներին *ամենուրեք*:

Վերականգնումը շարունակվում է, և ես գիտեմ, որ Աստված շարունակում է հայտնել շատ մեծ ու կարևոր բաներ Երկրի վրա Իր արքայության վերաբերյալ:⁶ Այդ արքայությունն է՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին:

Թանկագին եղբայրներ և քույրեր, ես իմ սերն եմ հայտնում ձեր հանդեպ: Այս լարված և անորոշ ժամանակներում, օգտվելով ինձ շնորհված իշխանությունից, ես ցանկանում եմ ձեզ թողնել իմ առաքելական օրհնությունը:

Ես օրհնում եմ ձեզ խաղաղությամբ և Տիրոջ հանդեպ աճող հավատքով:⁷

Ես օրհնում եմ ձեզ ապաշխարելու և ամեն օր Նրան մի փոքր ավելի նմանվելու ցանկությամբ:⁸

Ես օրհնում ձեզ գիտելիքով այն մասին, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի իր լրիվության մեջ, Վերականգնման մարգարեն է:

Եթե դուք կամ ձեր հարազատները հիվանդ եք, ես թողնում եմ ապաքինման իմ օրհնությունը՝ Տիրոջ կամքին համաձայն:

Ես օրհնում եմ ձեզ, ևս մեկ անգամ արտահայտելով յուրաքանչյուրիդ հանդեպ իմ սերը, Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. Ջոզեֆ Սմիթ-Պատմության 1.17, տես նաև Ղուկաս 9.35:
2. Տես Հովհաննես 10.27, Հայտնություն 3.20, Մոսիա 26.21, 28, Վարդապետություն և Ուխտեր 29.7:
3. Վիլֆրիդ Վոլտրուֆ, Սուրբ Լեյք Սիթի տաճարի նվիրագործման աղոթք, 6 ապրիլի 1893 թ., ChurchofJesusChrist.org; շեշտադրումն ավելացված է:
4. Չինացիները հին դարերից պահում են իրենց կլանային պատմությունը և տոհմաբանությունը: Չինական ավանդական ծեսերը, օրինակ՝ Քինգմինգ փառատոնը, հարգանք են ցույց տալիս նախնիների հանդեպ (清明节): Այս տարի Քինգմինգ փառատոնը (清明节) նախատեսված էր անցկացնել ապրիլի 4–5-ին:
5. Տես Հավատո հանգանակ 1.12:
6. Տես Հավատո Հանգանակ 1.9:
7. Տես Հովհաննես 14.27:
8. Տես 3 Նեփի 27.27:

Վիճակագրական հաշվետվություն, 2019

Ի գիտություն Եկեղեցու անդամների, Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու աճի և կարգավիճակի վերաբերյալ հետևյալ վիճակագրական հաշվետվությունը՝ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Ցցեր	3,437
Միսիաներ	399
Շրջաններ	542
Ծխեր և ճյուղեր	30,940

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՂԱՄՈՒԹՅՈՒՆ

Անդամների ընդհանուր թիվը	16,565,036
Նոր գրանցված երեխաներ	94,266
Նորադարձների մկրտությունների թիվը	248,835

ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐ

Լիաժամկետ միսիոներներ	67,021
Եկեղեցու ծառայության միսիոներներ	31,333

ՏԱՃԱՐՆԵՐ

2019 թվականի ընթացքում նվիրագործված տաճարները (Հռոմ Իտալիա, Կինշասա Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Ֆորտալեգա Բրագիլիա, Պորտ-օ-Պրենս Հաիթի, Լիսաբոն Պորտուգալիա և Արենկիպա Պերու):	6
2019 թվականի ընթացքում վերանվիրագործված տաճարները (Մեմֆիս Թենեսի, Օկլահոմա Սիթի Օկլահոմա, Օքլեդ Կալիֆորնիա, Ռալեյ Նորթ Հյուսիսային Կարոլինա, Ֆրանկֆուրտ Գերմանիա, Ասունսիոն Պարագվայ և Բաթոն Ռուժ Լուիզիանա):	7
Գործող տաճարները տարեվերջին՝	194



Երեց Խորխե Թ. Բեսերա

Բարձրագույն Իշխանություն
Յոթանասունական

Երեց Խորխե Թ. Բեսերան ամաչկոտ և լուռ էր բնավորությամբ, բայց նրա միսիայի նախագահը նրան առաջնորդելու հնարավորություն տվեց: Խորխեն տուն վերադարձավ Կալիֆորնիայի Արկադիա միսիայից՝ ցանկանալով իր մնացած կյանքը նվիրել Տիրոջ գործին:

27 տարեկանում նա կանչվեց եպիսկոպոսության անդամ: 32 տարեկանում նա կանչվեց եպիսկոպոս: Սկզբում նա իրեն անհամապատասխան էր զգում, քանի որ մարդիկ նրան էին մոտենում իրենց մարտահրավերներով:

«Ես չեմ հասկանում, թե ինչ եմ անում», - ասել է նա իր հորը: Հոր պատասխանը գործը դաս է եղել նրա համար և հիշեցրել է նրան իր միսիայի նախագահի հավատքն իր հանդեպ և օգնել է նրան նախապատրաստվել հետագա ղեկավարման կոչումներին, այդ թվում՝ 37 տարեկանում ցգի նախագահի իր կոչմանը:

«Հայրս ասաց, - որդիս քանի՞ տարեկան է Սուրբ Հոգին»: Հիշում է Երեց Բեսերան: «Դա ինձ համար հիանալի ուսուցողական պահ էր, քանի որ ես գիտեի, որ կարող եմ անել այն ամենը, ինչ Տերը խնդրում էր ինձ»:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում տարիներ շարունակ սրտանց ծառայության ժամանակ Երեց Բեսերան հիշեց այդ դասը:

Խորխե Էդուարդո Տորես Բեսերան ծնվել է 1962 թ. դեկտեմբերի 18-ին, Խուան Ս. Բեսերա և Մելիա Թ. Բեսերայի ընտանիքում՝ ԱՄՆ -ի Յուտա նահանգի Մոլթ Լեյք Սիթի քաղաքում, որտեղ նա մեծացել է:

Լիաժամկետ միսիա ծառայելուց հետո Երեց Բեսերան ամուսնացել է Դեբի Իլեն Շնեբերգերի հետ Մոլթ Լեյքի տաճարում՝ 1984 թվականի օգոստոսի 10-ին: Նրանք ունեն հինգ զավակ:

Երեց Բեսերան ընդհանուր գիտությունների որակավորման աստիճան է ստացել Յուտայի Համալսարանում և հաշվապահության «ասոշիեյթ» որակավորում՝ Մոլթ Լեյքի Համայնքային Քոլեջում: Ֆենիքսի Համալսարանում նաև ուսումնասիրել է գործարարություն: 1998 թվականին նա դարձավ Allegis Advisor Group ֆինանսական խորհրդատվական ընկերության գործընկեր: Բարձրագույն Իշխանություն Յոթանասունական կանչվելու պահին նա աշխատում էր ֆինանսական խորհրդատու Intermountain Financial Partners-ում:

Երեց Բեսերան ծառայել է որպես ծխի երիտասարդ տղամարդկանց նախագահ, միսիայի նախագահի խորհրդական, ճյուղի նախագահի խորհրդական, սեմինարիայի ուսուցիչ, եպիսկոպոսի խորհրդական, եպիսկոպոս, ցգի նախագահ և Կալիֆորնիայի Արկադիա միսիայի նախագահ: Իր կոչումը ստանալու պահին նա ծառայում էր Տարածքային Յոթանասունական: ■



Երեց Մեթյու Ս. Հովանյան

Բարձրագույն Իշխանություն
Յոթանասունական

Երեց Մեթյու Ս. Հովանյանը օտար չէն Բարձրագույն Իշխանությունները կամ գերագույն համաժողովները:

Եկեղեցու անդամներից շատերը նրան ճանաչում են որպես Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ա. Հովանյանի որդի: Մյուսները կարող են նրան հիշել 1983 թվականի ապրիլյան գերագույն համաժողովի քահանայության նիստին ելույթ ունենալիս, երբ նա 17 տարեկան էր:

«Հրաշալի օրհնություն է եղել իմ կյանքում տեսնել, թե ինչպես են իմ մայրիկն ու հայրիկն ապրում, որքան են նրանք նվիրված և ինչպիսին են նրանց գործերը», - ասել է Երեց Հովանյանը, ով ներկայումս նախագահում է Հյուսիսային Կարոլինայի Ռալի միսիան:

«Այնուամենայնիվ, մոտիկից ծանոթ լինելով այդ ամենին, մենք շատ բան գիտենք այդ կոչման մասին, որպեսզի կարծենք, որ պատշաճ կերպով համապատասխանում ենք դրան», - ավելացրել է նա: «Բարեբախտաբար, մենք նաև սովորել ենք, որ Տերը որակավորում է նրանց, ում Նա կանչում է, և մենք դրան շատ ենք հավատում և սփոփվում դրանով»:

Երեց Հովանյանը հիշում է, որ վախեցնող էր գերագույն համաժողովում ելույթ ունենալը: «Պատրաստվելով իր ուղերձը, որն ի վերջո տրվեց «տող առ տող, ցուցում առ ցուցում» (2 Նեվի 28.30) դարձավ «վաղ, հանգստացնող օրհնություն այն մասին, որ երբ ընդունում ենք Տիրոջ հանձնարարությունները, Նա օգնում է և մտքեր ու սպասվողություններ է սերմանում, թե ինչով պետք է կիսվենք»:

Մեթյու Սթոթ Հովանյանը ծնվել է 1966 թվականի հունիսի 7-ին ԱՄՆ-ի Յուտա նահանգի Պրովո քաղաքում՝ Ջեֆրի Ա. և Պատրիսիա Հովանյանների որդին է: Նա ամուսնացել է Փեյջ Բեյթմանի հետ 1996-ի մայիսի 20-ին Մենթ Ջորջ Յուտա տաճարում: Նրանք ունեն չորս զավակ:

1991 թվականին բակալավրի աստիճան է ստացել Բրիգամ Յանգ համալսարանում և փիլիսոփայության մագիստրոսի և դոկտորի աստիճաններ Դյուկի համալսարանում՝ համապատասխանաբար 1997-ին և 2001-ին:

Երբ աշխատել է ԲՅՀ-ի քաղաքական գիտությունների դոցենտ (2001–2009), նա 2009 թվականին նշանակվել է Յուտա Վելի համալսարանի նախագահ՝ ծառայելով մինչև 2018 թվականի իր կոչումը՝ որպես միսիայի նախագահ:

Նա ծառայել է եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոսի խորհրդական, ծխի երիտասարդ տղամարդկանց խորհրդատու, ծխի միսիայի ղեկավար, կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ և լիաժամկետ միսիոներ Շուտլանդիայի Էդինբուրգ միսիայում: ■



Երեց Վիլյամ Կ. Ջեքսոն

Բարձրագույն Իշխանություն
Յոթանասունական

23 տարի ԱՄՆ արտաքին գործերի ծառայությունում տարածաշրջանային բուժաշխատողի պաշտոնից հետո Վիլյամ Կ. Ջեքսոնին խնդրեցին կիսվել այն 20 լավագույն փորձով, որոնք նա ունեցել է՝ ապրելով և աշխատելով աշխարհի ամենահեռավոր շրջաններում:

Կենսաթոշակի անցնելու արարողությունից առաջ, լրջորեն մտածելով այդ խնդրանքի շուրջ, նա հասկացավ, որ «իմ 20 լավագույն փորձառությունից 20-ը կապ են ունեցել եկեղեցու կամ ընտանիքի հետ», - ասել է նա:

Վիլյամ Կ. Ջեքսոնը ծնվել է 1956 թվականի մարտի 29-ին, Վաշինգտոն Կոլումբիայի Շրջանում (ԱՄՆ), Ե. Վիլյամ և Լուիս Անդրե Ջեքսոնների ընտանիքում: Նա մեծացել է ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Օջեյ քաղաքում, բայց ծնողների կամավոր աշխատանքի պատճառով դարձել է հաճախել նաև Հոնոլուլուսում, Ալժիրում և Աֆղանստանում:

Բուլիվիա Լա Պազ միսիայում ծառայելուց հետո 1977 թվականի ամռանը երեց Ջեքսոնը հանդիպեց Էն Կեյլերին:

Նրանք ամուսնացան 1977 թվականի դեկտեմբերի 29-ին, Լոս Անջելեսի Կալիֆորնիա տաճարում: Նրանք ունեն ութ երեխա, որոնցից երեքը որդեգրված են՝ Հնդկաստանից, Նեպալից և Կամբոջայից:

Երեց Ջեքսոնը հաճախել է Բրիգամ Յանգի համալսարան, գիտական բակալավրի կոչում է ստացել Կալիֆորնիայի համալսարանում (Բերքլի) և 1983 թվականին ստացել է բժշկական դոկտորի կոչում Կալիֆորնիայի համալսարանում (Ման Ֆրանցիսկո):

Իր բժշկական փորձաշրջանից հետո նա և նրա ընտանիքը 26 տարի աշխատել են արտերկրում: Բուրոլվին վերջերս նա աշխատել է Valley Family Health Care -ի բժշկական տնօրեն Այդահո և Օրեգոն նահանգներում (ԱՄՆ):

Ապրելով Միացյալ Նահանգներից դուրս, նա և քույր Ջեքսոնն իրենց ժամանակի մեծ մասն անցկացրել են Եկեղեցու առաջին սերնդի անդամների միջավայրում:

«Ավետարանի մասին իմ մեծ վկայությունը եղել է այն, որ հետևել ենք, թե ինչ է ավետարանն անում այն մարդկանց հետ, որոնց մենք սիրում ենք», - ասել է նա: «Այն փոխում է նրանց»:

Երեց Ջեքսոնը ծառայել է Տարածքային Յոթանասունական, Հնդկաստանի Նյու Դելի միսիայի նախագահ, ճյուղի երիտասարդ տղամարդկանց նախագահ, ինստիտուտի ուսուցիչ և Ավետարանի վարդապետության դասարանի ուսուցիչ: Բարձրագույն Իշխանություն Յոթանասունական կանչվելու պահին նա ծառայում էր եպիսկոպոս: ■



Երեց Ջերեմի Ռ. Յազի

Բարձրագույն Իշխանություն
Յոթանասունական

Երբ երեց Ջերեմի Ռ. Յազին դեռահաս էր, նրա յոթ տարեկան քույրը՝ Քրիստենը, վարակվեց մի բակտերիայով, որն ավստահարում էր նրա ուղեղը: Բժիշկներն ասացին, որ նա չէր ապրի:

Պատանի Ջերեմին ԱՄՆ-ի Յուտա նահանգի Սոլթ Լեյք Սիթիի իրենց տանը ծնկի եկավ իր մահճակալի մոտ և խնդրեց Տիրոջը շնորհիլ հասկացողություն, թե ինչու պետք է իր քույրն այդքան վաղ հասակում մահանար: Սակայն նրա քույրը քահանայության օրհնություն ստացավ և ապրեց:

Դա 17-ամյա Ջերեմիի համար խթան հանդիսացավ, որ «շիտակ քայլեր Աստծո առաջ», որն էլ դրդեց նրան առաջին անգամ լրջորեն կարդալ Մորմոնի Գիրքը: Ավելի ուշ նա ծառայեց որպես լիաժամկետ միսիոներ Օհայոյի Քլիվլենդ միսիայում:

Տարիներ անց Ջերեմին կրկին սրտանց աղոթքով պետք է ծնկի իջներ, երբ նրա կինը՝ Էմիլ, սպասում էր իրենց երրորդ երեխայի վաղաժամ ծնունդին: «Այդ պահին ես մի մեծ խաղաղություն զգացի. խաղաղություն, որը կարելի է բնութագրել միայն, կարծես Երկնային Հոր սիրառատ ձեռքերը գրկում են ինձ Սուրբ Հոգու ջերմությամբ», - ասել է նա:

Այդ խաղաղությունն օգնեց նրան դիմանալ երեխայի կարճ կյանքի ընթացքում և մեկ այլ վիժմանը հաջորդող վշտի ամիսներին: «Ճանապարհին մենք բոլորս էլ փորձվում ենք, - ասել է նա, - սակայն մենք «բոլորովին ուրախություն ենք համարում» [Հակոբոս 1.2], որ Փրկիչը մեզ համար խաղաղություն և երջանկություն զգալու ուղի է տրամադրել»:

Ջերեմի Ռոբերտ Յազին ծնվել է 1973 թվականի մարտի 23-ին Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա, ԱՄՆ), Ռոբերտ Ստենլի Յազիի և Ջուդի Էն Ռոսի ընտանիքում: Նա ամուսնացել է Էմիլ Էն Մոյոարտի հետ Սոլթ Լեյքի տաճարում 1995 թվականի հունիսի 12-ին: Նրանք ունեն հինգ զավակ:

Երեց Յազին վարքագծային գիտության և առողջության բակալավրի աստիճանը ստացել է Յուտայի Համալսարանում, իսկ բիզնեսի կառավարման գործադիր մագիստրոսի աստիճանը ստացել է Պեպերդյինի Համալսարանում: Նա իր կանչը ստանալու պահին ղեկավարում էր Alkermes-ի տարածաշրջանային վաճառքները և HCA Investments-ում ղեկավարում էր առևտրային անշարժ գույքը:

Երեց Յազին ծառայել է Տարածքային Յոթանասունական, Յուտա Օգդեն միսիայի նախագահ, ցյի գործադիր քարտուղարի օգնական, Եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ, սեմինարիայի ուսուցիչ, ծխի երիտասարդ տղաների նախագահության խորհրդակցական, ցյի միսիոներական նախապատրաստության դասի ուսուցիչ և ծխի միսիայի ղեկավար: ■



Երեց Քելլի Ռ. Ջոնսոն

Բարձրագույն Իշխանություն
Յոթանաստուևակյան

Երեց Քելլի Ջոնսոնը լավ է հիշում այն օրը, երբ նրան 31 տարեկանում կանչեցին եպիսկոպոս: Նույն օրը նրան ախտորոշեցին Բելսի կաթված. մի վիճակ, որի ժամանակ դեմքի մի կողմի մկանները կաթվածահար են լինում կամ թուլանում են:

Դրանք դժվարին ժամանակներ էին, ոչ միայն պայմանավորված տհաճ և ամոթալի վիճակով, այլև նրա բազմաթիվ նոր պարտականությունների պատճառով:

«Չիմանալով, թե որքան երկար կունի այդ վիճակը, ես կարեկցանք ապրեցի այն մարդկանց համար, որոնք ինձ հետ են եղել ամբողջ կյանքիս ընթացքում», - ասել է նա: «Ես իսկապես սովորեցի, որ մարդիկ անցնում են անվերահսկելի դժվարին և տխուր իրավիճակների միջով, որոնք ազդում են նրանց ունակությունների, զգացմունքների և վստահության վրա»:

Ժամանակ առ ժամանակ կարող է հարմար չլինել ծառայել Տիրոջ եկեղեցում: Բայց, ինչպես Փրկիչի աշակերտները «շուտով իրենց ուղևորները թողած» (Մատթեոս 4.20) հետևեցին Նրան, «ինչ էլ որ խնդրեն մեզ, մենք պատրաստ ենք դա անել», - ասել է Երեց Ջոնսոնը:

Անկախ նրանից, թե որտեղ Տերը կկանչի նրան կամ նրա ընտանիքին, նրանք գնում են պատրաստակամ սրտով և մտքով՝ անկախ իրենց հանգամանքներից՝ փնտրելով բարին:

Քելլի Ռեյ Ջոնսոնը ծնվել է Յուտա նահանգի Փլեզանթ Վյու քաղաքում, 1963 թվականի հունվարի 16-ին՝ Հարոլդ Ռայմոնդ Ջոնսոն կրտսերի և Հելեն Քրազաուն Ջոնսոնի ընտանիքում: Նա մեծացել է Յուտա նահանգի Օգդեն քաղաքում և 1986 թվականի մարտի 27-ին ամուսնացել է Թերեզա Լին Բարթոլոմի հետ Մոլթ Լեյք տաճարում: Նրանք ունեն հինգ երեխա:

Երեց Ջոնսոնը 1987 թվականին ավարտել է Վեբերի պետական համալսարանը և ստացել հաշվապահության բակալավրի աստիճան, իսկ 1989 թվականին ստացել է բիզնեսի կառավարման մագիստրոսի կոչում Բրիգամ Յանգ համալսարանում: Նա աշխատել է որպես KPMG International Cooperative -ի դատական հաշվապահ և վերջերս աշխատել է որպես դատական հաշվապահ և գործընկեր Norman, Townsend և Johnson -ի հետ:

Երեց Ջոնսոնը, ով իր կանչը ստանալու պահին ծառայում էր որպես Տարածքային Յոթանաստուևակյան, ծառայել է Թախլանդ Բանգկոկ միսիայի նախագահ, որտեղ նա ծառայել է իր լիաժամկետ միսիան և ծառայել է որպես ցցի նախագահ, ցցի նախագահի խորհրդական, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ, ծխի միսիայի ղեկավար և ցցի միսիոներների նախապատրաստության դասի ուսուցիչ: ■



Երեց Թիերի Կ. Մատումբո

Բարձրագույն Իշխանություն
Յոթանաստուևակյան

Երեց Թիերի Կ. Մատումբոն ամուր վկայություն ուներ ավետարանի մասին, երբ երիտասարդ ժամանակ նա ստացավ իր միսիայի կանչը: 10 տարեկանում մկրտվելով իր ընտանիքի հետ, նա ակնառես էր եղել, թե որքան էր ավետարանը փոխել իր ընտանիքին:

Բայց նույնիսկ այն ժամանակ, երբ պատրաստվում էր մեկնել Կոտ դ'Իվուար Աբիդջանի միսիա, նա չուներ ամուր վկայություն Մորմոնի Գրքի մասին: Նա մինչ այդ երբեք չէր կարդացել այն:

Թիերիի ներշնչված եպիսկոպոսը մարտահրավեր նետեց նրան ամեն օր կարդալ Մորմոնի Գիրքը՝ իր միսիա մեկնելուց առաջ: Նա նույնիսկ Թիերիին տվեց տեղի հավաքատան բանալին, որպեսզի նա հնարավորություն ունենա հանգիստ վայրում ուսումնասիրել:

Թիերին երեք ամիս շարունակ ամեն օր կարդաց այն: Միսիայի երկիր հասնելուց առաջ նա ոչ միայն ամուր վկայություն ստացավ Մորմոնի Գրքի մասին, այլ նաև զարգացրեց ուսումնասիրության սովորություններ, որոնք օգնեցին նրան միսիոներ եղած ժամանակ:

«Ամենամեծ միջոցը, որով մենք պետք է մարդկանց բերենք դեպի ավետարանի լույսը և հավաքենք ցրված Իսրայելը, Մորմոնի Գիրքն է», - ասել է նա:

Թիերի Կասուանգի Մատումբոն ծնվել է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության Կինշասա քաղաքում, 1976 թվականի հունվարի 31-ին՝ Անտուան Կասուանգի Մատումբոյի և Մարի Թերեզա Մացանգա Մատումբոյի ընտանիքում: Նա քաղաքացիական արարողությամբ ամուսնացել է Տշայի Նաթալի Սինդայի հետ 2002 թվականի նոյեմբերի 29-ին: Ավելի ուշ, 2004 թվականի նոյեմբերի 19-ին, նրանք կնքվեցին Յոթանաստուևակյան Հարավային Աֆրիկայի տաճարում: Նրանք ունեն վեց զավակ:

Երեց Մատումբոն 2010 թվականին ավարտել է Քեյրոմադի համալսարանը և ստացել բիզնեսի կառավարման աստիճան, իսկ 2012 թվականին՝ մարդկային ռեսուրսների կառավարման բակալավրի աստիճան: Նա Եկեղեցու համար աշխատել է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում՝ որպես ընտանեկան պատմության և մարդկային ռեսուրսների բաժնիների կառավարիչ և նյութերի կառավարման բաժանմունքի ղեկավար:

Բարձրագույն Իշխանություն Յոթանաստուևակյան կանչվելու պահին երեց Մատումբոն Մերիլանդ Բալթիմոր միսիայի նախագահն էր: Նախկինում նա ծառայել է ցցի նախագահ, ցցի նախագահի խորհրդական, ծխի միսիայի ղեկավար, կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ և ցցի գործադիր քարտուղար: ■



Երեց Ադեյինկա Ա. Օջեդիրան

Բարձրագույն Իշխանություն
Յոթանասունական

2020 թվականի ապրիլյան գերագույն համաժողովը «անմոռանալի հանգստյան օրեր» էին Երեց Ադեյինկա Ա. Օջեդիրանի համար:

Եկեղեցու նորադարձը հաստատվել է Բարձրագույն իշխանություն յոթանասունական՝ առաջին անգամ Նիգերիայի և Արևմտյան Աֆրիկայի Վերջին Օրերի Սրբի համար: Նրա մեծ երախտագիտությունն ու ուրախությունն էլ ավելի մեծացան, երբ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարեց, որ Նիգերիայի երրորդ տաճարը կկառուցվի Բենին Միթիում:

«Ես դրան չէի սպասում», - լայն ժպտալով ասաց Երեց Օջեդիրանը: «Երբ լսեցի մեր մարգարեին, ով ասաց, որ Նիգերիայում մեկ այլ տաճար կկառուցվի, իսկապես հիանալի էր: Ինձ համար դա հաստատումն էր, որ Տիրոջ աշխատանքն արագ է ընթանում: Մենք բոլորս անելիքներ ունենք, որպեսզի պատրաստենք Աստծո զավակներին Նրա Որդու Երկրորդ Գալստյան համար»:

Ծնվել է Նիգերիայի Իբադան քաղաքում, 1967 թ. ապրիլի 5-ին՝ Ամոս Ադենիի և Քերոլայն Անիկի Օջեդիրանի ընտանիքում: Ադեյինկա Այոդեջի Օջեդիրանը բուսաբանության բակալավրի աստիճան է ստացել Բլորինգի համալսարանում 1991 թվականին, իսկ ավելի ուշ բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան է ստացել Լադոկե Ալինտոլա տեխնոլոգիական համալսարանում: Նա աշխատել է ֆինանսների և բիզնեսի կառավարման ոլորտում՝ որպես մասնագիտացված դիպլոմավորված հաշվապահ: Նախքան Բարձրագույն Իշխանություն կանչվելը, նա աշխատում էր Shell Nigeria-ում՝ որպես բիզնեսի ֆինանսական ղեկավար:

Սկրուվելուց երեք տարի անց մի առիթով նա հանդիպեց Օլուֆունմիլայո Օմոլոլա Ալինբեբեջեի հետ:

Ձույզը, ի վերջո, 1998 թվականին ամուսնացավ Նիգերիայում և 2002 թվականի նոյեմբերի 14-ին կնքվեց Հարավային Աֆրիկայի Յոհանեսբուրգի տաճարում: Օջեդիրաններն ունեն մեկ դուստր:

Երեց Օջեդիրանը երախտապարտ է Եկեղեցու բոլոր կոչումների համար, որոնք նա ստացել է՝ 1990 թվականին, 23 տարեկանում Եկեղեցուն միանալու պահից ի վեր: Յուրաքանչյուր հոգևոր հանձնարարություն նրան օգնել է աճել և ընձեռել է սրբազան հնարավորություններ՝ օգնելով ուրիշներին զարգանալ իրենց համապատասխան կոչումների և պարտականությունների մեջ:

Երեց Օջեդիրանն իր կանչը ստանալու ժամանակ ծառայում էր Տարածքային յոթանասունական. ծառայել է նաև միսիայի նախագահի խորհրդական, ցցի նախագահ, ցցի նախագահի խորհրդական, Եպիսկոպոս, Եպիսկոպոսի խորհրդական և ճյուղի նախագահ: ■



Երեց Սիրո Շմայլ

Բարձրագույն Իշխանություն
Յոթանասունական

Երեց Սիրո Շմայլը միշտ էլ ձգտել է հնազանդվել Տիրոջը, նույնիսկ այն ժամանակ, երբ նա չի հասկացել տրված պատվիրանի պատճառը: «Երբ մենք հնազանդ ենք, երբ մենք պահում ենք պատվիրանները, - սովորել է նա, - Տերը միշտ կօրհնի մեզ»:

Իր կոչումները կատարելիս նա տեսել է այն օրհնությունները, որոնք բխում են հնազանդությունից: Եպիսկոպոս և ցցի նախագահ ծառայելիս նա բազմաթիվ հիշարժան հնարավորություններ է ունեցել «տեսնելու, թե ինչպես են մարդիկ փոխում իրենց կյանքը՝ Փրկիչի և Մորմունի Գրքի վերաբերյալ իրենց վկայության շնորհիվ»:

Երեց Շմայլը ծնվել է 1971 թ. ապրիլի 16-ին, Բրազիլիայի Պարանա նահանգի Պոնտա Գրոսա քաղաքում՝ Բրունո և Էրիկա Շմայլների ընտանիքում, ովքեր նորադարձ էին Եկեղեցուն: Նա մեծացել է Բրազիլիայի Կուրիտիբա քաղաքում և այն ժամանակ, երբ ծնողները կանչվեցին նախագահելու Բրազիլիայի Կամպինասի միսիայում, նա մեկնեց ծառայելու Յուտա Օգդենի միսիայում:

Յուտայի համալսարանում ուսանելիս երեց Շմայլը մի հոգևոր հավաքի ժամանակ ծանոթացավ Բրիգամ Յանգ համալսարանի ուսանող Ալեսանդրա Մաչադո Լուզայի հետ: «Երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք հոգևոր հավաքի ժամանակ, նա ամբողջովին անտեսեց ինձ», - ասել է նա: Բայց նրա համար դա սեր էր առաջին հայացքից:

Նրանք ամուսնացան 1994 թվականի հուլիսին Բրազիլիայի Սան Պաուլո տաճարում և իրենց ուսումնական տեղերը Միացյալ Նահանգներում: Նրանք վերադարձան Բրազիլիա և 20 տարի անց տեղափոխվեցին Կոլորադո (ԱՄՆ), որից հետո տեղափոխվեցին Ֆլորիդա (ԱՄՆ): Երեց և Քույր Շմայլներն ունեն երկու զավակ:

1995 թվականին երեց Շմայլը ճարտարագիտության իր բակալավրի աստիճանը ստացել է Յուտայի համալսարանից, իսկ 2010 թվականին բիզնեսի կառավարման գործադիր մագիստրոսի աստիճանը ստացել է Օհայոյի համալսարանից: Նա աշխատել է Walmart Brasil-ում՝ որպես փոխնախագահ և անշարժ գույքի զարգացման գծով տնօրեն, Scopel-ի գործառնությունների բաժնի տնօրեն, Cia City-ի գլխավոր տնօրեն, իսկ վերջերս՝ որպես JBS S.A-ի անշարժ գույքի կազմակերպության ղեկավար:

Երեց Շմայլը ծառայել է Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահ, ցցի նախագահության խորհրդական, Եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ և ճյուղի նախագահ: ■



Երեց Մոխեսն Վիլանուեվա

*Բարձրագույն Բշխանություն
Յոթանասունական*

Այն ժամանակ նա ընդամենը 10 տարեկան էր, բայց երեց Մոխեսն Վիլանուեվան երբեք չի մոռանա այն զգացումը, երբ միսիոներները նրան և իր ընտանիքին սովորեցնում էին ավետարանը Մեքսիկայի Օաքսակա քաղաքում:

«Ես հիշում եմ այն Հոգին, որը նրանք բերեցին, այն խաղաղությունը, որը ես զգացի իմ սրտում», - ասել է նա:

Երբ Մոխեսը մկրտվեց իր չորս քույր և եղբայրների հետ, նրա մայրը, ով միայնակ էր և մեծ դժվարությամբ էր մեծացնում Մոխեսին և նրա յոթ քույրերին ու եղբայրներին, կրկին դարձավ ակտիվ Եկեղեցում:

Ավելի ուշ, երբ 18-ամյա Մոխեսը պատրաստվում էր իր միսիային, նրա ընտանիքը շարունակում էր դիմագրավել նյութական մարտահրավերներին: Նա կասկածում էր հեռանալու իր որոշման մեջ և ասաց մորը, որ ցանկանում է մնալ տանը և օգնել նրան:

«Եթե դու իսկապես ուզում ես օգնել ինձ, - ասաց նա, - գնա և ծառայիր Տիրոջը»:

Մեքսիկա Հերմոսիլո միսիա գնալու նախօրեին Մոխեսը ծնկի իջավ իր մահճակալի մոտ և զգաց, որ Տերը գոհ է իր որոշման համար: Վերականգնված ավետարանի իր վկայության աճը նա վերագրում է իր միսիային:

«Այս եկեղեցին առաջնորդվում է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից», - ասել է Երեց Վիլանուեվան: «Նա գիտի մեր բոլորի անունները: Նա գիտի մեր կարիքները, մեր մարտահրավերները և մեր մտահոգությունները: Նա նաև գիտի մեր ուժեղ կողմերը և նույնիսկ մեր սրտերի ցանկությունները»:

Մոխես Վիլանուեվա Լուպեը ծնվել է 1966 թվականի դեկտեմբերի 13-ին, Մեքսիկայի Օաքսակա քաղաքում՝ Ռուբեն Վիլանուեվա Պլատաս և Դելֆինա Լուպե Դոմինգեսի ընտանիքում: 1995 թվականի հունիսի 30-ին նա ամուսնացել է Լետիսիա Ավալոս Լոզանոյի հետ Մեքսիկայի Մեխիկո Միթիի տաճարում: Նրանք ունեն երեք զավակ:

1997 թվականին երեց Վիլանուեվան ստացել է բիզնեսի կառավարման բակալավրի կոչում Southeast Regional համալսարանում, իսկ 2011 թվականին՝ բիզնեսի կատարելագործման մագիստրոսի կոչում Tecnológico de Monterrey-ում: Վերջերս նա աշխատել է Sertexa տրանսպորտային ընկերության գլխավոր գործադիր տնօրեն:

Իր կոչումը ստանալու պահին երեց Վիլանուեվան ծառայում էր Տարածքային Յոթանասունական Մեքսիկայում: Նա նաև ծառայել է Կալիֆորնիայի Արկադիա միսիայի նախագահ և բարձրագույն խորհրդական, ցցի նախագահի խորհրդական, Եպիսկոպոս և հասարակայնության հետ կապերի գծով տնօրեն: ■



Ստիվեն Ջ. Լանդ

*Երիտասարդ Տղամարդկանց
Փերագույն Նախագահ*

Որպես երիտասարդ տղամարդկանց նոր նախագահ, Ստիվեն Ջ. Լանդը որդեգրել է սրբազան պատասխանատվություն՝ օգնելու առաջնորդել հարյուր հազարավոր Միսիոնյան Քահանայության տարիքի երիտասարդ տղամարդկանց համաշխարհային եկեղեցում :

Եթե հնարավոր լիներ դեմ առ դեմ հանդիպել նրանցից յուրաքանչյուրի հետ, նա ճշգրիտ գիտի, թե ինչ կասեր. «Աստծո արքայության հաջողակ անդամ լինելը բարդ չէ: Երկնային Հայրը սիրում է ձեզ: Պարզապես պետք է Նրան սիրով պատասխանել: Եվ եթե մենք դա անենք, մենք անվտանգ և երջանիկ կլինենք: . . . Մեր կյանքն իմաստ կստանար»:

Եկեղեցին լուրջ ընդունելու համար կիրակին բավարար չէ: Դա ամենօրյա հնարավորություն է՝ համաձայն գործարար դեկավար դարձած իրավաբանի խոսքերի:

«Կարողալ Մուրբ գրություններ, գնալ եկեղեցի, ճանապարհից շեղվելու պես ապաշխարել, կիսվել վկայությունով և ավետարանի օրինակ ծառայել. դա է մեր Երկնային Հոր ծրագիրը», - ասել է նա:

Եղբայր Լանդը ծնվել է 1953 թվականի հոկտեմբերի 30-ին Ջեյ և Թոյ Էլեն Լանդերի ընտանիքում և մեծացել է Հյուսիսային Կալիֆորնիայում (Մանտա Ռոզ) և Հարավային Կալիֆորնիայում (Լոնգ Բիչ), ԱՄՆ: Ծառայելով ԱՄՆ բանակում՝ նա եղել է Եվրոպայում, մի մայրցամաք, որին նա սիրահարվել էր Նիդեռլանդների Ամստերդամի միսիայի ծառայության ընթացքում:

Բանակից գորացրվելուց հետո նա ընդունվեց Բրիգամ Յանգի համալսարան, որտեղ նա վերամիավորվեց Կալլեն Քրոքի հետ, մի երիտասարդ կնոջ, ում հետ ծանոթացել էր Գերմանիայում գտնվելու ժամանակ: Ի վերջո Ստիվենը և Կալլենն ամուսնացան Մոլթ Լեյքի տաճարում 1980 թվականի օգոստոսի 8-ին: Նրանք ունեն չորս զավակ:

ԲՅԷ-ում իրավաբանական աստիճան ստանալուց հետո եղբայր Լանդը աշխատել է որպես իրավաբան՝ նախքան Nu Skin Enterprises -ի նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն դառնալը: Ներկայումս նա ընկերության տնօրենների խորհրդի գործադիր նախագահն է: Նա նաև Յուտա նահանգի բարձրագույն կրթության համակարգի խորհրդի անդամ է:

Եղբայր Լանդը ծառայել է Ջորջիա Ատլանտա միսիայի նախագահ և Պրովո Միթի կենտրոնի տաճարների նվիրագործման հանձնախմբի համակարգող: Նա նաև ծառայել է որպես Երիտասարդ Տղամարդկանց գերագույն խորհրդի անդամ և Տարածքային Յոթանասունական: ■



Ահմադ Ա. Քորբիս

Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահության առաջին խորհրդակցական

Ահմադ Ա. Քորբիսը, 57 տարեկան, ծնվել է 1962 թվականի օգոստոսին՝ Ջեյմս Էրլ և Ամելիա Քորբիսների ընտանիքում: Երա ընտանիքն աղքատ էր և բնակվում էր Փենսիլվանիա նահանգի Ֆիլադելֆիայի Էժանագին շենքերում (ՄՄՆ), որոնց շրջապատում գերիշխում էին հանցավորությունը և խմբավորումների բռնությունները: Թաղամասից թաղամաս ճամփորդելը վտանգավոր էր:

Բայց նրա մոր հոգևոր տպավորություններն առաջնորդեցին նրա 10 երեխաներին և պահեցին նրանց ապահով: Նա ներքուստ զգում էր, երբ իր երեխաները պետք է խաղան դրսում, իսկ երբ պետք է մնան ներսում:

Դա այն հոգևոր զգայունությունն էր, որը հետագայում ստիպեց նրան Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներին հրավիրել իր տուն: Իր պատանեկության և երիտասարդության տարիներին Ահմադն ու իր ընտանիքը երկրպագում էր «Իսլամի ազգ» կրոնական շարժման հետ, իսկ ավելի ուշ մկրտվեց բողոքական եկեղեցում: Բայց այժմ նա իրեն սիրված է զգում Վերջին Օրերի Սրբերի տեղական համայնքի կողմից:

Երա մայրը, քույրերից ու եղբայրներից մի քանիսը մկրտվեցին հաջորդ ամիս: 1980 թվականի օգոստոսի 16-ին, իր ծննդյան 18-ամյակի օրը Ահմադը նույնպես մտավ մկրտության ջրերը: Երա խորթ հայրը՝ Հենրի Բրանդֆորդ Քեմփբելը, հաջորդ տարի միացավ Եկեղեցուն:

«Իրականում մենք չէինք որոշում», - ասել է նա: «Դա Աստված էր որոշում, և թե ինչ էր Նա ուզում, որ մենք անենք: Մենք պատրաստ էինք խոնարհ և անկեղծ լինել: Եվ Նա մեզ առաջնորդեց»:

Ռիքս քոլեջում սովորելուց հետո և 1982-1984 թթ. Պուերտո Ռիկոյի Ման Խուան միսիայում ծառայելուց հետո չափահաս ամուսինների տաճարային ուղևորության ժամանակ նա հանդիպեց Ջեյն Ջոսլինին: Ջոսլին ամուսնացավ 1985թ. ապրիլի 25-ին Վաշինգտոն Կ.Շ. տաճարում և այժմ ունեն չորս զավակ:

Հաջորդ ինը տարիների ընթացքում նա աշխատում էր ցերեկը, իսկ երեկոները հաճախում էր համալսարան. առաջին դիպլոմը նա ստացավ Լյու Ջերսիի Ռիչարդ Ստոկթոնյան քոլեջում, իսկ երկրորդը՝ Ռաթգերսի իրավաբանական համալսարանում:

Նա եղել է ցղի նախագահի խորհրդակցական, ցղի նախագահ, բարձրագույն խորհրդակցական և Դոմինիկյան Հանրապետության Մանտո Դոմինգո արևելյան միսիայի նախագահ:

Եղբայր Քորբիսն աշխատել է դատական իրավաբան, հասարակական կապերում և Եկեղեցու Լյու Յորքի հանրային կապերի միջազգային գրասենյակի տնօրեն: Ներկայումս նա աշխատում է Եկեղեցու Միսիոներական բաժնում: ■



Բրեդլի Ռ. Վիկոբս

Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահության երկրորդ խորհրդակցական

Կալիֆորնիայում անցկացվող երիտասարդների համաժողովին մասնակցելիս Բրեդլի (Բրեդ) Ռ. Վիկոբսը հանդիպեց մի երիտասարդ տղայի, որը չէր ցանկանում այնտեղ գտնվել: Նա մոտեցավ այդ պատանուն, երբ նա կանգնած էր ծառի ստվերում, և շուտով նրանք քննարկում էին երիտասարդների սիրած թեման՝ սքեյթբորդը:

Եղբայր Վիկոբսը խնդրեց պատանուն ցույց տալ սքեյթբորդի մի քանի շարժումներ: Տպավորվելով նա երիտասարդներին հրավիրեց սքեյթբորդի ցուցադրություն անցկացնել այդ ամառ կայանալիք Հատուկ երիտասարդների համար (ՀԵՀ) միջոցառման ժամանակ: Երիտասարդը մեթոց, բայց ի վերջո համաձայնվեց: ՀԵՀ-ի ժամանակ նրա կյանքը փոխվեց, և նա վերագտավ ավետարանի մասին իր վկայությունը:

«Նա ՀԵՀ-ին մասնակցեց սքեյթբորդի պատճառով, բայց այդտեղից հեռացավ որպես միսիոներ», - ասել է եղբայր Վիկոբսը:

«Ես կյանքս անցկացրել եմ երեխաների և պատանիների հետ, - ասել է եղբայր Ռիկոբսը, - և ես սիրում եմ երիտասարդներին»:

Բրեդլի Ռեյ Վիկոբսը ծնվել է ՄՄՆ Յուտա նահանգի Պրովո քաղաքում, 1959 թ-ի դեկտեմբերի 25-ին՝ Ռեյ Թ. Վիկոբսի և Վալ Ս. Վիկոբսի ընտանիքում: Նա մեծացել է Պրովոյում, բացառությամբ՝ մանկության մի քանի տարիների, որոնք անցկացրել է Եթովպիայում:

Չիլի Վինա դել Մար լիաժամկետ միսիայում ծառայելիս եղբայր Վիկոբսը Պրովո Յուտայի տաճարում ամուսնացավ Դեբորա Գյունելի հետ 1982 թվականի հոկտեմբերի 7-ին: Նրանք ունեն չորս զավակ:

Եղբայր Վիկոբսն իր բակալավրի և մագիստրոսի աստիճանները ստացել է Բրիգամ Յանգ համալսարանում, իսկ մանկավարժության դոկտորի աստիճանը՝ Վայոմինգի համալսարանում: Եղբայր Վիկոբսը կրթության ոլորտում իր աշխատանքի համար պարգևատրվել է մի շարք մրցանակներով, ավելի քան 30 տարի նվիրել է ԲՅՀ-ի «Հատուկ երիտասարդների համար» ծրագրին և հաճույքով ծառայել է «Համալսարանական կրթության շաբաթ»-ի հրահանգիչ:

Եղբայր Վիկոբսը և նրա ընտանիքն ապրել են Նոր Ջեյլանդիայում և Իսպանիայում, երբ նա ղեկավարում էր ԲՅՀ-ի արտերկրում ուսուցանելու ծրագրերը: Նա հեղինակ է մի քանի գրքերի և ներկայումս ԲՅՀ-ի Հին ձեռագրերի բաժնի պրոֆեսոր է:

Եղբայր Վիկոբսը ծառայել է Չիլի Մանտյագո Արևելյան միսիայի նախագահ, Կիրակնօրյա դպրոցի գերագույն խորհրդի անդամ, ցղի նախագահության խորհրդակցական և երիտասարդ ամուսինների ծխի եպիսկոպոս: Այս ծառայությանը կանչվելու պահին նա ծառայում էր բարձրագույն խորհրդակցական և ցղի երիտասարդ Տղաների նախագահ: ■



նվիրագործությունները (տես 92-րդ էջը):

Համաշխարհային երկրորդ ծոմապահությունը

Ինն օրվա մեջ երկրորդ անգամ Նախագահ Նելսոնը աշխարհին հրավիրեց ծոմ պահել և աղոթել «որպեսզի ներկայիս համավարակը վերահսկելի դառնա, բուժաշատողները պաշտպանված լինեն, տնտեսությունն ուժեղանա և կյանքը կարգավորվի» (էջ 74): Այս երկրորդ միջազգային ծոմապահությունը տեղի ունեցավ 2020 թվականի ապրիլի 10-ին, ուրբաթ օրը:

Նոր տաճարներ

Նախագահ Նելսոնը հայտարարեց աշխարհով մեկ ութ նոր տաճարների կառուցման ծրագրերի մասին (տես 115-րդ էջը): Ներկայումս աշխարհում կա 168 նվիրագործված տաճար, որոնցից 7-ը վերանորոգման ընթացքում են:

Երիտասարդ խոսակներ

Շաբաթ երեկոյան նիստի ժամանակ ելույթ ունեցան երկու դեռահասներ՝ Լոդի Ռուֆ Քաուքը և Էնցո Սերժ Պետելոն, ովքեր խոսեցին այն մասին, թե ինչպես է քահանայությունն օրհնում երիտասարդներին (տես 56 և 58 էջերը): Արդեն ավելի քան 20 տարի է, ինչ երիտասարդները չէին ընդգրկվել գերագույն համաժողովի ելույթ ունեցողների մեջ:

Ազդեցիկ երաժշտություն

Համաժողովի երաժշտական համարները նախապես ձայնագրվել էին: Սշխարհի սրբերն ավարտեցին համաժողովը՝ երգելով «Շնորհակալ ենք, Տեր, Մարգարեի համար» օրհներգը՝ Գանայում, Նոր Զելանդիայում, Մեքսիկայում, Հարավային Կորեայում, Գերմանիայում և Բրազիլիայում գտնվող երգչախմբերի կատարմամբ (տես 2-րդ էջը): ■

ՀՂՈՒՄ

1. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ամփոփիչ ելույթ», *Liahoni*, նոյեմբեր 2019, 122:

Համաժողովի հիշարժան պահերը

Ինչպես խոստացավ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, այս գերագույն համաժողովն անմոռանալի էր շատ առումներով:¹ Ահա որոշ հիշարժան պահեր համաժողովից:

Նոր խորհրդանիշ

Նախագահ Նելսոնը հայտարարեց Եկեղեցու նոր խորհրդանիշը (տես 73-րդ էջում): Այդ խորհրդանիշը ներառում է ուղղանկյան մեջ գտնվող Եկեղեցու անվանումը, որը ներկայացնում է անկյունաքար: Դրանից վեր կանգնած է Քրիստոսի արձանը կամարի տակ, որը հիշեցնում է մեզ Փրկիչի և Նրա դատարկ գերեզմանի մասին:

Երկուհարյուրամյա հռչակագիրը

Նախագահ Նելսոնը կարդաց «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնումը. Երկուհարյուրամյա հռչակագիր աշխարհին», որն ամենուրեք մարդկանց հրավիրում է

սովորելու, որ Նոր Կտակարանում նշված Հիսուս Քրիստոսի ավետարանն այսօր կրկին երկրի վրա է: Պաշտոնական թարգմանությունը կարելի է գտնել այս համարի դիմերեսի շապիկին 12 լեզուներով: Անդամները, ովքեր դեռ սպասում են պաշտոնական թարգմանությանը, կարող են հռչակագիրը կարդալ Նախագահ Նելսոնի նախնական թարգմանության մեջ (տես 91-րդ էջը):

Հանդիսավոր ժողով

Կիրակի առավոտյան տեղի ունեցավ «հանդիսավոր ժողով»՝ որպես Առաջին Տեսիլքի Եկեղեցու երկուհարյուրամյա տոնակատարության մաս: Այս սուրբ ժողովի ընթացքում Նախագահ Նելսոնն առաջնորդեց Սրբերին Ովսաննա բացականչության ժամանակ, գովքի միասնական արտահայտություն, որն օգտագործվում է հատուկ միջոցառումներում, ինչպիսիք են տաճարային

COVID-19. Առաջնորդության, բժշկման և հույսի ուղերձներ

Անդամները վկայում են, որ տեսել են Տիրոջ ձեռքը նույնիսկ փոփոխությունների, անհանգստությունների և կորուստների այս ժամանակներում:

Խմբագիրների կողմից: Երբ ապրիլի 4-ին սկսվեց գերագույն համաժողովը, համաժողովների դատարկ կենտրոնի նկարները հիշեցնում էին մեր շուրջը տիրող համավարակի մասին, բայց մեր ղեկավարների ուղերձները կենտրոնանում էին լավատեսության և հույսի վրա: Վերջին շաբաթների ընթացքում մենք հավատքի նման պատմություններ ենք ստացել ամբողջ աշխարհի Եկեղեցու անդամներից: Հետևյալ էջերը պարունակում են հատվածներ ձեր որոշ պատմություններից, ինչպես նաև տեղեկություններ առցանց լրացուցիչ հոդվածների մասին: Քրիստոսի նման կարեկցանք դրսևորելով, մենք կարող ենք շարունակել օգնել միմյանց բուժվել այս համավարակի հետևանքներից:

Նա այն ժամանակ ինձ հետ էր. Նա ինձ հետ է հիմա

Երբ տանը նստած փորձում էի հանդարտեցնել իմ անհանգստությունը աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, պատահականորեն բացեցի օրագիրս և տեսա հետևյալը. «Ամեն օր արթնանալիս այս աշխարհի շատ բաների մասին լսելով վախենում ենք, բայց ավետարանի ուսմունքների հանդեպ հավատքով, մենք կարող ենք քայլ առ քայլ առաջ գնալ: . . . Հավատքը միշտ հաղթում է վախին»:

Ես հասկացա, որ հենց նոր ստացա անձնական հայտնություն, և որ Երկնային Հայրն այդ հայտնությունն ինձ տվեց մի քանի տարի առաջ կատարած իմ օրագրի գրառումների միջոցով: Մի պահ օրհնվեցի խաղաղությամբ և վստահությամբ, որ Երկնային Հայրն ինձ հետ էր այն ժամանակ, և նա հենց հիմա այստեղ ինձ հետ է:

Դանել Գրեյ, Յոսուս, ԱՄՆ

Սուրբ Հոգին կարող է գործել առցանց

Ես ներշնչվեցի և սկսեցի սեմինարիայի դասեր անցկացնել խմբային տեսազանգերի միջոցով: Մեր քաղաքում կարանտին հայտարարելուց երկու օր առաջ մեր դասարանն անցկացրեց իր առաջին առցանց դասը:

Մտորդներից ոմանք նույնպես միացան մեր դասարանին, ներառյալ նրանք, ովքեր անդամ չեն: Ես հազիվ զսպեցի արցունքներս, երբ միասին ուսումնասիրում էինք Մոսիայի 2-րդ գլուխը: Բոլորս զգացինք Հոգին, երբ սովորեցինք, որ ուրիշներին ծառայելով, մենք ծառայում ենք նաև Աստծուն: Ես շատ բան իմացա անձնական հայտնությունը ստանալու և ճանաչելու մասին: Սուրբ Հոգին ավետարանի ճշմարտությունը կբացահայտի մատուցման բազմաթիվ ձևաչափերով: Չնայած աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, ոչինչ չի կարող կանգնեցնել Իր

զավակների փրկության համար Երկնային Հոր աշխատանքի առաջընթացը:

Մարիանոս Պինտոս, Մինդալնաս, Ֆիլիպիններ



Մենք բաց չենք թողել սեմինարիայի որևէ օր

Չնայած կորոնավիրուսին առնչվող զարգացումներին, ես ուրախ եմ հայտարարել, որ մենք բաց չենք թողնել սեմինարիայի գեթ մեկ օր: Տեսազանգերի միջոցով անցակցված իմ դասերը մի շարք մարտահրավերներ են առաջացնում, բայց ինձ դուր է գալիս նայել ծնողներին և կրտսեր քույրերին ու եղբայրներին: Ինձ դուր է գալիս, որ այն օգնում է մեր ընտանիքներին լինել հետևողական մեր առօրյա կյանքում, և ինձ հատկապես դուր է գալիս, որ մենք կարող ենք շարունակել միմյանց վկայել Հիսուս Քրիստոսի և մեր հանդեպ Նրա սիրո մասին:

Մանոյի Քրամդեյ, Յիզո, Գոսսալ

Ծառայել վարագույրի երկու կողմերում գտնվող մարդկանց

Ես ավագ քույր միսիոներ էի ծառայում Միսուրիի Ինդիպիենդենս միսիայում, երբ եկեղեցու ժողովները չեղյալ հայտարարվեցին և մենք սկսեցինք ինքնամեկուսանալ մեր բնակարաններում: Մենք օգտագործում էինք մեր հեռախոսներն ու համակարգիչները, որպեսզի անդամների հետ կապ պահենք և տեղեկանանք այն անդամների մասին, ովքեր կանոնավոր եկեղեցի չէին հաճախում:

Զբաղվելու համար ես որոշեցի ընտանեկան պատմության աշխատանք կատարել, չնայած բավական երկար ժամանակ ինձ համար դժվար էր գտնել որևէ նոր անուն: Երբ մուտք գործեցի FamilySearch, ես գտա մի գրանցման ծանուցագիր, որը անուններին կցելու սպասման մեջ էր: Այդ մեկ գրառումն օգնեց ինձ իմ ազգատոհմում գտնել մոտ 70 մարդու: Հինգ օր անց անունների հոսքը դադարեց: Այդ օրն ավելի ուշ իմացանք, որ տուն գնալու համար բոլորիս ազատել են ծառայությունից: Ես

տխուր եմ հեռանում, բայց նաև օրհնված եմ զգում, որ այս դժվարին ժամանակներում կարողացա վարագույրի մյուս կողմում ծառայել ընտանիքիս:

Քիմ Նելսոն, Օրեգոն, ԱՄՆ

Տիրոջ գործն առաջ տանելու համար մենք անում ենք մեր բաժինը

Քանի որ մեր տարածքի միախոնրներին խորհուրդ տվեցին մնալ իրենց բնակարաններում, մենք փորձեցինք անել մեր բաժինը և մի ընկերոջ հրավիրեցինք սովորել Եկեղեցու մասին: Միախոնրները հեռախոսով իրենց դասերն են ուսուցանում մեր ընկերոջը: Շնորհիվ մեր այսօրվա տեխնոլոգիայի, մենք Հոգու ուժն ենք զգում մեր տանը: Չարմանալի էր տեսնել, որ Տիրոջ աշխատանքը դեռ շարունակվում է, չնայած աշխարհում տիրող մարտահրավերներին:

Էլեն Բայն, Վաշինգտոն, ԱՄՆ

Փրկիչը լսում է մեր երգը

Ես ծառայում եմ PathwayConnect ծրագրի Եկեղեցու ծառայության միախոնր Կիև Ուկրաինա ցցում: Ծրագրի ղեկավարները որոշեցին վերապատրաստել մեզ բոլորիս, ովքեր ղեկավարում են անհատական հավաքները, որպեսզի կարողանանք դրանք իրականացնել առցանց: Հաջորդ օրը Կիևում կառավարությունը հայտարարեց կարանտինային միջոցառումների մասին:

Ինձ դուր է գալիս PathwayConnect ծրագրի համար միասին հավաքվելու հնարավորությունը: Եվ ինձ դուր է գալիս միասին հավաքվելու առիթը, որպեսզի կիրակի օրերին միասին երկրպագենք և երգենք տանը: Շնորհակալ եմ այն հավաստիացման համար, որ այնտեղ, որտեղ երկուերեք հոգի հավաքվեն Նրա անունով, Նա այնտեղ է: Ոչ ոք չգիտի, թե որքան ժամանակ ենք կարանտինում լինելու Կիևում, բայց մենք գիտենք, որ Փրկիչը կլսի մեր երգը:

Կատերինա Սերոյոյ, Կիև, Ուկրաինա



«Ժամանակ է վերադարձնել ընտանիքը»

Երբ լուրերով սկսեցին հաղորդել COVID-19-ի մասին, ես մտածեցի, որ այն խիստ ուռճացված է: Այնուհետև օրեր անց ես սկսեցի անհանգստություն և նույնիսկ խուճապ զգալ մեր աշխարհի սպազայի վերաբերյալ:

Մի առավոտ ես չէի կարողանում քնել և նստեցի խորհելու, թե ինչի համար էր այս ամենը: Հետո տիրեց խաղաղություն: Հոգին ուսուցանեց ինձ, որ Տերն ինձ ընծա է մատուցել: «Ժամանակն է վերադարձնել ընտանիքը», - ասաց Նա:

Կյանքն այնքան զբաղված է: Այս համավարակը մեր ընտանիքին հնարավորություն տվեց կենտրոնանալ կարևորի վրա՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի վրա: Ես կարող եմ խեղդել աշխարհի այդ թունավոր ազդեցություններից մի քանիսը և կենտրոնանալ, որ ուսուցանեմ երեխաներիս նայել Քրիստոսին: Մեր Երկնային Հայրը միշտ մտածում է մեր մասին: Կարծում եմ, որ հիմա ավելի շատ է մտածում, քան երբևէ:

Մերի Օստլեր, Նեբրասկա, ԱՄՆ

Տերը պատրաստեց մեզ դրա համար

Երբ առաջին անգամ ասացին, որ Եկեղեցու հավաքները

ժամանակավորապես դադարեցվել են, ես մի փոքր հուսահատվեցի: Բայց հիմա տեսնում եմ, թե ինչպես է Տերը պատրաստել մեզ դրա համար իր մարգարեների միջոցով: Տնակենտրոն ավետարանի ուսումնասիրությունը կարող է օգնել մեզ անցնել դժվարին ժամանակների միջով: Շնորհակալ եմ, որ դեռ կարող եմ կիրակի օրը հաղորդություն ճաշակել և կարդալ մարգարեների խոսքերը: Մխիթարում է այն փաստը, որ քանի դեռ չենք կարող նորից հավաքվել միասին, մենք կարող ենք զգալ նույն Հոգին:

Էմիլի Կլեյն, Գառտենդ, Հարավային Աֆրիկա

Մեզ ուսուցանել են, թե ինչպես երկրպագել

Երբ ամուսինս և ես առաջին անգամ մասնակցեցինք հաղորդության արարողությանը մեր տանը, ես Հոգին այնքան ուժեղ զգացի, որ դժվարանում էի երգել մեր ընտրած օրհներգը: Երկրպագության ծառայություններին հաճախելու իմ 70 տարվա ընթացքում ես չեմ հիշում որևէ օրհնություն, որն այդքան ուժեղ գնահատեինք, որքան Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մեր մասնակցության և անդամության օրհնությունները:

Մեզ ուսուցանել են, թե ինչպես երկրպագել և ում երկրպագել: Այո, մենք կարոտում ենք մեր ընկերակից Սրբերի հետ շփմանը և ուրախ կլինենք հնարավորինս շուտ վերադառնալ «սովորական կյանքին», բայց ես երախտապարտ եմ այն դասերի համար, որոնք մենք սովորում ենք այդ ընթացքում, երբ հետևում ենք մարգարեի խորհրդին՝ մեր «տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող» երկրպագության ժամանակ:

Մյուզան Փրիթոր, Մոնտանա, ԱՄՆ

Գտնել խաղաղություն և միասնություն

Ընտանեկան երեկոյին ես և իմ որդին սպասում ենք ամեն շաբաթ: Մենք մեր տանը հաճախ հյուրընկալում էինք անդամների,

ընկերների և միսիոներների: Այնուհետև ամեն ինչ կտրուկ փոխվեց համավարակի պատճառով: Այժմ մենք ընկերներիս հետ ընտանեկան երեկո ենք անցկացնում հեռախոսով: Այս ընթացքում մենք միասին կարողացանք շատ բաներ անել, որը մեզ ավելի մոտեցրեց:

Ես շատ շնորհակալ եմ մեր սիրելի մարգարեի համար, ով մեզ բոլորիս հրավիրեց ծոմ պահել: Մեզանից շատերն այդ ծոմապահության շնորհիվ կարողացան զգալ միասնության և խաղաղության ուժը: Նման ժամանակներում մեզ համար անհրաժեշտ խաղաղությունը ստանում ենք Փրկիչ Հիսուս Քրիստոսից:

Ռոշեն ՄակՔենզի, Քինգսթոն, Յանայիս

Աստված վերահսկում է ամեն բան

Ես իմ միսիան սկսեցի ընդամենը երկուսուկես ամիս առաջ: Ինձ ծառայության նշանակեցին Մեքսիկայի Հերմոսիլո քաղաքում: Ամեն օր առիթ ունեցա հանդիպելու հիանալի մարդկանց, ովքեր պատրաստ էին ընդունել վերականգնված ավետարանը: Ես կարծում էի, որ նոր եմ սկսել իրականացնել իմ նպատակը, երբ COVID-19-ը ընդհատեց իմ միսիան:

Ցավում էի, որ պետք է լքեի այն մարդկանց, որոնց ես այդքան շատ եմ սիրում, բայց ես նույնպես զգացի մեծ խաղաղություն և ապահովություն, քանի որ գիտեմ, որ Աստված շարունակում է վերահսկել ամեն բան: Շնորհակալ եմ, որ ունենք մարգարե և առաքյալներ, որոնք կառաջնորդեն մեզ այս օրերին: Ինչպես աշխարհի շատ միսիոներներ, ես վստահ եմ, որ դա չի լինի իմ միսիայի ավարտը: Շուտով ես կկարողանամ նորից օգնել առաջ տանելու Տիրոջ աշխատանքը և շարունակել գործիք լինել Նրա ձեռքերում՝ ավելի շատ հոգիների ապաշխարության բերելու համար: ■

Կարոլինա Ռոման, Պոնդրոն Ուիլյո

Շարունակեք ուսումնասիրել առցանց

Կարդացեք ավելի շատ պատմություններ այն մասին, թե ինչպես են անդամները հավատքով և հույսով արձագանքել իրենց կյանքում համավարակի հետևանքներին:

Հույսի կարի՞ք ունեք:

- Իմացեք, թե ինչպես են անդամներն աշխարհով մեկ գտել այն հույսը, որ Աստված հսկում է մեզ:
- Կարդացեք այն մասին, թե ինչպես են անդամներն առաջ շարժվել Եկեղեցու պատմության այլ ժամանակներում, երբ հաղորդության ժողովները չէղարկվել են:

Օգնության կարի՞ք ունեք

- Իմացեք, թե ինչպես ճանաչել վիշտը ձեր մեջ և ինչպես սզալ նրանց հետ, ովքեր սգում են:
- Իմացեք, թե ինչպես են ուրիշները հարմարվել տանը երկրպագելուն:

Գաղափարների կարի՞ք ունեք:

- Ձեռք բերեք գաղափարներ այն մասին, թե ինչպես կարող եք շարունակել սպասավորել այս եզակի պայմաններում:
- Իմացեք, թե ինչպես են լիաժամկետ մյուս միսիոներները հարմարվել իրենց նշանակումների փոփոխություններին:

Այս և այլ պատմություններ կարդալու համար այցելեք *Liahona* ամսագրերի՝ «COVID-19. Հավատքի ուղերձներ» հատուկ բաժինը: Գտեք բաժինը՝ այցելելով *Gospel Library* հավելվածի ամսագրեր բաժինը կամ առցանց՝ ChurchofJesusChrist.org-ում:

Լրացուցիչ օգտակար նյութեր ծնողների համար

- *Friend* ամսագրի մայիսյան համարը ընդգրկում է երեխաների սովորելու և ծառայելու պատմություններ:
- Բացեք *Gospel Living* հավելվածը և *New Era* ամսագրի վերջին համարները, որպեսզի կարդաք պատմություններ այն մասին, թե ինչպես են երիտասարդները հավատով առաջ շարժվում և գտնում ծառայության յուրօրինակ եղանակներ:
- Միասին փակ տարածքում գտնվելը կարող է դժվար լինել: Որպեսզի իմանաք, թե ինչպես ավելի ամուր փոխհարաբերություններ կառուցել ձեր ամուսնու կամ կնոջ հետ, կարդացեք այս հոդվածները.
 - “Falling Out of Love . . . And Climbing Back In,” *Liahona*, Jan. 2005.
 - “Nurturing a Love That Lasts,” *Liahona*, May 2000.
 - «Տան խաղաղության համար», *Liahona*, մայիս 2013:
 - «Եղել ավելի ջանասեր և մտահոգ տանը», *Liahona*, նոյ. 2009:
 - Ցավոք, ոմանք այս ճգնաժամային ժամանակներին կարող են արձագանքել ուրիշներին վիրավորելով: Եթե ձեզ վիրավորել են, կարող եք ուսումնասիրել **abuse.ChurchofJesusChrist.org** կայքի նյութերը և օգնություն խնդրել: Դուք արժանի եք լինել ապահով և հարգված:

Բացահայտեք ավելի

- COVID-19-ի ազդեցության վերաբերյալ Եկեղեցուց ստացված վերջին թարմացումների համար այցելեք ChurchofJesusChrist.org:



Եկ, հետևիր ինձ Սովորել գերագույն համաժողովի ելույթներից



Երբ մենք ձգտում ենք մասնակցել Տիրոջ գործին, ապրող մարգարեների և Եկեղեցու մյուս բարձրագույն ղեկավարների ուսմունքները ոգեշնչող առաջնորդություն են տրամադրում մեզ: Յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ կիրակի օրերին, քվորումը և Սփոփող Միության նախագահությունները ընտրում են համաժողովի որևէ ուղերձ ուսումնասիրման համար՝ ելնելով անդամների կարիքներից և հիմնվելով Հոգու առաջնորդության վրա: Երբեմն եպիսկոպոսը կամ ցցի նախագահը նույնպես կարող են խորհուրդ տալ ուսումնասիրել որոշակի ուղերձ: Ընդհանուր առմամբ, ղեկավարները պետք է շեշտը դնեն Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների ուղերձների վրա: Սակայն վերջին համաժողովի ցանկացած ուղերձ կարող է քննարկվել:

Ղեկավարները և ուսուցիչները պետք է ուղիներ փնտրեն՝ խրախուսելու անդամներին ժողովը սկսելուց առաջ կարողալ ընտրված ուղերձները:

Լրացուցիչ տեղեկության համար տե՛ս Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ժողովներին վերաբերող գլուխները *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցուն գրքում* (2019):

Ծրագրել ուսուցումը

Հետևյալ հարցերը կարող են օգնել ուսուցիչներին, երբ նրանք ծրագրեն ուսուցանել գերագույն համաժողովի ուղերձը:

1. Ելույթ ունեցողն ի՞նչ է կամենում, որ մենք հասկանանք: Ավետարանի ի՞նչ սկզբունքներ է նա ցանկանում ուսուցանել: Ի՞նչպե՛ս են այդ սկզբունքները վերաբերում մեր քվորումին կամ Սփոփող Միությանը:
2. Իր ելույթը լրացնելու համար սուրբ գրության ի՞նչ հատված օգտագործեց ելույթ ունեցողը: Կա՞ն արդյոք ուրիշ հատվածներ, որոնք կարդալով ավելի լավ կհասկանանք սկզբունքը: (Հատվածների որոշ հղումներ կարող եք գտնել Ժանտաղարկություններում կամ Թեմաների ուղեցույցում:)
3. Ի՞նչ հարցեր կարող եմ տալ, որոնք կօգնեն անդամներին խորհել սկզբունքի մասին: Ի՞նչ հարցեր կօգնեն նրանց հասկանալ ուղերձի կարևորությունն իրենց կյանքում, իրենց ընտանիքներում և Տիրոջ աշխատանքում:
4. Ուրիշ ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հրավիրեմ Հոգին մեր ժողովների ժամանակ: Ի՞նչ կարող եմ օգտագործել քննարկումն ընդլայնելու համար, ներառյալ՝ պատմությունները, համանմանությունները, երաժշտությունը և նկարները: Ի՞նչ էր օգտագործում ելույթ ունեցողը:
5. Արդյո՞ք ելույթ ունեցողը որևէ հրավերի կոչ հղեց: Ինչպե՛ս կարող եմ օգնել անդամներին՝ ըստ այդ հրավերի գործելու ցանկություն ունենալ:



Միջոցառման գաղափարներ

Կան շատ եղանակներ, որոնցով կարող եք օգնել անդամներին սովորել գերագույն համաժողովի ելույթներից: Ահա մի քանի օրինակներ. դուք կարող եք ունենալ այլ գաղափարներ, որոնք ավելի լավ կգործեն ձեր քվորումում կամ Սփոփող Միությունում:

• *Քննարկեք խմբերում*

Անդամներին փոքր խմբերի բաժանեք և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք համաժողովի տարբեր ուղերձներ՝ կարդալու և քննարկելու համար: Ապա, խնդրեք յուրաքանչյուր խմբին կիսվել իրենց սովորած ճշմարտությունով: Կամ կարող եք խմբեր ձևավորել այն մարդկանցով, ովքեր տարբեր բաժիններ են ուսումնասիրել, ապա թույլ տվեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց գրածով:

• *Պատասխանեք հարցերին:*

Հրավիրեք անդամներին պատասխանել հարցերին՝ համաժողովի ուղերձի վերաբերյալ հետևյալ հարցի նման: Այս ուղերձում ավետարանի ի՞նչ ճշմարտություններ ենք գտնում: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ ճշմարտությունները: Ի՞նչ հրավերներ և խոստացված օրհնություններ տրվեցին: Ի՞նչ է այս ուղերձն ուսուցանում մեզ այն, աշխատանքի մասին, որն Աստված է կամենում, որ անենք:

• *Կիսվեք մեջբերումներով*

Հրավիրեք անդամներին կիսվել համաժողովի այն ուղերձների մեջբերումներով, որոնք ոգեշնչում են նրանց կատարել փրկության աշխատանքի իրենց պարտականությունները: Հորդորեք նրանց մտածել, թե ինչպես կարող են կիսվել այդ մեջբերումներով, որպեսզի օրհնեն որևէ մեկին, այդ թվում՝ իրենց սիրելիներին և այն մարդկանց, ում նրանք սպասավորում են:

• *Կիսվեք ստարկաչափյան դասերով*

Հրավիրեք մի քանի անդամների տնից նախօրոք բերել որևէ առարկա, որի օգնությամբ կարող են ուսուցանել համաժողովի ուղերձի մասին: Ժողովի ընթացքում խնդրեք անդամներին բացատրել, թե ինչպես են այդ առարկաները վերաբերում ուղերձին:

• *Դաս պատրաստեք տանը ուսուցանելու համար*

Խնդրեք անդամներին աշխատել գույգերով և համաժողովի ուղերձի թեմայով ընտանեկան երեկոյի համար մի դաս ծրագրել: Ինչպե՞ս կարող ենք ուղերձը հարմարեցնել մեր ընտանիքներին: Ինչպե՞ս կարող ենք այդ ուղերձով կիսվել այն մարդկանց հետ, ում սպասավորում ենք:

• *Կիսվեք փորձառություններով*

Միասին կարդացեք մի քանի հայտարարություններ գերագույն համաժողովից: Խնդրեք անդամներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց կյանքից, որոնք լուսաբանում կամ ամրապնդում են այն վարդապետությունը, որն ուսուցանվել է այս հայտարարություններում:

• *Սովորեք սուրբ գրության որևէ հատված:*

Հրավիրեք անդամներին կարդալ սուրբ գրության որևէ հատված, որի մասին հղում է արված համաժողովի ուղերձում: Կոչ արեք նրանց քննարկել, թե այդ ուղերձի ուսմունքներն ինչպես են օգնում նրանց ավելի լավ հասկանանալ այդ հատվածը:

• *Գտեք պատասխանը*

Ժամանակի ընթացքում ստեղծեք մի քանի հարցեր, որոնց կարելի է պատասխանել՝ օգտագործելով համաժողովի ուղերձը: Կենտրոնացեք այն հարցերի վրա, որոնք խորությամբ մտածելու և ավետարանի սկզբունքները կիրառելու հնարավորություն են տալիս (տես *Ուսուցանել Փրկիչի ձևով*, 31–32): Ապա անդամներին թույլ տվեք ընտրել որևէ հարց և գտնել այդ հարցի պատասխանը ուղերձում: Հրավիրեք նրանց քննարկել իրենց պատասխանները փոքր խմբերում:

• *Գտեք պատահալուծությունը*

Հրավիրեք անդամներին քննել համաժողովի ուղերձը և ուշադրություն դարձնել այն արտահայտություններին, որոնք կարևոր են նրանց համար: Խնդրեք նրանց կիսվել այդ արտահայտություններով և կիսվել, թե ինչ են սովորել դրանցից: Ինչպե՞ս են այդ ուսմունքներն օգնում մեզ իրագործել Տիրոջ աշխատանքը:

• *Ստեղծեք որևէ գործ:*

Հրավիրեք անդամներին պատրաստել պատճառ կամ էջանիշ, որի վրա գրված է որևէ համաժողովի ուղերձից մի կարճ ոգեշնչող հայտարարություն: Նրանց հնարավորություն տվեք կիսվել իրենց պատրաստած գործերով: ■



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Փրկիչի կենտրոնական դերը


Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին բնութագրող նոր խորհրդանիշը (տես էջ 73): Խորհրդանիշը շեշտում է Հիսուս Քրիստոսի անունը և Նրա կենտրոնական դերը այն ամենում, ինչ Եկեղեցին անում է: Եկեղեցու անունը գտնվում է ողորակյուն շրջանակի մեջ, որը խորհրդանշում է անկյունաքարը՝ Հիսուս Քրիստոսին, ով ներկայացնում է հիմքային անկյունաքարը, որի վրա կառուցված է Եկեղեցին (տես Եփեսացիս 2. 19-21): Խորհրդանիշի կենտրոնում տեղադրված է Թորվալդսենի Christos մարմարե քանդակը: Հիսուսը կանգնած է կանարի տակ՝ որպես հիշեցում մահից հետո երեք օր անց գերեզմանից հարություն առնելու մասին:

Եկեղեցու խորհրդանիշի սուրբ Էությունը հարգելու և օրենքով պաշտպանելու համար Եկեղեցու պաշտոնական խորհրդանիշը պետք է օգտագործվի միայն Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից հաստատվելու դեպքում:



«Ի՞նչ է ձեզ համար նշանակում, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է Երկրի վրա»: Այս հարցը Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը տվել է Եկեղեցու 190-րդ ամենամյա գերագույն համաժողովին:

«Դա նշանակում է, որ դուք և ձեր ընտանիքը կարող եք հավերժ կնքվել միասին: Դա նշանակում է, որ քանի որ դուք մկրտվել եք այն մարդու կողմից, ով իշխանություն ունի Հիսուս Քրիստոսի կողմից, և հաստատվել եք Նրա Եկեղեցու անդամ, դուք կարող եք վայելել Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը: . . . Դա նշանակում է, որ դուք երբեք չեք մնա անմխիթար վիճակում կամ առանց Աստծո գործության: Դա նշանակում է, որ քահանայության գործությունը կարող է օրհնել ձեզ, երբ ստանաք կարևոր արարողությունները, ուխտեր կապեք Աստծո հետ և պահեք դրանք: Այդ ճշմարտությունները մեծ խարիսխ են մեր հոգու համար, հատկապես այս ժամանակներում, երբ փոթորիկները մոլեգնում են»:



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋՑԻՆՈՒ ՄԻՋԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ